ՌՈՒՍԱՍՏԱՆԸ
ԵՎ
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
1915 - 1917 թթ.

(փաստաթղթերի ժողովածու)

947.925 «1915»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ
ԵՎ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
1915-1917թթ.
(փաստաթղթերի ժողովածու)

Կազմող, առաջաբանի և թարգմանության
հեղինակ՝ պատմական գիտությունների թեկնածու
ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

А II 89170

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

ԵՐԵՎԱՆ 2004

ՀՏԴ 941 (479.25) + 947
ԳՄԴ 63.3 (2Հ) + 63.3 (2Ռ)
Ռ 950

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍԱՏԵՆԱՇԱՐ թիվ 1

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության
բանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Լ. Ա. Բարսեղյան

Ռ 950 Ռուսաստանը և Հայոց ցեղասպանությունը 1915-1917թթ. (փաստաթղթերի ժողովածու) [Կազմող, առաջաբանի և թարգմանության հեղինակ՝ պատմական գիտությունների թեկնածու Արմեն Մարուքյան] – Եր., ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտ, 2004, 208 էջ:

Ժողովածուն ամփոփում է Հայոց ցեղասպանության տարիներին (1915-1917թթ.) Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության առնչությամբ ռուս դիվանագետների զրագրությունները, հայ և ռուս պատգամավորների ելույթները Պետական Դումայում, Ռուսաստանի երեք կառավարությունների որոշումները, ռուսական զինվորական և կովկասյան իշխանությունների զեկուցագրերը և պաշտոնատար անձանց հարցազրույցներն ու հոդվածները:

Գիրքը նախատեսված է մասնագետների և ընթերցողների լայն շրջանների համար:

Ռ $\frac{0503020913}{0176\ (01) - 2003}$ 2003 ԳՄԴ 63.3 (2Հ) + 63.3 (2Ռ)

ISBN 99930-888-6-2

© ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի հրատարակչություն, 2004

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
МУЗЕЙ-ИНСТИТУТ ГЕНОЦИДА АРМЯН
СОЮЗ АРМЯН РОССИИ

РОССИЯ
И
ГЕНОЦИД АРМЯН
1915-1917гг.
(сборник документов)

Составитель, автор предисловия и
перевода кандидат исторических наук
АРМЕН МАРУКЯН

ЕРЕВАН 2004

ԱՌԱՋԱԲԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմը հարմար առիթ հանդիսացավ, որ Թուրքիան ոչ միայն հրաժարվի հայկական բարեփոխումների ծրագրի իրականացումից, այլև Հայկական հարցը փորձի լուծել հայերին ոչնչացնելու ճանապարհով:

Պատերազմի տարիներին Ռուսաստանը հանդիսացել է թերևս այն միակ տերությունը, որի ռազմա-քաղաքական շահերը համընկել են Օսմանյան Թուրքիայում ցեղասպանության ենթարկվող հայ ժողովրդի իղձերի ու ձգտումների հետ: Ավելին՝ Ռուսաստանն էր այն միակ տերությունը, որ գործուն օգնություն ցուցաբերեց կոտորածից հրաշքով փրկված արևմտահայության մնացորդներին՝ ռազմական ուժով ապահովելով նրանց էվակուացիան անվտանգ վայրեր և հոգատարությամբ շրջապատելով հայ գաղթականներին Անդրկովկասում, պետական գանձարանից հատկացնելով գումարներ հայ գաղթականների գոնե առաջնահերթ հոգսերը թեթևացնելու համար:

Դեռևս 1995 թ. ապրիլի 14-ին, Մեծ եղեռնի զոհերի հիշատակի 80-ամյակի նախօրեին Ռուսաստանի Պետական Դուման միաձայն ճանաչեց ու դատապարտեց Հայոց ցեղասպանությունը: Դատապարտող բանաձևի մեջ մասնավորապես նշվում էր, որ եղբայրական հայ ժողովրդի հանդեպ իր պատմական հայրենիքում կատարված ցեղասպանությունը նպատակ է ունեցել ոչ միայն ոչնչացնել այս ժողովրդին, այլև հարված հասցնել Ռուսաստանի պետական շահերին[1]: Բանաձևի այս միտքն ունի ինչպես քաղաքական-ռազմավարական նշանակություն, այնպես էլ խոր պատմական իմաստ:

Սույն աշխատության նպատակն է Հայոց ցեղասպանության տարիներին Հայկական հարցում Ռուսաստանի վարած քաղաքականությանը վերաբերող ինչպես հրապարակի վրա եղած, այնպես էլ նորահայտ և քիչ հայտնի ռուսական փաստաթղթերը համախմբել և ներկայացնել դրանք հայերեն լեզվով մեկ ժողովածուի մեջ:

Ժամանակագրական առումով փաստաթղթերը վերաբերում են 1915-1917թթ. ընկած ժամանակաշրջանին, երբ Ռուսաստանում հաջորդաբար իրար փոխարինեցին երեք վարչակարգեր՝ ցարական, Ժամանակավոր կառավարությունը և խորհրդային:

Փաստաթղթերը դասակարգված են ըստ ժամանակագրության և բաժանված են երեք խմբի՝ ըստ 1915թ., 1916թ. և 1917թ. փաս-

---

[1] Заявление Государственной Думы Российской Федерации об осуждении геноцида армянского народа в 1915-1922 годах, 14 апреля 1995.

տաթղթերի:

Ժողովածուի մեջ տեղ են գտել մի շարք ռուսական[2] և ռուսերեն լեզվով[3] հրատարակված նյութեր, ինչպես նաև արխիվային փաստաթղթեր:

Ներկայացվող փաստաթղթերի ժողովածուի մեջ զետեղված նյութերը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական գրագրությունները Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ,

2. Ռուսաստանի IV Պետական Դումայի նյութերը, հայ և ռուս պատգամավորների ունեցած ճառերը Ռուսաստանի խորհրդարանի բարձր ամբիոնից արևմտահայերի ծանր վիճակի և նրանց օգնություն ցուցաբերելու վերաբերյալ,

3. Ռուսաստանի երեք կառավարությունների (ցարական, Ժամանակավոր և խորհրդային) կայացրած որոշումները արևմտահայերի վերաբերյալ Մեծ եղեռնի տարիներին,

4. Ռուսական զինվորական և կովկասյան իշխանությունների պաշտոնական փաստաթղթեր արևմտահայերի ծանր դրության հետ կապված,

5. Ռուսական և ռուսալեզու հայկական մամուլում արտատպված պաշտոնական փաստաթղթեր, ինչպես նաև բարձրաստիճան պետական պաշտոնյաների հարցազրույցներ ու հոդվածներ, որոնց միջոցով հանրությունը տեղեկանում էր Հայկական հարցում իշխանությունների կողմից ձեռնարկվող միջոցառումների մասին:

Բացի ռուսական փաստաթղթերից, սույն ժողովածուի մեջ նպատակահարմար ենք գտել զետեղել նաև Հայկական հարցում

---

[2] Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, сост. Ю. Барсегов, том 1,2, Москва, 2002 (այսուհետև՝ ГАОТОМС); Раздел Азиатской Турции. По секретным документам бывшего министерства иностранных дел. Под редакцией – Е. А. Адамова, М., 1924 (այսուհետև՝ РАТ); Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и Временного правительств. 1878-1917гг. Серия I-III, М.- Л., 1931-1940, т. 7, ч. 2, т. 9 (այսուհետև՝ МОЭИ); "Декреты Октябрьской революции", т. 1, Партиздат, М., 1933.

[3] Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под редакцией М.Г. Нерсисяна, 2-е доп. изд., Ер., 1982 (այսուհետև՝ ГАОИ); Русские источники о геноциде армян в Османской империи 1915-1916 годы. (Сборник документов и материалов), Выпуск I. Составители: Г.А. Абраамян, Т.Г. Севан-Хачатрян, Ер., 1995 (այսուհետև՝ РИГАОИ).

Հայոց ցեղասպանության տարիներին Ռուսաստանի վարած քաղաքականությանն առնչվող ֆրանսիական[4] և ամերիկյան[5] փաստաթղթեր, որոնք ամբողջականացնում են Ռուսաստանի վարած քաղաքականությունը արևմտահայերի նկատմամբ՝ հայ ժողովրդի համար այդ ողբերգական տարիներին: Ֆրանսիական փաստաթղթերը մասնավորապես վերաբերվում են հայերի կոտորածների առնչությամբ Բարձր Դռանն ուղղված Անտանտի երեք տերությունների համատեղ հայտարարության ընդունմանը վերաբերող դիվանագիտական զրագրությանը: Ամերիկյան փաստաթղթերը Վաշինգտոնում ռուս դեսպան Բախմետևի գործունեության մասին են՝ կապված Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուի թուրքական կառավարությանը հայերի կոտորածները դադարեցնելու հարցում բողոք ներկայացնելու հետ: Այդ փաստաթղթերը կարևոր են նաև նրանով, որ դրանք անաչառ և անկողմնակալ են ներկայացնում Ռուսաստանի քաղաքականությունը Հայկական հարցում Հայոց ցեղասպանության տարիներին:

Դիվանագիտական տարբեր աղբյուրներից Ռուսաստանի արտաքին գործերի նախարարություն տեղեկություններ էին ստացվում Թուրքիայում հայերի զանգվածային ջարդերի մասին: Այս տագնապալի լուրերը գնալով աճում էին և լուրջ մտահոգություն էին առաջացնում Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունում: Տեղերից եկած հեռագրերում նաև նշվում էր, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել հայերի կոտորածները դադարեցնելու ուղղությամբ և որ հապաղումը հղի է ծանր հետևանքներով:

Հանդիսանալով Արևմտյան Հայաստանում բարենորոգումների ծրագրի նախաձեռնողն ու ջատագովը, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը և հատկապես նախարար Ս. Սազոնովը չէին կարող անտեսել ստացված լուրերը, քանզի ջարդերի հետևանքով Թուրքիայում փաստորեն ոչնչանում էր հայկական բնակչությունը, որի համար էլ նախատեսված էր Ռուսաստանի նախաձեռնած բարենորոգումների ծրագիրը: Ավելորդ չէ նշել նաև, որ արևմտահայությունը Ռուսաստանի արևելյան քաղաքականության համար հանդիսանում էր այն հիմնական հենարաններից մեկը, որի վրա հիմնվե-

---

[4] Les Grandes Puissances l'Empire Ottoman et les Arménians dans les Archives Françaises (1914-1918). Documents réunis et présentés par A. Beylerian. Publication de la Sorbonne, Paris, 1983.

[5] Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928; Genocide: Crime against Humanity, Special Issue of the "Armenian Review", Spring 1984, Vol. 37, No. 1.

լով Ռուսաստանը մտադիր էր հասնել իր կարևոր ռազմավարական խնդիրների իրագործմանը:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը քայլեր ձեռնարկեց միանգամից երկու ուղղությամբ: Առաջին՝ քանի որ պատերազմի հետևանքով Անտանտի պետությունների դեսպանատները փակվել էին Թուրքիայում և այլևս հնարավորություն չկար բողոքել թուրքական կառավարության դեմ հայերի ջարդերի կապակցությամբ, ապա անհրաժեշտ էր, որ Անտանտի պետությունները դիմեին չեզոք պետություններին (ԱՄՆ, Իտալիա), որոնք Կոստանդնուպոլսում իրենց դեսպանների միջոցով թուրքական կառավարությանը տեղ էին հասցնում բողոքները: Երկրորդ՝ առաջարկել դաշնակից պետություններին (Անգլիա, Ֆրանսիա) Ռուսաստանի հետ միասին հանդես գալ համատեղ հայտարարությամբ, որը կհրապարակվեր միաժամանակ երեք պետությունների մայրաքաղաքներում:

Ռուսաստանը գտնում էր, որ այս հայտարարության մեջ հայերի կոտորածների անձնական պատասխանատվությունը պետք է դնել երիտթուրքական կառավարության անդամների, ինչպես նաև այն զինվորական և քաղաքացիական անձանց վրա, որոնք կապ ունեին այդ ոճրագործության հետ: Ի վերջո, Ռուսաստանի դիվանագիտական համառության շնորհիվ Համաձայնության տերությունները, Ռուսաստանի առաջարկությունից մոտ մեկ ամիս անց, 1915թ. մայիսի 24-ին միաժամանակ Լոնդոնում, Փարիզում և Պետրոգրադում հրապարակեցին հայտարարության տեքստը, որը շատ քիչ փոփոխությունների էր ենթարկվել ռուսական նախնական տարբերակից: Շուտով սակայն Ռուսաստանը և Համաձայնության մյուս երկրները հիասթափվեցին իրենց առաջին քայլից՝ չեզոք երկրների միջոցով Թուրքիայի կառավարությանը հայերի ջարդերի կապակցությամբ բողոք ներկայացնելու մտքից, քանի որ այդ քայլերը ոչ մի արդյունք չունեցան, և Թուրքիայից շարունակվում էին ստացվել տագնապալի լուրեր: Ինչ վերաբերում է մայիսի 24-ի հայտարարությանը, ապա զուտ գործնական առումով այն չէր կարող ազդել Թուրքիայի կառավարության վրա և չազդեց: Այս փաստաթղթի իմաստը կայանում էր նրանում, որ տերությունները Թուրքիային զգուշացնում էին այն մասին, որ պատերազմից հետո Թուրքիան ստիպված կլինի պատասխան տալ իր ոճրագործությունների համար: Հայտարարության մեջ Համաձայնության տերությունները փաստորեն արձանագրում էին հայերի նկատմամբ կատարված ջարդերի փաստը Թուրքիայում, այն որակելով որպես մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություն: Այս փաստաթղթի վրա էին

փաստորեն հետագայում հենվում ցեղասպանությանը վերաբերող այլ միջազգային փաստաթղթերը: Մասնավորապես 1948թ. դեկտեմբերի 9-ի Միացյալ Ազգերի Կազմակերպության մասին Համաձայնագիրը տառացիորեն կրկնում էր 1915թ. մայիսի 24-ի հայտարարության այն դրույթը, որ ցեղասպանությունը հանցագործություն է ուղղված մարդկության դեմ: 1915թ. ընդունված այս հայտարարության գործնական նշանակությունը կայանում էր հայերին քաջալերելու, նրանց ոգին բարձր պահելու մեջ, այս փաստաթղթով Անտանտի պետությունները Ռուսաստանի նախաձեռնությամբ և գլխավորությամբ իրենց բարոյական պարտքն էին կատարում հայ ժողովրդի հանդեպ, որը տվեց միլիոնավոր զոհեր, կրեց անասելի դաժանություններ նաև այն պատճառով, որ կողմնորոշվել էր դեպի Ռուսաստանը և վերջինիս հետ էր կապել իր փրկությունը:

1915-1916թթ. Եվրոպայում ակտիվ գործունեություն էին ծավալել նաև հայ գործիչները Հակոբ Զավրիևը և Պողոս Նուբար փաշան: Սխալ կլիներ կարծել, սակայն, որ նրանք իրենց բոլոր քայլերում ամբողջովին ինքնուրույն էին և անկախ: Այս գործիչները Փարիզում և Լոնդոնում իրենց բոլոր քայլերի մասին տեղյակ էին պահում ռուս դեսպաններին, իսկ վերջիններս էլ այդ տեղեկատվությունը փոխանցում էին նախարարություն: Նախքան Զավրիևի և Պողոս Նուբար փաշայի Եվրոպա մեկնելը նրանց գործունեության հիմնական ուղղությունները համաձայնեցվել էին արտաքին գործերի նախարարության հետ: Այսպիսով Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը վերահսկում էր հայ պատվիրակությունների գործունեությունը Եվրոպայում և նրանց քայլերն ուղղում իրեն ցանկալի հունով:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական փաստաթղթերում որոշակի տեղ է զբաղեցնում Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու հիմնահարցը: Այս խնդիրը աշխույժ բանավեճի առարկա էր դարձել Ռուսաստանի կառավարող շրջաններում, և տեսակետները կիսվում էին այս հարցում, քանի որ մի մասը գտնում էր, որ հայերին կարելի է վստահել և պետք է վստահել՝ տրամադրելով ինքնավարություն, նկատի ունենալով, որ դա բխում է Ռուսաստանի պետական շահերից, իսկ չինովնիկների մյուս մասը կարծում էր, որ ավելի լավ կլինի գրաված տարածքները վերահսկել առանց հայերի, ինչը ավելի ապահով և անվտանգ կլիներ Ռուսաստանի համար: Ինքը՝ Սազոնովը, սկզբում ինքնավարության կողմնակից էր, սակայն հետագայում մեծամասնության ճնշման տակ ստիպված էր վերանայել իր տեսակետը: Այս

իմաստով Արևմտյան Հայաստանի և հայկական նահանգների ապագա ճակատագրի խնդիրը դադարել էր 1916թ. սկզբին լինել ինքնուրույն հարց, ավելին՝ դիվանագիտական բանակցություններում Անտանտի երկրների միջև Արևմտյան Հայաստանի ինքնավարության մասին արդեն չէին խոսում: Խնդիրը վերաբերում էր Թուրքիայից գրաված տարածքների բաժանման մասին Համաձայնության տերությունների միջև:

Այս տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում 1916թ. սկզբից ծավալված դիվանագիտական գրագրությունը կապված Թուրքիայի տարածքների բաժանման հետ և այս հողի վրա մրցակցություն էր սկսվել դաշնակից պետությունների միջև: 1916թ. մարտի 6-ին համաձայնագիր է կնքվում Ֆրանսիայի և Անգլիայի միջև, որը ստացել է Սայքս-Պիկոյի համաձայնագիր անունը՝ համաձայնագիրը նախապատրաստող անձանց անունով: Ռուսաստանը բավականին երկար ժամանակ փորձում էր ճշգրտել իրեն անցնող տարածքները և իր ազդեցության ոլորտն այս պայմանագրի շրջանակներում և, ի վերջո, 1916թ. սեպտեմբերի 1-ին վերջապես միացավ Սայքս-Պիկոյի համաձայնագրին: Այս պայմանագիրը բխում էր միայն Անտանտի պետությունների շահերից, որտեղ անտեսված էին փոքր ժողովուրդների շահերը: Ըստ համաձայնագրի Թուրքիայի հայկական նահանգները և հայաբնակ վայրերը բաժանվում էին ֆրանսիայի և Ռուսաստանի միջև:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև 1916թ. հունիսի վերջ – հուլիսի սկիզբ թվագրվող Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովի զեկուցագիրը նախարարների խորհրդին Հայկական հարցի վերաբերյալ: Այդ ծավալուն զեկուցագրի մեջ Սազոնովը նախ անդրադառնում է այն դիվանագիտական պայքարին, որի արդյունքում ի վերջո կնքվեց 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական պայմանագիրը Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ կատարելու մասին: Այնուհետև նա ընդգծում է այն միտքը, որ հայերը միշտ հավատարիմ են եղել Ռուսաստանին և ռուսական գահին, և նրանք արժանի են վստահության ու լավ վերաբերմունքի ռուսական իշխանությունների կողմից: Իր զեկուցագրի վերջում Սազոնովը կառավարությանն առաջարկում է չորս կետից բաղկացած ծրագիր, որը նախատեսում էր բարելավել ցեղասպանությունից փրկված արևմտահայերի վիճակը: Սազոնովը Ռուսաստանի հրամայական էր համարում հայերին օգնելը, որովհետև դա ոչ միայն Ռուսաստանի բարոյական պարտքն է այն ժողովրդի հանդեպ, որը մեծ չափերի հասնող զոհեր և սարսափելի դժանություններ է կրել

նաև Ռուսաստանին հավատարիմ մնալու պատճառով, այլև դա ուղղակիորեն բխում է Ռուսաստանի արտաքին քաղաքական ու ռազմավարական շահերից: Նախարարը իր զեկուցագրում համարձակվում էր քննադատել նաև ռուսական զինվորական և քաղաքացիական իշխանություններին հայերի նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքի համար, ինչը Սազոնովի կարծիքով առաջին հերթին վնաս էր հասցնում հենց Ռուսաստանի շահերին:

Այս զեկուցագիրը դարձավ վերջինը Սազոնովի համար, որովհետև դրանից քիչ ժամանակ անց նա հրաժարական տվեց: Ցավոք, այս զեկուցագրում եղած դրույթները այդպես էլ մնացին թղթի վրա օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով:

Սազոնովի զեկուցագրով նախատեսվում էր՝

1. Ելնելով հայերի հետ անմիջական բանակցություններից և խոստումներից, որոնք Ամենայն հայոց կաթողիկոսին տրվել են Նորին կայսերական գերազանցություն կայսեր գիտությամբ և համաձայնությամբ, մասնավորապես Նորին կայսերական գերազանցության Կովկասում փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովի կողմից, հայերի համար այս ծանր, ողբերգական պահին Ռուսաստանի վրա է նրանց ամեն կերպ պաշտպանելու բարոյական պարտականությունը, այն հայ ժողովրդի, որը հավատարիմ մնալով ռուսական գահին և Ռուսաստանին, պայքարի մղվեց իր դարավոր կեղեքիչների դեմ՝ զոհասեղանին դնելով իր ողջ գոյությունը:[6]

Ս. Սազոնովը ռուսական կառավարությանը հիշեցնում էր հայերին տրված նրա խոստումների մասին և գտնում էր, որ Ռուսաստանի բարոյական պարտքն էր կատարել իր տված խոստումը մի ժողովրդի նկատմամբ, որը Ռուսաստանի պետական շահերի համար զոհասեղանին էր դրել իր ֆիզիկական գոյությունը: Այս հարցը Սազոնովը կապում էր նաև Ռուսաստանի միջազգային հեղինակության հետ: Խոստումների չկատարելը Սազոնովի կարծիքով կարող էր նսեմացնել Ռուսաստանի հզոր պետություն լինելու հեղինակությունը նաև հայերի աչքերում:

Երկրորդ կետը, ըստ էության, բխում էր առաջինից և վերաբերում էր ցեղասպանությունից փրկված հայկական հատվածի ֆիզիկական գոյության պահպանմանը:

2. Ինչպես Թուրքիան, այնպես էլ հատկապես Գերմանիան

---

[6] "Армянский вестник" возобновленное издание "Докладная записка министра иностранных дел С. Сазонова Совету Министров по Армянскому вопросу", с. 190.

ձեռնարկում են բոլոր միջոցները Հայաստանից հայերին տեղահանելու և ոչնչացնելու համար: Բնական է ուստի, որ Ռուսաստանի ռազմական իշխանությունների խնդիրը պետք է լինի Հայաստանում հայկական տարրի բազմակողմանի պաշտպանությունը, նրա կողմից՝ Հայաստանի այս կամ այն մասերի գրավելուն պես, ինչպես նաև հայերի էվակուացիային համակողմանի աջակցության ցուցաբերումը ռուսների նահանջի դեպքում:[7]

Այս դրույթով Սազոնովը ցույց էր տալիս, որ հայերի գոյությունը Արևմտյան Հայաստանում ձեռնտու չէ Թուրքիային և Գերմանիային, և Ռուսաստանը, ի հեճուկս Թուրքիայի և Գերմանիայի, պետք է անի ամեն ինչ, որպեսզի պահպանի հայկական տարրի գոյությունը Թուրքիայում: Այստեղ փաստորեն ընդգծվում է հայերի ռազմավարական դերն ու նշանակությունը Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ:

3. Գաղթականներին համակողմանի օգնության ցուցաբերումը և միաժամանակ համապատասխան միջոցների ձեռնարկումը, որպեսզի նրանք հետագայում չսփռվեն Կովկասով և Ռուսաստանով մեկ, որ հետագայում հնարավոր լինի վերադարձնել նրանց հետ՝ Հայաստան:[8]

Երրորդ կետը փաստորեն կարևորում է հայ գաղթականների վերադարձի անհրաժեշտությունը Արևմտյան Հայաստան, իսկ դա հնարավոր էր միայն այն դեպքում, եթե Կովկասի իշխանությունները հոգ տանեին և պայմաններ ստեղծեին նրանց վերադարձի համար:

Չորրորդ կետով Սազոնովն ընդգծում է հայերի կարևորությունը Ռուսաստանի ապագա քաղաքական խնդիրները լուծելու ժամանակ:

4. Հատկապես հարկավոր էր հայերի նկատմամբ բարյացկամ վերաբերմունք դրսևորել Կովկասում, ելնելով նրանց կողմից ցուցաբերված անմնացորդ հավատարմությունից դեպի Ռուսաստանը, ինչպես նաև ելնելով նրանց այն դերից, որը հայերը ապագայում կարող են խաղալ Թուրքահայաստանի կառավարման գործում:[9]

Այս դրույթով Սազոնովը փորձում էր ցույց տալ, որ հայերի դերը Ռուսաստանի համար չի կարելի համարել ավարտված և սխալ է որոշումներ ընդունել, հիմնվելով այս տեսակետի վրա: Սազոնովի խորին համոզմամբ հայերը դեռևս կարևոր առաքելություն կարող էին

---

[7] "Армянский вестник", с. 190.
[8] Նույն տեղում:
[9] Նույն տեղում:

ունենալ Արևելքում Ռուսաստանի հետագա քաղաքականության մեջ: Նախարարը, սակայն, ակնարկում էր, որ նրանք այդ դերը կկատարեն միայն այն դեպքում, եթե Ռուսաստանը կատարի իր տված խոստումները և պատշաճ վերաբերմունք ցուցաբերի արևմտահայերի նկատմամբ:

Մյուս կողմից, Սազոնովի կարծիքով, Ռուսաստանը Թուրքիայի հայ բնակչությանը և ընդհանրապես հայ ժողովրդին պետք է դիտեր ոչ թե որպես գործիք՝ իր արտաքին քաղաքական հարցերը լուծելու համար (այդպես էին կարծում որոշ պետական այրեր և նախարարներ), այլ հայերին պետք է համարեր որպես կրտսեր կամ փոքր դաշնակից, որն օգնում է Ռուսաստանին՝ իր ավագ ու հզոր դաշնակցին, լուծելու նրա քաղաքական խնդիրները, որպեսզի վերջինս էլ օժանդակի հայ բնակչությանը նրա իղձերն ու ցանկություններն իրագործելու հարցում: Ինչպես հայտնի է, Անտանտի երկրները զուտ ձևականորեն հայ ժողովրդին հռչակել էին իրենց դաշնակիցը: Սազոնովն, ի հակադրություն սրա, առաջարկում էր չբավարարվել լոկ ձևականորեն հայ ժողովրդին դաշնակցի պիտակը փակցնելով, քանի որ դա ավելի շուտ վնաս էր հասցնում Թուրքիայում բնակվող արևմտահայերին, քան օգուտ: Նա առաջ էր քաշում Ռուսաստանի և հայ ժողովրդի միջև փոխադարձ պարտավորությունների և իրավունքների գաղափարը: Ըստ նախարարի Ռուսաստանն իրավունք ունի հայ ժողովրդից պահանջել այն, ինչ նա խոստացել է կատարել (հավատարիմ մնալ Ռուսաստանին, կազմակերպել կամավորական ջոկատներ և այլն): Միաժամանակ, նախարարների խորհրդին ուղղված զեկուցագրում նա շեշտում է, որ հայերը կատարել են իրենց պարտավորությունները Ռուսաստանի հանդեպ: Համապատասխանաբար, Ռուսաստանից հայ ժողովուրդն իրավունք ունի պահանջելու այն, ինչ որ Ռուսաստանն է խոստացել հայերին (Արևմտյան Հայաստանի ինքնավարություն): Սազոնովը իր զեկուցագրում նշում էր, որ Ռուսաստանն այդ խոստումները չի կատարել և ժամանակն է գոնե զբաղվել հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանման (գաղթականների բուժսպասարկման, սննդի և ապագայում նրանց Արևմտյան Հայաստան վերադարձնելու) հարցերով:

Սազոնովը, կապված լինելով հայկական շրջանակների հետ, որոշակի տեղեկատվություն էր ստանում նրանցից Արևմտյան Հայաստանում ստեղծված իրավիճակի մասին, որը նրան օգնում էր իր գործունեության ընթացքում: Մասամբ նաև այս պատճառով էր, որ նա համարվում էր Ռուսաստանում Հայկական հարցի «խոշոր գիտակ»: Սազոնովի այս վերջին զեկուցագրից պարզ է դառնում, որ նա

հիմնվել է հայ գործիչների տրամադրած տեղեկությունների վրա և օգտագործել դրանք: Այս տեղեկությունների պարզ համադրությունն էր, որ արտաքին գործերի նախարարին հանգեցրել էր վերը նշված չորս կետերից բաղկացած ծրագրի ռուսական կառավարությանը ներկայացնելու գաղափարին:

1916թ. ընթացքում Սազոնովի ձեռնարկած կարևոր քայլերից մեկը պետք է համարել զաղթական հայերին օգնելու փորձերը: Նա տեղեկություններ էր ստացել հայկական շրջաններից, որ տեղահանված հայերը Դեր Զորի անապատներում օգնության կարիք ունեն, և նա ձեռնամուխ եղավ այդ գործին: Հունվարի 17-ին նա հեռագրեր ուղարկեց Լոնդոնում և Փարիզում ռուս դեսպաններ Բենկենդորֆին և Իզվոլսկուն, հանձնարարելով նրանց դիմել համապատասխանաբար անգլիական և ֆրանսիական կառավարություններին՝ Ռուսաստանի հետ միասին ձեռնարկելու համար մեկ միլիոն ֆրանկի չափով արևմտահայերին համաժամանակյա նպաստի հատկացման գործը: Սրանից բացի Սազոնովը նամակով դիմում է նաև Ռուսաստանի ֆինանսների նախարար Բարկին, խնդրելով նրան կարծիք հայտնել Ռուսաստանի կողմից արևմտահայերին 500 հազար ռուբլի տրամադրելու հնարավորության մասին: Ռուսաստանն այս ճանապարհով, ըստ Սազոնովի կկատարեր նպաստի տրամադրման իր բաժինը: Սազոնովին զգուշացրել էին, որ եթե Թուրքիայում իմանան, որ հայերին օգնությունը ցուցաբերվում է Ռուսաստանի կամ Համաձայնության տերությունների կողմից, ապա դա ծանր հետևանքներ կարող է ունենալ տառապանքների ենթարկված և հրաշքով փրկված հայ բնակչության խղճուկ մնացորդների համար: Ելնելով վերը նշվածից, Սազոնովը մտադիր էր հավաքված գումարը տրամադրել ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուին, որն այդ գումարը պետք է ծախսեր հայկական պատրիարքարանի գիտությամբ և համաձայնությամբ: Սակայն Սազոնովին սպասում էր հիասթափություն: Ստացվեց ֆրանսիական կառավարության պատասխանը, որտեղ ասվում էր, որ Ֆրանսիան համաձայնություն կտա այս գործին իր մասնակցության վերաբերյալ այն պայմանով, եթե իր համաձայնությունը տա նաև անգլիական կառավարությունը: Անգլիան իր պատասխանում նշում էր, որ իր զանձարանը ծանրաբեռնված է ռազմական զանազան ծախսերով և ի վիճակի չէ տրամադրել պահանջվող գումարը: Անգլիական կառավարությունը միաժամանակ «խորհուրդ» էր տալիս Ռուսաստանին դիմել բարեգործական հիմնադրամներին: Ակնհայտ էր, որ որոշակի պայմանավորվածություն կար Անգլիայի և Ֆրանսիայի միջև, և նրանք միասին ձախողեցին այս նախաձեռնությունը:

Չնայած որ դաշնակիցները դիվանագիտորեն հրաժարվեցին մասնակցել հայերին նյութական օգնություն ցույց տալու գործում, Սազոնովը, այնուամենայնիվ, մտադիր էր հայերին օգնել թեկուզ լոկ Ռուսաստանի կողմից: Սակայն շուտով ստացվում է ֆինանսների նախարար Բարկի պատասխան նամակը, որի բովանդակությունը շատ նման էր Անգլիայի կառավարության պատասխան հեռագրին: Հավանաբար Բարկը արդեն տեղյակ էր, որ դաշնակիցները մերժել էին Սազոնովին: Բարկն իր նամակում նույնպես նշում էր, որ գանձարանը ծանրաբեռնված է զանազան ռազմական ծախսերով, և նա նպատակահարմար չէր համարում այդ պայմաններում երկրից դրամ դուրս բերել, որն անչափ անհրաժեշտ էր հենց Ռուսաստանին: Բարկը, սակայն, չէր բավարարվում նշված «մասնագիտական» ձևակերպումներով և նամակի վերջում գրում է. «Իսկ տվյալ դեպքում ես առավել ևս դժվարանում եմ համաձայնություն տալ նշված գումարը բաց թողնելու համար, մանավանդ, որ այդ գումարը նախատեսվում է փոխադրել թշնամական երկիր՝ թշնամու հպատակներին օգնություն ցույց տալու նպատակով»[10]: Այսպիսով Բարկը, գերազանցելով իր իրավասությունները, բացի զուտ ֆինանսական դատողություններից, վերջում արտահայտում է զուտ քաղաքական տեսակետ՝ հայերին համարելով թշնամու հպատակներ:

1916թ. նոյեմբերի 29-ին Սազոնովը Բարկին ուղարկեց ևս մի նամակ, որտեղ նշել էր, որ հայերին օգնելու խնդրանքով իրեն են դիմել Պետական Դումայի հայ պատգամավորներ Աճեմովը և Պապաջանովը: Սազոնովը նաև նշում է, որ ռուսահպատակ հայերը մտադիր են օգնության համար դիմել նաև Ռուսաստանի դաշնակիցներին և մի շարք չեզոք պետություններին:[11] Նախարարը ակնարկում է, որ հնարավոր է նաև, որ նրանց դիմումը այնտեղ կարեկցանքով ընդունվի: Նամակում Սազոնովը պարզ նշում էր, որ Ռուսաստանը կարող էր ձեռքից բաց թողնել այս կարևոր նախաձեռնությունը: Անդրադառնալով Բարկի նամակում նշված արևմտահայերի թշնամու հպատակ լինելու խնդրին, արտաքին գործերի նախարարը փորձում էր իր գործընկերոջը ցույց տալ, որ նա այնքան էլ լավ չի պատկերացնում արտաքին քաղաքական իրավիճակը և որոշ պարզաբանումներ է մտցնում այս հարցում:

Նամակում ասվում էր. «Ի գիտություն ընդունելով այն, թե ինչ վերաբերմունք են ունեցել թուրքահպատակ հայերը Ռուսաստա-

---

[10] МОЭИ, серия III, т. 9, стр. 600.

[11] Նույն տեղում, стр. 389.

նի նկատմամբ, և որ այդ դիրքորոշումը ոչ քիչ չափով բացատրում է նրանց հետապնդումը թուրքերի կողմից, ես խիստ ցանկալի եմ համարում, որ ռուսական կառավարությունը, իր վրա վերցնելով տուժածների օգնության գործի նախաձեռնությունը, հատկացներ դրա համար 500 000 ռուբլի»[12]: Այստեղ Սազոնովը բերում է միանգամից երկու փաստարկ՝

1. Հայերը տուժել են նաև Ռուսաստանին հավատարիմ լինելու պատճառով և Ռուսաստանը պարտավոր է որոշակի ձևով փոխհատուցել հայերի այդ տառապանքների դիմաց, կատարելով բարոյական և մարդասիրական ակցիա:

2. «Այդ օգնությունը հայերին, իմ կարծիքով, անհրաժեշտ է քաղաքական նպատակներով՝ հայ ժողովրդի վրա մեր ազդեցության հետագա ամրապնդման համար»[13]: Սակայն Սազոնովի այս փաստարկներն այլևս ոչ մի նշանակություն չէին կարող ունենալ, քանի որ խնդիրն արդեն վճռված էր:

Արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովը չափազանց հայրենասեր անհատականություն էր, և նա համոզված էր, որ հայերին օգնելով, ինքը կարևորագույն գործ է կատարում իր հայրենիքի պետական և ռազմավարական շահերի ու նպատակների համար:

Այսպիսով, սխալ կլիներ Ռուսաստանի կառավարության և հատկապես Ռուսաստանի արտաքին քաղաքականության գերատեսչության և մասնավորապես նրա ղեկավարի՝ Սազոնովի գործունեությունը հայոց Մեծ եղեռնի տարիներին գնահատել միանշանակ դրական կամ բացասական: 1915-1916թթ. Ռուսաստանի քաղաքականությունը Հայկական հարցում պայմանավորված էր Ռուսաստանի ընդհանուր քաղաքական շահերով ու նպատակներով, ինչը պետք է գնահատել բնական և նորմալ: Այս իմաստով անհրաժեշտ է ցեղասպանության տարիներին Ռուսաստանի վարած քաղաքականությունը հայերի նկատմամբ հաշտեմատել մյուս տերությունների քաղաքականության հետ: Ակնհայտորեն երևում է, որ Ռուսաստանի քաղաքականությունն ավելի հայանպաստ էր, քան մյուսներինը: Այս հանգամանքը պայմանավորված էր նրանով, որ հայ ժողովրդի ցանկություններն ու իղձերը առավելապես համընկնում էին Ռուսաստանի, և ոչ թե այլ պետության շահերի հետ և հակառակը՝ առավել շատ Ռուսաստանի շահերն էին համընկնում հայերի իղձերի հետ:

---

[12] МОЭИ, серия III, т. 9, стр. 399:
[13] Նույն տեղում:

* * *

Առաջին համաշխարհային պատերազմի մեջ Ռուսաստանի մտնելուց հետո ակնհայտ դարձավ, որ խիստ հակասություններ կան Ռուսաստանի Պետական Դումայի և կառավարության միջև: Հակասություններն առկա էին հատկապես պատերազմի հետ կապված հարցերի շուրջ՝ պատերազմի ռազմավարական և մարտավարական հարցերում:

Պետական Դումայի ամբիոնը դարձել էր այն տեղը, որտեղից պատգամավորները քննադատում էին Ռուսաստանի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականությունը: Դումայում կային տարբեր քաղաքական ուժեր և հոսանքներ, և նրանցից յուրաքանչյուրն յուրովի էր ընդունում կառավարության այս կամ այն քայլը և այդ քայլերին տալիս էին իրենց քաղաքական և կուսակցական շահերից բխող մեկնաբանություններ և գնահատականներ: Այս պատկերի վրա, բնականաբար, Դումայի քաղաքական ուժերն անդրադառնում էին նաև Հայկական հարցին և հայերին, Արևմտյան Հայաստանի կառավարման հիմնահարցին և այլն: Պետք է նշել, որ ի սկզբանե, Հայկական հարցը և Արևմտյան Հայաստանի կարգավիճակի հարցը Պետական Դումայի քաղաքական ուժերն ու հոսանքները դիտում էին պատերազմի ընդհանուր շահերի, քաղաքական նպատակների պրիզմայով և Հայկական հարցը չէին համարում ընդհանուր նպատակներից անկախ և ինքնուրույն հարց:

Արևմտահայերի հարցը ոչ միայն կառավարության, այլև Պետական Դումայի առաջ հրամայական կերպով կանգնեց հայոց Մեծ Եղեռնի ժամանակ, երբ երիտթուրքերի կառավարությունը Արևմտյան Հայաստանում իրականացնում էր հայ ժողովրդի զանգվածային ոչնչացումը: Մայրաքաղաքում բազմաթիվ լուրեր էին ստացվում Թուրքիայում հայերի նկատմամբ կատարվող վայրագությունների մասին: Ռուսաստանի առաջադեմ մտավորականությունն անմիջապես արձագանքեց դրան և հասարակական կարծիքի այդ արձագանքը չէր կարող աննկատ մնալ, ուստի այն շուտով տեղափոխվեց երկրի օրենսդիր մարմին՝ Պետական Դումա:

Բնական է, որ իրավիճակը ներկայացնելու խնդիրը իրենց վրա պետք է վերցնեին Պետական Դումայի հայ պատգամավորներ Պապաջանովը և Աճեմովը, որոնք հանդիսանում էին Պետական Դումայի կադետական (սահմանադրական-դեմոկրատական) կուսակցության պատգամավորական խմբակցության անդամներ: Ռուսական պաշտոնական շրջաններում 1915թ. ապրիլ-մայիս ամիսներին լուրեր էին տարածվում, և այդ լուրերը մտան նաև Պետական

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека
А II 89170

Դումա, թե իբր Թուրքիայում հայերի զանգվածային կոտորածի մասին լուրերը չափազանցված են և մեծ մասամբ իրականությանը չեն համապատասխանում: Հայ պատգամավորների վրա դրված էր դժվարին խնդիր՝ փաստերով ապացուցել հայերի զանգվածային ջարդերի իրականություն լինելը, ինչպես նաև դառնալ հայ ժողովրդի իղձերի, ցանկությունների արտահայտողները Պետական Դումայում՝ կոչ անելով Ռուսաստանի օրենսդիր և գործադիր իշխանություններին միջոցներ ձեռնարկել հետագա կոտորածը կանխելու և հայ ժողովրդի հրաշքով փրկված հատվածի համար կատարված ոճրագործության հետևանքները մեղմելու ուղղությամբ:

Պատգամավոր Միքայել Պապաջանովը Պետական Դումայում ունեցավ ելույթների մի ամբողջ շարք: Իր ելույթների ընթացքում նա ներկայացնում էր իր կողմից հավաքած բազմաթիվ փաստեր, որոնց շնորհիվ պաշտոնական շրջանակներում արդեն չէր գտնվի մեկը, որը կասկածի տակ դներ հայերի նկատմամբ Թուրքիայում կատարված ոճրագործության փաստը:

Բացի փաստեր արձանագրելուց, Պապաջանովն իր ելույթներում փորձում էր արտահայտել հայ ժողովրդի տառապանքը և այն սարսափելի վիճակը, որի մեջ գտնվում էին իր հայրենակիցները: Նրա ելույթները չափազանց հուզական էին և որոշակի հոգեբանական ներգործություն էին ունենում դահլիճում գտնվող պատգամավորների վրա: Միքայել Պապաջանովի ելույթների նպատակը և իմաստն այն էր, որ նա իր ձեռքի տակ եղած փաստերի հիման վրա քննադատում էր Ռուսաստանի ռազմական և քաղաքացիական իշխանությունների գործողությունները, ինչպես նաև անգործությունն Արևմտյան Հայաստանում արևմտահայերի նկատմամբ: Հատկանշական է, որ Պապաջանովի այս քննադատությունն իր նպատակին էր հասնում: Սրա վառ ապացույցն այն էր, որ շուտով մամուլում արդարացուցիչ հոդվածով հանդես եկավ ռազմական հարցերով Կովկասի փոխարքայի օգնական գեներալ Յանուշկևիչը, որի ազգանունը Պապաջանովը հիշատակել էր իր ելույթում: Ակնհայտ է, որ եթե Պապաջանովի ելույթը հնչեր ոչ Պետական Դումայի բարձր ամբիոնից, այլ որևէ այլ, թեկուզև, բազմամարդ ժողովում, վերոհիշյալ չինովնիկը չէր բարևհաճի պատասխանել նրան:

Պապաջանովը, օգտագործելով պատգամավորի իր կարգավիճակը ակտիվ գործունեություն էր կատարում նաև Պետական Դումայից դուրս: Նա բազմաթիվ միջնորդություններ արեց Ռուսաստանի տարբեր նախարարներին և պաշտոնատար անձանց, ձգտելով գործնական լուծում տալ հայ գաղթականների՝ համաճարակների

տարածման կանխարգելման, բուժսպասարկման ու սննդի բազմաթիվ հարցերին, որոնք ծառացել էին հայ ժողովրդի առջև: Պապաջանովն ակտիվորեն մասնակցել է նաև թուրքերի և քրդերի մոտ գտնվող հայերին «մեկ հայ՝ մեկ ռսկի» ծրագրի շրջանակներում փրկագնելու գործին, ինչպես նաև օգնել է հայ կամավորական ջոկատներին իր հնարավորության սահմաններում:

Հայոց ցեղասպանությունը, արևմտահայերին, Արևմտյան Հայաստանի ապագա կառավարման հարցերին անդրադարձել է իր ելույթներում նաև Ռուսաստանի կադետների (սահմանադրական-դեմոկրատական) կուսակցության ղեկավար և միաժամանակ Պետական Դումայում այդ կուսակցության պատգամավորական խմբակցության ղեկավար Պավել Միլյուկովը: Միլյուկովը ճանաչված, փորձառու և ազդեցիկ քաղաքական գործիչ էր և հանդիսանում էր բավականին ծանրակշիռ կուսակցության ղեկավար, որի խոսքը ազդեցություն ուներ ինչպես Պետական Դումայում, այնպես էլ Ռուսաստանի կառավարությունում: Այս ամենով հանդերձ Միլյուկովը շատ զգույշ էր ինչպես իր ելույթներում և արտահայտություններում, այնպես էլ իր քաղաքական քայլերում: Սա էր պատճառը, որ Միլյուկովի ճառը Հայկական հարցի վերաբերյալ շատերին զարմացրեց: Նա 1916թ. մարտի 11-ի իր ելույթում ուղղակիորեն պահանջում էր Ռուսաստանի կառավարությունից կատարել դեռևս պատերազմի սկզբին հայերին տված խոստումը՝ կապված Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու հետ: 1916թ. դրությամբ սա չափազանց համարձակ հայտարարություն էր, որ արվեց Միլյուկովի կողմից:

Պետական Դումայում 1916թ. մարտի 11-ին ունեցած ճառում Միլյուկովը մասնավորապես ասում է. «Ռուսաստանին հավատարիմ մնալու համար տուժած քրիստոնեական բնակչությունը պետք է բնակեցվի իր բնակավայրերում, և Ռուսաստանը, որը դեռևս թուրքական վարչակարգի օրոք խոստացել էր ինքնավարություն, պարտավոր է իրականացնել այդ խոստումն այժմ, երբ վիլայեթները մեծ մասամբ գտնվում են իր ձեռքերում»[14]:

Այնուհետև Միլյուկովն իր ելույթում անդրադառնում է իր կարծիքով շատ տարօրինակ մի երևույթի և իր տեսակետը արտահայտում է հռետորական հարցի ձևով. «Ինչո՞ւ ենք մենք հակված պաշտպանելու անուղղելի թուրդ-թշվորին և նույնիսկ փորձում ենք նրան դարձնել հողագործ՝ ընդդեմ նրա հին զոհի՝ նստակյաց հողա-

[14] РИГАОИ, стр. 123.

գործ հայի»[15]:

Այս հարցը բոլորովին էլ պատահական չէր: Արևմտյան Հայաստանում զինվորական իշխանությունները փորձում էին ի դեմս քրդերի հակակշիռ ստեղծել հայերին, նրանց համար սահմանելով արտոնյալ պայմաններ ի վնաս հայերի: Եվ սա այն դեպքում, երբ բազմաթիվ դեպքեր էին արձանագրվել, երբ ռուսական զինվորական իշխանությունների կողմից հովանավորված քրդերը, պահպանելով իրենց զենքը, վնաս էին հասցնում ոչ միայն հայերին, այլև անմիջականորեն հարվածում էին ռուսական բանակին թիկունքից: Միլյուկովն իր ելույթում սխալ և վնասակար էր համարում այն քաղաքականությունը, ըստ որի ռուսական զինվորական իշխանությունները փորձում էին ձեռք բերել անկայուն և կասկածելի քոչվոր քրդերի հավատարմությունը, դավաճանելով հին և հավատարիմ ընկերոջը՝ հային[16]:

Սխալ կլիներ սակայն կարծել, թե Պ. Միլյուկովը չէր հաշվարկել իր այս քայլը: Ընդդիմությունում եղած ժամանակ նա վարպետորեն կարողանում էր օգտագործել կառավարության սխալներն ու բացթողումները՝ վերջինիս քննադատելու և հարված հասցնելու համար: Այս ամենը հետապնդում էր մի նպատակ՝ շարունակ քննադատելով իշխանություններին ի վերջո հասնել իշխանության: Եթե ընդդիմությունում եղած ժամանակ Միլյուկովն ասում էր մի բան, ապա 1917թ. ժամանակավոր կառավարության արտաքին գործերի նախարարի պաշտոնում ասում էր այլ բան: Արևմտյան Հայաստանի ապագա կառավարման հարցը և ընդհանրապես Հայկական հարցը հարմար թեմա էր կադետների առաջնորդի համար կառավարությանը քննադատելու համար և նա առիթը բաց չթողեց, իսկ հետագայում արտաքին գործերի նախարարի պաշտոնում նրա հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ նվազեց:

Նույն օրը, մարտի 11-ին Պետական Դումայում ելույթ ունեցավ նաև կադետական խմբակցության անդամ, հայ պատգամավոր Մ. Պապաջանովը: Այս հանգամանքը չի կարելի համարել պատահականություն: Եթե այդ օրը միայն Պապաջանովի ելույթը կդիտվեր սովորական, նկատի ունենալով, որ Պապաջանովը ելույթների մի ամբողջ շարք էր սկսել Պետական Դումայում, ապա նույն օրը հնչած կադետների առաջնորդի ելույթն արդեն առիթ է տալիս որոշակի եզրակացությունների համար: Պավել Միլյուկովի ելույթը ոչ

---

[15] РИГАОИ, стр. 124.
[16] Նույն տեղում:

միայն լոկ իր տեսակետն էր, այլև Պետական Դումայի կաղետների խմբակցության, ավելին՝ կաղետական (սահմանադրական-դեմոկրատական) կուսակցության դիրքորոշումն էր այս հարցում: Կարելի է ենթադրել, որ նախքան Միլյուկովի և Պապաջանովի ելույթները, տեղի է ունեցել կաղետների խմբակցության խորհրդակցություն այս հիմնահարցին նվիրված, որի արդյունքում խմբակցությունը եկել է այն եզրակացության, որը և արտահայտվել է նրա ղեկավարի՝ Միլյուկովի ելույթում: Միլյուկովի ելույթը իր ճառով ավելի է հաստատում և ամրապնդում նույն խմբակցության անդամ Մ. Պապաջանովը:

Ինչպես և Միլյուկովը, Պապաջանովը ևս իր ճառում անդրադարձավ Ռուսաստանի վերաբերմունքի հարցին քրդերի և հայերի նկատմամբ: Պապաջանովը մասնավորապես նշում էր, որ. «Քրդական հրոսակախմբերի ղեկավարները, որոնք կոտորում էին հայերին, ոչ միայն չեն պատժվել, այլև քրդերի զինաթափումը կատարվել է այնպես, որ հայերի դեմ պայքարում և հայ բնակչության նկատմամբ զանազան գազանություններ գործած մարդիկ շարունակում են ազատ բնակվել իրենց նախկին տեղերում»[17]: Բացի սրանից, Պապաջանովը մատնանշում է Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի կառավարման աղաղակող թերություններն ու բացթողումները, ցույց է տալիս գործադիր իշխանության տարբեր ճյուղերի միջև եղած հակասությունները Արևմտյան Հայաստանի կառավարման գործում: Պապաջանովը մասնավորապես նշում էր. «Ցավոք, մինչ այժմ արտաքին գործերի նախարարությունը, որի ցուցումներով պետք է առաջնորդվեին քիկունքային իշխանությունները, չի գործադրել, հնարավոր է ոչ իր մեղքով, առողջարար միջամտություն: Եթե արտաքին գործերի նախարարության իրավասությունների շրջանակներում լիներ մեր կողմից գրավված տարածքների կառավարման հարցը, ապա չէր լինի այն, ինչ օրերս տեղի ունեցավ Էրզրումում: Այդ ժամանակ գեներալ Յանուշկևիչը կհասկանար, որ չի կարելի տեղահանված և, հնարավոր է, նաև մասամբ կոտորված հայերի ունեցվածքը համարել անտեր ունեցվածք, որն անցել է թուրքական կառավարությանը»[18]: Այստեղ Պապաջանովն անդրադառնում է արևմտահայերի համար շատ ցավոտ մի հարցի՝ նրանց ունեցվածքի հետ վերադարձնելու հարցին, ինչը կապված էր մեծ դժվարությունների հետ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Այնուհետև Պապաջանովը շարունակում է. «Եթե արտաքին գործերի նախարարու-

---

[17] ՊՀՊԱՕՀ, էջ. 127.
[18] Նույն տեղում:

թյունը բացատրեր գեներալ Յանուշկևիչին նրա տեսակետի սխալականությունը, ապա նա չէր անի և հաջորդ սխալ եզրակացությունը՝ չէր թույլատրի իշխանություններին տնօրինել այդ ունեցվածքը իր հայեցողությամբ, ինչպես վարվում են թուրքական գանձարանի ունեցվածքի հետ»[19]: Ահա այս արտահայտությունն էր, որ ստիպել էր գեներալ Յանուշկևիչին արդարացման հողվածով հանդես գալ մամուլում: Պապաջանովն իր այս միտքը ավարտում է ավելի դիպուկ, հստակ արտահայտություններով, որոնց մեջ խոր ակնարկ էր պարունակված: «Իհարկե, հայերի համար դա չնչին կորուստ է համեմատած այն կորուստների հետ, որոնք նրանք կրել են: Սակայն Ռուսաստանը, թվում է, ևս կարիք չունի արյունով թաթախված ժառանգության»[20]:

Իր ճառի վերջում Պապաջանովը կարճ պատմական էքսկուրս է կատարում, հիշատակելով, որ 1878թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ էլ ձեռք ձեռքի տված ռուսական զորքերի հետ, թուրքերի դեմ կռվում էին հայերը և չնայած այն դաժան պատժամիջոցներին, որոնք հետևեցին դրանից հետո նրանց նկատմամբ, հայերը երբեք իրենց հույսը չեն կորցրել Ռուսաստանի օգնությամբ իրենց հայրենիքի վերածննդի հարցում:

Չնայած բոլոր բացասական երևույթներին, Պապաջանովն իր ելույթի վերջում հավաստիացնում էր Պետական Դումային, որ հայերը չեն հուսահատվել և լի են վճռականությամբ շարունակելու պայքարը: Պապաջանովը նշում է նաև այն պատճառը, թե ինչու են հայերը այդչափ տառապանքներից հետո մտադիր շարունակել պայքարը մինչև վերջ, քաջ գիտակցելով, որ պայքարի շարունակությունը պահանջում է լրացուցիչ զոհեր: «Ռուսաստանի և նրա դաշնակիցների հաղթանակը, - ասում է Պապաջանովը, - Թուրքահայաստանին կբերի ազգային կյանքի զարգացում, Գերմանիայի գերիշխանությունը կխեղդի փոքր ազգությունը: Գերմանիան ձգտում է թույլերի ճնշմանը, իսկ Ռուսաստանի և նրա դաշնակիցների հաղթանակը, ընդհակառակը, կբերի բոլոր ազգությունների իրավունքների հարգանք, նրանց իրավունք կվերապահի ինքնուրույն տնօրինել սեփական ներքին կյանքը»[21]: Այստեղ Պապաջանովը նշում է, որ հայ ժողովուրդը, իր ճակատագիրը կապելով Ռուսաստանի հետ, պետք է շարունակի իր պայքարը նրա կողքին, քանզի Ռուսաստանի հետ է

---

[19] РИГАОИ, стр. 127.
[20] Նույն տեղում, стр. 128:
[21] Նույն տեղում:

կապում իր իղձերի և ցանկությունների իրագործումը: Անոտղակի ձևով Պապաջանովը նաև Պետական Դումայում Ռուսաստանին հիշեցնում է հայերին պատերազմից առաջ տված խոստումների մասին: Պապաջանովի այս ելույթը ծափահարությունների է արժանանում Պետական Դումայի կողմից:

Թուրքիայում հայերի կոտորածների մասին Պետական Դումայում իր ելույթներում անդրադարձել է նաև Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովը: Պետք է նշել, որ Սազոնովի ելույթները Հայկական հարցի վերաբերյալ Պետական Դումայում ավելի զուսպ էին, և դա պետք է համարել բնական և նորմալ, քանզի պետական բարձր պաշտոնյայի՝ արտաքին գործերի նախարարի կարգավիճակը թույլ չէր տալիս նրան ազատ արտահայտել իր տեսակետները: Նա, որպես Ռուսաստանի կառավարության արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար, պարտավոր էր արտահայտել լոկ կառավարության տեսակետն այս հարցում: Սա էր պատճառը, որ Սազոնովը Պետական Դումայում երբեք չի խոսել Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու մասին և միշտ խուսափել է այս հարցի քննարկումից Պետական Դումայում, որտեղ տարբեր քաղաքական ուժերն ու հոսանքները տարբեր կողմերից քննադատում էին Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը, որի պատասխանատուն իրավաբանորեն հանդիսանում էր ինքը: Այնուամենայնիվ, Սազոնովն իր ելույթներում միշտ նշում էր, որ հայերը հավատարիմ են Ռուսական կայսրությանը և անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել կոտորածից տուժած հայերին հնարավորությունների սահմաններում օգնելու համար: Վերջին հաշվով բոլորը Սազոնովին ճանաչում էին որպես 1914թ. հունվարի 26-ի Արևմտյան Հայաստանում բարենորոգումների ծրագրի նախագծողի ու ջատագովի և պատահական չէր, որ պաշտոնական շրջաններում նրան փակցվել էր «հայասերի» պիտակ, ինչը նրան որոշակիորեն խանգարում էր իր գործունեության ընթացքում, քանզի նրա ցանկացած քայլ Հայկական հարցի հետ կապված բշնամական և անվստահության վերաբերմունքի էր հանդիպում: Նշենք սակայն, որ ինչպես Սազոնովը, այնպես էլ մյուս գործիչները «հայասեր» էին այնքանով, որքանով այդ «հայասիրությունը» բխում կամ համընկնում էր Ռուսաստանի պետական շահերի հետ: Այս միտքը հստակորեն երևում է Ս. Դ. Սազոնովի Պետական Դումայում դեռևս 1915թ. հունվարին ունեցած ճառում, երբ նա հայտարարեց, որ. «Վերջին տարիների ընթացքում կայսերական կառավարությունն անշեղորեն ձգտել է հայերի վիճակի թեթևացմանը, այդ գործում ղեկավարվելով

ինչպես ռուսական քաղաքականության անշահախնդիր ավանդույթներով, այնպես էլ մեր պետական շահերով»[22]: Այստեղ Սազոնովը ակնհայտորեն հակասում է ինքն իրեն: Մի կողմից նա նշում է, որ հայերի վիճակը բարելավելիս առաջնորդվել են անշահախնդիր միտումներով, մյուս կողմից հերքում է այդ միտքը, նշելով, որ առաջնորդվել են Ռուսաստանի պետական շահերով: Այս հակասությունն է հենց, որ ցույց է տալիս, որ Ռուսաստանի պետական շահերն են դրդել, որ Ռուսաստանը, որքան էլ դա տարօրինակ է, «անշահախնդրորեն» ձգտի օգնել հայերին: Ըստ էության, Ռուսաստանի խնդիրն իր պետական շահերի և նպատակների իրականացմանը հասնելն էր, որի համար Ռուսաստանն իր վրա էր վերցնում քրիստոնյա ժողովուրդների «ազատարարի» տիտղոսը:

Հետագայում, ավելի ուշ, 1916թ. փետրվարին Պետական Դումայում ունեցած իր հերքական ելույթներում Սազոնովը նշում է. «Դաշնակից Գերմանիայի բարեհաճ աչքի առաջ թուրքերն, ըստ երևույթին, մտադիր են իրականացնել իրենց վաղեմի երազանքը հայ բնակչության ամբողջական բնաջնջման հետ կապված, որը չի ենթարկվում մահմեդական զանգվածի ազդեցությանը և այդպիսով արգելք է ծառայում Թուրքական կայսրությանն իրեն տնտեսապես և քաղաքականապես ենթարկելու գերմանական ծրագրերի համար...»[23]: Այս ելույթը նախորդի տրամաբանական շարունակությունն էր: Այստեղ նախարարը զարգացնում է այն միտքը, որ հայերի ոչնչացումը բխում է Գերմանիայի շահերից, ուստի սրանից պետք է եզրակացնել, որ Ռուսաստանը պետք է անի ամեն ինչ, որպեսզի Թուրքիայի տարածքում պահպանվեն հայերը՝ որպես Գերմանիայի ծրագրերի իրագործման խոչընդոտ: Սազոնովի ելույթի այս հատվածը ևս հաստատում է այն միտքը, որ պաշտպանելով հայերի ֆիզիկական գոյությունը, ըստ նրա, ինքը մեծապես կնպաստեր Ռուսաստանի արտաքին քաղաքական շահերին, այնքանով, որքանով որ դա վնաս էր հասցնում Գերմանիային և Թուրքիային:

Պետական Դումայում հնչած ելույթները մի տեսակ սպասելիք էին կրում Ռուսաստանի գործադիր մարմինների համար, և վերջիններս Արևմտյան Հայաստանի նկատմամբ որևէ քայլ կատարելուց կամ որոշում ընդունելուց առաջ որոշակի մտավախություն ունեին, որ Պետական Դումայում հետագայում այդ որոշումը կամ քայլը քննարկվելու է, և Դուման անպայման արձագանքելու է դրան:

---

[22] РИГАОИ, стр. 7.
[23] Նույն տեղում, стр. 106:

Այս իմաստով Պետական Դումայում հնչած ելույթները ունեին կարևոր հայանպաստ նշանակություն:

* * *

Հայկական հարցը Հայոց ցեղասպանության տարիներին արժանացել է նաև երեք ռուսական կառավարությունների լուրջ ուշադրությանը, որոնք իրենց նիստերի ժամանակ քննարկել են արևմտահայերի ծանր դրությունը և փորձել են լուծումներ գտնել առաջացած խնդիրների հետ կապված: 1916թ. մարտի 17-ին կայացած ցարական կառավարության հատուկ խորհրդակցության ժամանակ Օսմանյան կայսրության և մասնավորապես Արևմտյան Հայաստանի տարածքների մեծ տերությունների միջև բաժանելու կտրվածքով քննարկվեց նաև արևմտահայերի ապագա ճակատագրի հարցը: Կովկասի փոխարքայի ներկայացուցիչը խորհրդակցության ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ Հայաստանի բաժանումը երկու մասերի, որոնցից մեկը կանցնի Ռուսաստանին, իսկ մյուսը՝ Ֆրանսիային, կառաջացնի հայերի դժգոհություն և բողոքներ և կհանգեցնի ոչ բարենպաստ քարոզչության Կովկասում: Ի պատասխան դրա արտաքին գործերի նախարարը բացատրեց, որ նման բաժանումը համապատասխանում է տեղանքի տեղագրական առանձնահատկություններին և հայերի դավանանքին: Բացի այդ, նա նշեց, որ եթե հնարավոր չէ ստեղծել միասնական Հայաստան, ապա հենց հայերի համար ավելի լավ է, որ իրենց Ռուսաստանից դուրս մնացած մասը պատկանի մշակութային Ֆրանսիային, քան թե Թուրքիային, որը նրանց այդքան դժբախտություններ է պատճառել: Խորհրդակցությունը դրա հետ լիովին համաձայնվեց:[24] Այսպիսով Մազոնովն անգլո-ֆրանսիական դիվանագիտական ճնշման տակ արդեն հաշտվել էր Արևմտյան Հայաստանի մի մասի Ֆրանսիային անցնելու հետ և այժմ փորձում էր հիմնավորել Ռուսաստանի այդ դիվանագիտական պարտությունը, կոչ անելով նաև հայերին հաշտվել դրա հետ:

Արևմտահայերի խնդիրներին անդրադարձավ նաև Ժամանակավոր կառավարությունը 1917թ. իր ապրիլի 26-ի նիստի ժամանակ: Այս որոշման համաձայն, որի նախագիծը Ժամանակավոր կառավարությանն էր ներկայացրել Հակոբ Զավրիևը, Թուրքահայաստանի տարածքը դուրս էր բերվում կովկասյան իշխանությունների, ինչպես նաև Կովկասյան ճակատի զինվորական մասերի իրավասությունից և ուղղակիորեն ենթարկվում էր Ժամանակավոր կառա-

[24] PAT, էջ. 172-174.

վարությանը: Այդ տարածքի կառավարումը պետք է իրականացներ Ժամանակավոր կառավարության կողմից նշանակված Թուրքահայաստանի գեներալ-կոմիսարը:[25]

Այդ հարցի քննարկման շարունակությունը և ավարտը կատարվեց Ժամանակավոր կառավարության 1917թ. մայիսի 15-ի նիստին, որի ժամանակ ճշգրտվեցին Թուրքահայաստանի սահմանները: Ժամանակավոր կառավարությունը Ասիական Թուրքիայի շրջաններից բուն հայկական էր համարում Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները:

Բացի դրանից, կառավարությունը գտնում էր, որ այդ տարածքի տնտեսության զարգացման շահերից ելնելով, ինչպես նաև հանուն արդարության և հայերի իրավունքների վերականգնման, որոնք կոտորածով և տեղահանությամբ ճնշվում են Թուրքիայի կողմից, հարկավոր է անհապաղ միջոցներ ձեռնարկել այդ շրջանները հայերով վերաբնակեցնելու ուղղությամբ, որոնք ընթացիկ պատերազմի և դրան նախորդող տարիներին տեղափոխվել են Ռուսաստանի տարածք: Նույն ձևով չպետք է որևէ արգելքներ դրվեին նախկին թուրքահպատակ այն հայերի առջև, որոնք ընդհանրապես ցանկանում են վերադառնալ և բնակվել այդ շրջաններում:[26]

Ելնելով պատերազմի անավարտ լինելու հանգամանքից, ռազմաճակատի գծի հնարավոր տատանումներից և պատերազմի ու տրանսպորտային դժվարություններից, գեներալ-կոմիսարին առաջարկվում էր բնակեցումն իրականացնել աստիճանաբար և ծրագրով, որը նախապես կհամաձայնեցվի հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Ինչ վերաբերում է թուրքերին, քրդերին և լազերին, ապա բանակի ռազմական ապահովման և հնարավոր ազգային բարդությունները կանխարգելելու նպատակով հարկավոր էր մինչև հատուկ կարգադրության հրապարակումը թույլ չտալ նրանցից որևէ մեկի վերադարձը, ովքեր հեռացել էին թուրքական զորքերի հետ:[27]

Նույն նիստի ընթացքում որոշվում է Կովկասյան ռազմաճակատի մատակարարման գլխավոր վարչության պետ գեներալ-լեյտենանտ Պ. Ավերյանովին նշանակել Թուրքահայաստանի գեներալ-կոմիսար, իսկ Հ. Զավրիևին՝ գեներալ-կոմիսարի քաղաքացիական

---

[25] ГАОТОМС, т. 1, стр. 296-297.
[26] Նույն տեղում, стр. 298-300.
[27] Նույն տեղում:

հարցերով օգնական:[28]

Խորհրդային իշխանություններն իրենց հերթին 1917թ. դեկտեմբերի 29-ին հրապարակեցին «Թուրքահայաստանի մասին դեկրետը»: Փաստաթղթում մասնավորապես ասված է, որ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հայ ժողովրդին հայտարարում է, որ Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն:[29] Սակայն Ժողովրդական կոմիսարների խորհուրդը գտնում է, որ այդ իրավունքի կենսագործումը հնարավոր է միայն մի շարք նախնական երաշխիքների ապահովման պայմանով, որոնք անվերապահորեն անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ հանրաքվեի համար:[30] Իբրև երաշխիքներ նշվում էին՝ ռուսական զորքերի դուրսբերումը Արևմտյան Հայաստանի տարածքից, ժողովրդական միլիցիայի կազմավորումը, հայերի անարգել վերադարձը արտասահմանից և Թուրքիայի խորքերից, հայկական ինքնակառավարման մարմինների ստեղծումը: Նշենք միայն, որ ռուսական զորքերի դուրսբերումը, որը դեկրետի առաջին կետն էր, անհնարին էր դարձնում մյուս բոլոր երաշխիքների իրականացումը, ինչը ամբողջ դեկրետը դարձնում էր զուտ դեկլարատիվ փաստաթուղթ:

* * *

Արևմտահայերի ողբերգական վիճակը եղել է նաև ռուսական զինվորական և կովկասյան իշխանությունների ուշադրության կենտրոնում: Բարձրաստիճան ռուս զինվորականներն իրենց զեկուցագրերում նկարագրում էին հայերի կոտորածները: Մասնավորապես ռուսական բանակի շտաբս-կապիտան Կրիմ Չամխալչը 1916թ. փետրվարի 14-ի զեկուցագրում նկարագրում է, թե ինչպես էր կատարվում հայերի ոչնչացումը. «Սովորաբար այսպես էր արվում. մի մեծ փոս էր փորվում, դեպի նրա եզրն էին քշվում կանայք երեխաների հետ և մայրերին ստիպում էին երեխաներին հրել, նետել այդ հորը, որից հետո հորի մեջ մի քիչ հող էին լցնում, ապա կապկպված հայ տղամարդկանց աչքի առաջ բռնաբարվում էին կանայք և սպանվում, այդ ամենից հետո վերջապես սպանվում էին տղամարդիկ, դիակները լցնում էին փոսը գրեթե մինչև վերջ: Քրիստոնյաների մի մասին

---

[28] ГАОТОМС, т. 1, стр. 298-300.
[29] ГАОИ, стр. 491.
[30] Նույն տեղում, стр. 492.

քշում էին դեպի գետը և կամուրջներից նետում ջուրը, ընդ որում, դուրս լողացողներին բռնում էին և նորից նետում: Եփրատում և Մուշի մոտակա գետում հիմա կլինեն հայերի առնվազն 25 000 դիակներ»:[31]

Արևմտահայերի վիճակի բարելավմանն էր վերաբերվում արտաքին գործերի նախարար Սազոնովի և Կովկասի փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչի միջև նամակագրությունը: Ի պատասխան Սազոնովի նամակի Կովկասի փոխարքան պատասխանում է. «Ես լիովին Ձեզ հետ համաձայն եմ, որ պետք է և միանգամայն հնարավոր է, հայերին տրամադրել դպրոցական ու եկեղեցական անկախություն, եկեղեցական ունեցվածքների և գույքերի կառավարման իրավունք, մայրենի լեզվից օգտվելու իրավունք՝ բոլոր պաշտոնական դեպքերում ռուսաց լեզվի առաջնության պայմանով, ինչպես նաև քաղաքային և գյուղական ինքնավարություն՝ ընտրությունների ժամանակ բնակչության հարաբերակցության տոկոսի պահպանմամբ հանդերձ»: [32]

* * *

Արևմտահայերի վիճակին և այդ վիճակի բարելավման հիմնահարցերին մամուլի էջերում անդրադարձել են նաև ռուս պատգամավորները և բարձրաստիճան պաշտոնյաները:

Պետական Դումայի պատգամավոր Ա.Ֆ.Կերենսկու ազատ տնտեսական ընկերությունում 1915թ. հունվարի 13-ին ունեցած զեկուցումը հունվարի 20-ին իր էջերում տպագրեց "Кавказская мысль" թերթը: Թերթը նշում է, որ ներկայացնելով գաղթականների ծանր վիճակը, Կերենսկին մասնավորապես ասաց. «Հենց որ սկսվեց թուրքական հարձակումը, որն անցավ ռուսական տարածք, դեպի հյուսիս ձգվեցին գաղթականների գետերը... Դա գաղթականություն չէ, ոչ, դա մի ողջ ժողովրդի մեծ ավարտն է...»[33] Զեկուցողը ելույթն ավարտում էր գործողության կոչով. «Այսպիսով, Կովկասում բացի ռուսական տարածքի շրջանից եկած գաղթականներից, որը մի ժամանակ գրավված էր թուրքերի կողմից, Հայաստանից հայտնվեց մի ամբողջ նոր ժողովուրդ, որը զանգվածաբար մնաց առանց գոյության միջոցների: Ամենահնոտենսիվ հասարակական աշխատանքի համար թատերաբեմը չափազանց լայն է, աղաղակող է կարիքը, որը պա-

[31] ГАОИ, стр. 415:
[32] РАТ, стр. 212.
[33] РИГАОИ, стр. 5:

հանջում է անհապաղ բավարարվածություն...»[34]

Ռուսաստանի ռազմա-արդյունաբերական համալիրի նախագահ Գուչկովը, որը կրկին պատրաստվում էր մեկնել Արևմտյան Հայաստան, "Кавказское слово" թերթում տված հարցազրույցում ասել է. «Հայ ժողովրդի հայրենասիրությունը պահպանեց նրա կենսունակությունը, և նա նորից սկսեց թվով աճել և տնտեսապես զարգանալ իր իսկ մոխրակույտի վրա: Այդ մասին են վկայում իսկական «արյունալի բաղնիքում» նրա նոր հարյուր հազարավոր զոհերը, նրա հարուստ դաշտերը և այգիները, որոնք կրկին ավերվեցին: Այժմ, հավանաբար, ես վերստին կհանդիպեմ քայքայման վաղեմի տեսարանները, եթե ոչ մեծ, ապա համենայնդեպս, ոչ նվազ, քան 1895թ. մասշտաբները»:[35] Վերջում Գուչկովը հույս է հայտնում, որ Հայաստանի կենսական ուժերը դեռ չեն սպառվել, նրան դեռևս սպասում է փայլուն տնտեսական ապագա, եթե միայն նրա մշակութային ուժերին թույլ տան ազատորեն աճել:[36]

Պետական Դումայի պատգամավոր Ն. Շչեպկինը 1916թ. մարտին "Армянский вестник" թերթում տպագրեց հոդված հայկական գավառներում ժամանակավոր կառավարման կազմակերպման մասին, որտեղ առաջարկում էր այդ գործում մեծապես հիմնվել տեղի բնակչության, մասնավորապես հայերի վրա:[37]

Ամփոփելով վերը շարադրվածը, պետք է նշենք, որ ստորև ներկայացվող փաստաթղթերը վկայում են այն մասին, որ Ռուսաստանը Առաջին աշխարհամարտի տարիներին, հայ ժողովրդի համար այդ ողբերգական ժամանակաշրջանում, չնայած որոշ բացասական դրսևորումների, արևմտահայերի նկատմամբ վարել է հայանպաստ և հայապահպան քաղաքականություն:

Պատմական գիտությունների թեկնածու
Արմեն Մարության

---

[34] РИГАОИ, стр. 5:
[35] Նույն տեղում, стр. 205:
[36] Նույն տեղում, стр. 206:
[37] Նույն տեղում, стр. 128-130.

1915թ.

№ 1

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Ա. Ֆ. ԿԵՐԵՆՍԿՈՒ ԱԶԱՏ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԶԵԿՈՒՅՈՒՄԻՑ

Պետրոգրադ,
13 հունվարի 1915

...Զեկուցող Կերենսկին նկարագրեց գաղթականության ցնցող պատկերը...

«Հենց որ սկսվեց թուրքական հարձակումը, որն անցավ ռուսական տարածք, դեպի հյուսիս ձգվեցին գաղթականների գետերը... Դա գաղթականություն չէ, ոչ, դա մի ողջ ժողովրդի մեծ ավարտն է...»

Պատգամավոր Ա. Ֆ. Կերենսկուն անձամբ վիճակվել էր տեսնել մի ամբողջ ժողովրդի ողբերգական մեծ ավարտը:

Նա տեսավ, թե ինչպես ճանապարհով գնում էին այդ պատառոտված, ցրտահարված, սոված, դժբախտ մարդկանց շարասյունները: Ճանապարհի եզրերին թափված էին ցրտահարված ծծկեր երեխաների դիակները, որոնք լքված էին մայրերի կողմից: Մարդիկ հյուծված ընկնում էին, սակայն բազմությունը անդադար անտարբերությամբ ընթանում էր առաջ և առաջ:

Պետական Դումայի բուժարանն ընդունեց Հայաստանից այդ գաղթականների շարասյուներից մեկը: Սկսեցին կերակրել և հագցնել դժբախտներին, օգնություն ցուցաբերել հարյուրավոր մարդկանց, սակայն չորսկողմը նրանք հազարներ և տասնյակ հազարներ էին:

«Այսպիսով, - ասում է զեկուցողը, - Կովկասում բացի ռուսական տարածքի շրջանից եկած գաղթականներից, որը մի ժամանակ գրավված էր թուրքերի կողմից, Հայաստանից հայտնվեց մի ամբողջ նոր ժողովուրդ, որը զանգվածաբար մնաց առանց գոյության միջոցների: Ամենահնտենսիվ հասարակական աշխատանքի համար բատերաբեմը չափազանց լայն է, աղաղակող է կարիքը, որը պահանջում է անհապաղ բավարարում...»

"Кавказская мысль", 20 января 1915г.
РИГАОИ, стр. 5.

№ 2

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ. ՍԱԶՈՆՈՎԻ ՃԱՌԻՑ

Պետրոգրադ,
27 հունվարի 1915թ

«...Կայսերական կառավարությունը վերջին տարիներին անշեղորեն ձգտում էր թեթևացնել թուրքահայերի ճակատագիրը, այդ գործում ղեկավարվելով ինչպես ռուսական քաղաքականության անշահախնդիր պատգամներով, այնպես էլ մեր պետական շահերով: Երբ Բեռլինում համոզվեցին Հայաստանի բարեփոխումների ծրագրի իրականացմանը հասնելու մեր մտադրությունների անսասանության մեջ, գերմանական դիվանագիտությունը պատրաստակամություն հայտնեց կիսել մեր աշխատանքը՝ հետին միտք ունենալով արգելակել կյանքում այդ բարեփոխումների ճիշտ իրականացումը...»:

"Русские ведомости", N 22, 28 января 1915г.
РИГАОИ, стр. 7.

№ 3

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ (ԲԱՔՎԻ, ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԻՑ) ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ԵԼՈՒՅԹՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

27 հունվարի 1915

Անցած տարվա հուլիսի 26-ի պատմական նիստին ես, ցավոք, չէի կարող մասնակցել, ելնելով պարագաներից, որոնք ինձնից կախված չէին: Ներկայիս նիստին հաճելի պարտականություն եմ համարում հայ բնակչության ժողովրդական ներկայացուցչի իմ ձայնը միացնել Ռուսաստանը բնակեցնող տարբեր ազգությունների պատգամավորների ձայնին, որոնք ռուս ժողովրդի հետ միասին կազմում են մեկ անբաժանելի օրգանական ամբողջություն: (Ծափա-

հարությունները): Գերմանիայի կողմից մեզ պատերազմ հայտարարելու առաջին իսկ օրվանից Ռուսաստանի հայերը մի մարդու նման կանգնեցին պայքարի հայրենիքի շահերի պաշտպանության իրավունքի և արդարության համար: Հայտարարություններից և խոսքերից գործին անցնելով, չխոսելով առանձին ունևոր անձանցից, որոնք լայնորեն արձագանքեցին պատերազմի կարիքներին, ամբողջ հայ հասարակությունը, սկսած մայրաքաղաքի և վերջացրած գյուղական բնակչությունով դրան բերեցին իրենց ավանդը: Կատարելով իրենց պարտքը մեծ հայրենիքի առջև և հաճույքով պատերազմ ուղարկելով պահեստայիններին, հայերը գերազանցապես կամավոր մեկնեցին Արևմտյան և Կովկասյան ճակատներ և ձևավորեցին կամավորական ջոկատներ, որոնք մինչև ներկա պատերազմը հաջողությամբ կատարեցին երկամսյա արշավ, գտնվելով առաջին դիրքերում, անընդհատ շփման մեջ լինելով թշնամու հետ: Ջոկատներից մեկի հասցեին կորպուսի հրամանատարներից մեկի գրավոր հավաստմամբ «անձնուրաց ձևով հետախուզություն էին կատարում, ուս ուսի տված մասնակցում էին մարտերին մեր զորքերի հետ, կրելով մեծ կորուստներ, կատարեցին շատ հերոսական գործեր»: (Ծափահարություններ): Ռուսաստանի հայ եղբայրներից իրենց ուժերի սահմաններում հետ չէին մնում նաև Ֆրանսիայի և Անգլիայի հայերը, որոնք նույնպես ձևավորեցին ջոկատներ, մտնելով մեր դաշնակիցների զորքերի կազմի մեջ: Սակայն կամավորական շարժումը դեռևս իր զարգացման սկզբնական փուլում է. զանգվածաբար կամավորներ են գալիս բոլոր տեղերից, նրանց ուղարկում են գրեթե դատարկված լեռնային և դաշտավայրերի ընդարձակ գյուղերը, ուղարկում են խոշոր կենտրոնները և գավառական քաղաքները, նրանք գալիս են Բուլղարիայից, Ռումինիայից և նույնիսկ Ամերիկայից:

Թուրքահայաստանի հայ բնակչությունը նոր գրավված շրջաններում ուրախ դիմավորում էր մեր հաղթանակած զորքերին, օգնում որքան կարող է և ցուցաբերում հանդիսավոր համաժողովրդական ընդունելություն՝ իր հոգևորականության գլխավորությամբ և եկեղեցիների զանգերի դողանջների ներքո: Դա արդյունք էր հույսի և հավատի Ռուսաստանի հանդեպ, որի դրսևորումներից ժողովրդին չկարողացան հետ պահել որևէ ուժեր, ինչի պատճառն էր տասնյակ հազարավոր գյուղացիների զանգվածային փախուստը, ավելի ստույգ, ամբողջական տեղափոխումը Թուրքիայի տարածքից Ռուսաստան՝ մեր զորքերի նահանջից և վայրենի, արյունարբու քրդական հրոսակախմբերի և թուրքական բանակի մուտքը: Արդյոք սա չէ պատասխանն այն հարցին, թե ինչպե՞ս պետք է Թուրքահայաս-

տանը վերաբերվի Ռուսաստանին: (Ծափահարություններ կենտրոնում և ձախից): Թուրքիայի դեմ պատերազմի եռամսյա ժամանակաշրջանում մեր փառապանծ Կովկասյան բանակը, որը հայրենիքի զոհասեղանին բերեց շատ հերոսների կյանքեր, իրեն դրսևորեց որպես իր նախնիների չխամրող փառքի տեր և նոր փայլուն էջ գրեց իր մարտական պատմության մեջ: (Ծափահարություններ): Ռուսաստանն արդեն գիտի Կովկասյան բանակի և նրա քաջարի սպաների մի շարք փառապանծ անուններ, իսկ մեր զինվորների և կազակների հերոսությունն ու ինքնազոհողությունը հայտնի են ողջ աշխարհին: Ես չեմ կարող լռության մատնել մոխիր դարձած հարազատ վայրերից քրիստոնյաների անհաշվելի զանգվածի փախուստի ժամանակ մեր զինվորների և կազակների մարդասիրության և կարեկցանքի փաստը, որոնք ցուցաբերեցին այդչափ ասպետականություն, հոգատարություն և ընքշանք կանանց և երեխաների նկատմամբ: (Ծափահարություններ և գոչումներ՝ բրավո): Երեխաներին նրանք տասնյակ վերստեր տանում էին ձեռքերի վրա, ձիերով, բեռների, դաշտային խոհանոցների հետ՝ սայլերով: Իր մեծ և զգայուն հոգով ռուս զինվորը ճիշտ հասկացավ, թե ինչու են քրիստոնյաները գնում Ռուսաստան և ինչն է նրանց տանում այնտեղ: Կռվկասի և կովկասյան զորքերի տրամադրությունը կայտառ է և վճռական, բոլորը հավատում են, որ բշնամին պետք է պարտության մատնվի: Չցանկանալով Թուրքիայի հետ պատերազմ և բոլոր միջոցներով խուսափելով հակամարտության առիթից, իմանալով, որ ռազմական գործողությունների տեղափոխումը Թուրքահայաստան սպառնում է այնպիսի սարսափով, որի առաջ խամրում են Բելգիայի և Լեհաստանի արհավիրքները, հայերը Թուրքիայի հետ մարտական գործողություններ սկսելուց հետո մտան պատերազմի մեջ իրենց վաղեմի թշնամու դեմ՝ ժողովրդին բռնկած եռանդի ամբողջ անկեղծ ուժով: Բոլոր մտորումներն ուղղված են պատերազմին և ռուսական զենքի հաջողության համար հայերը լարել են իրենց բոլոր ուժերը՝ բարոյական, ֆիզիկական և նյութական: Այդ անկեղծ հայրենասիրությունը, որն այդքան վառ դրսևորվեց Գերմանիայի հետ պատերազմի ամենասկզբին, հանդիսանում է հայ ժողովրդի երկու հարյուրամյակների ընթացքում դեպի Ռուսաստանը ձգտելու բնական հետևանքը: Շատ զոհեր են բերվել նրա կողմից, շատ արյուն է թափվել այդ ձգտման ժամանակ դեպի Ռուսաստան: Ռուսաստանի հայերը, մեծ Ռուսաստանի հավատարիմ զավակները, աշխույժ և արի կրում են և կկրեն մինչև վերջ բոլոր զոհողությունները հանուն Ռուսաստանի հզորության: Թուրքահայերը հույսով և հավատով սպասում են իրենց ազատագրմանը և խո-

ին զոհունակության զգացումով կկարդան պարոն արտաքին գործերի նախարարի խոսքերը ռուսական քաղաքականության անշահախնդիր պատգամների և հայ բնակչության համար բարենպաստ ուղղությամբ Հայաստանը բարեփոխելու մասին: Կովկասի հայ բնակչության շրջանում առավել ժողովրդական կարգախոսը, որ թափանցել է նրա բոլոր շերտերը, հետևյալն է՝ Կեցցե՛ ռուսական բանակը, կեցցե՛ հզոր Ռուսաստանը, որը հայերին ազատություն է բերում թուրքական դարավոր լծից: (Բուռն և երկարատև ծափահարություններ):

Սղագրական հաշվետվություն: Պետական Դումա: Չորրորդ գումարում. III նստաշրջան, առաջին նիստ, 27 հունվարի 1915թ., էջ 29-31: Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, сост. Ю. Барсегов (այսուհետ՝ ГАОТОМС), том 1, Москва, 2002, с. 234-235.

№ 4

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ (ՎԱՐՈՆԵԺԻ ՆԱՀԱՆԳԻՑ) ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԿՈՎԱԼԵՎՍԿՈՒ ԵԼՈՒՅԹՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

27 հունվարի 1915

Արևելյան քրիստոնյաների ազատագրման իր առաքելությանը հավատարիմ Ռուսաստանն իր վրա վերցրեց Թուրքահայաստանի բարեփոխումների նախաձեռնությունը: Չնայած Գերմանիայի ու ժեղ դիմադրությանը, այդ բարեփոխումները, թեկուզև մի փոքր նեղացված ձևով, կյանքի կոչվեցին 1914թ. հունվարի 26-ին: Այդ համաձայնագիրը, ինչպես իրավացիորեն նկատեց արտաքին գործերի նախարարը, կարևորություն է ներկայացնում իբրև պատմական փաստաթուղթ, և այն հատկապես կարևոր է նաև նրանով, որ Ռուսաստանին հատկացվում է բացառիկ դերակատարում այդ հարցում: Այժմ եկել է թուրքական լծից Հայաստանը լրիվ ազատագրելու ժամանակը: Քաջարի Կովկասյան բանակը, որի հերոսություններով զարմանում է ողջ աշխարհը, Թուրքահայաստանին բերում է վաղուց ցանկալի

ազատության լուրը:

Մղագրական հաշվետվություն: Պետական Դումա: Չորրորդ գումարում. III նստաշրջան, առաջին նիստ, 27 հունվարի 1915թ., էջ 39: ГАОТОМС, т. 1, с. 236.

№ 5

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ (ք. ՊԵՏՐՈԳՐԱԴԻՑ) ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՄԻԼՅՈՒԿՈՎԻ ԵԼՈՒՅԹԻՑ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

27 հունվարի 1915

(...) Մենք սպասում ենք առաջադրված խնդիրների իրագործմանն ինչպես տանջված երկրի (Լեհաստանի), որը տառապում է հիմա ամբողջ Ռուսաստանի համար, այնպես էլ մյուս մեզ մոտ ժողովրդի, հայերի համար, որոնք վաղուց ի վեր ձգտում են փրկություն գտնել Ռուսաստանի թևի տակ դարավոր բռնակալից, որի հանդեպ այժմ կատարվում է պատմության դատաստանն անցյալի մեղքերի համար: (Ծափահարություններ և ձայներ՝ բրավո): Մենք գիտենք, որ այդ պատմական խնդիրների լուծումը չի կարող չանդրադառնալ Ռուսաստանը բնակեցնող ժողովուրդների ճակատագրի վրա: Պայծառ հույսերի գիտակցությամբ, որոնք մեր առջև բացում է այդ խնդիրների իրագործումը, վստահությամբ, որ մենք ձեռք ձեռքի տված մարդկության լուսավորյալ ժողովուրդների հետ քայլում ենք դեպի ժողովուրդների խաղաղ իրավական համակեցությունը՝ յուրաքանչյուրի ինքնուրույնության փոխադարձ հարգանքի հիման վրա...

Կեցցե՛ ազատ Ռուսաստանը՝ իր ջանքերով ազատագրված մարդկության մեջ: (Բուռն ծափահարություններ ձախից և կենտրոնում):

Մղագրական հաշվետվություն: Պետական Դումա: Չորրորդ գումարում. III նստաշրջան, առաջին նիստ, 27 հունվարի 1915թ., էջ 51-52: ГАОТОМС, т. 1, с. 236-237.

№ 6

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ, ԱՎՍՏՐԻԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ, ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՄԱՄՆԱՎՈՐ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԱՆՁԱՆՑ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻ ՈՒ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՐԶՄԱՆ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Փ *29 հունվարի 1915թ.*

ՆԱԽԱԳԱՀՈՂ – Պետական Դումայի անդամ Չխենեկելի:

ՉԽԵՆԵԿԵԼԻ – (Կարսի և Բաքումի մարզեր եվ Սուխումի շրջան) – Ես Պետական Դումային ներկայացնում եմ առաջարկ, որն այստեղ ընթերցվեց, և խնդրում եմ այն քվեարկել կետ առ կետ, որովհետև մենք միևնույն ձևով չենք վերաբերում բոլոր կետերին, հատկապես ես նկատի ունեմ վերջին կետը, որտեղ խոսվում է պատերազմող երկրներից մեկի կողմից միջազգային իրավունքի խախտումների մասին: Մենք, անշուշտ, սկզբունքորեն ոչինչ չունենք նման հանձնաժողովի ստեղծման դեմ, սակայն այն, մեր կարծիքով, պետք է լինի միջազգային, որպեսզի կարողանա արժանապատվորեն կատարել իր առաքելությունը, որպեսզի կարողանա բոլոր տեղերում հետաքննել միջազգային իրավունքի խախտումները, անկախ այն բանից ում կողմից են դրանք կատարվել...

ՆԱԽԱԳԱՀՈՂ – Կարգադրության 174 հոդվածի հիման վրա, հաշվի առնելով Պետական Դումայի անդամ Չխենեկելիի հայտարարությունը, քվեարկությունը պետք է իրականացվի կետ առ կետ: Հարկավո՞ր է կրկին հնչեցնել բանաձևը: (Ձայներ՝ գիտենք, պետք չէ): Այդ դեպքում թույլ տվեք անցնել բանաձևի քվեարկությանը: Քվեարկության եմ դնում 1 կետը: (Քվեարկություն): Ընդունված է: Քվեարկության եմ դնում 2 կետը: (Քվեարկություն): Ընդունված է: Քվեարկության եմ դնում 3 կետը: (Քվեարկություն): Ընդունված է: Քվեարկության եմ դնում բանաձևն ամբողջությամբ: (Քվեարկություն):

Ընդունված է:

Սղագրական հաշվետվություն: Պետական Դումա: Չորրորդ գումարում. III նստաշրջան, առաջին նիստ, 29 հունվարի 1915թ., էջ 285-287:
ГАОТОМС, т. 1, с. 237.

№ 7

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՆԱԿԱՏԻ I ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻՆ

Դիլման,
24 փետրվարի 1915թ.

Երեկ ժամը 2-ին մոտ ես ձիավորներով եկա Դիլման և իսկույնևեթ սկսեցի հետաքննությունը: Հարցաքննությունից իմացա, որ սպանություններ են կատարվել Հարիվում, Խոսրովում և Մեհլեմում: Անհապաղ շտապեցի այդ տեղերը, որտեղ գտա հարյուրավոր դիակներ:

Այս ամսվա 14-ի լույս 15-ի գիշերը սպանվել է ուղիղ 707 մարդ:

Մինչև այս ամսվա 14-ը հայերը գրեթե անվնաս էին մնում՝ շնորհիվ տեղի պարսիկ բնակչության, իսկ նույն օրերին թուրքական կառավարությունը սուրհանդակների միջոցով սպառնում էր պատժել այն պարսիկներին, ովքեր թաքցնում են քրիստոնյաներին՝ հայերին և ասորիներին: Դիլմանի պարսիկները նույնիսկ այդ սպառնալիքի տակ չկատարեցին հրահանգը: Թուրքական կառավարության զազազած ներկայացուցիչ կայմակամ Ռուստեմ բեգը հրամայեց քրդերին ու զինվորներին մտնել պարսիկների տները և դուրս բերել քրիստոնյաներին ու սպանել քրիստոնյաներին թաքցրած պարսիկներին: Այս հրամանն իսկույնևեթ կատարվել է, դուրս են հանել 7 հոգու: Մնացած 700 հոգուն էլ նույն եղանակով բռնել ու տարել են Հաֆիվան ու Խոսրով, որտեղ թուրքերի 2-րդ շտաբն էր: Այնտեղ շտաբի ներկայացուցիչների հրամանով նրանց սպանեցին այնպիսի տանջանքներով, որոնք նկարագրել հնարավոր չէ և որոնք անբացատրելի ու աններելի են քսաներորդ դարի համար:

Ես ինքս անձամբ իմ աչքով եմ տեսել հարյուրավոր խողխողված, փոսերը լցված դիակներ, որոնց գարշահոտությունը պատել էր

այդ քաղաքը, տեսել եմ զլխատված դիակներ, քարերի վրա կացիններով կտրված ձեռքեր, սրունքներ, կտրված մատներ, մաշկազերծ արված գանգեր, դիակներ՝ փլվածքների տակ, որոնց մեջ էր նաև Մեհլեմի քահանա տեր Վարդանը:

Սպանություններ են կատարվել մյուս հայկական գյուղերում ևս:

Կ. Մարտիկյան

ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների պատմության արխիվ (ՀՔԿՊԱ), ֆ. 47/2, p. 2, գ. 2, p. 1:
ГАОИ, стр. 276-277.

№ 8

Ф

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԹԱՐԳՄԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Հեռագիր թիվ 164
15 մարտի 1915թ.

Հայերի ողբությունը Թուրքիայում որոշակիորեն վատացել է: Զորամասերում ծառայող բոլոր հայերը զինաթափված են: Զեյթունում, ուր ուղարկվել է զինված ջոկատ այստեղ թաքնված դասալիքներին բռնելու համար, տեղի ունեցան բախումներ, որոնք հանգեցրին զինվորական դատարանի դատավճիռներին և բնակիչների նկատմամբ դաժան հաշվեհարդարին: Դերտել կոչվող բնակավայրի ողջ արական բնակչությունը աքսորված է: Էրզրումի շրջակայքում գտնվող 17 գյուղերից մնացել են միայն երեքը: Մյուսները թալանված և ոչնչացված են: Ամբողջ երկրով մեկ կատարվում են հայերի ձերբակալություններ: Բուն Կոստանդնուպոլսում ձերբակալված են 14 հնչակյաններ, որոնք ենթակա են զինվորական դատարանի վճռին: Հայ պատրիարքարանը խիստ մտահոգված է ստեղծված իրավիճակով և վախենում է կոտորածից:

Սերաֆիմով

Архив внешней политики России (այսուհետ՝ АВПР), Политархив, д. 3504, л. 19.
Русские источники о геноциде армян в Османской империи 1915-1916

//
//
годы. (Сборник документов и материалов), Выпуск I. Составители: Г.А. Абраамян, Т.Г. Севан-Хачатрян, Ер., 1995 (այսուհետ՝ РИГАОИ), стр. 10.

№ 9

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Գաղտնի հեռագիր թիվ 385
3 ապրիլի 1915թ.

Խատիսովն ինձ փոխանցեց Սոֆյայից այսօր ստացված հեռագիրը.

«Պարբերաբար կոտորած է իրականացվում Էրզրումում, Տերդոլանում, Զեյթունում և շրջակայքում: Արյունալի բախումներ են Բիթլիսում, Վանում, Մուշում: Ապստամբություն է Կիլիկիայում: Բռնություններ, թալան, սպանություններ Ակնում և ամբողջ Փոքր Հայաստանում: Ողջ ժողովրդի տնտեսական սնանկացում... Սուլթանական հրահանգ կա հայ զինվորների զինաթափման մասին: Խմբագիրներից մեկը աքսորված է Անգորա: «Ազատամարտ» թերթը փակված է: Բողոքներ չեզոք տերություններին ուղղված՝ համընդհանուր կոտորածը կանգնեցնելու համար»:

Այժմ Խատիսովը զեկուցեց հեռագրի մասին Պետերսոնին Կովկասի փոխարքայից հրահանգ ստանալու համար՝ բողոքը փոխանցելու եղանակի վերաբերյալ: Ընդ որում, Խատիսովը մանրամասն ներկայացրել է Հայկական հարցի վերջին փուլը և նախարարության հետ բանակցությունների արդյունքները:

Ստոլիցա

АВПР, Политархив д. 3504, л. 20.
РИГАОИ, стр. 11-12.

№ 10

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ 5-ՐԴԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր
7 ապրիլի 1915թ.

Ստացված հեռագրային հաղորդագրության համաձայն, որը հաստատվում է այլ աղբյուրներով, կատարվում է անպաշտպան, անզեն հայերի կոտորած Էրզրումում, Դերջանում, Զեյթունում և շրջակայքում, արյունալի բախումներ Բիթլիսում, Վանում, Մուշում, բռնություններ, թալան, սպանություններ Էգինում, Կիլիկիայում, ողջ հայ ազգաբնակչության տնտեսական սնանկացում: Իմ հոտն անհանգստացած է: Թախանձագին խնդրում եմ Ձերդ գերազանցությանը չմերժել ստանձնել իմ ժողովրդին հետագա մարդասիրական հովանավորության և պաշտպանության գործը այս ճգնաժամային պահին, փրկել անմեղ զոհվող քրիստոնյաներին բոլոր հնարավոր միջոցներով: Հոգիս ցնցված սարսռեցնող նորություններով, միաժամանակ հեռագրով դիմում եմ չեզոք պետություններին՝ Միացյալ Նահանգների նախագահին և Իտալիայի թագավորին՝ կոտորվող խաղաղ բնակչության պաշտպանության խնդրանքով: Խոնարհաբար խնդրում եմ ժամանակ գտնել հանձնարարելու ձեր դեսպաններին հիշատակված երկրներում հանուն քրիստոնեության և մարդասիրության, ազդելու վերջիններիս կառավարությունների վրա՝ Թուրքահայաստանում հայերի ջարդերն ու անարգանքները դադարեցնելու նպատակով:

Ծայրագույն պատրիարք,
Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդ

АВПР, Политархив д. 3508, л. 4.
РИГАОИ, стр. 12.

№ 11

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՕԳՆԱԿԱՆ Վ.Վ. ՄԻՇԼԱԵՎՍԿՈՒՆ

Հեռագիր թիվ 1817
9 ապրիլի 1915թ.

Թիվ 386 հեռագիրը ստացված է:

Ես առաջարկել եմ Վաշինգտոնում և Հռոմում մեր ներկայացուցիչներին պաշտպանել կաթողիկոսի հայտարարությունը Հյուսիս-Ամերիկյան նահանգների և Իտալիայի կառավարությունների առջև: Թուրքահայաստանի ապագա կառավարման հարցում նախարարությունը դեռ չի եկել վերջնական որոշման: Նման որոշում ընդունելուն պես անմիջապես տեղյակ կպահեմ Կովկասում կայսերական փոխարքային:

Սազոնով

Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и Временного правительств. 1878-1917гг. Серия I-III, М.-Л., 1931-1940 (այսուհետ՝ МОЭИ), т. 7, ч. 2, стр. 227. РИГАОИ, стр. 13.

№ 12

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Թիվ 194 հեռագրից
10 ապրիլի 1915թ.

...Իշխանությունների բալանը հասել է ծայրահեղ չափերի: Քրիստոնյա բնակչությունը, հատկապես հայ բնակչությունը, ենթարկվում է զանազան հետապնդումների, հաճախ տանջանքների: Զինվորական ծառայության զինակոչելու պատրվակի տակ բանտարկում են մարդկանց, առանց տարիքի տարբերության, բռնելով նրանց փողոցում, եկեղեցիներում, խանութներում, տրամվայներում և այլն, ժամանակ չտալով նրանց ոչ կարգավորել իրենց գործերը, ոչ

զգուշացնել հարազատներին:

Հաճախակի են դարձել առանց պատճառի մեր հպատակների բանտարկությունները, որոնց աքսորում են, հաճախ ոտքով, Փոքր Ասիա կամ ձերբակալված պահում այստեղ բանտերում:

Ելնելով վերը նշվածից, դրությունը դառնում է էլ ավելի անհանգիստ և չի խոստանում լավացում, եթե միայն արտաքին պարագաները չվատահեցնեն Թուրքիայի կառավարությանը իրեն սպասվող անխուսափելի պատժի մեջ:

Սերաֆիմով

АВПР, Политархив д. 3804, л. 22.
РИГАОИ, стр. 13.

№ 13

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ ԿԻՑ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Հեռագիր թիվ 431
10 ապրիլի 1915թ.

Այսօր Դիադինից Հայկական ազգային բյուրո է ստացվել հետևյալ հեռագիրը. «Առավոտյան Դիադին եկած 23 տղամարդիկ, որոնք փրկվել են Արչետից և Սոսոմունից, պատմում են ոստիկանության կողմից թուրքական իշխանությունների հրահանգով տեղի հայերի գլխովին զենդակահարելու և ջարդելու մասին: Թուրքերը նրանց հայտնել են մահմեդականների բախումների մասին հայերի հետ, հայերի կոտորածի մասին Վանում: Անհրաժեշտ է ժամանակին հոգ տանել Վանի վիլայեթից գաղթականների ենթարկվող զանգվածների բավարար օգնության մասին:

Ստոլիցա

АВПР, Политархив д. 3504, л. 23.
РИГАОИ, стр. 14.

№ 14

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՓԱՐԻԶՈՒՄ ԵՎ ԼՈՆԴՈՆՈՒՄ ԴԵՍՊԱՆՆԵՐ Ա. Պ. ԻԶՎՈԼՍԿՈՒՆ ԵՎ ԿՈՍՄ Ա. Կ. ԲԵՆԿԵՆԴՈՐՖԻՆ

Հեռագիր թիվ 1876
12 ապրիլի 1915թ.

Հղում եմ կատարում թիվ 1818 իմ հեռագրի վրա:

Նախարարությունում ստացվել են նոր տեղեկություններ ասիական Թուրքիայում տիրող անիշխանության և թուրքերի ու քրդերի կողմից հայերին կոտորելու մասին: Բարեհաճեք առաջարկել ֆրանսիական (անգլիական) կառավարությանը մեզ հետ համատեղ հրապարակել Անգլիայի (Ֆրանսիայի) հայտարարությունը՝ ուղղված Թուրքիայի կառավարությանը, որտեղ հայերի ջարդերի անձնական պատասխանատվությունը կդրվի թուրքական նախարարների խորհրդի բոլոր անդամների վրա, ինչպես նաև այս իրադարձությունների հետ կապ ունեցող բոլոր քաղաքացիական և զինվորական անձանց վրա:

Հայտարարության մեջ կարելի է հիշատակել Սիբիրյի կոտորածից հետո Եվրոպայի կողմից 1860թ. ընդունած պատժիչ միջոցների մասին: Անգլիական (ֆրանսիական) կառավարության համաձայնության դեպքում բարեհաճեցեք պայմանավորվել հայտարարության տեքստի մասին, որը ցանկալի է հրապարակել որքան հնարավոր է շուտ և միևնույն օրը երեք մայրաքաղաքներում:

Սազոնով

МОЭИ, т. 7, ч. 2, стр. 252.
РИГАОИ, стр. 14-15.

№ 15

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ ԿԻՍ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Թիվ 490 հեռագրից

23 ապրիլի 1915թ.

Բերեզովսկին հեռագրում է Խատիսովին՝ ադրբեջանական* շտաբ են բերվել երեք հայեր, որոնք Վանից ուղարկվել են Արամի կողմից այն տեղեկությամբ, որ ապրիլի 15-ից նոր տոմարով բոլոր հայերը փակված են քաղաքի հայկական թաղամասում: Ջնդեր փաշան ոմբակոծում է քաղաքը, արձակվել է 1700 արկ: Շրջակա շուրջ 100 հայկական գյուղերը կոտորվել են, կանայք բշվել են սարերը... Պաշարված հայերի ուժերը սպառվում են:

Ստոլիցա

АВПР, Политархив д. 3505, л. 2.
РИГАОИ, стр. 15.

№ 16

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՆՈՏԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Փարիզ,
26 ապրիլի 1915

Հայոց կաթողիկոսը տեղեկացնում է կայսերական կառավարությանը, որ ինքը դիմել է Իտալիայի թագավորին և ԱՄՆ-ի նախագահին խնդրանքով, որ նրանք Բարձր Դռան առջև հանդես գան ի պաշտպանություն հայերի, որոնք ասիական Թուրքիայում ջարդերի զոհերն են: Ռուս դեսպանները Հռոմում և Վաշինգտոնում հանձն են առել պաշտպանել կաթողիկոսի այդ քայլը:

Մյուս կողմից պարոն Սազոնովը հեռագիր է ուղարկել Ռուսաստանի դեսպաններին Փարիզ և Լոնդոն, որ ինքը վերջերս է տվյալներ ստացել այն անհիշխանության, որը տիրում է ասիական Թուրքիայում և ջարդերի մասին, որոնք կատարվում են թուրքերի և քրդերի կողմից հայ բնակչության նկատմամբ:

Կայսերական կաբինետն, ուստի, ենթադրում է, որ ֆրանսիական, անգլիական և ռուսական կառավարությունները պետք է հրապարակեն համատեղ հայտարարություն՝ ուղղված Բարձր Դռանը և

* Խոսքը Պարսկական Ադրբեջան աշխարհագրական անվանման մասին է:

անձնական պատասխանատվություն դնել հայերի դեմ բռնություններ կատարած օսմանյան նախարարների խորհրդի բոլոր անդամների, ինչպես նաև այդ գործողություններում ներգրավված քաղաքացիական և ռազմական պաշտոնյաների վրա: Այդ հայտարարության մեջ կարելի է հիշատակել այն միջոցառումները, որոնք որդեգրվեցին Եվրոպայի կողմից 1860 թվականին Սիրիայի ջարդերի ժամանակ:

Այն դեպքում, եթե այդ մտահոգությունը հավանության արժանանա երկու կաբինետների կողմից, Ռուսաստանի դեսպանները Փարիզում և Լոնդոնում հանձն կառնեն համաձայնեցնել Նորին գերազանցություններ պարոն Դելկասսեի և պարոն Էդուարդ Գրեյի հետ հայտարարության տեքստը, որը նախընտրելի կլիներ, որքանով դա հնարավոր է, հրապարակել նույն ամսաթվին երեք մայրաքաղաքներում:

(Archives du ministère des Affaires étrangères, (այսուհետ՝ A.M.A.E.), Guerre 1914-1918, Turquie, tome 887, ff. 85-85v).
Les Grandes Puissances l'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises (այսուհետ՝ GPEOAAF), (1914-1918). Documents réunis et présentés par A. Beylerian. Publication de la Sorbonne, Paris, 1983, pp.14-15.

№ 17

ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

file no. 867.4016/58a

Վաշինգտոն,
27 ապրիլի 1915

Ռուսաստանի դեսպանը մեր ուշադրությանը ներկայացրեց Հայոց կաթողիկոսի դիմումը, որով խնդրվում էր, որ մեր կառավարությունը միջնորդի թուրքական կառավարության առաջ՝ կանխելու համար Թուրքիայի տարածքում խաղաղ հայերի կոտորածը:

Խնդրում եմ հարցը ներկայացնել կառավարությանը, պնդելով, որ գործուն միջոցներ ձեռնարկվեն այլ կրոնի ներկայացուցիչների բռնություններից հայերին պաշտպանելու ուղղությամբ:

Ռուսաստանի դեսպանը ուշադրություն է հրավիրում այն

փաստի վրա, որ ռուսական տարածքում կան բազմաթիվ մահմեդականներ և նրանք պաշտպանված են կրոնական հալածանքներից:

Բրայեն

Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, p. 980.

№ 18

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆ Գ. ԲԱԽՄԵՏԵՎԻՆ

file no. 867.4016/58

Վաշինգտոն,
28 ապրիլի 1915

Ձերդ գերազանցություն

Համաձայն ապրիլի 27-ի Ձեր բանավոր դիմումի, որում հայ եկեղեցու կաթողիկոսի անունից խնդրվում էր, որ մեր կառավարությունը միջնորդի թուրքական կառավարության առաջ՝ կանխելու համար Թուրքիայի տարածքում խաղաղ հայերի կոտորածը, պետդեպարտամենտը Կ.Պոլսի ամերիկյան դեսպանին հրահանգել է՝ հարցը ներկայացնել թուրքական կառավարության ուշադրությանը՝ պնդելով, որպեսզի գործում միջոցներ ձեռք առնվեն՝ հայերին այլ կրոնի ներկայացուցիչների բռնությունից պաշտպանելու նպատակով:

Նախքան պետդեպարտամենտի հեռագիրը ստանալը, Կ. Պոլսում ամերիկյան դեսպանը տեղեկացել է մեզ, հաղորդելով, որ 100-ից ավելի ականավոր հայեր են ձերբակալվել՝ հեղափոխական քարոզչությունը կանխելու պատրվակով և որ այդ մարդկանց կյանքը բերևս վտանգված չէ, բեև նրանց աքսորում են երկրի խորքը:

Այս հաղորդագրությունը ստանալուն պես՝ պետդեպարտամենտը հեռագրեց դեսպանին՝ հրահանգելով որպեսզի վերջինս պնդի, որ թուրքական կառավարությունը պաշտպանի հայերին:

Ընդունեք, Ձերդ գերազանցություն, հարգանքներիս հավաստիքը:

Բրայեն

Genocide: Crime against Humanity, Special Issue of the «Armenian Review», Spring 1984, Vol. 37, No. 1, pp. 62-63.

№ 19

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ ԿԻՍ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

29 ապրիլի 1915թ.

Հայերի կողմից ստացվել է նամակ Վանից, որը կարված էր սուրհանդակի հագուստի աստառի մեջ, հետևյալ բովանդակությամբ՝ շրջանում սպանվել է մոտ 6000 մարդ: Վանը և Շատախը համառորեն դիմադրում են, արկերը քիչ են վնասում Վան քաղաքին: Լարում ենք վերջին ուժերը, ամեն օր սպասում ենք ռուսների օգնությանը: Աղաչում ենք շտապել: Հետո ուշ կլինի: Նամակը գրված է ապրիլի 15-ին:

Ստոլիցա

АВПР, Политархив д. 3505, л. 4.
РИГАОИ, стр. 15-16.

№ 20

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԼՈՆԴՈՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

1 մայիսի 1915թ.

Կասկած չկա, որ Վանի հայերի ըմբոստացումը հարուցել է կոտորածը և ոչ թե հակառակը, որովհետև հայերի համար իմաստ չուներ մինչև մեր զորքերի գալը շարժում սկսել թուրքերի գերակշիռ ուժերի դեմ:

Սազոնով

ՀՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 45, թ. 5:
ԼԱՕԻ, стр. 281.

№ 21

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՆՈՏԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Փարիզ,
5 մայիսի 1915

Համաձայն Խոյում ռուսական հյուպատոսի հաղորդագրության, Դիլման հայ գաղթականներ են գալիս Վանի և Բիթլիսի վիլայեթներից՝ փրկվելով թուրքական չարագործություններից: Թուրքիայում բախումները քրդերի և հայերի միջև գնալով ուժգնանում են: Գիավերում և Բաշկալեում քրիստոնյա արական գրեթե ամբողջ բնակչությունը կոտորվեց: Շատախում թուրքերը նմանապես ջարդեր կազմակերպեցին:

Մյուս կողմից, Ռուսաստանի դեսպանը Վաշինգտոնում* հաղորդում է, որ Կ.Պոլսում ԱՄՆ-ի դեսպանը հանձն է առել մշտական հսկողության տակ պահել այն իրավիճակը, որում ընդհանրապես գտնվում են Թուրքիայի քրիստոնյաները. նա վերջերս է տեղեկացրել, որ շուրջ 100 հայ նշանավոր մարդիկ ձերբակալվել են հեղափոխական քարոզչության պատրվակով և որ նրանց կյանքը իբր թե վտանգի տակ չէ, չնայած, որ նրանք ուղարկվում են երկրի խորքը: Այս զեկույցից հետո պարոն Բրայենը** հանձնարարեց դեսպանին պնդել Օսմանյան կառավարության առջև, որ վերջինս ստանձնի հայերի պաշտպանությունը:

Պարոն Սազոնովը հաղորդում է Փարիզում և Լոնդոնում ռուսական դեսպաններին, որ հաշվի առնելով Խոյում Ռուսաստանի հյուպատոսի*** կողմից ուղարկված տեղեկատվությունը և նշելով Ամերիկայի դեսպանի**** միջամտության անարդյունավետությունը, որը սահմանափակվեց Օսմանյան կառավարությանը հայերի «պաշտպանությունը» ստանձնել տալով, կայսերական կառավարությունը անհրաժեշտ է համարում շտապ հրապարակել միասնական հայտարարությունն ուղղված Բարձր Դռանը, որը նախաձեռնվել է պարոն Սազոնովի կողմից և որը հայերի դեմ կազմակերպած հալա-

---

* Բախմետև:
** ԱՄՆ-ի պետքարտուղար:
*** Չիրկով:
**** Մորգենթաու:

//
//
ծանրների համար անձնական պատասխանատվությունը կդնի Օսմանյան նախարարների խորհրդի բոլոր անդամների, ինչպես նաև այդ գործողություններում ներգրավված քաղաքացիական և ռազմական պաշտոնյաների վրա (Կայսերական դեսպանատան ապրիլի 26-ի նոտայի տվյալների համաձայն)*:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 851, ff. 8-8v).
GPEOAAF, pp.17-18.

№ 22

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՆՈՏԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Փարիզ,
8 մայիսի 1915

Պարոն Սազոնովը հաղորդում է, որ Վանից ժամանած 3 հայերը, որոնք Աղրբեջանում** կռվող բանակից են, բերել են այն նորությունը, որ ապրիլի 15-ից սկսած Վանի բոլոր հայերը շրջափակված են քաղաքի հայկական թաղամասում, որը պաշարվել է քուրդ հրոսակախմբերի կողմից: Շրջանում չկան կանոնավոր զորքեր, Ջևդեթ փաշան ռմբակոծում է քաղաքը, որի վրա նա արդեն 1700 արկ է արձակվել. ամերիկյան շարասյունը գտնվում է վտանգի տակ. հարևան գրեթե 100 հայկական գյուղերի բնակչությունը կոտորվեց և կանանց տարան լեռներ, Վանում շրջափակված հայկական ուժերը սպառվում են:

Խոյում Ռուսաստանի փոխհյուպատոսը մյուս կողմից հաղորդում է՝ Վանի հայ պատվիրակները ժամանում են Խոյ: Նրանք Ռուսաստանի փոխհյուպատոսին են հանձնել այդ քաղաքում ԱՄՆ-ի հյուպատոսի մի նամակ, ապրիլի 15/28 ամսաթվով, որը գրված է լաթի կտորի վրա: Այս նամակի բովանդակությունն է. «Համառ դիմադրություն Վանում, կառավարությունը սպառնում է ռմբակոծել քաղաքը: Ամերիկյան շարասյունը վտանգի տակ է: Խնդրում եմ այդ մասին հայտնել ԱՄՆ-ի դեսպանին»: Այդ նամակը բերվել է պատվի-

---

* Տես փաստաթուղթ N 16:
** Խոսքը Պարսկական Աղրբեջան աշխարհագրական անվանման մասին է:

բակներից մեկի կողմից՝ հագուստի մեջ կարված:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 887, f. 94).
GPEOAAF, pp.21-22.

№ 23

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՆՈՏԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Փարիզ,
8 մայիսի 1915

Հետևելով նախորդ հաղորդագրություններին՝ Ռուսաստանի դեսպանները Փարիզում և Լոնդոնում ստանձնում են երկու կառավարությունների հավանությանն արժանացնել Բարձր Դռանն ուղղված հետևյալ հայտարարության նախագիծը, որը նախաձեռնվել է Սազոնովի կողմից և վերաբերում է հայերի կոտորածներին:

«Վերջին ամսվա ողջ ընթացքում Հայաստանում կատարվում է հայերի ջարդ քրդերի և թուրքերի կողմից օսմանյան իշխանությունների բացահայտ թողտվությամբ, իսկ երբեմն էլ ուղղակի օժանդակությամբ: Նոր տոմարով ապրիլի կեսերին հայերի ջարդ է տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Էգինում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զեյթունում և ամբողջ Կիլիկիայում, գլխովին կոտորվել են Վանի շրջակայքի հարյուր գյուղերի բնակիչները, բուն Վանում հայկական թաղամասը պաշարվել է քրդերի կողմից: Միևնույն ժամանակ Կոստանդնուպոլսի թուրքական կառավարությունը բանտարկության և չտեսնված հալածանքների է ենթարկում խաղաղ հայ բնակչությանը: Ելնելով Թուրքիայի կողմից *քրիստոնեության** և քաղաքակրթության դեմ կատարված նոր հանցագործություններից, դաշնակից կառավարությունները սրանով հրապարակայնորեն հայտարարում են Բարձր Դռանը, որ իրենք այս հանցագործությունների անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա տեղական ներկայացուցիչների

* Այս բառը Ֆրանսիայի արտգործնախարարի կողմից ուղղվել է՝ «մարդկության դեմ»:

վրա, որոնք հանցակից կհամարվեն *հայկական կոտորածներում»*:

Այն դեպքում, եթե վերոհիշյալ շարադրանքն արժանանա Հանրապետության կառավարության հավանությանը, Ռուսաստանի դեսպանը կցանկանար Նորին գերազանցություն պարոն Դելկասսեից ճշտել հայտարարության հրապարակման ամսաթիվը, որպեսզի կայսերական կառավարությունն իր կողմից կարողանա այն հրապարակել նույն պահին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 887, ff. 98-98v).
GPEOAAF, p.23.

№ 24

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Փարիզ,
8 մայիսի 1915

Ի պատասխան կոմս Բենկենդորֆի հեռագրի, պարոն Սազոնովը հաղորդում է Փարիզում և Լոնդոնում Ռուսաստանի դեսպաններին, որ այն տեղեկությունները, որ ունի Ֆրանսիայի հյուպատոսը Սոլոնում հայկական գործերի մասին ճշգրիտ չեն և չեն համապատասխանում այն զեկույցներին, որոնք կայսերական կառավարությունը ստանում է կովկասյան իշխանություններից և Պարսկաստանում իր հյուպատոսներից: Չպետք է կասկածել նրանում, որ Վանի հայերի ըմբոստացումն առաջացավ ջարդերի հետևանքով և ոչ թե ջարդերը եղան այդ ըմբոստացման հետևանքը, վերջապես բանականությանը հակառակ կլիներ, եթե հայերն անցնեին քրդերի և թուրքերի գերակշիռ ուժերի դեմ գործողության՝ նախքան ռուսական զորքերի հասնելը:

Փարիզում և Լոնդոնում Ռուսաստանի դեսպանները, հետևաբար, պարտավորվում են երկու կաբինետների ուշադրությունը հրավիրել այն կարևորության և հրատապության վրա, որն ունի Բարձր Դռանն ուղղված նախատեսված հայտարարության հրապարակումը: Այս քայլը, նույնիսկ եթե այն չունենա որևէ ազդեցություն թուրքե-

---

* Այս արտահայտությունը նույնպես ուղղվել է արտգործնախարարի կողմից՝ «նման կոտորածներում»:

րի վրա, կբարձրացնի հայերի բարոյական ոգին, որոնք կարող են օգտակար լինել Ռուսաստանին Թուրքիայի դեմ պայքարում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 887, f. 102).
GPEOAAP, p.25.

№ 25

ԼՈՆԴՈՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր թիվ 333
12 մայիսի 1915թ.

Հայտնեցի Նիկոլսոնին: Միևնույն ժամանակ ֆրանսիական զորքերի հավատարմատարը եկավ փոխանցելու Սոլոնից ֆրանսիական հեռագրի բովանդակությունը, որը տեղեկացնում էր, որ հայերը գրավել են Վանը, պայքեցրել են հյուրանոցը և քանդել քաղաքը, որից հետո թուրքերը կրկին այն գրավել են, և դրանից հետո կատարվել են ջարդերը:

Նիկոլսոնն ասում է, որ անգլիական կառավարությունը չի ունեցել ոչ մի անմիջական տեղեկություն, բայց եթե ֆրանսիական տեղեկությունը հաստատվի, ապա Թուրքիան կգտնի այդ իրադարձություններում ապացույց այն բանի հաստատման համար, որ հայերը բարձրացրել են բացահայտ ապստամբություն: Ես նրան պատասխանեցի, որ, հավանաբար, արյունալի սադրանքներից հետո նրանց այլ ելք չէր մնում, և որ, երբ խոսքը գնում է թուրքերի մասին, նման փաստարկները, իմ կարծիքով, զուրկ են ցանկացած իմաստից: Նիկոլսոնը չէր պնդում իր տեսակետի վրա:

Բենկենդորֆ

МОЭИ, т. 7, ч. 2, стр. 416-417.
РИГАОИ, стр. 20-21.

№ 26

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ 5-ՐԴԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հատված թիվ 834 նամակից
Էջմիածին,
14 մայիսի 1915թ.

Վերջին հավաստի տեղեկությունները ցույց են տալիս, որ Թուրքահայաստանում իմ հոտն ապրում է փորձությունների սարսափելի օրեր: Այն ամենը, ինչ սուրբ է՝ կրոնը, սրբությունները և հայերի ընտանեկան արժանապատվությունը, զայրացուցիչ կերպով սրբապղծվում է թուրքերի, ասկյարների և քրդերի կողմից և նրանց ողջ ունեցվածքը հրի և սրի է տրվում: Թուրք ոստիկանները Վանի վիլայեթում զորակոչի կամ իրր հասարակական աշխատանքների անվան տակ հավաքում են հայ տղամարդկանց և հայրենի վայրերից հեռու ենթարկում են գնդակահարության, իսկ կանանց և երեխաներին առևանգում են...

Վերը նշվածը դրդեց ինձ դիմել Ձերդ գերազանցությանը, չեզոք պետությունների և մեր դաշնակիցների օժանդակությանը:

Գործի հաջողության և զազանությունների դեմ բողոքելու նպատակով, որոնք կազմակերպվել էին թուրքական կառավարության կողմից, Ձեզ արդեն հայտնի Պողոս-Նուբար փաշային նշանակել եմ իմ ներկայացուցիչ և ուղարկել եմ Փարիզ և Լոնդոն:

Թախանձագին խնդրում եմ Ձերդ գերազանցությանը բարեհաճել հանձնարարել Լոնդոնում և Փարիզում Ձեր դեսպաններին իրենց իմաստուն խորհուրդներով օժանդակություն ցուցաբերել Պողոս-Նուբար փաշային...

АВПР, Политархив д. 3508, л. 16.
РИГАОН, стр. 22.

№ 27

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՆՈՏԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Փարիզ,

14 մայիսի 1915

Պարոն Սազոնովը հաղորդում է Իզվոլսկուն, որ Թիֆլիսի հայերը Վանի հայկական շարասյան հետ եկող թղթակցից մի նամակ են ստացել, կարված վերջինիս հագուստի մեջ, որում ասված է. «Վանի նահանգում սպանվել է մոտ 6000 մարդ: Վանը և Շատախը եռանդուն կերպով պաշտպանվում են: Արկերը քիչ են վնաս հասցրել Վան քաղաքին: Մենք վերջին ջանքերն ենք գործադրում: Օրեցօր օգնություն ենք սպասում: Աղաչում ենք շտապել: Հետո ուշ կլինի»:

Այս նամակը գրվել է ապրիլի 28-ին:

Ռուսաստանի դեսպանները Փարիզում և Լոնդոնում հանձն են առել վերոհիշյալ տեղեկությունները հասցնել երկու կաբինետների գիտությանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 887, f. 101).
GPEOAAF, p.24.

№ 28

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ԼՈՆԴՈՆՈՒՄ ԴԵՍՊԱՆ ԿՈՄՍ Ա. Կ. ԲԵՆԿԵՆԴՈՐՖԻՆ

Հեռագիր թիվ 2247
15 մայիսի 1915թ.

Հայտնվում է Փարիզ:

Ձեր թիվ 333 հեռագիրը ստացվել է:

Սոլոնում ֆրանսիական հյուպատոսի մոտ եղած տեղեկությունները հայկական գործերի մասին ստույգությամբ չեն կարող տարբերվել այն տեղեկություններից, որոնք ստացվել են Կովկասի իշխանություններից և Պարսկաստանի հյուպատոսներից:

Լիովին հավանություն եմ տալիս Նիկոլսոնին տված Ձեր պատասխանին: Կասկած չկա, որ հայերի ըմբոստացումը Վանում առաջացել է կոտորածի պատճառով, այլ ոչ թե հակառակը, որովհետև հայերի համար իմաստ չուներ նախքան մեր զորքերի գալը շարժում սկսել քրդերի և թուրքերի գերակշիռ ուժերի դեմ:

Բարեհաճեք կրկին ընդգծել, կառավարությունը, որի մոտ Դուք հավատարմագրված եք, Թուրքիայի կառավարությանն ուղղված համատեղ հայտարարության հրապարակման ցանկու-

թյունն ու հրատապությունը, որը եթե նույնիսկ պատշաճ տպավորություն չգործի, համենայն դեպս կբարձրացնի հայերի ոգին, որոնք կարող են մեզ օգտակար լինել թուրքերի դեմ պայքարում:

Սազոնով

МОЭИ, серия 3, т. 7, ч. 2, стр. 460-461.
РИГАОИ, стр. 25.

№ 29

ՓԱՐԻԶՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր թիվ 318
17 մայիսի 1915թ.

Այստեղ եկած պարոն Զավրիևը ինձ ներկայացրեց մեր արտաքին գործերի նախարարության հետ իր զրույցների արդյունքների մասին հուշագիրը: Այդ զրության մեջ, իմիջիայլոց, ասված է, որ Ռուսաստանը մտադիր է առաջարկել տերություններին ստեղծել Թուրքիայի սահմաններում ինքնավար Հայաստան Թուրքիայի գերիշխանության տակ երեք տերությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի հովանավորության ներքո:

Հայաստանի տարածքը պետք է ընդգրկի բոլոր հայկական վիլայեթները, բացառությամբ որոշ ծայրամասային հատվածների, բայց նաև Կիլիկիան՝ Միջերկրական ծովում Մերսին նավահանգըստով, բացառելով ողջ Ալեքսանդրետի ծոցը Յումուրթալիքով: Այնուհետև զրության մեջ նշվում է, որ թեկուզ այս ծրագիրը հավանության է արժանացել մեր արտաքին գործերի նախարարության կողմից, որը խոստացել է իր օգնությունն այդ ծրագրի իրագործման հարցում Լոնդոնում և Փարիզում իր դեսպանների միջնորդության միջոցով, Ֆրանսիայի և Անգլիայի կողմից հատկապես Կիլիկիայի հարցում կասկածանքներից խուսափելու նպատակով, հայ պատվիրակները պետք է գործեն առանց ռուս դեսպանների բացահայտ միջամտության, որը կարող է կատարվել միայն դժվարին պահերին, ինչպես նաև այն ժամանակ, երբ դեսպաններն իրենք դա անհրաժեշտ կհամարեն:

Ինձ հայտնի է, որ ինչպես դոկտոր Զավրիևը, այնպես էլ վե-

բաղարձած Պողոս-Նուբար փաշան արդեն արտահայտվել են վերը նշվածի վերաբերյալ այստեղի արտաքին գործերի նախարարության անդամների առաջ: Չմերժեք, ուստի, տեղեկացնել ինձ, իսկապես վերը նշված ծրագիրը հավանության է արժանացել Ձեր կողմից, և ինչ չափով ես պետք է պաշտպանեմ այն այստեղ:

Կիլիկիային վերաբերող կետն ինձ հատկապես նրբանկատ հարց է թվում, քանզի Ֆրանսիան արդեն հայտնել է մեզ իր հավակնություններն այդ շրջանի նկատմամբ:

Իզվոլսկի

Раздел Азиатской Турции. По секретным документам бывшего Министерства иностранных дел. Под редакцией Е.А. Адамова, М., 1924, (այսուհետ՝ РАТ), стр. 135.
РИГАОИ, стр. 26.

№ 30

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՓԱՐԻԶՈՒՄ ԴԵՍՊԱՆ Ա. Պ. ԻԶՎՈԼՍԿՈՒՆ

Հեռագիր թիվ 2307
18 մայիսի 1915թ.

Ձեր թիվ 318 հեռագիրը ստացվել է:

Հայերի հետ զրույցները կրել են զուտ ակադեմիական (խորհրդակցական) բնույթ: Ոչ մի որոշակի ծրագիր Զավրիևին առաջարկված չի եղել: Նրա այն խնդրանքին, թե հաշվի առնենք հայերի ցանկությունները Կիլիկիան տեսնել մտցված ապագա Հայկական մարզի սահմանների մեջ, նրան պատասխանվել է, որ մենք չենք կարող պաշտպանել այդպիսի ցանկություն, ելնելով Կիլիկիայում ֆրանսիական շահերի գերակայությունից:

МОЭИ, серия 3, т. 7, ч. 2, стр. 471-472.
РИГАОИ, стр. 27.

№ 31

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՓԱՐԻԶՈՒՄ ԳԵՍՊԱՆ Ա. Պ. ԻԶՎՈԼՍԿՈՒՆ

Հեռագիր թիվ 2324
20 մայիսի 1915թ.

Հղում եմ կատարում ձեր թիվ 307 հեռագրի վրա:

Մեծ Բրիտանիայի դեսպանն ինձ հայտնեց, որ Գրեյը ընդունում է նախարարությունում մշակված Թուրքիայի կառավարությանն ուղղված Թուրքիայում հայերի կոտորածի կապակցությամբ հայտարարության տեքստը, և որ ինքը պատրաստ է հրապարակել այն Լոնդոնում, եթե որ ֆրանսիական կառավարությունը կհայտնի իր համաձայնությունը: Բարեհաճեք արագացնել այդ համաձայնության ստացումը:

Սազոնով

МОЭИ, серия 3, т. 7, ч. 2, стр. 488-489.
РИГАОИ, стр. 27.

№ 32

ԼՈՆԴՈՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր թիվ 352
20 մայիսի 1915թ.

Ստացա թիվ 2247 Ձեր հեռագիրը:

Շարունակեցի Գրեյի հետ զրույցը, որի մասին ասված է իմ թիվ 333 հեռագրում: Երբ ես նրան ասացի, որ Վանում այսպես կոչված ապստամբության փաստը չի կարող ընդունվել ի գիտություն, քանի որ այն ակնհայտորեն հետևել է ջարդերից հետո, Գրեյը ոչինչ չառարկեց դրան: Սակայն նա կրկին սկսեց խոսել իր կասկածների մասին սպառնալիքների հրապարակման գործնական նպատակահարմարության հետ կապված, որոնք թիչ ազդեցություն կարող են ունենալ Թուրքիայի վրա: Վիճարկելով այդ տեսակետը, ես Գրեյին

նշեցի, որ գոյություն ունի այլ տեսակետ, որի վրա ես պետք է հրավիրեմ նրա ուշադրությունը, իսկ կոնկրետ այն, որ մեր հատուկ և նույնիսկ ռազմական շահերի համար շատ կարևոր է բոլոր հայկական տարրերի շրջանում այդ տրամադրության պահպանումը, որ ենթադրվող հայտարարությունը անվիճելիորեն ազդեցություն կունենա բոլոր հայերի վրա ընդհանրապես, և որ այդ տպավորությունն արագ կտարածվի փորձությունների ենթարկվող հայ բնակչության շրջանում: Ես պնդում էի այս փաստարկները և խնդրեցի նրան լուրջ ուշադրություն դարձնել դրանց վրա: Գրեյը հարցրեց ինձ, թե արդյոք բավարար չի լինի, եթե դուք միայնակ հանդես գաք: Ես պատասխանեցի նրան, որ այդ ելքը մեզ համար միշտ բաց է մնում, բայց որ դա բոլորովին այն չի լինի, որ մինչ այժմ մենք հանդես ենք եկել միշտ երեքով, և որ ինձ համար կարևոր է թվում, որ այդ կարգը կիրառվի նաև ապագայում, որ անկախ դրանից, բոլորովին միևնույն չէ, թե բարոյական տեսակետից կդատապարտեն արդյոք բացահայտորեն երեք տերությունները թուրքերի գործողությունների եղանակը, թե լոկ այն բանից ելնելով, որ դա կարող էր դիտվել իբրև մեր անմիջական շահեր: Գրեյը, որի վրա ես, իմ կարծիքով, տպավորություն գործեցի, ասաց ինձ, որ կվերադառնա այդ ողջ հարցի քննարկմանը, նկատի ունենալով իմ կողմից բոլոր ասվածը:

Բենկենդորֆ

МОЭИ, серия 3, т. 7, ч. 2, стр. 490-491.
РИГАОИ, стр. 27-28.

№ 33

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

Փարիզ,
20 մայիսի 1915

Ի պատասխան այն զրույցների, որ Նորին գերազանցություն Ռուսաստանի դեսպանն ուղարկել է թուրքերի կողմից ձեռնարկված հալածանքների և ջարդերի հետ կապված, որոնց նոր զոհը դարձավ Թուրքիայի որոշ վիլայեթների հայ բնակչությունը, արտգործնախարարը պատիվ ունի նրան տեղեկացնելու, որ ֆրանսիաժ

կան կառավարությունը պատրաստ է Փարիզում հրապարակել հայտարարությունը, որի տեքստը նրան մայիսի 11-ի իր գրությամբ հղել է Նորին գերազանցություն պարոն Իզվոլսկին:

Բայց և այնպես, ֆրանսիական կառավարությունն, իր գերիշխանության տակ ապրող մահմեդական բնակչության զգացմունքները խնայելու անհրաժեշտությունից ելնելով, գտնում է, որ Նորին գերազանցություն պարոն Սազոնովի կողմից առաջարկված տեքստի II պարբերությունում «քրիստոնեության և քաղաքակրթության դեմ» բառերը կարող էին հանվել: Դրանք կարող են մտածելու տեղիք տալ, որ Ֆրանսիայի հետաքրքրությունը Թուրքիայում սահմանափակվում է միայն քրիստոնյա բնակչության հարցերով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 887, ff. 118-118v).
GPEOAAF, pp.26-27.

№ 34

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ՆԱՄԱԿԻՑ

գյուղ Կիզիլ - Դիզա
20 մայիսի 1915

...Շտապում եմ օգտվել ինձ սիրալիորեն տրված թույլտվությունից գրել Ձեզ մեր կորպուսի բոլոր առավել կարևոր ռազմա-քաղաքական բնույթի իրադարձությունների մասին և ներողություն եմ խնդրում մի քիչ ուշացած հաղորդագրության համար, որի պատճառը եղավ իմ գտնվելը առաջին դիրքերում ապրիլի 24-ից մինչև մայիսի 15-ը:

Բարձրագույն Կովկասյան ռազմական հրամանատարության կողմից նախանշված և մշակած Տապարիզյան լեռնանցքով Արագինյան դաշտավայր և հետո դեպի Վան շարժվելու օպերացիան ավարտվեց փայլուն՝ Բայազետի ջոկատի գեներալ Նիկոլաևի զորքերի կողմից քրդական հրոսակախմբերի և թուրքական զորքերի ջախջախումով և մայիսի 5-ին Վան քաղաքի գրավումով:

Փառապանծ հերոսների արագ արշավանքը մատակարարման և ճանապարհների ծայրահեղ ծանր պայմաններում ճիշտ ժամանակին օգնության հասավ Վանի պաշտպաններին նման ճգնաժամային րոպեին, երբ նրանք ապրում էին իրենց վերջին օրերը:

Փամփուշտները բոլորը սպառված էին, հաց չկար, այդ դեպքում, երբ Ջևդեթ-փաշան, զբաղեցնելով քաղաքի միջնաբերդը և Թադվանով Վանա լճի մյուս կողմից օգնություն ստանալով, անընդհատ ռմբակոծում էր բարիկադներից այն կողմ գտնվող հայերին:

Չկան համապատասխան բառեր, որոնցով կարելի լիներ նկարագրել Վանի հայ բնակչությանը հասկած ոգու վերելքը մեր ջոկատի քաղաք մտնելու ժամանակ: Զորքերին դիմավորում էին ծաղիկներով: Ջոկատի հրամանատարին դիմավորեցին աղ ու հացով և քաղաքի բանալիներով, թնդանոթների համազարկը և բնակչության ուրախ բացականչությունները խորհրդանշում էին մեր փրկիչ զորքերի գալուստը՝ քրիստոնեությանը իր պատմական թշնամուց ազատելու համար:

Այստեղ տեղին է հիշատակել այն մասին, որ վերջերս ձևավորված երեք հայկական ջոկատները՝ 1) Վարդանի, 2) Դրո Կանայանի, 3) Խեչոյի և Համազասպի հեծելաջոկատը, շարժվելով առաջ, ինչպես մարտական, այնպես էլ կարգապահության առումով իրենց շատ լավ են դրսևորում: Չնայած խոր ձյանը և ճանապարհների լիակատար բացակայությանը, հայերը համարձակ առաջ են շարժվում այնքան արագ, որ գեներալ Նիկոլաևը ստիպված էր մի քանի օր նրանց կանգնեցնել Ջանիկում՝ Վանի մոտ, մինչև Վերին և Ստորին Սորի օպերացիայի ավարտը և Արճեշի գրավումը, ինչը ռազմավարական տեսակետից ուներ կարևոր նշանակություն:

Չեմ ուզում այստեղ մանրամասն նկարագրել այն սարսափելի գազանությունների տեսարանները, որոնք թուրքական կառավարության ցուցումով կատարվել էին քրդերի և ասկյարների կողմից երկրամասի անպաշտպան բնակչության նկատմամբ: Հարկադրված էինք տեսնել կանանց, տղամարդկանց, երեխաների և ծերերի կտրված ձեռքերով, ոտքերով, հանված աչքերով դիակների կույտեր: Դա մի զարհուրելի տեսարան էր:

Մեր կողմից Վանի գրավումն ունի չափազանց կարևոր քաղաքական նշանակություն: Մեր ձեռքում է ծաղկող երկրամաս՝ զարգացած բնակչությամբ, Արևմտյան Հայաստանի հին մայրաքաղաքով, որը ռուսական զորքերը առաջին անգամ են գրավում, քանի որ նախորդ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ մեր զորքերը, ինչպես հայտնի է, հասել են միայն մինչև Մանազկերտ...

Վ. Շչերբին
Գործող բանակ

АВПР, Полтархив, д. 3504, л. 29.
РИГАОИ, стр. 28-29.

№ 35

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Փարիզ,
21 մայիսի 1915

Դաշնակցության հայկական կոմիտեն վերջերս կայսերական արտաքին գործերի նախարարությանն է հղել հետևյալ հեռագիրը.

«Հայաստանում թուրքական վերջին չարագործությունները սպառնում են ոչնչացնել ազգին՝ կրկնելով 1895 թվականի ջարդերը: Մենք ստիպված ենք դիմել Նորին գերազանցության կառավարության օգնությանը՝ հանուն մարդասիրության խոչընդոտելու համար այդ արհավիրքին՝ անձնական պատասխանատվության կանչելով թուրքական նախարարներին»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 887, ff. 121-122).
GPEOAAF, p.28.

№ 36

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Փարիզ,
24 մայիսի 1915

Վկայակոչելով պարոն Դելկասսեի սույն ամսի 20-ի գրությունը, Ռուսաստանի դեսպանն իր պարտքն է համարում Նորին գերազանցության գիտությանը հասցնել պարոն Սազոնովի հետևյալ հեռագիրը.

«Կայսերական կառավարությունը համաձայն է «քրիստոնեության և քաղաքակրթության դեմ» ձևակերպումը փոխարինել «մարդկության և քաղաքակրթության դեմ» բառերով և ավարտել հայտարարությունն այնպես, ինչպես դա ցանկանում է պարոն Էդուարդ Գրեյը՝ «նման կոտորածներ» բառերով «հայկական կոտորածների» փոխարեն»:

Պարոն Սազոնովը հույս ունի, որ Փարիզի և Լոնդոնի կաբի-

նետները կընդունեն այդ փոփոխությունները, հակառակ դեպքում նա պատրաստ է բաց թողնել այն բառերը, որոնք առարկության տեղիք են տվել, միայն թե հրապարակումը տեղի ունենա սույն ամսի 11/24-ին, ինչպես առաջարկվում է պարոն Էդուարդ Գրեյի կողմից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 887, f. 125).
GPEOAAF, p.29.

№ 37

ՊԵՏՐՈԳՐԱԴԻ ՀԵՌԱԳՐԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

24 մայիսի 1915թ.

Վերջին ամսվա ողջ ընթացքում Հայաստանում կատարվում է հայերի ջարդ թրքերի և թուրքերի կողմից օսմանյան իշխանությունների բացահայտ թողտվությամբ, իսկ երբեմն էլ ուղղակի օժանդակությամբ: Նոր տոմարով ապրիլի կեսերին հայերի ջարդ է տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Էգինում, Քիթլիսում, Մուշում, Սասունում, Զեյթունում և ամբողջ Կիլիկիայում, գլխովին կոտորվել են Վանի շրջակայքի հարյուր գյուղերի բնակիչները, բուն Վանում հայկական թաղամասը պաշարվել է թրքերի կողմից: Միևնույն ժամանակ Կոստանդնուպոլսի թուրքական կառավարությունը բանտարկության և չտեսնված ճնշումների է ենթարկում խաղաղ հայ բնակչությանը:

Ելնելով Թուրքիայի կողմից մարդկության և քաղաքակրթության դեմ կատարված նոր հանցագործություններից, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնային կառավարությունները սրանով հրապարակայնորեն հայտարարում են Թուրքիայի կառավարությունը, որ իրենք այս հանցագործությունների անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա տեղական ներկայացուցիչների վրա, որոնք հանցակից կգտնվեն նման կոտորածին:

АВПР, Политархив, д. 3507, л. 15.
РИГАОИ, стр. 21.

№ 38

ՓԱՐԻԶՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Փարիզ,
29 մայիսի 1915

Թանկագին Տիար Սերգեյ Դմիտրիի,

Տեղի մամուլում սույն թվականի մայիսի 11/24-ին Համաձայնության տերությունների միջև համաձայնեցված Թուրքիայում հայերի կոտորածների հարցի հետ կապված Բարձր Դռանն ուղղված հայտարարության հրապարակումից հետո Պողոս Նուբար փաշան ինձ դիմեց նամակով, որտեղ իրրև Ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ և հայկական ազգային պատվիրակության նախագահ, ինձ խնդրում է Ձերդ գերազանցությանը փոխանցել իր ազգակիցների խոր երախտագիտության արտահայտումը այն եռանդուն և մեծահոգի հայտարարության համար և հայտնել նրանց հաստատ հավատամքը ճնշումների ենթարկվող հայ ժողովրդի ազատագրման մեջ՝ շնորհիվ Կայսերական և նրա դաշնակից կառավարությունների հզոր կամքի:

Իմ պարտքն եմ համարում փոխանցել այս ամենը նշված նամակի բնօրինակով և օգտվում եմ առիթից վերահաստատելու համար իմ խոր հարգանքն ու բացարձակ հավատարմությունը Ձեզ, թանկագին Տիար:

Իզվոլսկի

АВПР, Политархив, д. 3507, л. 26.
РИГАОИ, стр. 32.

№ 39

Հ. ՁԱՎՐԻԵՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՆԴՈՆՈՒՄ ԵՎ ՓԱՐԻԶՈՒՄ ՌՈՒՍ ԴԵՍՊԱՆՆԵՐԻՆ

1915թ. մայիս

Ներկայիս պատերազմի առաջին օրերից ռուսահայերը սպասում էին դրա մեջ նաև Թուրքիայի ներգրավմանը: Դա հույս էր տա-

լիս կարծելու, որ պատերազմի ավարտից հետո Հայկական հարցը կրկին հերթի կդրվեր և կլուծվեր վերջնական ձևով: Այդ իսկ պատճառով հայերը չէին կարող անմասն մնալ հատուցացող իրադարձությունների նկատմամբ, ուստի և նրանք եռանդուն մասնակցություն ունեցան դրանց մեջ:

Բացի կանոնավոր զորքերին որպես կայսրության քաղաքացիներ հայերի կողմից տված զինվորներից և սպաներից, նաև կազմակերպվել են (իրենց հաշվին և կառավարության որոշակի օգնությամբ) կամավորների ջոկատներ, որոնք վաստակել են ռուս գեներալների գովեստի արձագանքները մարտական բարձր հատկանիշների ցուցաբերման համար: Կամավորների թիվը, որը հասնում էր հինգ հազարի, կարող էր էապես ավելանալ, սակայն դրան խանգարեց ռազմական տեսչությունում զինամթերքի պակասը: Դրանից ելնելով Կովկասի փոխարքան հրամայեց ժամանակավորապես սահմանափակվել վերը նշված թվով:

Անձնական աշխատանքով և նյութական զոհաբերություններով հայերը եռանդուն մասնակցություն ունեցան նաև վիրավորներին և հիվանդ զինվորների մասին հոգ տանելու գործում՝ առանց դավանանքի խտրականության: Նրանց հանգանակությունների գումարը միայն վերջին գործերի համար այժմ արդեն անցել է երկու միլիոն ռուբլուց:

Վերը նշվածից երևում է, որ Ռուսաստանում ոչ մեծ հայ ժողովուրդը (1.700000) իսկապես աշխատում է իր նյութական և ֆիզիկական ուժերի չափով:

Այս գործունեության հետ միաժամանակ հայերը հարաբերությունների մեջ մտան Կովկասի փոխարքայի հետ Թուրքահայաստանի ինքնավարության հարցում ռուսական կառավարության վերաբերմունքը պարզելու նպատակով:

1914թ. օգոստոսի սկզբին Կովկասի փոխարքային ուղղած իր նամակում Ամենայն հայոց կաթողիկոսը ցանկալի է համարել, որ Ռուսաստանը պատերազմի ավարտից հետո Թուրքահայաստանին երաշխավորեր տարածք և ինքնուրույն ինքնակառավարում Ռուսաստանի պաշտպանության ներքո: Փոխարքան նամակով պատասխանել է կաթողիկոսին, որտեղ ասվում էր, որ այդ կապակցությամբ Պետրոգրադին ուղղված իր հարցմանը ստացել է նախարարների խորհրդի նախագահի պատասխանը, որ Ռուսաստանը կպաշտպանի հայերի պահանջները Ռուսաստանի կողմից 1913թ. Կոստանդնուպոլսում առաջարկված բարենորոգումների նախնական ծրագրի իմաստով:

1914թ. նոյեմբերին Թիֆլիսում կայսեր կողմից կաթողիկոսի բարձր մակարդակի ընդունելության (առանց կողմնակի անձանց) ժամանակ կաթողիկոսը ներկայացրեց հայերի ցանկությունները, կապված այն բանի հետ, որ կայսրը համաձայնվի Թուրքահայաստանին պարգևել ինքնավարություն: Կայսրը պատասխանել է, որ գտնում է թե «հայերին սպասում է պայծառ ապագա, և հավատում է, որ Հայաստանը ապագայում չի հետևի Բուլղարիայի օրինակին»:

Ընդունելության վերջում, որը տևել է մոտ քառորդ ժամ, կայսրը հայտնել է, որ «Հայկական հարցը կլուծվի հայերի ցանկությունների համաձայն պատերազմի ավարտից հետո, խաղաղության բանակցությունների ժամանակ»:

Կովկասում հայերի տարվող աշխատանքի հետ միաժամանակ, հայ ներկայացուցիչները Պետրոգրադում գտնվում էին անընդհատ հարաբերությունների մեջ արտաքին գործերի նախարարության հետ: Մի շարք գրույցների արդյունքում պարզվել է, որ նախարարությունը, թեկուզև չի սահմանել Հայկական հարցում վերջնական ծրագիր, սակայն գտնում է, որ հայերը պետք է բավարարվեն, եթե Ռուսաստանը տերություններին առաջարկի՝

1. Թուրքական կայսրության սահմաններում Հայաստանի ստեղծում, որը կկառավարվի ինքնավար սկզբունքներով:

2. Թուրքիայի գերիշխանության պահպանումը, որը կդրսևորվի միայն սուլթանի կողմից գեներալ-նահանգապետի հաստատմամբ, որը կընտրվի տերությունների կողմից և թուրքական դրոշի պահպանմամբ: Հայաստանի ներքին գործերի որևէ միջամտություն կամ այնտեղ թուրքական զորքի տեղակայում չի թույլատրվի:

3. Հայաստանի նկատմամբ երեք տերությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի հովանավորության սահմանում:

4. Հայաստանի տարածքը պետք է ներառի վեց հայկական վիլայեթները (բացառությամբ ծայրամասային մասերը արևմուտքում և հարավում, որոնք համարյա բացառապես բնակեցված են մահմեդականներով) և Կիլիկիան՝ Մերսինում Միջերկրական ծովի նավահանգստով բացառելով ողջ Ալեքսանդրետի ծոցը Յումուրթալիքի հետ:

5. Ինքնավարության ծրագիրը, որը հիմնվելու է 1913թ. ամռանը Կոստանդնուպոլսում Ռուսաստանի կողմից առաջարկված բարենորոգումների առաջին ծրագրի վրա, ենթակա է ընդարձակումների, որոնք, բնականաբար, բխում են փոփոխված ընդհանուր քաղաքական պայմաններից:

Հայ պատվիրակները համաձայնվեցին այս հիմունքների հետ:

Այն ժամանակ պարզ դարձավ, որ այս նախագիծը Անգլիայի

և Ֆրանսիայի կառավարությունների առջև պետք է պաշտպանեն հայերը, մասնավորապես վեց վիլայեթներին Կիլիկիայի միացմանը վերաբերող մասը: Անհրաժեշտ էր նաև ազդել երկու երկրների հասարակական կարծիքի վրա: Այդ պատճառով առաջարկվեց հայերից Անգլիա և Ֆրանսիա ուղարկել պատվիրակներ:

Նախարարությունը հավանություն տվեց հայերի այդ առաջարկությանը և խոստացավ իր օգնությունը Լոնդոնում և Փարիզում իր դեսպանների միջոցով:

Միաժամանակ տեսակետ արտահայտվեց, որ ռուս դեսպանների բացահայտ պաշտպանությունը կարող էր հարուցել Անգլիայի և Ֆրանսիայի կասկածամտությունը, այդ պատվիրակների դերի նկատմամբ, հատկապես Կիլիկիայի հարցում:

Այս հիմքի վրա հետևեց համաձայնություն նախարարության հետ, որ պատվիրակները պետք է գործեն որքան հնարավոր է առանց ռուս դեսպանների բացահայտ միջամտության: Վերջիններիս միջամտությունը կարող է լինել միայն դժվարություն ներկայացնող դեպքերում, ինչպես նաև այն ժամանակ, երբ իրենք դեսպանները դա անհրաժեշտ կհամարեն:

Որպես ընդհանուր ուղղություն պատվիրակների համար, նախարարությունը առաջարկեց իրագործել Թուրքահայաստանի ինքնավարության ծրագիրը՝ հիմք ընդունելով վերը նշված հինգ կետերը:

Հայտնելով ամբողջ վերը նշվածն ի գիտություն Ձերդ գերազանցությանը, անհրաժեշտ է ընդգծել, որ Պետրոգրադում զրույցները տարվել են միշտ բավականին գաղտնի, դրանք հայտնի են միայն կաթողիկոսին և հայերից պատասխանատու անձանց, և որ նախարարությունն իր վրա չի վերցրել ձևական պարտավորություններ: Սակայն երկու կողմից էլ զրույցներում զգացվում էր անկեղծություն, ինչպես նաև համոզմունքը համաձայնեցված գործողությունների անխուսափելիության մեջ, ելնելով մեկը մյուսի նկատմամբ եղած վստահությունից և հավատից դեպի շահերի ընդհանրությունը:

Հ. Զավրիև

МОЭИ, серия 3, т. 7, ч. 2, стр. 455-456.
РИГАОИ, стр. 22-25.

№ 40

ՓԱՐԻԶՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր թիվ 377
14 հունիսի 1915թ.

Փարիզում գտնվող դոկտոր Զավրիևը և Նուբար փաշան ինձ իրազեկ են պահում իրենց խոսակցությունների մասին ֆրանսիական պաշտոնատար անձանց, քաղաքական գործիչների և լրագրողների հետ՝ նրանց դեպի հայկական ցանկությունների ընդունմանը թեքելու նպատակով, որոնք շարադրված են ձեզ հայտնի հուշագրում Կիլիկիայի հարցում: Նրանց խոսքերով, թեկուզ այստեղի արտաքին գործերի նախարարությունում շարունակում են պնդել Ֆրանսիայի համար ոչ միայն Սիրիայի, այլև մինչև Տավրոս ամբողջ Կիլիկիայի տիրելու անհրաժեշտության վրա, շատ ազդեցիկ մարդիկ, աստիճանաբար, իրենց ներկայացված փաստարկների ազդեցության տակ, թվում է, որ հակվում են ինքնավար Հայաստանի գաղափարին Ռուսաստան, Անգլիա և Ֆրանսիա եռյակի հովանավորությամբ, դրան գումարած Կիլիկիան Ադանա և Մերսին քաղաքներով, բացառությամբ Ֆրանսիային անցնող Ալեքսանդրետի ծոցի՝ Ալեքսանդրետ նավահանգստով: Նուբար փաշան այս հարցի հետ կապված Դելկասեին է հանձնել հատուկ հուշագիր, որի մեջ, ֆրանսիացիների ինքնասիրությունը խնայելու համար, միտք է արտահայտել, որ Ֆրանսիան, ստանալով Կիլիկիայի իր մասը, կարող էր սեփական նախաձեռնությամբ հայերին գիջել վերը նշված մասը: Ելնելով ձեր թիվ 2307 հեռագրից, ես շարունակում եմ հետևողականորեն ձեռնպահ մնալ Զավրիևի և Նուբար փաշայի ցանկություններին որևէ օժանդակություն ցուցաբերելուց:

Այն դեպքում, երբ իսկապես հակվածություն արտահայտվի ընդունելու վերը նշված ծրագիրը, չմերժեք տեղեկացնել ինձ, թե ինչ չափով է այն ընդունելություն գտնում մեր կողմից:

Իզվոլսկի

РАТ, стр. 136-137.
РГГАОИ, стр. 42-43.

№ 41

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՓԱՐԻԶՈՒՄ ԳԵՍՊԱՆ Ա. Պ. ԻԶՎՈԼՍԿՈՒՆ

Հեռագիր թիվ 2850
16 հունիսի 1915թ.

Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի եռյակ հովանավորության տակ ինքնավար Հայաստանի հնարավոր տարածքից Կիլիկիայի Ադանայի և Մերսինի հետ միասին անջատումը հետևել է Ֆրանսիայի վերաբերմունքից՝ այդ տարածքի նկատմամբ մեր ցանկությունը պարզելու հետևանքով: Եթե հայ պատվիրակներին հաջողվի փարիզյան կաբինետին թեքել ապագա Հայկական մարզի կազմում Կիլիկիայի միացմանը, ապա կայսերական կառավարությունը կարող է միայն ողջունել թուրքահայերի ցանկությունների իրականացումը, որին նա հովանավորել է ի սկզբանե:

Սազոնով

РАТ, стр. 137.
РИГАОИ, стр. 43.

№ 42

ԿԱՀԻՐԵՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՐԴԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հաղորդագրություն թիվ 58
Կահիրե,
25 հունիսի 1915թ.

Սիրիայում և նրան հարակից շրջաններում հայերի հանդեպ կատարված դաժանությունները հասնում են անհավատալի չափերի: Թալանը, բռնությունները, կոտորածը և հաճախ ամբողջ հայկական գյուղերի գլխովին ոչնչացումը կրկնվում են անընդհատ, ընտանիքները անողոքաբար բաժանվում են, կանանց խլում են տղամարդկանցից, երեխաներին՝ ծնողներից և բոլորն ուղարկվում են աբսոր տարբեր ուղղություններով: Հատկապես դաժանորեն հետապնդվում է հայ

հոգևորականությունը, եկեղեցականներին տանջում են, խոշտանգում են, պոկում են նրանց եղունգները:

Վերջերս 12000-ոց թուրքական զորքերը գրավեցին Զեյթունը, որը ծառայում էր որպես հայության պատվար և իրեն մոտ չէր թողնում թուրքական ուժերին: Սպառնալիքներով, խաբեությամբ և խոստումներով թուրքերը դրդեցին հայերին հանձնել Զեյթունը և, գրավելով քաղաքը, ամենադաժան կերպով հաշվեհարդար տեսան նրա բնակիչների և պաշտպանների հետ: Հազարավոր մարդիկ ջարդվեցին և կոտորվեցին, չնայած լրիվ անպատժելիության լայն խոստումներին:

Ասում են, որ հայերի դաժան ջարդեր են տեղի ունեցել նաև Ալեգիետանում (Մարաշի մարզում):

Գերմանական ազդեցությունը, ակնհայտորեն ուղղված է այն բանին, որպեսզի թուրքերին գրգռեն հայերի դեմ: Հալեպում գերմանացի հարուստ վաճառականի կինը՝ տիկին Կոխը, արդեն երկար զբաղվելով քաղաքականությամբ և այն քողարկելով իր հետաքրքրությամբ հնագիտության նկատմամբ, վերջերս ուղևորվեց Ուրֆա և Դիարբեքիր, որտեղ նա կապեր ունի քուրդ ցեղերի հետ: Նրա ուղևորության նպատակը քրդերի գրգռումն է Ռուսաստանի և հայերի դեմ: Տիկին Կոխը, իհարկե, միակը չէ այս բնագավառում, բազմաթիվ գերմանական քարոզիչներ գործում, աշխատում են Սիրիայում և Հայաստանում դաշնակիցների դեմ:

Սմիրնով

АВПР, Политархив, д. 3804, л. 34.
РИГАОИ, стр. 45-46.

№ 43

ԳԵՎՈՐԳ 5-ՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագրից
Էջմիածին,
5 հուլիսի 1915թ.

Իմ կողմից ստացված տեղեկությունները Կոստանդնուպոլսից և Կիլիկիայից փաստում են, որ թուրքական կառավարության

հրամանով Թուրքիայում կատարվում են հայերի զանգվածային ջարդեր, չլսված զազանություններ, հայերը բռնի տեղահանվում են Իկոնիա և Միջագետք, որտեղ անբարենպաստ պայմաններից և կլիմայից վերջնականապես մահանում են, ինչը թուրքական կառավարության նպատակն է...

АВПР, Политархив, д. 3504, л. 38.
РИГАОИ, стр. 48.

№ 44

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ ԳԵՐՄԱՆԱՅԻ ԱՆՀԱՅՏ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ *

6-10 հուլիսի 1915թ.

Հայերը

Որքան էլ դա տարօրինակ է, մեր ամենամեծ հույսերը մենք կապում ենք մեզ չսիրող հայերի հետ: Հայերի միջոցով մենք աստիճանաբար կներթափանցենք ամբողջ Փոքր Ասիա և Հյուսիսային Պարսկաստան և ոչ միայն ազդեցիկ կղառնանք քաղաքական առումով, այլև մեր ձեռքը կվերցնենք այդ երկրների տնտեսական կյանքը: Գերմանիայի համար, ուստի, շահավետ է հայերին պահպանել Թուրքիայում:

Թուրքիան մեզ հարկավոր է ոչ միայն որպես մեր անսահման ազդեցության ոլորտ, այլև իբրև արգելք, որպիսին նա իրենից կարող է ներկայացնել Ռուսաստանի դեմ: Դրա համար հարկավոր է ուժեղացնել Թուրքիայի ռազմական հզորությունը Փոքր Ասիայում և, փորձելով կապել Կովկասը Թուրքիայի հետ, Ռուսաստանին ետ մղել Կովկասյան լեռներից այն կողմ:

Այս գործում հայ ժողովուրդը, ապրելով Թուրքիայի սրտում և զբաղեցնելով Կովկասի կենտրոնը, կարող էր ծառայել որպես Կովկասը Թուրքիայի հետ կապող օղակ: Նա կոչված է արժեքավոր ծառայություն կատարելու: Ցավոք, իրենց պահվածքով հայերն ապացուցել են, որ նրանք ընդամենը սեպ են, որը խրված է մի կողմից թուրքերի և մյուս կողմից Անդրկովկասի թաթարների միջև:

---

* Պահպանվում է Պ.Ն. Միլյուկովի ֆոնդում:

Գնահատելով հայերին, մենք ցանկանում էինք նրանց գրավել մեր կողմը և այդ իսկ պատճառով ձգտում էինք զբաղվել նրանց բարեկեցության ապահովմամբ: Սակայն մենք չէինք կարող հայերին տալ այն ամենը, ինչ նրանք ցանկանում էին: Հայերի նկատմամբ տարվող մեր քաղաքականության մեջ մենք միշտ եղել ենք ճշտապահ և խոստացել ենք միայն այն, ինչ կարող էինք անել:

Հայերն ավելին ցանկացան և զնացին Ռուսաստանի հետևից, որը նրանց իր կողմը գրավելու համար կեղծ խոստումներ էր տալիս: Ռուսաստանը գիտեր, որ երբեք չի կարող ավարտին հասցնել այդ գործը և որ դա անգամ կործանարար կանդրադառնա հայերի համար: Սակայն Ռուսաստանը չէր մտահոգվում դրանով, քանզի գիտեր, որ ընկնելով այդ հունի մեջ, հայերի համար արդեն դժվար կլինի դուրս գալ դրանից: Միևնույն ժամանակ հայերը նրան հարկավոր էին որպես որևէ գործարքի ժամանակ շահավեր փոխանակման առարկա:

Դուք հավանաբար հիշում եք, թե ինչպես 1914թ. գարնանը Ցիմմերմանը Ձեր հետ հանդիպման ժամանակ արտահայտեց այս ամենն անձամբ Ձեզ և զգուշացրեց այն խաղի մասին, որը ձեռնարկել էր Ռուսաստանը: Նա առաջարկում էր հաշտվել փոքր, բայց հայերի կենցաղը բարելավող ճշմարիտ ծրագրի հետ, որը կպաշտպանվեր Գերմանիայի կողմից: Նրա եզրակացությունները անուշադրության մատնվեցին, իսկ այդ նույն ժամանակ Ռուսաստանն արդեն երես էր թեքում Կոստանդնուպոլսի հայերից և շահարկում էր դա՝ Թուրքիային իր կողմը գրավելու համար: Գլխավոր տեսուչների պատմությունը վատ օրինակ չի ծառայում այդ տեսակետից:

Հայերն այն ժամանակ նույնպես չհամոզվեցին, երբ Ցիմմերմանից երկու շաբաթից էլ կարճ ժամանակում կոմս Կանիցը Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանությունում Ձեզ ապացուցում էր, որ Ռուսաստանը բավականին թույլ է պաշտպանում գլխավոր տեսուչներին և որ որքան էլ թույլ լինի Գերմանիայի դերը հայկական բարենորոգումների գործում, այնուամենայնիվ նա իրեն Ռուսաստանի կողմից վարկաբեկված է զգում Թուրքիայի առջև:

Ռուսաստանում չգիտես ինչու կարծում էին, որ փաղաքշելով Թուրքիայի ազդեցիկ անձանց, կարելի է ստիպել նրանց մոռանալ փաստերը: Արդյոք Թալեաթին ցուցաբերած ընդունելությունը կարող է ներշնչել թուրք նախարարին այն գաղափարը, որ Թուրքիային այդքան դարերի ընթացքում ջախջախող պետությունը կարող է հրաժարվել իր պատմական խնդիրներից, որոնց կատարման համար խոչընդոտ է հանդիսացել հենց Թուրքիան: Անշուշտ թուրքական նա-

խարարն այդ աստիճան միամիտ չեղավ: Իսկ հայերը տուժեցին Ռուսաստանի նման ոչ անկեղծության համար:

Սակայն, չնայած այդ դառը փորձին, Թուրքիայի նկատմամբ հայերի զրաված դիրքն ապացուցեց նրանց անուղղելի ռուսամետությունը և նրանց ու թուրքերի հաշտվելու անհնարինությունը: Թուրքերի կարծիքով հայերը չափից շատ վնաս են հասցնում Թուրքիային, որպեսզի վերջինս կարողանա ներել նրանց:

Մեր դեսպան Վանգենհայմի զեկուցագրից երևում է, որ Թուրքիայում տիրապետող է այն խոր համոզմունքը, թե թուրքերի անհաջողությունները Կովկասյան ճակատում մեծապես պետք է վերագրվեն հայերին և որ եթե վերջիններս նման համառության չպաշտպանեին ռուսական գործը Կովկասում, ապա թուրքերի ճանապարհը դեպի Թիֆլիս էապես կհեշտանար: Թուրքերը չեն կարող դա ներել հայերին և այդ պատճառով այդպիսի կատաղությամբ հաշվեհարդար են տեսնում նրանց հետ:

<u>Միջոցառումները հայրի դեմ</u>

Մենք, անշուշտ, չենք կարող հավանություն տալ դաժանություններին, սակայն մենք հասկանում ենք Թուրքիայի համար հայկական ցեղի նշանակության արմատական ձևով չեզոքացման անխուսափելի անհրաժեշտությունը, որը խանգարում է մեր ծրագրերին նույնիսկ պատերազմի ընթացքում:

Այդ իսկ պատճառով մենք չզարմացանք, երբ 1915թ. ապրիլին մեր դեսպան Վանգենհայմը հեռագրեց Բեռլին, որ Էնվեր փաշան իրեն հայտնել է, թե Թուրքիայի պետական շահը պահանջում է հայերի ամբողջական տեղափոխումը Հայաստանից և խնդրում է, որ Գերմանիան չխոչընդոտի դրան. իր կողմից դեսպանը պաշտպանել և միջնորդել էր այդ հարցում:

Գերմանական տեսակետից, սակայն շահավետ չէ, այդ աշխատասեր և օգտակար ժողովրդին ամբողջովին ոչնչացնելը, այն դեպքում, երբ Միջագետքի անապատները կարիք ունեին հենց նման տարրերի: Բնակվելով Միջագետքում և այնտեղ զբաղվելով երկրագործությամբ, հայ ժողովուրդը նույնիսկ կշահի դրանից, քանզի այնտեղի հողերը բերրի են, և նա շուտով կարող է հասնել տնտեսական զարգացման: Դրանից կշահեին և՛ պետությունը, և՛ Բաղդադի երկաթգիծը:

Հայերին իսկապես սկսեցին տեղահանել դեպի Միջագետք: Տեղահանվելով հայրենիքից, հայերի մի մասն, անշուշտ, կհասցնի ընակվել ողջ Փոքր Ասիայի քաղաքներով մեկ: Դա կմեծացվի հայ-

կական տարրի թվաքանակն այդ տեղերում, որը շնորհիվ իր մշակույթի և եռանդի արագ այնտեղ կզբաղեցնի պատշաճ դիրք: Հենց այդպիսի տարր է հարկավոր Գերմանիային, քանզի այն ամբողջությամբ կընկնի նրա (Գերմանիայի) ազդեցության տակ և կծառայի նրա դիրքերի ամրապնդմանը Թուրքիայում: Նրանք Գերմանիային կտան ներկայանալի վաճառականների՝ նրա ապրանքները վաճառելու համար, լավ արհեստավորների, աշակերտների, ուսուցիչների, իրավաբանների և բժիշկների, որոնք ներծծված կլինեն գերմանական գիտությամբ, ինչպես նաև պաշտոնյաների, որոնք ծառայելով թուրքական վարչական համակարգի բոլոր ոլորտներում, մշտապես ոգով ավելի հարուստ կլինեն գերմանացիներին, քան թուրքերին:

Հազիվ թե իրավացի լինեն այն հայերը, որոնք գտնում են, որ այսուհետ հայերի ատելությունը գերմանացիների նկատմամբ կխոչընդոտի որևէ տիպի համագործակցությանը: Հայերը շուտով կհասկանան, որ իրենք դարձան միայն իրենց միամտության զոհը: Այդ չար զգացումն ապրում է առաջին սերունդը: Հայերը պետք է շարունակեն ապրել: Մենք նրանց կտանք աշխատավարձ, մենք աստիճանաբար կմեծացնենք նրանց նշանակությունը Թուրքիայում: Նրանց գոյությունը և մշակութային առաջընթացը կախված կլինի մեզնից: Այդ իսկ պատճառով նույնիսկ առաջին սերունդը շուտով կհաշտվի մեր հետ, իսկ հաջորդները անկասկած կդառնան մեր անկեղծ կողմնակիցները:

<u>Հայաստանի բնակեցումը թուրքերով</u>

Հայերի տեղահանությունը Հայաստանից կբերի մեծ քաղաքական նշանակության օգուտ:

Հայերից ազատված բոլոր հողերը թուրքերը կբնակեցնեն թուրքական ցեղին պատկանող մուհաջիրներով, որոնք տեղափոխվել են Եվրոպայից և այլ տեղերից: Այսպիսով կիրականանա ամբողջ Փոքր Ասիայի և Արևելյան Անատոլիայի ընդհուպ մինչև Թավրիզ և Բաքում բազմաքանակ մահմեդական ցեղով բնակեցնելու խնդիրը, ինչը հանդիսանում է միասնական ժողովրդի բաղձալի երազանքը: Այդ դեպքում դժվար չի լինի ստեղծել պողպատյա արգելք, որի վրայով Ռուսաստանի համար դժվար կլինի անցնել:

Գերմանիան անկասկած դա կկարողանա կազմակերպել այնպես, ինչպես իրեն պետք է: Մենք հավանաբար առանց հատուկ ջանքերի կկարողանանք մեր ձեռքում պահել թուրքական բանակը նաև պատերազմի ավարտից հետո: Չէ որ այժմ էլ այդ բանակը գրեթե մերն է: Այնտեղ մեր սպաներն են, մեր թնդանոթները և հրացան-

ները, մեր պաշարները և կազմակերպվածությունը: Թուրքերին հազիվ թե հաջողվի դուրս պրծնել մեր ձեռքից: Եվ եթե մենք չենք ուզում դրսևորել մեր իշխանությունն ու նշանակությունը, ապա միայն այն պատճառով, որ ցանկանում ենք հաշվի առնել (թուրքերի) տրամադրվածությունը: Հարկավոր է, որ ժամանակակից զորձիչներն առանց աղմուկի իջնեն բեմահարթակից, և որ մենք նույնպես առանց աղմուկի կարողանանք վերցնել այն, ինչ իրավմամբ մեզ է պատկանում:

Կովկասը և Վրաստանի ինքնավարությունը

Գերմանական միության և Թուրքիայի ճակատագիրը կորոշվի ռուս-գերմանական ռազմաճակատում: Հաղթանակի դեպքում մենք Թուրքիային կմիացնենք Անդրկովկասը և կստեղծենք ինքնավար Վրաստան, այն դնելով Թուրքիայի գերիշխանության տակ: Մենք գիտենք, որ համերաշխություն է տիրում վրացիների և թաթարների միջև, և որ վրացիները հայերի նման չեն վախենում մահմեդականներից:

Թաթարները, անշուշտ, կմիաձուլվեն թուրքերի հետ: Այսպիսով, արևելյան և արևմտյան Անդրկովկասն ամուր կմիաձուլվի Թուրքիայի հետ: Մենք, անշուշտ, կապահովենք հայերի հանգիստ գոյությունը Կովկասում, սակայն նրանք արդեն մշտապես պարտադրված կլինեն հրաժարվել իրենց ազգային գաղափարից:

Հայերը չպետք է բողոքեն նման ավարտի դեմ, քանզի նրանք արժանի են դրան...

Վերջաբան

Վերը նշվածից բխում է, որ Ռուսաստանին պողպատյա շղթայով շրջապատելու գերմանական ծրագիրը չի կարելի համարել ցնորաբանություն:

1915թ. օգոստոսի 2, Պետրոգրադ

Եզրակացություններ

Գերմանիայի համար ակնհայտ է, որ «փրեշավոր» Ռուսաստանին հարկավոր է հակադրել այնպիսի «փրեշ» ինչպիսին ինքն է՝ Չինաստանին...

Չինաստանից հետո գլխավոր դերը հատկացվում է Թուրքիային: Այն չի կարող ուժեղ լինել քանի դեռ հայերը գրաղեցնում են նրա սիրտը՝ Հայաստանը, որը Միջագետքի և Անատոլիայի վրա գերիշխելու բանալին է:

Հայերը միևնույն ժամանակ հանդիսանում են թուրք ժողովրդի մեջ խրված սեպ: Նրանք առանձնացնում են ռուսական թուրքերին (Անդրկովկասի թաթարներին) և պարսկական թուրքերին (Սղրբեջանի թաթարներին) թուրքական ցեղի արմատից (օսմաններից):

Այս ժողովուրդը պետք է հեռացվի Թուրքիայի համար այդքան թանկարժեք տարածքից:

Թուրքիայում Գերմանիայի տիրապետության համար հարկավոր է զործուն բուրժուազիա քաղաքներում, իսկ Բաղդադի երկաթգծի սպասիոմման համար հարկավոր են ճանապարհի կողքին բնակվող երկրագործներ: Գերմանիան այդ նպատակի համար իբրև հարմար ժողովուրդ ընտրել է հայերին: Գերմանիան համաձայնվեց Հայաստանից հայերի զտմանը, ուստի և նրանց քշում են Միջագետք: Թուրքերին արդեն հաջողվել է նրանցից բացարձակապես մաքրել Հայաստանի կեսից ավելին:

Հայկական հողերը որոշված է բնակեցնել թուրք մուհաջիրներով: Կարճ ժամանակ անց կիրագործվի այդ չափազանց կարևոր միջոցառումը և թուրք ցեղը միատարր կբանակեցնի ամբողջ երկիրը Բոսֆորից մինչև Բաքու և Թավրիզ:

Դա կամրապնդի Կովկասի ձգտումը դեպի Թուրքիա: Հայերի մնացած հատվածը կզրկվի իր նշանակությունից, սեղմված լինելով միավորված թուրքական ցեղի և ինքնավար Վրաստանի միջև, որոնք իրար հետ կապված կլինեն փոխադարձ վստահությամբ և ազգային շահերով:

Այսպիսով, Ֆինլյանդիայից Լեհաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի վրայով մինչև Չինաստան Ռուսաստանը կիպ խեղդված կլինի սլավոնական աքցաններով, որոնց ղեկավարումը կգտնվի Գերմանիայի ձեռքում:*

ГАРФ, ф. 579, оп. 1, д. 2111, л. 1-7.
ГАОТОМС, т. 2, ч. 1, стр. 8-11.

---

* Փաստաթղթի վերջին մասը՝ «Եզրակացությունները» ձեռագիր գրվել է հավանաբար արդեն ռուս անհայտ պաշտոնյայի կողմից՝ բնագիրը կարդալու ընթացքում:

№ 45

ԼՈՆԴՈՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր թիվ 462
15 հուլիսի 1915թ.

Ինձ այցելեց Նուբար փաշան: Նա ինձ ասաց, որ գնացել է Փարիզ և Լոնդոն որպես կաթողիկոսի վստահված անձ, որի ծրագիրը հաստատված է կայսերական կառավարության կողմից: Այդ ծրագիրը 6 վիլայեթների և Կիլիկիայի ինքնավարությունն է, չեզոքացված երեք տերությունների հովանավորության ներքո:

Նա ինձ ասաց, որ այդ ծրագիրը համապատասխանում է Ռուսաստանի տնտեսական և բարոյական շահերին, ինչպես նաև արժանի է Ֆրանսիայի և Անգլիայի բարեհաճ ուշադրությանը, քանի որ թուրքական կայսրության բաժանումը Ասիայում դարձել է անխուսափելի: Նա ինձ ասաց, որ Դելկասեի խնդրանքով ինքը խոստացել է նրան ներկայացնել հուշագիր: Կրկին, Նիկոլսոնի խնդրանքով, ինքը փոխանցել է նրան հուշագիր չնչին խմբագրական փոփոխություններով: Նա ինձ ներկայացրեց պատճենը: Նա կարծում է, որ իր ուղևորությունը Փարիզ չմնաց առանց ազդեցության ֆրանսիական կառավարության վրա, քանի որ Ֆրանսիան նախքան իր այցը պայքարում էր Կիլիկիայի համար: Նա ձգտել է ապացուցել, և իր կարծիքով ոչ անհաջող, որ նման քաղաքականությունը կործանարար է Ֆրանսիայի շահերի համար և Ռուսաստանի ու Անգլիայի հետ նրա ապագա հարաբերությունների համար: Մտույգ չիմանալով Կայսերական կառավարության տեսակետները, ես սահմանափակվեցի հավաստիացումներով այն կարևորության մասին, որը Ռուսաստանը տալիս է Հայկական հարցին և այն կենդանի հատեքրքրության մասին, որն այն առաջացնում է:

Բենկենդորֆ

РАТ, стр. 138.
РИГАОИ, стр. 50.

№ 46

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻ ԴԻՄՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻՆ

19 հուլիսի 1915

... Զգալով վերահաս վնասվածը, թուրքերը առանձնահատուկ դաժանությամբ հարձակվեցին իրենց իշխանության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների վրա: Հայերը ենթարկվում են չտեսնված հետապնդումների, որոնք սակայն չեն կորցրել նրանց ոգին, և հայկական ջոկատները արիաբար մեր հետ միասին կռվում են իրենց կեղեքիչների դեմ: Այսպես, Վանում նրանք դիմադրեցին մոտավորապես մեկ ամիս թուրքերի զրոհներին մինչև մեր զորքերի կողմից քաղաքի ազատագրումը: Նման ծանր հանցագործություններ թուրքերի կողմից կատարվել է տեղի հույն բնակչության նկատմամբ, կանանց և երեխաների հանդեպ, ինչը չի կարող չառաջացնել կարեկցանք և ցասում հույն ժողովրդի և նրա կառավարության մոտ:

Սղագրական հաշվետվություն: Պետական Դումա: Չորրորդ գումարում. IV նստաշրջան, առաջին նիստ, 19 հուլիսի 1915թ., էջ 23: ГАОТОМС, т. 1, с. 249.

№ 47

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ԵԼՈՒՅԹԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

20 հուլիսի 1915

ՊԱՊԱՋԱՆՈՎ (Բաքվի, Ելիզավետպոլի և Երևանի նահանգներ) – Պարոնայք Պետական Դումայի անդամներ: Պատերազմի առաջին տարվա ընթացքում ես երկրորդ անգամ եմ բարձրանում այս ամբիոն Ռուսաստանում բնակվող բոլոր ազգությունների ռուս ժողովրդի հետ միասնության անհրաժեշտության խորին գիտակցությամբ: Հայ բնակչության կողմից իբրև Պետական Դումա ուղարկված պատգամավոր, իմ պարտքն եմ համարում վկայել հայ ժողովրդի բարձր հայրենասիրական զգացումի և այն մասին, որ

չկան զոհաբերություններ, որոնց առաջ նա կանգ կառնի այս պատերազմում հանուն ընդհանուր հայրենիքի փառքի: (Ծափահարություններ աջից, կենտրոնում և ձախից և ձայներ՝ բրավո): Հայերի հայրենասիրական խանդավառությունը ծանր փորձությունների ենթարկվեց անցած տարվա ընթացքում Ռուսաստանի և նրա քաջարի դաշնակիցների հաղթանակի կենսական անհրաժեշտության գիտակցման նրանց տիտանական պայքարում հանուն արդարության և ժողովուրդների իրավունքների և վերաճեց ամուր պետական տրամադրության: Գոյության և ազատության համար պայքարի օրերում հայ ժողովրդի մեջ չկան կուսակցություններ և քաղաքական հոսանքներ, բոլորը մի մարդու պես միավորվում են մի խնդրի շուրջ՝ հաղթել թշնամուն: Ձախ հոսանքի, ձախ կուսակցությունների ներկայացուցիչները, որոնք հետապնդվում էին նախորդ կառավարության կողմից, մոռացել են այդ և իբրև կամավորներ ջոկատների կազմում կռվում և արյուն են թափում ընդհանուր գործի համար: Բոլոր այլ առումներով կատարելով պարտքը մեծ հայրենիքի հանդեպ, հայերը դրա հետ մեկտեղ կազմակերպեցին կամավորական ջոկատներ, որոնց մեջ են մտնում անմարդկային կյանքի պայմանների հետևանքով Թուրքահայաստանի տարբեր տեղերից եկածները, որտեղ հողի ամեն մի կտորն առատորեն ջրված է հայկական արյունով: Այդ ջոկատները ավելի շատ կլինեին և ուժերն ավելի մեծ, եթե իշխանության կողմից դրանց ձևավորման և զարգացման գործում չդրվեին անհասկանալի խոչընդոտներ և չլինեին տատանումներ: Ես շատ կցանկանայի դրանք բացատրել պատահական և հաղթահարելի պատճառներով և ուզում եմ, որ արհեստական արգելքները չբերեն ընդհանուր գործի համար վնասակար հետևանքների: Մենք գիտենք, որ պատերազմի ժամանակ դիվանագիտական քայլերն անօգուտ են և ուժ չունեն և ժողովրդին կարելի է պաշտպանել միայն զենքի ուժով: Թուրքիայի սահմանը մեր կողմից անցնելու օրվանից մինչ այսօր հայկական ջոկատները ուս ուսի տված կռվում են մեր քաջարի զորքերի կողքին, առաջին դիրքերում մարտնչելով թշնամու դեմ, ցուցաբերելով քաջության և ինքնազոհության բարձր հատկանիշներ, ինչը մեկ անգամ չէ, որ նշվում է մեր հրամանատարների կողմից: Գործուն մասնակցություն ունենալով ներկայիս պատերազմում, հայերը հետապնդում են երկու նպատակներ՝ 1) պարտքի կատարում հայրենիքի առաջ և 2) Հայաստանի ազատագրումը թուրք կեղեքիչներից: Թուրքիայի ներկայիս ղեկավարները, «կարմիր» սուլթանի հայերի նկատմամբ տարվող փորձված քաղաքականության շարունակողները, նրանց (հայերին) դիտում են իբրև Թուրքիայի համար վնասակար և Ռու-

սաստանի համար օգտակար տարր և հետևողականորեն իրագործում են նրա ֆիզիկական ոչնչացման գաղափարը: Դա ավելի հեշտ է կատարվում այն պատճառով, որ Թուրքահայաստանը, որի տարածքում և նրան հարևան շրջաններում ապրում է շուրջ 3000000 հայ, դարձել է ռազմական գործողությունների թատերաբեմ: Թշնամու ամեն մի նահանջ և մեր հարձակում կամ հակառակն անպատճառ ուղեկցվում է ոչ միայն քալանով, այլև հայ և ընդհանրապես քրիստոնյա բնակչության ոչնչացմամբ: Այն, ինչ կատարվում էր թուրքական զորքերի կողմից գրավված շրջաններում, անհնար է նկարագրել: Թուրքական իշխանությունների և նրանց գործակալների գազանությունները քրիստոնյաների և հատկապես հայերի նկատմամբ չի կարող պատկերացնել մարդկային երևակայությունը: Ուրմիայում, օրինակ, առանց սեռի և տարիքի խտրականության մորթվեցին մի ամբողջ գյուղի բնակիչներ՝ ներառյալ ծծկեր երեխաները: Տանձուտ գյուղում սվիններով խողխողվեցին և ժայռից անդունդը նետվեցին գյուղի բոլոր տղամարդիկ, բացառությամբ մի քանիսի, որոնք, փախուստի դիմելով, փրկվեցին պատահարար: Վանի շրջանում, որքանով որ հաջողվեց պարզել, սրի են քաշվել ավելի քան տաս հազար խաղաղ բնակիչներ: Այս իմաստով ստացվել են դեռևս չստուգված լուրեր թուրքական թիկունքից՝ Մուշից, Բիթլիսից, Էրզրումից և այլ վայրերից: Ժողովուրդների ոչնչացման դժոխային աշխատանքն առաջ բերեց Եռյակ համաձայնության տերությունների հայտնի հայտարարությունը, որը հրապարակվել է սույն թվականի մայիսին և կոտորածների համար անձնական պատասխանատվությունը դնում է թուրքական կառավարության անդամների վրա: Այդ բացառիկ դիվանագիտական գործողության առիթով ինձ պարտավորված եմ համարում երախտագիտությունս հայտնել ինչպես մեր, այնպես էլ մեր քաջարի դաշնակիցների կառավարություններին (Ծափահարություններ աջից, կենտրոնում և ձախից): Այդ հայտարարությունը հայերին տալիս է այն երաշխիքը, որ իրենց ճակատագիրը գտնվում է հուսալի ձեռքերում, սակայն ավաղ, այն չունեցավ պատշաճ ազդեցություն: Գահընկեց արված սուլթանի երիտասարդ հետևորդները, գերազանցելով իրենց ուսուցիչներին և շարունակելով բնաջնջման քաղաքականությունը, դիմեցին պայքարի հրեշավոր միջոցների, սկսեցին Հայաստանի ամբողջ շրջանների բնակչության տեղահանությունը դեպի Միջագետք և Սիրիա, նրանց մոխիրների վրա բնակեցվելով իրենց մուհաջիրներին: Սակայն թող Թուրքիայի կառավարիչները հիշեն, որ իրենց հանցագործությունները չեն հասնելու նպատակին, և Ռուսաստանի ու նրա դաշնակիցների օգնությամբ կգա

ուժեղ և դիմադրության ընդունակ, հարյուրավոր տարիների ընթացքում ճնշված ու նսեմացած, բայց, միևնույն է, ոգով կայտառ Թուրքահայաստանի վերածնունդի ժամը: Միայն այնտեղ, որտեղ հայերը դիմեցին զենքի, ինչպես Վանում և Շատախում, նրանք խուսափեցին ամբողջական ոչնչացումից, պատվով պաշտպանեցին իրենց կյանքն ու ազատությունը: Ամրանալով Վանի միջնաբերդում, հայերը հետ մղեցին թվով գերակշռող թշնամու հարձակումները, իսկ մեր զորքերի օգնության հասնելուն պես հանդիսավոր պայմաններում նրանց հանձնեցին և՛ քաղաքը, և՛ Վանի միջնաբերդը: Բերդի բանալիները հայերի կողմից հանձնվեցին ջոկատի հրամանատարին: Մեր հերոսական զորքերը, խորանալով Թուրքահայաստանում, արյունով ողողեցին երկար ճանապարհը, լեռների վրայով անձնազոհաբար հաղթահարեցին արշավի անվերջ դժվարությունները՝ թշնամու կանոնավոր զորքերի և ամենուրեք ցրված քրդական հրոսակախմբերի անընդհատ մարտերի պայմաններում: Օգնության հասած ռուս եղբայր զինվորներին հայերը դիմավորում էին ուրախ, ծաղիկներով ծածկելով նրանց ճանապարհը դեպի Վան: Ես այժմ չեմ անդրադառնա նրան, թե ինչ և ինչպես է արված շրջանի ուժերի համախմբման և թշնամու նկատմամբ հաղթանակի կազմակերպման համար, սակայն չեմ կարող չշեշտել, որ հայերի հայրենասիրական տրամադրությանը հաճախ չի համապատասխանում տեղական իշխանությունների վերաբերմունքը: Այն ժամանակ, երբ կենտրոնական իշխանությունը հրատարակում է «Նարնջագույն գիրքը» և հայերի համար բարենպաստ իմաստով այլ քայլեր է կատարում, տեղերում իշխանության ստորադաս մարմինները, որոնք դեռևս ապրում են զոլիցինյան ռեժիմի ժառանգությամբ, մեծամասամբ անընդունակ են բարձրանալ պետական խնդրի բարձրության մակարդակի և շրջանում իրենց քաղաքականությունը վարում են հատկապես բարձրագույն իշխանության անունից: Հայկական ջոկատները կռվում են առանձնահատուկ անբարենպաստ պայմաններում՝ առջևում թշնամին է, որը կատաղած է և խնայել չգիտի հայերին, իսկ հետևում անբարենպաստ քննադատություն է, նենգ խարդավանքներ և կեղծ լուրեր, որոնք ամենուրեք տարածվում են անհասկանալի եռանդով: Ընդհանրապես պատկերը Կովկասում տխուր է, հողային կառավարումը մինչ այժմ չի մտցվել, Կովկասը պահում են գաղութի դրության մեջ և չեն ներքաշում ռուսական մշակույթի բարիքների մեջ: Սակայն ինչպիսին էլ լինեն կյանքի պայմանները Կովկասում, ռուսահայերը կկատարեն իրենց պարտքը մինչև վերջ, կանգ չառնելով զոհերի առաջ, ավելի շատ զոհերի, քան այն, որոնք նրանց կողմից արդեն զոհաբերվել են:

Ինչ վերաբերվում է թուրքահայերին, ապա նրանք խզելով կապերը Թուրքիայի հետ, գործնականում ցույց տվեցին և իրենց արյունով հավաստեցին իրենց վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ: Մյուս կողմից, չնայած մասնավոր կերպով ջոկատներին տրված գովեստի բնորոշումներին, մենք չենք տեսնում, որ Թուրքիայի դեմ Ռուսաստանի պատերազմի տասը ամիսների ընթացքում նրանց դերի մասին հասարակայնությունը տեղյակ պահվեր թեկուզ մեկ անգամ: Այդ իսկ պատճառով զոհունակության զգացումով եմ ես նշում արտաքին գործերի նախարարության խոսքերը հայերի մասին: Սա առաջին բարի, կարեկցական խոսքն էր, որով կառավարության ներկայացուցիչը դիմում էր պատերազմի սարսափներում տառապած ժողովրդին: Իսկ այնտեղ, թշնամու երկրում՝ Թուրքիայում, հաշվի են առնում զորքերի այս դրությունը և մինչև ռուսական զորքերի հայտնվելը ձեռք են առնում ծանոթ միջոցները հայ բնակչության, որպես Ռուսաստանի հարազատ և մոտ տարրի, ոչնչացման ուղղությամբ: Եվ արդեն օրերս իմ կողմից ստացվել է հեռագրային հաղորդագրություն հայ գաղթականների նոր զանգվածների մասին, ինչը վկայում է թուրքական իշխանությունների նոր հաշվեհարդարների մասին...

Սղագրական հաշվետվություն: Պետական Դումա: Չորրորդ գումարում. IV նստաշրջան, երկրորդ նիստ, 20 հուլիսի 1915թ., էջ 173-176: ГАОТОМС, т. 1, с. 250-251.
"Баку", №165, 25 июля 1915г.

№ 48

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՅԱ, ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՇՏԱԲԻ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ

Հատված զեկուցագրից
2 օգոստոսի 1915թ.

... Հույն կապիտան Դմիտրի Բալուլիսը, զարահիսարյան գնդի գլխավոր բժիշկը Տրապիզոնից հայտնում է.

Պատերազմի սկզբից ի վեր բոլոր քրիստոնյաները զորակոչվել էին, բայց չէին ուղարկել զորամաս, այլ աշխատում էին ճանա-

պարհների և ընդհանրապես հաղորդակցության ուղիների բարելավման վրա: Տրապիզոնից Ժեզելիկ տանող ճանապարհին կարելի էր տեսնել քրիստոնյաների, որոնք լծված էին սայլերին և քարշ էին տալիս դրանք մինչև Բայբուրթ: Ամեն անգամ, երբ հայտնվում էր ռուսական նավատորմը, քրիստոնյա բնակչությունը իրեն համարում էր փրկված, սակայն նրանց հույսերին վիճակված չէր իրականանալ: Քրիստոնյաների բոլոր ապրանքներն առգրավվեցին: Թուրքական կառավարությունը հայերին դիմեց Թուրքիան հինգ օրվա ընթացքում լքելու պահանջով: Եվ իսկապես, վեցերորդ օրը բոլոր հայերը բռնի հավաքվեցին քաղաքից դուրս և այնտեղից ժանդարմների ուղեկցությամբ ուղարկվեցին երկրի խորքերը: Ասում են, որ տղամարդիկ Գյումուշխանեից այն կողմ չհասան, քանի որ այնտեղ էր գտնվում ավազակային բանդա, որը ոչնչացրեց նրանց: Կանանց և երեխաներին ուղարկեցին Երզնկա և այնտեղ գցեցին Եփրատի մեջ: Էրզրում չհասած Դիմն է: Բալուլիսը հանդիպել է 500-600 տեղահանվածներով լցված սայլեր: Էրզրումում նա իմացավ, որ դա հայերի վերջին հատվածն էր, և որ Էրզրումում այլևս հայ չկա: Առավել գեղեցիկ աղջիկները տրվեցին երիտասարդ մահմեդականներին: Տրապիզոնի ԱՄՆ-ի հյուպատոսը տեղական թուրքական իշխանության միջոցով քայլեր ձեռնարկեց հայերի վիճակը թեթևացնելու համար, որոնք, ցավոք, հաջողությամբ չպսակվեցին: Իտալական գլխավոր հյուպատոսը, վախենալով սեփական ճակատագրի համար, չէր լքում իր հյուպատոսությունը:

Մաքսիմով

АВПР, Политархив, д. 104, лл. 40-41.
РИГАОИ, стр. 51.

№ 49

ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՇՏԱԲԻ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ՝ Ի ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՊԵՏԻՆ

Քաղվածք N 108 զեկույցից
3 օգոստոսի 1915թ.

Զեկուցում եմ, որ այսոր իմ կողմից լրացուցիչ հարցաքննվել է ռազմագերի Հուսեյն Սաբրին՝ համահավաք կորպուսի շարժական

հոսպիտալի ավագ գրագիրը: Երեք ամիս սրանից առաջ Լիզում գտնվող Մուշի ժանդարմական գումարտակը հավաքեց բոլոր տղամարդկանց՝ 10 տարեկանից բարձր: Հավաքելով, այսպիսով, մոտ հարյուր հիսուն հոգի, տարան: Հաջորդ օրը բոլոր այդ հայերին մորթված գտան լեռան ստորոտում՝ Լիզից մոտ մեկ ժամվա ոտքի ճանապարհի հեռավորության վրա: Նույն կերպ են վարվել շրջակա գյուղերի բոլոր հայերի հետ: Հայ տղամարդկանց տանելուց մի քանի օր հետո Հուսեյն Սարբին եղել է զինվորների կողմից հայ աղջիկների բռնաբարությունների վկան ...

Մաքսիմով

АВПР, Политархив, д. 3504, л. 43.
Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под редакцией М.Г. Нерсисяна, 2-е доп. изд., Ер., 1982, (այսուհետ՝ ГАОИ), стр. 296.

№ 50

ՍՈՖԻԱՅՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՐԴԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Թիվ 515 հեռագրից
5 օգոստոսի 1915թ.

Սոֆիայում հայկական գաղութը Թուրքիայում հայերի նոր դաժան ջարդերի կապակցությամբ հեռագրի միջոցով հայտարարել է իր բանաձևը, խնդրանքով ուղղված ամբողջ աշխարհի քաղաքակիրթ ազգերին՝ պահպանելու համար գոնե տանջված ազգի մնացորդները: Միաժամանակ ռազմական գործակալի մոտ եկավ հայերի պատվիրակությունը, խնդրելով թույլ տալ կամավորների անցումը Ռուսաստան՝ թուրքերի դեմ պայքարում մասնակցելու համար...

Սավինսկի

АВПР, Политархив, д. 3504, л. 42.
РИГАОИ, стр. 55.

№ 51

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Մ. Ի. ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Պետրոգրադ,
8 օգոստոսի 1915թ.

Ձերդ գերազանցություն, մեծարգո Սերգեյ Դմիտրիի,

Ամեն օր ես ստանում եմ հեռագրեր և նամակներ Թուրքահայաստանի հայ բնակչության և մեր սահմաններն անցած գաղթականների սարսափելի վիճակի մասին:

Քառեր չկան այդ իրողությունը փոխանցելու համար, և ականատեսի անկեղծ պատմությունը մինչև վերջ կարող է լսել միայն ամուր նյարդեր ունեցողը:

Մանազկերտի և Մուշի շրջանների հայկական արական ողջ բնակչությունը կոտորված է, Լիզում միմյանց կապկպված 800 տղամարդ խողխողված է, 6-ից 9-ը տարեկան աղջիկները բռնաբարված են, Կոպի, Լիգի ընդարձակ դաշտերում և այլ վայրերում փռված են կանանց և երեխաների դիակներ:

Ես կարող եմ անվերջ շարունակել վերջին օրերի մարտիրոսագրությունը: Ռուսաստանի տարածք են անցել սոված, հիվանդ, ահաբեկված ավելի քան 200.000 գաղթական: Նրանք եկել են սարսափելի ճանապարհներով, անանցանելի լեռնանցքներով, ճանապարհը ծածկելով դիակներով: Բոլորը կանայք և երեխաներ են: Գեղեցիկ կանայք և աղջիկները առևանգվել են թուրքերի և քրդերի կողմից:

Ձմռանը եկած 60.000 եկածների հետ, գաղթական հայերը ավելի քան 260.000-են՝ ոչ ճշգրիտ հաշվարկով:

Հայ հասարակությունն այլևս ի վիճակի չէ խնամել գաղթականներին, ինչպես ահռելի միջոցների անհրաժեշտության և ընդհանրապես բարեգործական օգնության անբավարարության պատճառով, այնպես էլ նրա համար, որ գյուղացիական և քաղաքային դասերը հյուծված են անընդհատ հավաքներից:

Այս պահին գաղթականներին խնամելու վրա ծախսվել է ավելի քան մեկ ու կես միլիոն ռուբլի (բացի ոչ մեծ կողմնակի օգնությունից), կամավորական ջոկատների վրա ծախսվել է շուրջ 700.000 ռուբլի, որոշակի գումարներ են ծախսվել Վանում քաղաքացիական

կառավարման վրա (Վանը հանձնվել էր քաղաքը ազատագրած հայերին), որոշ քաղաքներում և ռազմական գործողությունների թատերաբեմում հիվանդանոցների վրա և այլն:

Միջոցները սպառվել են: Չգիտեմ, թե Ռուսաստանում որ ազգությունն է այսքան ներդրել պատերազմի մեջ և կրել ավելի շատ զոհեր:

Լայն օգնություն է անհրաժեշտ պետության կողմից, անհրաժեշտ են միլիոններ, որպեսզի տառապյալները չմահանան մեր աչքերի առաջ: Գաղթականների վիճակի բարելավմանն ուղղված միջոցների մասին օրինագիծը արդեն մտցվել է Դումա, և ես մասնակցում եմ դրա քննարկմանն ու արագ ընդունմանը: Սակայն դրա համար ժամանակ է պետք: Իսկ գաղթականները մեռնում են բաց երկնքի տակ՝ կոտորված, սոված, մերկ, մահանալով ուժասպառությունից:

Միայն սննդի կետերի վրա ամեն օր ծախսվում է 30.000 ռուբլի:

Թախանձագին խնդրում եմ Ձեզ, մեծարգո Սերգեյ Դմիտրիի, ձեր վրա վերցրեք նախաձեռնությունը և միջոցներ ձեռնարկեք, որպեսզի պետության միջոցներից անմիջապես հատկացվի միլիոնից ոչ պակաս ռուբլի գաղթականների օգնության հայկական կազմակերպությունների տրամադրության տակ, որոնք հիանալի կազմակերպված են և ամբողջ տարի աշխատեցին Ծայրագույն պատրիարքի և Ամենային Հայոց կաթողիկոսի հովանավորության ներքո:

Այդ կազմակերպություններն են՝

ա) հայկական եկեղեցու սպասավորների մասնակցությամբ եղբայրական օգնություն (Էջմիածնում)

բ) պատերազմից տուժածների օգնության Հայկական Կենտրոնական Կոմիտեն, որը միավորում է հայկական բոլոր բարեգործական և լուսավորչական կազմակերպությունները (Թիֆլիսում)

գ) «Նպաստամատույց» կազմակերպություն, որը ստեղծվել է պատերազմից առաջ՝ բնական աղետներից տուժածներին օգնելու համար:

Իմ պարտքն եմ համարում հայտնել, որ ես չէի ցանկանա, որ հայ գործիչները օգնության համար դիմեին չեզոք պետությունների ներկայացուցիչներին, որոնք արդեն արձագանքել են Բելգիայի, Լեհաստանի աղետներին, եթե գաղթականներին օգնելու անհետաձգելի գործի ընթացքը հապաղի:

Ես գրել եմ իշխան Ն. Բ. Շչերբատովին: Նամակով դիմում եմ նաև իշխան Վ. Մ. Վոլկոնսկուն:

Մեծ իշխանուհի Տատյանա Նիկոլաևնայի կոմիտեն իր Կով-

կասյան բաժնին փոխանցել է 500.000 ռուբլի և Ծայրագույն պատրիարքին տրամադրել է (իմ խնդրանքով) 50.000 ռուբլի, քանի որ առաջին օգնությունը ցուցաբերվում է Իգդիրում և Էջմիածնում, ուր գալիս են գաղթականները...

Մ. Ի. Պապաջանով

АВПР, Политархив, д. 3492, лл. 5-6.
РИГАОИ, стр. 55-57.

№ 52

ԱԹԵՆՔՈՒՄ ԴԵՍՊԱՆՈՐԴԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Թիվ 324 հեռագրից
11 օգոստոսի 1915թ.

Սերաֆիմովը խնդրում է փոխանցել՝ Դեուդեսը, հուլիսի 28-ին հայտնեց, որ Թուրքիայում հայերի հետապնդումներն ավելի են ուժեղանում: Կոստանդնուպոլսի մոտ գտնվող քաղաքների և բնակավայրերի հայ բնակչությունը տեղահանվում է Փոքր Ասիայի խորքերը: Նույն ճակատագիրն է սպասվում նաև մյուս հայերին առանց հպատակության տարբերության...

Դեմիդով

АВПР, Политархив, д. 3504, л. 45.
РИГАОИ, стр. 58.

№ 53

ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՇՏԱԲԻ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ՝ Ի ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՊԵՏԻՆ

Քաղվածք N 137 զեկույցից
11 օգոստոսի 1915թ.

Զեկուցում եմ, որ այսօր իմ կողմից հարցաքննվել է հայ

գաղթական Մուշեղ Մամիկոնյան, 17 տարեկան, բնիկ մշեցի, որտեղից փախել է սրանից 12 օր առաջ: Մեկ ամիս առաջ թուրքական իշխանությունները Մուշի ամբողջ հայ բնակչությանը հրամայել են հավաքվել Ուրֆա մեկնելու համար, բայց հայերը, վախենալով, որ ճանապարհին իրենց կկոտորեն, ինչպես որ եղել է արդեն ուրիշ գյուղերում ու քաղաքներում, հրաժարվել են կատարել այդ հրամանը: Այնժամ սկսվել է հայկական ջարդը... Գրեթե բոլոր հայերը՝ տղամարդիկ, կանայք և երեխաները, մորթվել են, որոնց թվում նաև՝ Մամիկոնյանի մայրը, հայրը, եղբայրներն ու քույրը: Շրջակա գյուղերում էլ են եղել նույնպիսի ջարդեր: Միայն Սասունն է բոլոր կողմերից թուրքական զորքով շրջապատված՝ դիմադրություն ցույց տվել և մնացել հայերի ձեռքին... Զենք ունեցող երիտասարդ հայերը փախել են սարերը: Մուշից ջարդից հետո մի խումբ հայեր են փախել՝ 80 հոգի: Նրանք բոլորը մնացել են Դուտախում և մտել հայկական ջոկատի մեջ: Մամիկոնյանը ճանապարհին հիվանդացել, այդ պատճառով էլ ուղարկվել է Սարիղամիշ:

Մաքսիմով

АВПР, Политархив, д. 3504, л. 43.
ГАОИ, стр. 298.

№ 54

ԿԱՀԻՐԵՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՐԴԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր թիվ 89
2 սեպտեմբերի 1915թ.

Հալեպում ամերիկյան հյուպատոսը վստահված անձի միջնորդությամբ տեղեկացնում է դաշնակիցներին, որ Ուրֆա տեղահանված դաշնակից պետությունների 2000 հպատակներ գտնվում են ծայրահեղ վտանգի տակ թուրքական զորքերի գրգռման և հուսահատության հետևանքով, որոնք նահանջում են մեր Կովկասյան բանակի առջև: Այս զորքերն իրենց ճանապարհին ամենուրեք կոտորում են հայերին, զոհերի թիվը կարծես թե հասնում է միլիոնի: Ափամերձ շրջանների հայերը ֆրանսիական նավախմբի պետի օժանդակու-

թյամբ դիմում են զենքի, իրենց կանանց ու երեխաներին ուղարկելով Եգիպտոս, ուր արդեն եկել է մոտ 3000 հոգի:

Սմիրնով

АВПР, Политархив, д. 2490, л. 107.
РИГАОИ, стр. 59.

№ 55

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՈԿՏՈՐ ԶԱՎՐԻԵՎԻ ՆԱՄԱԿԻՑ

Պետրոգրադ,
3 սեպտեմբերի 1915թ.

Ձերդ գերազանցությանն ընդհանուր գծերով հայտնի է Թուրքիայում հայերի համար ստեղծված անտանելի դրության մասին:

Աստիճանաբար ստացվող մանրամասնությունները մեզ բացահայտում են խորապես մռայլ պատկեր՝

1. Սույն թվականի գարնան և ամռան ընթացքում գրեթե ողջ թուրքական բանակում հատուկ հնարքներով, բայց առանց դադարեցնելու, կոտորված են գրեթե բոլոր հայերը, որոնք զորակոչվել էին: Այսպիսով զոհվել են բազմաթիվ, տասնյակ հազար տղամարդիկ՝ լավագույն տարիքում:

2. Գրեթե ամբողջ Կիլիկիայից, Զեյթունից և Սվազից ամբողջովին քշվել է ողջ հայ բնակչությունը: Դրանից առանձնացվել է առավել երիտասարդ տղամարդկանց մեծ մասը, որոնց քշեցին ինչ-որ տեղ: Չկա տեղեկություն նրանց ճակատագրի մասին և նրանց, անկասկած, սպանել են: Մյուսներն առանց բացառության ոտքով քշվեցին Միջագետք՝ առանց որևէ ունեցվածքի: Կանանց և երեխաների հսկայական զանգված ընկնում էր ուժասպառությունից, խեղդվում էր գետերն անցնելիս և մահանում էր սովից և ծառավից: Միջագետքում նրանց իբր ցանկանում են բնակեցնել քոչվորների մեջ:

Նրանց բավականին մեծ մասը արդեն ընդունել է մահմեդականությունը:

3. Էրզրումի վիլայեթի արևմտյան մասը և Խարբերդի ու Դիարբեքիրի մի մասը դեռևս քիչ են տուժել, սակայն հերթը, հավանաբար, կհասնի նաև նրանց:

4. Մուշ քաղաքը և Մուշի շրջակա դաշտավայրը վերածվել է ավերակների՝ այրվել է տների մեծամասնությունը և բոլոր եկեղեցիներն ու վանքերը: Բնակչությունը կոտորվել է բացի նրանցից, ովքեր հասցրել են փախնել Սասունի լեռները:

Ամբողջ Սասունը դեռևս կանգուն է: Սակայն այն շրջապատված է թշնամիներով և զորքերով: Մարդիկ արիաբար դիմադրում են, սակայն նրանց փամփուշտները արդեն սպառվում են: Այսպիսով հպարտ Սասունը շուտով կընկնի, եթե օգնությունը չհասնի:

5. Վանից նահանջող ռուսական զորքերի հետ հեռացած շուրջ 200 000 հայերը լցվեցին Անդրկովկաս և Երևանի նահանգ:

Այնտեղից հեռագրեր ուղարկող ականատեսներն առանց արցունքների չեն կարող նկարագրել այն ամենը, ինչ կատարվում է այդ սոված խառը մարդկային զանգվածի հետ, որը մնացել էր առանց բժշկական օգնության՝ ամեն ինչի կարիք ունեցող:

Խոլերան և այլ համաճարակները ամեն օր տանում են երեք հարյուրից ավելի մարդկանց կյանք: Հեռագրում են, որ հարյուրավոր դիակներ մնում են առանց թաղելու՝ նյութական միջոցներ և անհրաժեշտ կազմակերպվածություն չունենալու պատճառով: Այդ դժբախտ մարդկանց մահը անխուսափելիորեն ծնում է ամբողջ Կովկասով մեկ համաճարակի տարածման վտանգը՝ զաղթականներին գյուղերով ցրելուն պես...

Թուրքիայում հայ ժողովուրդը դատապարտված է կործանման:

Ձերդ գերազանցությանը հայտնի է, թե ով է հանդիսանում այդ ամբողջ կատարվածի ոգեշնչողն ու ղեկավարը և թե ինչ պատճառով են այդքան կատաղած այս ժողովրդի դեմ գերմանա-թուրքերը: Բարեբախտաբար, դեռևս ամենուր նրանց չի հաջողվել իրականացնել իրենց չար մտադրությունը:

Հայ ժողովուրդը չունի այլ պաշտպան, որը կարող է անել ինչոր բան, բացի Ռուսաստանից...

Անհանգիստ ու կասկածների մեջ և վերջին հոգևոր ուժերն ու իրեն ղեկավարող զաղափարի սրբությանը հավատալուց զրկվող մարդու դրության մեջ, ես դիմում եմ Ձեզ, հենարան փնտրելով Ձեր մարդկայնության և Ռուսաստանի պետական շահերը հայ ժողովրդի պահպանության հետ կապված լինելու Ձեր գիտակցության մեջ...

Հ. Ջավրիև

АВПР, Политархив, д. 3479, лл. 19-20.
РИГАОИ, стр. 60-61.

№ 56

ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Թիվ 352 հեռագիր
28 սեպտեմբերի 1915թ.

Ամերիկայի ազգային պաշտպանական միության Հայկական Կոմիտեի նախագահի հարցմանը Բերնստորֆը պատասխանեց, որ բոլոր թերթերում հայտնված նամակում, որտեղ, նա պնդում է, համաձայն վերջերս Բեռլինից իրեն փոխանցած փաստական տեղեկությունների, որ Օսմանյան կայսրության կողմից իրը կազմակերպված զազանությունները կարելի է համարել մաքուր հորինվածքներ և չկասկածելով կաթողիկոսի բարեխղճության վրա, նա պարտավոր է համարում նշել այն փաստը, որ կաթողիկոսը դա գրել է ռուսական գրաքննության ճնշման տակ: Այն դեպքում, եթե ինձ հարցնեն այդ կապակցությամբ, ցանկալի կլիներ, որ ես կարողանայի տալ հեղինակավոր պատասխան, որը հիմնված կլիներ անհերքելի տեղեկությունների վրա: Վերջերս Նյու-Յորք ժամանեցին երկու գերմանացի, որոնք փորձում էին հայ գլխավոր գործիչներին համոզել, որ նրանց հայրենակիցների ապագան կախված է միայն Գերմանիայի կառավարությունից, որի բարեհաճությունը նրանց պետք է ձեռք բերեն, նրանք ասացին, որ պաշտոնապես ուղարկվել են Գերմանիայի բարձրագույն շրջանների կողմից այս հայտարարության տարածման նպատակով:

Բախմետև

АВПР, Политархив, д. 3504, л. 53.
РИГАОИ, стр. 65.

№ 57

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ.

Բեռն
26 հոկտեմբերի 1915թ.

Թանկագին տիար, Սերգեյ Դմիտրիի

Շվեյցարական հասարակական կարծիքը և մամուլը վերջին ժամանակներս մեծ ցասումով է հետևում թուրքերի կողմից հայերին կոտորելու մասին տեղեկություններին, և շվեյցարական մամուլում հայտնվեցին թուրքական գազանությունների դեմ բազմաթիվ բողոքի հոդվածներ:

Ինձ թույլ եմ տալիս ներկայացնել Ձերդ գերազանցությանը այդպիսի լրագրային հոդվածների օրինակներ՝ կտրվածքների տեսքով:

Չնայած այս հարցի վերաբերյալ իր լրատվամիջոցների այունակներում տեղեկություններ տեղադրելու նախնական դժկամությանը, շվեյցարական-գերմանական մամուլը այժմ նույնպես համարձակվեց հոդվածներ հրապարակել հայերի հուսահատ դրության մասին: Դա տեղի ունեցավ բազմաթիվ ականատեսների կողմից հաստատված փաստերի ազդեցության տակ, որոնք ներկայացրեցին հայ քրիստոնյա բնակչության ամբողջական բնաջնջման ցնցող պատկերը:

Բացի դրանից, ամերիկյան կառավարության և Սուրբ Աթոռի բողոքը թուրքական կառավարության դեմ պարզ ապացուցեց և այստեղ՝ գերմանական Շվեյցարիայում, թե որքան ուժեղ է հայերի պարբերաբար բնաջնջման առիթով վրդովմունքը չեզոք երկրներում ընդհանրապես:

Դրա ազդեցության հետևանքով Շվեյցարիայում ձևավորվեց հայերի օգնության կոմիտե, որի կազմի մեջ են մտնում հանրահայտ շվեյցարական գործիչներ, առանց նրանց քաղաքական համակրանքների տարբերության: Հիշատակված Կոմիտեն դիմեց ինձ խնդրանքով, որպեսզի կայսերական կառավարության գիտությանը հասցնեմ սույնի հետ ուղարկվող ուղերձը:

Ինչ վերաբերում է ինձ հանձնարարված առաքելությանը, ապա հնարավորության սահմաններում ես օգնություն եմ ցուցաբերել ինձ դիմած հայ գաղթականներին և, իմիջիայլոց, հոֆմեյստր Ներատովի անունով օգոստոսի 24-ի (սեպտեմբերի 6-ի) հեռագրում Կայսերական նախարարությանը փոխանցել են շվեյցարական համալսարաններում սովորող հայ ուսանողների մի ամբողջ շարքի խնդրանքը իրենց ռուսական ռազմական ծառայության ընդունելու մասին: Այդ խնդրանքի պատասխանը մինչ այժմ չի ստացվել:

(Ստորագրությունն անընթեռնելի է)

АВПР, Политархив, д. 3492, л. 14.
РНГАОИ, стр. 67-68.

№ 58

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՀԱՅԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7 նոյեմբերի 1915

Մ.Ս. Ամենովը, Ա.Բ. Ասրիբեկովը, Պ.Օ. Ղուկասովը և Մ.Ի. Պապաջանովը 1915թ. նոյեմբերի 7-ին դիմեցին Արտաքին գործերի նախարարությանը գերմանական երկաթգծի Հալեպ-Մոսուլ հատված և ավելի հեռու՝ Բաղդադի շրջան տեղահանված 500 000 հայերին հետևյալ ձևով օգնություն ցուցաբերելու խնդրանքով.

1. Թույլ տալ նախարարությանը ժամանակավոր պահպանման փոխանցել հայ հասարակայնության կողմից այդ նպատակով հավաքվող գումարը, հարաբերվել Վաշինգտոնում մեր դեսպանի հետ, որ նա դիմի ամերիկյան կառավարությանը՝ Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպան պարոն Մորգենթաուին հանձնարարել (Պետրոգրադում ամերիկյան դեսպանի միջոցով) ընդունել նշված գումարը և փոխանցել Կոստանդնուպոլսի հայ պատրիարքի և Սսի կաթողիկոսի տրամադրության տակ, իսկ եթե դա վտանգավոր է (եթե թուրքական կառավարությունը կարող է խլել գումարը), ապա ուղղակի օգնություն ցուցաբերել հայերին, այդ թվում Կոստանդնուպոլսի հայերին՝ համաձայնեցնելով դա նշված բարձրաստիճան հոգևորականների հետ:

2. Մեր կառավարությունն, առայժմ գաղտնի, նշված հայերին օգնության ցուցաբերելու գործի նախաձեռնությունը վերցնի իր ձեռքը, տրամադրելով որոշակի գումար (թեկուզ 500 000 ռուբլի) և կոչ անի նույն բանը անել նաև մեր դաշնակիցներին, ինչը հետագա գործունեության հիմք կդնի չեզոք երկրներում (Շվեդիա, Շվեյցարիա, գլխավորապես Ամերիկա): Պետրոգրադում ամերիկյան դեսպանը վստահաբար արտահայտեց իր կառավարության հայերին օգնելու պատրաստակամությունը, եթե ամերիկահայերի ներկայացուցիչները (թեմերի) դիմեն Վիլսոնին: Համաձայն մամուլի տեղեկությունների, Ամերիկայում կատարվել է մի քանի միլիոն ռուբլու հանգանակություն: Հարցը գումարի մեջ չէ, այլ մեր կառավարության նախաձեռնության մեջ է, ինչը կարող է մեկ անգամ ևս ծառայել որպես հայերի ռուսական կողմնորոշման ամրապնդման հիմք:

3. Աջակցել ընտրված հայ հասարակական գործիչներին՝ նրանց տեղեր մեկնելուն և մեր դեսպանների հետ համաձայնեցված «հայկական կոմիտեների» ձևավորմանը, որոնց միջոցով կարող են գործել մեր կառավարությունը և դաշնակիցները:

4. Ամերիկահայերի հետ հեռագրային հարաբերությունների համար թույլ տալ օգտվել Արտաքին գործերի նախարարության օգնությունից (ծածկագրից) և մեր դեսպանի աջակցությունից:

Արտասահմանում գործունեության ծավալումը և հարաբերությունների հաստատումը հայերի խնդիրն է:

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 100, թթ. 3-4, մեքենագիր:

№ 59

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ ԴԵՍՊԱՆ ԲԱԽՄԵՏԵՎԻՆ

Հեռագիր թիվ 5774
21 նոյեմբերի 1915թ.

Բարեհաճեք խնդրել ամերիկյան կառավարությանը լիազորել Կոստանդնուպոլսում իր դեսպանին՝ օժանդակել մեզ Բաղդադի երկաթուղու շրջան և Միջագետք քշված հայերին օգնություն ցուցաբերելու գործում:

Մորգենթաուի տրամադրության տակ կդրվեն դրամական միջոցներ, որոնք դեսպանը պետք է ծախսի համաձայն հայ պատրիարքի ցանկության:

Պետք է ձեռնարկել զգուշության բոլոր միջոցները, որպեսզի փողերը և գնված ապրանքները թուրքերը չխլեն հայերից:

Ցանկալի է թաքցնել օսմանյան կառավարությունից, որ այդ օգնությունը Ռուսաստանից է, որպեսզի խուսափենք հայ բնակչության նկատմամբ նոր հետապնդումներից:

Սազոնով

МОЭИ, серия 3, т. 9, стр 600.
РИГАОИ, стр. 73.

№ 60

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԸ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԲԱՐԿԻՆ

Նամակ թիվ 1381
29 նոյեմբերի 1915թ.

Ռուսահպատակ հայերի մի խումբ, այդ թվում Պետական Դումայի անդամներ Աճեմովը և Պապաջանովը ինձ են դիմել՝ թուրքահայերին դրամական օգնություն ցուցաբերելու խնդրանքով, որոնք փրկվել են Թուրքիայի կառավարության կողմից կազմակերպված վերջին ջարդերից և որոնք այժմ գտնվում են գերմանական երկաթուղու Հալեպ-Մոսուլ հատվածում՝ Բաղդադի ուղղությամբ, որտեղ նրանք գտնվում են խիստ կարիքի մեջ և նույնիսկ մոտ են սովամահության:

Ռուսահպատակ հայերը մտադիր են օգնության համար դիմել նաև մեր դաշնակիցներին և մի շարք չեզոք պետություններին և կասկած չկա, որ նրանց դիմումն այնտեղ կընդունվի կարեկցանքով: Հավաքված դրամական միջոցները հայ պատրիարքի գիտությամբ և համաձայնությամբ ենթադրվում է դնել Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպանի հսկողության տակ՝ հետագայում ծախսելու համար:

Ի գիտություն ընդունելով այն, թե ինչ վերաբերմունք են ունեցել թուրքահպատակ հայերը Ռուսաստանի նկատմամբ, և որ այդ դիրքորոշումը ոչ քիչ չափով բացատրում է նրանց հալածանքները թուրքերի կողմից, ես խիստ չափով ցանկալի եմ գտնում, որ ռուսական կառավարությունն իր վրա վերցնելով տուժածների օգնության գործում նախաձեռնությունը, հատկացներ դրա համար 500 000 ռուբլի: Այդ օգնությունը հայերին իմ կարծիքով, անհրաժեշտ է քաղաքական նպատակներով՝ հայ ժողովրդի վրա մեր ազդեցության հետագա ամրապնդման նպատակով:

Թախանձագին խնդրում եմ Ձերդ գերազանցությանը ինձ հայտնել ձեր կարծիքը այդ հարցի վերաբերյալ, որպեսզի ես կարողանամ ներկայացնել իմ առաջարկությունները նախարարների

խորհրդի մոտակա նիստի քննարկմանը:*

МОЭИ, серия 3, т. 9, стр. 389-390.
РИГАОИ, стр. 73-74.

№ 61

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԶԵԿՈՒՅԱԳՐԻՑ

16 դեկտեմբերի 1915թ.

...Հայկական հարցի լուծումը այն եղանակով, որը հորինել էր թուրքական կառավարությունը՝ բոլոր հայերի կոտորածի ճանապարհով, իրականացվեց ամենադաժան ձևով: Թուրքահայաստանը լցված է արյունով և գրեթե ընդհանրապես զրկվել է բնակչությունից: Որոշ տեղերում հայերը թաքնվել են լեռներում սակայն այնտեղ ջերմաստիճանը 0-ից ցածր է 22 աստիճանով (ըստ Ֆարենգեյթի) և դժվար թե շատ հայեր կգոյատևեն:

Դաշնակից Գերմանիայի կողմից այդ «վախեցնելը» միայն ընդգծում է համաձայնության երկրների երկու պարտականությունները: Դաշնակիցները պետք է Թուրքիայի վերջը տան որպես մեծ տերության և թշնամի թուրքերին այնտեղ, որտեղից եկել են: Սա համաձայնության երկրների առաջին պարտականությունն է:

Դրանով արագացվում է Փոքր Ասիայի բաժանումը: Այս հարցն, անկասկած, արդեն քննարկվել և սկզբունքորեն արդեն լուծվել է Համաձայնության երկրների կողմից: Դժվար թե վերջիններս վիճեն ավարի պատճառով: Հարցը վերաբերում է ամբողջ Փոքր Ասի-

---

* 1915թ. դեկտեմբերի 21-ին կայացած միջգերատեսչական խորհրդակցության ժամանակ ֆինանսների նախարարության և պետական վերահսկողության ներկայացուցիչները, գտնելով, որ արևմտահայերին օգնություն ցույց տալը բոլոր դաշնակիցների գործն է, դեմ արտահայտվեցին Ռուսաստանի կողմից նրանց 500000 ռուբլի հորդորագրեալ, դա բացառելով նրանով, որ կառավարության տրամադրության տակ եղած տարադրամը չի բավականացնում անգամ պաշտպանությանը վերաբերող ծախսերը հոգալուն: Քանի որ վերոնշված գերատեսչությունների և արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչների միջև ձեռք չբերվեց համաձայնություն, խորհրդակցությունն անհրաժեշտ համարեց այդ հարցի լուծումը փոխանցել նախարարների խորհրդին:

այի բաժանմանը, ուստի հնարավոր է բոլոր օրինական պահանջների բավարարումը: Կարելի է կանխարգելել վեճերի ցանկացած հնարավորություն ապագայում, ինչպես նաև ապահովել երբեմնի ծաղկող, սակայն վատ կառավարման մի քանի դարերի պատճառով այժմ թալանված ու թայթայված, բնությամբ բերրի երկրի սոցիալական ու տնտեսական զարգացմանը:

Ներկա պատերազմի գլխավոր նպատակը հանդիսանում է փոքր ազգությունների ինքնակառավարման ապահովումը: Համաձայնության տերությունների երկրորդ խնդիրն է անհրաժեշտորեն ճանաչել հայ ժողովրդի պահանջները, շնորհելով նրան ինքնավարություն: Սխալվում են նրանք, ովքեր մտածում են, թե վերջին սարսափները ոչնչացրել են հայերի համառ ազգայնականությունը, ինչը չկարողացան անել ամենադաժան հետապնդումները վերջին մի քանի դարերի ընթացքում: Եթե Համաձայնության տերություններն ընկնեն այդ թյուր կարծիքի մեջ, ապա նրանց Փոքր Ասիայում սպասում է այն բա նի կրկնությունը, ինչը նրանք ստիպված էին կրել Բալկաններում: Մի՞թե Համաձայնության տերությունները ճանաչում են, որ Թալեաթ բեյը ճիշտ էր, հայտարարելով, որ հայերին կհասցնի այնպիսի հարված, որը կստիպի նրանց ամբողջ 50 տարով մոռանալ ինքնավարության մասին: Մի՞թե Հունաստանը նման դրության մեջ չէր անկախության համար իր պայքարի վերջում: Դա չխանգարեց Հունաստանին վերականգնվել:

Անգլիական բնակչությունը բավարար չափով չի հասկանում հայերի կապվածության ուժը իր հայրենիքին: Կարգ ու կանոնի հաստատումից և թուրքերի ու քրդերի վնասազերծումից հետո ինքնավար Հայաստան ուղղվեն նրա որդիները աշխարհի բոլոր ծայրերից: Ռուսաստանում ապաստան գտածները վերադառնում են ռուսական զորքերի հետևից: Չնայած «երիտթուրքական կառավարության» վայրագ քաղաքականությանը, Հայկական հարցը դեռևս ենթակա է լուծման:

Որոշ անձինք համառորեն ժխտում են քաղաքական ընդունակությունների առկայությունը հայերի մոտ, վիճարկելով հայերին ինքնավարություն տրամադրելը: Պատմական փաստերը ասում են հակառակը՝ գրեթե տասնյոթ դար հայերը ամենաանբարենպաստ պայմաններում գրեթե ամբողջովին պահպանեցին ազգային ինքնությունը: Տեղահանվելով օտար տեղեր, հայերը (Լեհաստանում, Հունգարիայում, Բյուզանդական կայսրությունում, Ռուսաստանում, Պարսկաստանում, Միացյալ Նահանգներում) ամենուր ճանապարհ հարթեցին իրենց համար: Բյուզանդական կայսրությունում հայերից

եղան մի քանի կայսրեր և տեղապահներ: Հայերը ազնվորեն ծառայել են իրենց խորթ հայրենիքին, բայց հոգով միշտ մնացել են հայ: Թուրքիայում նրանց ատում էին հավատի տարբերության համար, բայց այնտեղ ևս նրանք մեծ դեր խաղացին, այսպես կոչված Միտհատի սահմանադրությունը գրվել է ոչ թե իր, այլ նրա քարտուղար՝ Հոգիավ Էֆենդիի կողմից: Պարսկաստանում հայերը մեծ դեր էին խաղում, վերջին ժամանակ նշանակալից մասնակցություն ունենալով բարենորոգումների համար տարվող շարժման մեջ... Ռուսաստանում, որտեղ հայերը լավ էին ապրում, դեռևս հիշում են գեներալ Լորիս Մելիքովին, որն ուներ հատուկ վստահություն Ալեքսանդր II մոտ, որը նույնիսկ նրան հանձնարարեց կազմել սահմանադրության նախագիծը: Եգիպտոսում նույնպես հայերը հասան բարձր իշխանական աստիճանների: Նուբար փաշան իրավացիորեն համարվում էր «իր ժամանակի լավագույն գործիչներից մեկը»: Անհրաժեշտ է նշել, որ սա բացատրվում է բոլորովին էլ ոչ միայն առանձին անհատների հատուկ տաղանդով, այլև նրանով, որ շատ շարքային հայեր ցուցաբերեցին արտակարգ քաղաքական ընդունակություններ և քաղաքացիական պարտքի գիտակցություն:

Անկասկած բոլոր այս փաստերը հստակ սահմանում են հայերի, իրենց ապագայի վճռման պահին, հարցված և լսված լինելու իրավունքը: Քրդական հարցը կլուծվի ինքն իրեն, առաջին հերթին՝ թուրքական կառավարության կողմից օժանդակության բացակայության շնորհիվ, երկրորդ՝ քրդերի զինաթափմամբ կամ էլ, եթե նրանց մոտ պահպանվի զենքը, ապա հայ գյուղացիներին ևս պետք է թույլատրվի զենք ունենալ: Հաստատված է, որ հայկական այն գյուղերը, որտեղ բնակիչները զինված են եղել, ոչ մի անգամ չեն ենթարկվել ջարդերի:

Անհրաժեշտ է լուծել ևս երկու հարց՝ տվյալ ծայրամասերի գերակշռող ազգության և ինքնավար Հայաստանի ազդեցության հարցը ապագա միջազգային քաղաքականության վրա:

Հավաստի վիճակագրության բացակայությամբ, այնուամենայնիվ կարելի է որոշել, որ հայերը կազմում են այդ շրջանների բնակչության 35%-ը: Չնայած դա փոքրամասնություն է մահմեդական բնակչության ընդհանուր զանգվածի համեմատ, սակայն հայերը գերազանցում են քանակով թուրքերին և քրդերին առանձին վերցրած: Այնուհետև, պարզ թվային առավելությունը չի կարող ծառայել որպես պատշաճ չափանիշ: Առավել կարևոր է տվյալ տարրերի քաղաքական, մշակութային և տնտեսական նշանակությունը: Հայերի գերազանցությունը բոլոր այդ բնագավառներում կասկածից վեր է:

Բացի դրանից, անհրաժեշտ է հիշել, որ հայերը զանգվածաբար կվերադառնան հայրենիք ինքնավարություն մտցնելուց անմիջապես հետո, և այդ ժամանակ թուրքերի և քրդերի թվային գերազանցությունը արագ կվերանա:

Համընդհանուր տարածված կարծիքին հակառակ, հայերի մեծամասնությունը հողագործներ են, այլ ոչ բացառապես վաճառականներ, արդյունաբերողներ և վաշխառուներ: Դարավոր լծից հետո հայ երկրագործները փայլուն ապացուցեցին իրենց խիզախությունն ու մարտունակությունը: Ավելի քան 100 000-վոր հայեր զինվորագրվեցին ռուսական բանակի շարքերում իրենց վաղեմի թշնամու՝ թուրքերի դեմ պայքարելու համար: Հայերը Կովկասում և Մոսկվայում զոհաբերում էին միլիոնավոր ռուբլիներ հայ կամավորական ջոկատների համար: Հայ ժողովրդի ամբողջական համախմբվածությունը երբեք չի արտահայտվել ավելի ուժեղ, քան ներկայիս պատերազմում: Բոլոր մտավախությունները, որ հայ ժողովուրդը չի կարողանա պաշտպանել իրեն և իր ինքնավարությունը, բացարձակապես անհիմն են, ելնելով նրանց (հայերի) ապացուցված ընդունակություններից, արիությունից և հայրենասիրությունից:

Հայերին ինքնավարության շնորհումը քաղաքական առումով Փոքր Ասիայի կենտրոնում կստեղծի պետություն, որը կնպաստի խաղաղության և առաջադիմության պահպանմանը: Ելքը դեպի Միջերկրական ծո, անշուշտ, անհրաժեշտ է հայերին, հակառակ դեպքում Հայաստանը Սերբիայի նման կլինի «կապված պարկում»: Այդպիսի ելքը դեպի ծով կարող է տրամադրվել ոչ մի կերպ չխախտելով Ֆրանսիայի շահերը հյուսիսային Սիրիայում և ոչ էլ իտալական շահերը Աղալիայում: Հայերը բարենպաստ ազդեցություն կունենան քրդերի և իրենց շրջապատող ավելի քիչ կուլտուրական ժողովուրդների վրա: Նման ազդեցություն հայերը ունեցան Կովկասում, ուր 1906թ. նրանք արդեն ունեին 500 դպրոց ընդհանուր առմամբ ավելի լավ, քան ռուսական դպրոցները: Փոքր Ասիան վայրենի վիճակից դուրս բերելու միակ հույսը քրիստոնեական ինքնավարության ստեղծումն է, այսինքն առաջադիմական հայկական պետության ստեղծումը: Փոքր Ասիայի ազգությունների ցանկացած քայլ դեպի զարգացումը և ավելի խաղաղ ապրելակերպը ուժեղացնում է երկարատև միջազգային համաձայնության հնարավորությունը: Այս մեծ գործում գերակշռող դեր պետք է խաղա ինքնավար Հայաստանը:

Եվրոպան հսկայական պարտք ունի Հայաստանին: Անգլիան հատկապես շատ է պարտական, քանզի ինքն էր Բեռլինյան պայմանագրի և Կիպրոսի կոնվենցիայի հիմնական մեղավորը: Քան-

դելով ռուս-թուրքական խաղաղ պայմանագիրը և այն փոխարինելով Բեռլինի պայմանագրով, Անգլիան Թուրքիային հնարավորություն տվեց հայերին թալանել և սպանել երկար տարիներ: Մեծ Բրիտանիան փորձում էր ոչնչացնել չարիքը, որը պատճառել էր Հայաստանին, բայց ապարդյուն: Հեռու չէ այն օրը, երբ Անգլիայի խոսքը, պաշտպանված Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից, օրենք կդառնա Փոքր Ասիայում: Այդ օրը և կլինի հատուցման օրը:

АВПР, Политархив, д. 3504, лл. 81-86.
РИГАОИ, стр. 74-77.

№ 62

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Նամակ թիվ 1015
18 դեկտեմբերի 1915թ.

Անցած նոյեմբերի 29-ի թիվ 1381 նամակում Ձերդ բարձր գերազանցությունը բարեհաճում է խնդրել եմ եզրակացությունը՝ պետական գանձարանից թուրքահայերին օգնություն ցույց տալու համար 500 000 ռուբլի հատկացնելու և այդ գումարը հայկական պատրիարքարանի համաձայնությամբ ծախսելու մասին, Կոստանդնուպոլսում դեսպանին* փոխանցելու հարցի վերաբերյալ:

Այս առիթով պատիվ ունեմ տեղեկացնելու Ձերդ բարձր գերազանցությանը, որ արդի ֆինանսական դրության պայմաններում պետական գանձատան վրա նոր ծախս դնելը, ծախս, որը չի հարուցվում պետական անհրաժեշտությամբ, ընդհանրապես հնարավոր չէ: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է, նկատի առնելով տարադրամի դժվարությունները, որքան հնարավոր է խուսափել արտասահման դրամ փոխանցելուց:

Իսկ սվյալ դեպքում ես առավել ևս դժվարանում եմ համաձայնություն հայտնել նշված գումարը բաց թողնելուն, մանավանդ, որ այդ գումարը նախատեսվում է փոխադրել թշնամական երկիր՝

* Հ. Մորգենթաու:

բշնամու հպատակներին օգնություն ցույց տալու նպատակով:

Բարկ

МОЭИ, серия 3, т. 9, стр. 600.

№ 63

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ. ՍԱԶՈՆՈՎԸ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԲԱՐԿԻՆ

Նամակ թիվ 1447
20 դեկտեմբերի 1915թ.

Պարտավորվում եմ Ձերդ բարձր գերազանցությանը հաստատելու, որ իմ կողմից հայցվող 500000 ռուբլու վարձը ելնում է, իմ կարծիքով, ռուսական պետական շահերից, որոնք պահանջում են թուրքահայերի վրա մեր ազդեցության հետագա ամրապնդումը: Խոսքը նրանց մասին է, ովքեր տուժել են մասամբ նաև Ռուսաստանին նվիրված լինելու պատճառով, և որոնք չեն կարող հավասարեցվել Թուրքիայի մյուս հպատակներին:

Սազոնով

МОЭИ, серия 3, т. 9, стр. 600.

1916թ.

№ 64

ԼՈՆԴՈՆՈՒՄ ՌՈՒՍ ԴԵՍՊԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր N 906
10 հունվարի, 1916

Պատճենը ուղարկվում է Փարիզ:

Ստացա N 6518-ը:

Հնարավորություն չունենալով միաժամանակ բանակցելու հայերի և արաբների հետ, Գրեյն ինձ ասաց, որ ինքը գերադասում է, որ հայերի հետ բանակցություններ վարի Ֆրանսիան: Չբացառելով Արաբիայի և Միջագետքի վերաբերյալ Անգլիայի բանակցություններն արաբների հետ, Գրեյը Սիրիայի և Փոքր Ասիայի վերաբերյալ, որտեղ գերիշխում են ֆրանսիական շահերը, հայերի և արաբների հետ վարվելիք բանակցություններում կանխատեսում է դժվարություններ: Նա ասաց, որ եթե հայերը գերադասում են բանակցություններ վարել Եգիպտոսում, (ապա) Զավրիևը կարող է հանդիպել Կահիրեում ֆրանսիական դեսպանորդի հետ: Նիկոլսոնն ինձ ասաց, որ Ջեմալը միշտ եղել է արաբների հակառակորդը և դա բարդություն է առաջացնում:

Բենկենդորֆ

МОЭИ, серия III, т. 9, стр. 764.

№ 65

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՓԱՐԻԶՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

Հեռագիր N 6633
12 հունվարի 1916

Վկայակոչում եմ իմ N 6518 և Բենկենդորֆի N 906 հեռագրերը:

Համաձայն եմ Գրեյի կարծիքի հետ, որ հայերի միջոցով Ջեմալի հետ տարվող բանակցություններն ավելի լավ է կենտրոնացնել ֆրանցիացիների ձեռքում: Բարեհաճեցեք այս իմաստով բացատրվել Բրիանի հետ, նշելով, որ նկատի առնելով նրա ավելի վաղ արտահայտած կարծիքները, ես անհրաժեշտ եմ համարում Ֆրանսիային վերապահել ղեկավար դերը բանակցություններում, որոնք կարող են շոշափել Սիրիայի ճակատագիրը: Ինձ համար, անշուշտ, ցանկալի է տեղյակ լինել բանակցությունների ընթացքի մասին, և ես մեր ներկայացուցիչներին կհանձնարարեմ ամեն տեսակ աջակցություն ցուցաբերել ֆրանսիացի ներկայացուցիչներին:

Սազոնով

МОЭИ, серия III, т. 9, стр. 773.

№ 66

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՓԱՐԻԶՈՒՄ ԵՎ ԼՈՆԴՈՆՈՒՄ ԴԵՍՊԱՆՆԵՐ Ա. Պ. ԻԶՎՈԼՍԿՈՒՆ ԵՎ Ա. Կ. ԲԵՆԿԵՆԴՈՐՖԻՆ

Հեռագիր թիվ 300
17 հունվարի 1916թ.

Մեր ընդհանուր քաղաքական շահերի տեսանկյունից կարևոր եմ համարում, որպեսզի դաշնակիցներն իրենց վրա վերցնեն թուրքահայերին նյութական օգնություն ցուցաբերելու նախաձեռնությունը, որոնք տեղահանվել են Թուրքիայի կառավարության կողմից Հալեպ-Մոսուլ երկաթգծի հարված և հետո դեպի Բաղդադ: Բարեհաճեք տեղեկանալ կառավարությունից, որի մոտ դուք հավատարմագրված եք, չի՞ համաձայնվի արդյոք նա մասնակցել հայերին մեկ միլիոն ֆրանկի չափով հավասար բաժիններով միաժամանակյա նպաստի տրամադրման գործում: Այդ գումարը կարող էր փոխանցվել Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպանին՝ պատրիարքի և Մսի կաթողիկոսի տրամադրության տակ դնելու համար, կամ, եթե այդ եղանակն անհարմար գտնվի, բաշխել գումարն ամերիկյան գործակալների միջոցով հայերի միջև: Ինքնըստինքյան, ենթադրվող բարեգործության աղբյուրը պետք է մնա գաղտնի՝ հայերին թուրքերի նոր բռնություններից պաշտպանելու նպատակով:

Սազոնով

АВПР, Политархив, д. 3493, л. 14.
РИГАОИ, стр. 91-92.

№ 67

ՓԱՐԻԶՈՒՄ ԴԵՍՊԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր թիվ 83
26 հունվարի 1916թ.

Թիվ 300 հեռագիրը ստացվել է:

Բրիանը հայտնեց ինձ, որ ֆրանսիական կառավարությունը սկզբունքորեն համաձայնություն է տվել իր վրա վերցնել միաժամանակյա մեկ միլիոն ֆրանկի չափով հայերին օգնելու մեկ երրորդը, պայմանով, որ անգլիական կառավարությունը նույնպես համաձայնվի դրա հետ: Ֆրանսիական կառավարությունը գտնում է, որ նպաստների բաշխումը գերադասելի է հանձնարարել Թուրքիայում ամերիկյան դեսպանին, վստահաբար դրանց բաշխման ժամանակ տեղյակ պահելով Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի հայ բնակչությանը այն մասին, թե ում կողմից է գալիս այդ նպաստը:

Իզվոլսկի

АВПР, Политархив, д. 3493, л. 15.
РИГАОИ, стр. 92.

№ 68

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Մ.Ի. ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ՃԱՌԻՑ

հունվար 1916

- Եվ այժմ, ինչպես և նախկինում, չնայած Հայաստանում բույլ տրված արյունալի սարսափներին, որոնց նմանը աշխարհը չգիտի, բոլոր հայերը լի են հաստատակամ որոշումներով կռվել Ռուսաստանի և նրա քաջարի դաշնակիցների հաջողության համար, որոնք պայքարում են ժողովուրդների իրավունքների ու ազատության համար:

Թուրքական իշխանության սարսափազդու չարագործություններով ճնշված Հայաստանում լուսավոր ճառագայթ է հանդիսանում Էրզրումի գրավումը: Մեր քաջարի կովկասյան զորքերը, հաղթահարելով աննկարագրելի ծանր արգելքներ, հրաշք կատարեցին: Էրզրումի՝ Արևելքի այդ հպարտության և անառիկության անկումը, Կարսի մարզի ճանապարհների այդ հանգույցի, Վանի ուղղությամբ և ավելի հարավ ու Փոքր Ասիայում այդ ուժեղագույն ամրոցի գրավումը, որը հանդիսանում էր որպես բազա մեր դեմ գործելու համար, ունի ոչ միայն ռազմավարական, այլ նաև քաղաքական նշանակություն: Էրզրումի գրավումը՝ դա բացատրելու այն խոսքն է,

որը շարժման մեջ եղած Արևելքում հասկանալի է բոլորին: Վերջին ժամանակներում տեղի ունեցած իրադարձությունները ցույց տվեցին, թե ինչպիսի աղետալի սխալ է հանդիսանում հասարակական այն կարծիքը, իբր Կովկասյան ռազմաճակատը երկրորդային է: (Ձայներ. «Ճիշտ է, ճիշտ է»):

Իմ խորին համոզմամբ, այնտեղ (Կովկասյան ռազմաճակատում) մեր անհաջողությունները կսպառնային այնպիսի չլսված բարդություններով, որոնց մասշտաբները դժվար է պատկերացնել: Էրզրումի վերջնական գրավումը և այնտեղ մեր հաստատվելը ոչ միայն կլուծի մեր օգտին Կովկասյան ռազմաճակատի ճակատագիրը, այլև հսկայական ազդեցություն կունենա համաշխարհային պատերազմի հետագա ընթացքի վրա: Կովկասում մեր բաջարի զորքերը արեցին ամեն ինչ, ինչը մարդկային ուժերի սահմաններում էր, որի համար փառք ու պատիվ նրանց: (Ծափահարություններ):

Սակայն Էրզրումի պահպանումը և ամրապնդումը մեր կողմից, դա տակավին մեր ողջ փառավոր բանակի գործն է, դա ողջ երկրի, և ասեմ ավելին՝ դա բոլորիս և յուրաքանչյուրիս առանձին գործն է: (Ձախից ձայներ. «Ճիշտ է»):

Ինչ վերաբերում է հայերին, ապա ինչպես արդեն ասացի, նրանք պատրաստ են իրենց պարտքը կատարել մինչև վերջ: Մենք հավատում ենք Ռուսաստանի և նրա բաջարի դաշնակիցների վերջնական հաղթանակին, մենք հավատում ենք Ռուսաստանի լուսավոր ապագային, մենք հավատում ենք, որ ռուսական արծվի հովանու ներքո հայ ժողովուրդը նորից կվերադառնա ազգային ազատ կյանքին իր հինավուրց հայրենիքի՝ Թուրքահայաստանի սահմաններում, որտեղ հողի յուրաքանչյուր մասը առատորեն ջրված է նրա արյունով և քրտինքով, որտեղ յուրաքանչյուր քար նրա մշակութային բարձր անցյալի մասին է խոսում: (Ընդհանուր ծափահարություններ):

"Армяне и война", № 1, 1916г.
РИГАОИ, стр. 106-107.

№ 69

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՍԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Մ. Ի. ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ԶՐՈՒՅՑԸ «ՀԱՅԵՐԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՆԸ» ԱՄՍԱԳՐԻ ԹՂԹԱԿՑԻ ՀԵՏ

հունվար 1916

«Դումայի վերջին արձակումից հետո, հայ պատգամավոր Մ. Ի. Պապաջանովը զբաղված էր պատերազմից տուժած հայ բնակչության կարիքների հետազոտմամբ, եղել էր մեր զորքերի կողմից գրավված Թուրքահայաստանի շրջաններում:

Արդյունքում՝ նա հավաքել է հսկայական նյութեր, որոնք վերաբերվում են ինչպես աղետալի վիճակում գտնվող բնակչությանը, այնպես էլ այն մարմիններին, որոնք հատուկ զբաղվում են օգնության գործով: Անձամբ ձեռք բերված տվյալների հիման վրա, պարոն Պապաջանովը աղետյալ բնակչության կացությունը գտնում է ծայրաստիճան անմիխիթար: Պատգամավորի կարծիքով նոր միջոցների հատկացման, ինչպես նաև օգնության գործի արմատական վերակառուցման հապաղումը կարող է մահացու կերպով անդրադառնալ գաղթականների ճակատագրի վրա, որոնք առանց այդ էլ ունեն մահացության ահավոր բարձր տոկոս:

Հայ գաղթականների թիվը, որոնք օթևան են գտել միայն Արևելյան Անդրկովկասում, կազմում է 230-240 հազար: Գաղթականների ճնշող մեծամասնությունը անաշխատունակ տղամարդիկ, կանայք և երեխաներ են: Պապաջանովի կարծիքով այն միջոցները, որոնք վերջերս են սկսել հատկացվել գանձատան կողմից գաղթականների կարիքների համար, ինչպես նաև հայ բարեգործական հիմնարկությունների կողմից, ծովում մի կաթիլ կլինեին, եթե չլիներ Անդրկովկասի հայ գյուղացիության կողմից սրտառուչ ուշադրությունը գաղթականների նկատմամբ:

Այդ գյուղացիությունը դժբախտների հետ կիսում է տառացիորեն հացի վերջին կտորը, աներևակայելիորեն նեղելով իրեն, ծածկ տալով թշվառ հայերին ու ասորիներին: Իսկ մինչ այդ, պատերազմի նախօրեին այդ գյուղացիության բարեկեցությունը խիստ քայքայված էր խաղողի անսովոր անբերքատվությունից, որն իր գոյության գլխավոր հենարանն է: Բացի դրանից, նա որոշակիորեն զրկված էր իր աշխատունակ բոլոր անդամներից, քանի որ այդ նույն գյուղացիությամբ գլխավորապես համալրվում էին նաև հայ կամավորական-

ների կաղրերը:

Տեղերում զգացվում է մտավորական ուժերի հսկայական պահանջ: Հրատապությամբ կանգնած է աշխատանքի մեջ ծրագրված նպատակներով գործի կազմակերպումը, որը կարող է իրականացվել միայն մտավորական աշխատողների բավարար թվի առկայության դեպքում միայն:

Կովկասում տիրող սարսափելի թանկության առկայության պայմաններում մեկ մարդու համար այժմ օրեկան 10-15 կոպեկանոց պետական օրապահիկը պետք է ճանաչել խիստ անբավարար: Այդ նպաստը երբեմն տրվում է մեկ ֆունտից մի փոքր ավել ալյուրով և մի քանի կոպեկ հավելավճարով, այն հաշվով, որպեսզի ալյուրի արժեքը և դրամական վճարումը միասին նույնպես չեն գերազանցում 10-15 կոպեկից: Կենտրոնական Ռուսաստանում կյանքը զգալիորեն ավելի էժան է, իսկ մինչ այդ պատերազմի արևմտյան թատերաբեմի գաղթականը ստանում է օրեկան 20 կոպեկ:

Պարոն Պապաջանովի կողմից միջնորդություն է ներկայացվել Կովկասում յուրաքանչյուր մեծահասակի համար օրապահիկը ավելացնել մինչև 20 կոպեկ: Պատգամավորը գտնում է, որ այդ միջնորդությունը կընդունվի, հակառակ դեպքում կառավարական օգնությունը կկորցնի իր իմաստը, որովհետև թերսնումից զարգանում է բծավոր տիֆը, որն ավելի ու ավելի է հնձում գաղթականների շարքերը:

Ներկա պատերազմում հայ կամավորների դերի վերաբերյալ պարոն Պապաջանովը հայտնեց, որ այն գնահատվել է արժանավոր ձևով: Երկրամասի զինվորական բարձրագույն իշխանության ներկայացուցիչների հետ բոլոր հանդիպումների ժամանակ հայ պատգամավորն անփոփոխ կերպով արտահայտում էին լրիվ բավարարվածություն հայ կամավորականների բարձր օգտակարություն ունեցող ծառայության համար, նրանք դրսևորում են առանձնահատուկ խիզախություն, իսկ հետախուզությունում, որպես տեղանքին ծանոթ, բառացիորեն անփոխարինելի են: Ճիշտ է, նրանց այդ գործունեությունը գաղտնիք չի մնում թուրքական իշխանությունների համար, որոնք դրա փոխարեն հատուկ իրենց կատաղության վրեժն են լուծում Թուրքիայում փրկված անպաշտպան հայերից. այնուամենայնիվ, ռուսական կողմնորոշումը, որը հաստատապես յուրացվել է հայ ընդարձակ զանգվածների կողմից, ինչպես նաև այն խոր գիտակցությունը, որ ոչ մի ազատագրում առանց զոհերի չի տրվում, հայերին հրամայականորեն թելադրում է չշեղվել նշված ուղուց՝ չհրաժարվել պատերազմում ակտիվ մասնակցությունից:

// Ինչ վերաբերում է Թուրքիայում հայերի ճակատագրին, ապա պարոն Պապաջանովը, չբացառելով զանգվածային ջարդերի փաստը, այնուամենայնիվ, հույս է հայտնում, որ թուրքահայության զգալի մասը կխուսափի բնաջնջումից: Նման ենթադրության նրան բերում են, գլխավորապես գաղթականների ցուցմունքները, որոնք հաստատում են, որ բազմաթիվ աշխատունակ տղամարդիկ և կանայք ապաստան են գտել սարերում: Հաշվի առնելով թուրքահայի դիմացկունությունը, պարոն Պապաջանովը ենթադրում է, որ նրանք դեռ երկար ժամանակ կկարողանան հաղթահարել իրենց բաժին հասած զրկանքները»:

"Армяне и война", № 1, 1916г.
РИГАОИ, стр. 112-114.

№ 70

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ.ՍԱԶՈՆՈՎԻ ԵԼՈՒՅԹԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԲԱՑՄԱՆ ՕՐԸ

9 փետրվարի 1916թ.

- Փետրվարի 3-ին ընկավ Էրզրումը: Մեր քաջարի զորքերը առաջ են ընթանում, հաղթահարելով ծանր արգելքները: Վանից մեր զորքերի նահանջելուց հետո ընկած ժամանակահատվածում, թուրքերը տասնապատկել են իրենց դաժանությունները հայերի նկատմամբ:

Ինձ դեռևս նախկինում վիճակվել էր ձեր առջև հիշատակել այդ դժբախտ ժողովրդի չլսված տանջանքների մասին: Դաշնակցային Գերմանիայի բարեհաճ աչքի առջև, թուրքերն, ըստ երևույթին, մտադիր են իրագործել հայ բնակչության լիակատար բնաջնջման մասին իրենց վաղեմի երազանքը, որը (հայ բնակչությունը) չի ենթարկվում մահմեդական զանգվածի ազդեցությանը և, այդպիսով, արգելք է ծառայում Թուրքական կայսրությունը իրեն տնտեսապես և քաղաքականապես ենթարկելու գերմանական ծրագրերի համար...

"Армяне и война", № 1, 1916г.
РИГАОИ, стр. 106.

№ 71

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ (ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻՑ) ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՉԽԵԻՉԵԻ ԵԼՈՒՅԹԻՑ

10 փետրվարի 1916

... Որքան ենք մենք առաջ շարժվել այն հարցերի լուծման գործում, որոնք այդքան հստակ դրված էին պատերազմից առաջ, և արդյո՞ք դրանք ճիշտ են հաշվի առնվել մեծ արհավիրքի սկզբում: (...) Անշուշտ, համընդհանուր գնահատական այն ամենին, ինչ կատարված է այժմ ևս չկա պարոնայք, և դա, իմ կարծիքով, պարզվեց բավարար չափով, և դա ամենակարևորն է այժմ մեզ համար, դա հենց այն է, ինչին մարդկությունն իր ողջ պատմության ընթացքում ականատես չէր դարձել այնպիսի կեղծիքի և երեսպաշտության, ինչը նկատվում է ներկայումս: Եվ եթե ինչ-որ մեկը համաձայն չէ ինձ հետ, ապա ես կհարցնեի նրան, ո՞ւր անհետացան այն բարձր կարգախոսները, հանուն որոնց և հայտարարվեց այս պատերազմը, ի՞նչ եղան բոլոր այն մեծ սկզբունքները, հանուն որոնց իրագործման այն ամենը, ինչ հազարամյակների ընթացքում նվաճվել էր մարդկության կողմից, դրվեց քարտեզի վրա: Արդյո՞ք հայերը, այդ բազմաչարչար ժողովուրդը, որն ապրում է Թուրքիայում, ամբողջովին չի բնաջնջվել: (Մարկով 2՝ Այո, երիտթուրքերի կողմից): Եվ եթե այս ամենը ճիշտ է, պարոնայք, ապա ես ձեզ հարցնում եմ՝ որտե՞ղ է ժողովուրդների ազատության մեծ սկզբունքը (Ձայներ ձախից՝ կլինի), ազգությունների ինքնորոշումը: Եվ չափազանց կարևոր է իմանալ վերջապես, ո՞վ պետք է ինքնորոշվի, հենց այդ ինքնորոշման ժամանա՞կ պետք է ժողովուրդները հերթով բնաջնջվեն և ոչնչացվեն:

Մղագրական հաշվետվություն: Պետական Դումա: Չորրորդ գումարում. IV նստաշրջան, տասնութերորդ նիստ, 10 փետրվարի 1916թ., էջ 1272-1273:
ГАОТОМС, т. 1, с. 275-276.

№ 72

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ (ԿԱՐՍԻ ԵՎ ԲԱԹՈՒՄԻ ՄԱՐԶԵՐԻՑ ԵՎ ՍՈՒԽՈՒՄԻ ՇՐՋԱՆԻՑ) ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՉԽԵՆԵԿԵԼԻԻ ԵԼՈՒՅԹԻՑ

11 փետրվարի 1916

Պարոնայք, մեր սրտերն արնաթաթախ են լինում տեսնելով ճնշված Բելգիան, ծվատված Լեհական թագավորությունը, Կուրլյանդիայի մի մասի հետ խեղդված Լիտվան, տեսնելով չլսված մեթոդներով ավազակաբարո ոչնչացված գրեթե ողջ բազմաչարչար եղբայրական հայ ժողովրդին Փոքր Ասիայում, ջախջախված Սերբիան և Չերնոգորիան: Մեր ամբողջ կարեկցանքը, մեր հոգու ջերմությամբ լի թասը՝ անմեղ զոհերին, մեր ամբողջ ատելությունը՝ բռնություն գործադրողներին...

Սղագրական հաշվետվություն: Պետական Դումա: Չորրորդ գումարում. IV նստաշրջան, տասնիններորդ նիստ, 11 փետրվարի 1916թ., էջ 1473-1474:
ГАОТОМС, т. 1, с. 276.

№ 73

ԿՈՎԿԱՍՅԱՆ 2-ՐԴ ՀՐԱՁԳԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՊԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԶԵԿՈՒՅԱԳՐԻՑ

Մուշ,
14 փետրվարի 1916թ.

Այստեղի բնակիչներին՝ ինչպես մահմեդականներին, այնպես էլ փրկված հայերին, հարցաքննելուց հետո հաջողվեց ստայժմ հակիրճ պարզել Բիթլիսի վիլայեթի վիճակը պատերազմի սկզբից մինչև այս օրերն ընկած ժամանակահատվածում, ընդ որում, ես շարադրում եմ միայն այն փաստերը, որոնք համընկնում են թե թուրքերի և թե հայերի վկայություններում, որոնք հարցման են ենթարկվել տարբեր ժամանակներում և միմյանց հետ հարաբերության մեջ չեն եղել...

Բնակչությունը մեծ դժգոհությամբ է ընդունել զորահավաքը, ու թեև դեռ հայտնի չէր, որ պատերազմը կլինի Ռուսաստանի դեմ,

բայց ամեն ինչ դա էր ցույց տալիս, ժողովուրդը երկյուղ էր հայտնում այդ պատերազմի ելքի առթիվ:

Տեղի հայերը հեռագիր էին ուղարկել Կոստանդնուպոլիս՝ պատրիարքին, որով խնդրվում էր նշել, թե Ռուսաստանի դեմ պատերազմի դեպքում քրիստոնյաներն ինչպես վարվեն, որին պատրիարքից պատասխան էր ստացվել, որ սուլթանի հպատակներն անկախ դավանանքից պետք է ենթարկվեն իրենց միապետի կամքին, որից հետո հայերը մտան թուրքական բանակի շարքերը, թեև ոչ մի պատրաստություն չունեին... Երբ Էրզրումում զորատես էին անցկացնում, գերմանացի սպաները հայերից խլել էին զենքը: Դրանից հետո հայերին սկսել էին նշանակել զորքերի աշխատանքային, գումակային ու մյուս օժանդակ շարքերում, և միաժամանակ սկսվել էր հայերի զանգվածային դասալքություն:

Հայերը պարհակ էին կատարում, և՛ ծառայություն կրելով, և՛ բնամթերքով վճարելով ռազմական հարկը, ընդ որում, բանակ էին զորակոչվում առանց բացառության 20-ից մինչև 45 տարեկան բոլոր տղամարդիկ, իսկ հարկը նրանք մուծում էին իրենց ունեցած պարենի ամբողջ պաշարի 1/3 չափով, ընդ որում, այդ 1/3-ը մի քանի անգամ էր վերցվել ամենակարճ ժամանակամիջոցում. բանն ավարտվում է նրանով, որ բնակչությունը կողոպտվում էր բառացիորեն մինչև վերջ: Քրիստոնյաներին զինվորական հարկման ենթարկելուց մեկ ամիս անց այդ նույն հարկմանը ենթարկվեց նաև երկրի ոչ քրիստոնյա բնակչությունը: Վանի գրավումը կոտորած սկսելու ազդանշան հանդիսացավ, ընդ որում, Թուրքիայում լուրեր տարածվեցին, թե Վանը գրավել են հայերը, թե ռուսներն ու թուրքահայերը կռվում են ռուսական զորքերի շարքերում և այդ պատճառով էլ քրիստոնյաներին պետք է ոչնչացնել: Այդ լուրեր հայտնի չէ, թե որտեղից էին գալիս, բայց կարծում եմ, որ դրանք տարածում էր միմիայն կառավարությունը: Մուշում «Միություն և առաջադիմություն» կուսակցության ներկայացուցիչ Ռեշիդ բեկը, հետագայում զինվորական գաղտնի հետախուզության պետը, սկսված կոտորածի գործուն կազմակերպիչը հանդիսացավ, և երբ նրան միացան Ազո Մստո բեկը, Մահմեդ Քադրը բեկը և հատուկ այդ նպատակով Վանից ժամանած Քյազրմ բեկը՝ Վանի ոստիկանական ճամբարի հրամանատարը, ամբողջ վիլայեթը բաժանվեց շրջանների, որոնցից յուրաքանչյուրում տերուտնօրինություն էր անում իշխանության վերոհիշյալ ներկայացուցիչներից մեկը, որոնք միավորվել էին Մուշի մյութասերիֆ Սարվաթ բեկի ընդհանուր ղեկավարության ներքո: Սովորաբար այսպես էր արվում. մի մեծ փոս էր փորվում, ղեպի նրա եզրն էին քշվում կանայք երեխա-

ների հետ և մայրերին ստիպում էին երեխաներին հրել, նետել այդ հորը, որից հետո հորի մեջ մի քիչ հող էին լցնում, ապա կապկպված հայ տղամարդկանց աչքի առաջ բռնաբարվում էին կանայք և սպանվում, այդ ամենից հետո վերջապես սպանվում էին տղամարդիկ, դիակները լցնում էին փոսը գրեթե մինչև վերջ: Քրիստոնյաների մի մասին քշում էին դեպի գետը և կամուրջներից նետում ջուրը, ընդ որում, դուրս լողացողներին բռնում էին և նորից նետում: Եփրատում և Մուշի մոտակա գետում հիմա կլինեն հայերի առնվազն 25 000 դիակներ (հայերի վկայությամբ):

Այդ գազանության դեմ բողոքել էր տեղի մահմեդական հոգևորականությունը, ընդ որում, քաղաքի իմամ Շեյխ Ավիս Քաղրը անձամբ դիմել էր մյուրասերիֆ Սարվաթ բեկին, վերջինիս խնդրելով հարգել Մոհամեդի օրենքը, որը թույլ է տալիս սպանել միայն զենք կրելու և դիմադրություն ցույց տալու ընդունակ, այսինքն 15-60 տարեկան արական սեռի անձանց, որին ի պատասխան ձերբակալվելու սպառնալիք էր ստացել և փողոցային հայհոյանքների արժանացել: Դրանից հետո քաղաքի հոգևորականության և աշխարհիկ իշխանությունների միջև թշնամանք սկսվեց, և հոգևորականությունը մի կողմ քաշվեց հասարակական կյանքից: Միևնույն ժամանակ հոգևորականությունն սկսեց իր մոտ թաքցնել հայերին, ենթարկվելով տուգանքների և վիրավորանքների նահանգապետի և ոստիկանության կողմից: Հովանավորություն ընձեռողների թվում էին հետևյալ անձինք. 1) Մուշ քաղաքի իմամ Շեյխ Ավիս Քաղրը, 2) Շեյխ Արդուլ Համիդը, 3) հարուստ և ազդեցիկ անձինք՝ Ջաֆար աղան եղբոր՝ Նադրը խանի հետ, Միջար աղա Մոլլա օղլին Հաջի Մահմեդ աղայի և նրա ազգականների՝ Բսուֆ աղայի և Զյարիմ աղայի հետ, Ալի աղա Բայամդար գաղեն և 4) Շեյխ Թաղի օղլին՝ Սասունից բաղչի ցեղի մի թուրդ, որտեղ նա ապրել էր հայ ֆիդայիների հետ և գործել էր նրանց հետ ու նրանց օգտին՝ իբրև երախտիք այն օգնության համար, որ մի ժամանակ նրան ցույց էին տվել հայերը: Վերը նշված բոլոր անձինք մինչև այժմ մնացել են քաղաքում, բացի իմամ Շեյխ Քաղրից: Հայ ընտանիքներից մի քանիսը խնայվել էին, բայց ամեն մի այդպիսի ընտանիքում մի թուրք էր հաստատվում, որը լիիրավ տեր ու տիրական էր թե մարդկանց և թե ունեցվածքի:

Կոտորածին առնչվող ամբողջ վերը շարադրվածը և վերաբերում է 1915 թվականի ամռանը, երբ առանձնակի մոլեգնած նախճիրը գաղտնագրով հասավ Կ.Պոլսից ստացված հեռագրի միջոցով, ուր այն թելադրվել էր Բեռլինից. սրանում հատկապես են համընկնում թե՝ թուրքերի և թե՝ հայերի վկայությունները: Այդ հեռագիրը վերաբեր

մարդկային կերպարանքի վերջին գծերը փաղիշահի կառավարությունից, և Հայաստանում վերակենդանացան սուլթան Արդուլ Համիդի ժամանակները: Կոտորածը մերթ հանդարտվում էր, մերթ նորից բռնկվում և չմարեց մինչև Մուշում թուրքերի մնալու վերջին օրերը: Կառավարության կամքն իրագործողները զորքերն էին, մասամբ նաև քրդերը, բայց գլխավոր ղեկավարները միշտ էլ վերը թվարկածս անձինք էին...

Մուշում գերմանական միսիոներական համայնքում կային գթության երեք քույրեր, որոնցից երկուսը ականատես էին եղել կոտորածին, բողոքել էին, բայց ապարդյուն, նրանք անգամ գրելու կամ հեռագրելու հնարավորություն չունեին, քանի որ նրանց ամբողջ նամակագրությունը գրաքննության էր ենթարկվում հենց իր՝ Սարվաթ բեկի կողմից և այն ամենը, ինչ անցանկալի էր, ոչնչացվում էր: Այդ քույրերի ազգանուններն են Բոդիլե (Նորվեգիայից) և Ալեմոն (Շվեյցարիայից), երկուսն էլ մյութասերիֆի կարգադրությամբ տարվել էին Խառնուտ, ուր մեկնել էր Սարվաթ բեկը (այնտեղ էլ մնալ է): Սարվաթ բեկից հետո նահանգապետը Շավքի բեկն էր, որը մի քանի տարի առաջ մեկնել էր Բիթլիս և այնուհետև Մոսուլ, իսկ վերջին ժամանակներս նահանգապետի տեղն ու պաշտոնը տնօրինում էր 34-րդ դիվիզիայի հրամանատար Վելս փաշան: Երբ Կարա Չորանը գրավվեց, սկսվեց Մուշի տեղահանությունը, ընդ որում, քաղաքի կառավարիչները բոլոր բնակիչներին հրամայեցին հեռանալ, իսկ Խնուսի անկումից հետո ձեռնարկվեցին բռնի միջոցներ, որոնք դրսևորվում էին նրանով, որ ոստիկանությունը ջարդում էր այն տների լուսամուտներն ու դռները, որի բնակիչները չէին ուզում ենթարկվել նահանգապետի հրամանին: Քաղաքում թուրքերի գտնվելու վերջին պահերին հրկիզվել էին մահուտի, կոշկի, հացահատիկի ու պարենի պահեստները, բայց հապճեպությունը, որով կատարվում էր փախուստը, հնարավորություն չէր տվել ոչնչացնել ամեն ինչ, ի դեպ, մոռացել էին հին հայկական վանքը, որը Սարվաթ բեկը բռնձի, օճառի ու կաշվի պահեստների էր վերածել: Վանքը ևս գտա կողոպտված վիճակում... Փետրվարի 7-ին Չերդ գերազանցության հրամանով ժամանելով Մուշ քաղաք, վերջինս գտա ահավոր վիճակում: Բացարձակապես ամեն ինչ ջարդուփշուր էր արված ու ապականված...

Շտաբս-կապիտան Կրիմ Շամխալչ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 226, թ. 1-6: ГАОИ, стр. 414-417.

№ 74

ԼՈՆԴՈՆՈՒՄ ԴԵՍՊԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր թիվ 96
22 փետրվարի 1916թ.

Ձեր թիվ 300 հեռագիրը ստացվել է:

Անգլիական կառավարությունը ցավում է, որ ելնելով անգլիական զանձարանին բազմաթիվ հրատապ դիմումներից Անգլիայի և դաշնակից երկրների հպատակների օգնություն ցուցաբերելու խնդրանքով, նա զրկված է այդ օգնությունը նաև թուրքահայերի վրա տարածելու հնարավորությունից: Ուստի նա (անգլիական կառավարությունը) առավել նպատակահարմար է գտնում հայերին նյութական օգնություն ցուցաբերելու համար մասնավոր բարեգործներին բարեգործական հիմնադրամների միջոցով դիմելը, որոնք գոյություն ունեն դրա համար:

Բենկենդորֆ

АВПР, Политархив, д. 3493, л. 23.
РИГАОИ, стр. 115.

№ 75

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս .Դ. ՍԱԶՈՆՈՎԻ ՄԵԾԱՀՊԱՏԱԿ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պետրոգրադ,
29 փետրվարի 1916թ.

Կանխատեսելով պատերազմի հաղթական ավարտը և Թուրքիայի ասիական տիրույթների ճակատագրի հարցի ծագումը, ֆրանսիական և անգլիական կառավարությունները մեր քննարկմանն են ներկայացրել Փոքր Ասիայի բաժանման նախագիծը, որը կազմել են այդ վայրերի հայտնի գիտակներ պարոն Պիկոն և սըր Մ.Սայքսը:

Այդ նախագծի հիմնական դրույթները հանգում են հետևյալին՝

Հետագայում թուրքական սուլթանի հետ Անատոլիայում

սահմանազատվելու համար Ռուսաստանի տրամաղրության տակ է դրվում այն ամբողջ տարածությունը, որն ընկած է Սև ծովի և այն գծի միջև, որն սկսվում է Ուրմիա լճից և Վանից, Բիթլիսից, Մուշից ու Խարբերդից դեպի հարավ՝ Տավրոսի և Անտիտավրոսի լեռնաշղթաների վրայով գնում է դեպի Անամուր:

Ֆրանսիայի տիրապետության տակ է անցնում Սիրիայի և Կիլիկիայի ափամերձ նեղ շերտը, որն անցնում է մոտավորապես Ակկայից մինչև Անամուր, Ֆրանսիային հանձնվում են նաև այն տարածքները, որոնք ընկած են նախատեսված ռուսական սահմանից դեպի հարավ՝ մոտավորապես Այնթափ-Ուրֆա-Մարդին-Ուրմիա գծի երկարությամբ:

Անգլիան ստանում է այն նահանգը, որն այսօր հայտնի է Արաբական Իրաք անվանումով և, որը հարում է Պարսկաստանին ու Պարսից ծոցին:

Ֆրանսիական և անգլիական տիրապետությունների միջև ընկած ամբողջ մարզը կկազմի անկախ արաբական պետություն (խալիֆայություն) կամ մի քանի արաբական իշխանությունների դաշնություն:

Նրա հյուսիսային մասը ճանաչվում է ֆրանսիական, իսկ հարավայինը՝ անգլիական ազդեցության ոլորտ:

Պաղեստինը կազմում է միջազգային վերահսկողության տակ հատուկ ինքնավար նահանգ:

Բացի դրանից, ապագա արաբական պետության տարածքում Ֆրանսիան և Անգլիան ստանձնում են մի շարք փոխադարձ պարտավորություններ իրենց ազդեցության գոտիներում առևտրական և տնտեսական բնույթի տարբեր արտոնություններ միմյանց տրամադրելու վերաբերյալ:

Այս նախագծում մեզ համար առավել էական նշանակություն ունի անգլիացիների և ֆրանսիացիների կողմից առաջարկվող այն սահմանագիծը, որը մեր ապագա տիրույթները անջատելու է ֆրանսիականից:

Գլխավոր լեռնային զանգվածների ուղղությամբ ձգված լինելով, տեղագրական տեսակետից այն բավական բնական է թվում, սակայն քաղաքական և ռազմավարական նկատառումներով այն հազիվ թե հնարավոր է ընդունելի համարել: Անցանկալի պետք է համարել այն, որ խառն ու անհանգիստ բնակչություն ունեցող վայրերում մեր ասիական սահմանագծի երկարության վրա հայտնվում է եվրոպական մեծ, թեկուզև ներկայումս մեզ դաշնակից, տերություն և անկյունով մխրճվում է ռուս-պարսկական սահմանագծի մեջ: Բացի

դրանից, տեղացի քրիստոնյաների մեջ մեր միսիոներական շահերի կարևորության պատճառով մենք մասնավորապես Ուրմիայի մարզում չենք կարող հանդուրժել այլ եվրոպական պետության գերիշխանությունը:

Առավել շահավետ կլիներ մեզ համար հարավում ընդհանուր սահման ունենալ որևէ ասիական մահմեդական պետության հետ, լիներ դա արաբական խալիֆայությունը, թե թուրքական սուլթանությունը: Այս տեսակետը, թվում է, արդարացվում է նաև այն նկատառումով, որ նեղուցների և Կ. Պոլսի վերաբերյալ ֆրանսիացիների հետ մեր նախկին բանակցություններում մենք Ֆրանսիայի հայտնած ցանկության համեմատ, համաձայնվեցինք որ Սիրիան և Կիլիկիան նրան միացվեն միայն մինչև Տավրոս, իսկ Դիարբեքիրի մարզը մտնի Միջագետքի կազմի մեջ:

Եթե, այնուամենայնիվ, մեզ չհաջողվի պաշտպանել այս տեսակետը, ապա այդ դեպքում մենք պետք է, համենայն դեպս, պնդենք այն բանի վրա, որ Ուրմիական գավառը և Բիթլիսի անցուղիները մտցվեն մեր գոտու մեջ, Ֆրանսիային տալով որոշ վարձահատուցումներ Փոքր Հայքում՝ Սվազ-Խարբերդ-Կեսարիա եռանկյունում, համաձայն սույնին կցվող քարտեզի:

Նույն ձևով, հավանաբար, հնարավորության կառաջանա համաձայնվել Պաղեստինի մարզի տարածքի կրճատման հետ, մեր շահերի պաշտպանությունն այնտեղ սահմանափակելով բացառապես Սուրբ վայրերով:

Իսկ ընդհանրապես ասած, առանց մեր պետական շահերին վնասելու, Անգլիայի և Ֆրանսիայի հետ առաջիկա բանակցություններում մենք հեշտությամբ կարող ենք հայտարարել, որ շահագրգռվածություն չունենք Ամադիա-(Ջեզիրե)-իբն-Օմար-Դիարբեքիր-Սամոսատ-Մարաշ-Ադանա գծից (քարտեզի վրա կարմիր գծից) դեպի հարավ ընկած վայրերում:

Անգլո-ֆրանսիական նախագծի հետ կապված բոլոր հարցերի հանգամանալից և մանրամասն ուսումնասիրությունը ես ցանկալի կհամարեի հանձնել հատուկ խորհրդակցության քննարկմանը, որը վարելու է նախարարների խորհրդի նախագահը և որին մասնակցելու են ռազմական, ծովային, արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչները և Ձերդ կայսերական մեծության Կովկասի փոխարքան:

Համարձակվում եմ վերը շարադրվածի մասին զեկուցել Ձերդ

կայսերական մեծությանը և հայցել բարձրագույն հրահանգներ:*

Սազոնով

РАТ, стр. 160-161.

№ 76

ՁԵԿՈՒՅՑԱԳԻՐ ՇՏԱԲՍ - ԿԱՊԻՏԱՆ ԿՐԻՄ ՇԱՄԽԱԼՉԻՆ

Կովկասյան ռազմաճակատ,
6 մարտի 1916թ.

Սույն թվականի մարտի 16-ին մեկնեցի Դեյրուք գյուղ՝ անասնակեր հայթայթելու համար: Ճանապարհին մտա Հախկան գյուղը, որը ստուգելիս 3 այրված մարագներում հայտնաբերվեցին առնվազն 200 մոխրացած մարդկային դիակներ: Միակ փրկված հայը, որն ընտանիքների հետ գտնվում էր Դեյրուքում, ինձ պատմեց, որ դրանք հայերի ոսկորներ են, որոնց քուրքերը քշել էին մարագները և հետո երկիզել դրանք:

Դերակալ-պրապորշչիկ Ուդովից

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 226, թ. 5-6:
ГАОИ, стр. 417.

№ 77

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Մ. Ի. ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ՃԱՌԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

8 մարտի 1916թ

- Կովկասի մարզի կառավարման անառողջ առանձնահատկություններից մեկը հանդիսանում է ազգությունների առանձնացու-

---

* Ընագրի վրա Նիկոլայ II-ը անձամբ նշում է կատարել «Ж» «Согласен» (Համաձայն եմ):
Ցարսկոյե սելո, 1916թ. մարտ:

մը, սակայն այս սկզբունքը հաստատապես կյանքի կոչելու համար անհրաժեշտ էր ազգություններից մեկին ընտրելու որպես քավության նոխազ: Այդ հրեշավոր դերը տալիս են հայերին: Նրանց պարբերաբար վարկաբեկում են ընդհուպ մինչև վերջին օրերս: Հայերը հայտարարվեցին անջատողականներ, պետության թշնամիներ: Քաղաքացիական և ռազմական բյուրոկրատիան իրականացնում էր «բաժանիր և տիրիր» հին սկզբունքը և ձգտում էր հայերի վարկաբեկմանը ներգրավել նաև այլ ազգությունների ազգայնամոլ տարրերին:

Համաշխարհային պատերազմը ցույց տվեց, թե որքան էին մոլորվել կովկասյան իշխանությունները հայերի նկատմամբ իրենց հետապնդումներում: Այժմ ռուսական հասարակական կարծիքն արդեն չի կասկածում, թե ում են պատկանում հայերի համակրանքները, և թե որքան բանկ նրանք վճարեցին այդ համակրանքների համար:

Սակայն կովկասյան բյուրոկրատիան խուլ և համր գտնվեց վերջին ժամանակների բոլոր իրադարձությունների նկատմամբ, սկսելով մեղադրանքներ ուղղել հայերի հասցեին՝ նրանց չափից դուրս հայրենասիրության համար, օգտակար լինելու նրանց ցանկության համար: Կարող եք պատկերացնել, թե ինչ էր զգում հայկական հասարակությունը, որն իր բոլոր ուժերը տվեց ռուսական զենքին և որը Թուրքիայի սահմաններում կրեց անհաշվելի կորուստներ: Այդ նույն պահին ռուսական իշխանությունները հայերի վրա դրեցին Կարսի մարզում բնակվող ռուսների դժբախտության պատասխանատվությունը, որը նրանց (ռուսներին) հասցվել էր քրդերի և թուրքերի կողմից: Դրան հետևեց Կարսի գեներալ-նահանգապետի մի շարք հրամանների հրապարակումը, որոնցում հայերը մեղադրվում էին մահմեդականների սպանության, բռնությունների և թալանի մեջ: Դորձընթացին տրվեց ազգային զժտության բնույթ և հայ գյուղացիները հայտարարվեցին հարձակվող կողմ: Գյուղացիությունն իր ուսերի վրա կրեց զաղթականության աղետի ողջ ծանրությունը: Գյուղացիությունն ապաստան տվեց զաղթականներին, կերակրեց նրանց: Նա աշխատանքներ էր կատարում նաև կովկասյան ռազմաճակատում՝ փորում է խրամատներ, անցկացնում է ճանապարհներ, չստանալով հաճախ ոչ մի վարձատրություն այն պատճառով, որ տեղական իշխանություններն օգտվում են նրա անգրագիտությունից, լեզվի չիմացությունից:

Կովկասում իշխանության արմատական սխալը կայանում էր նրանում, որ նա այդ գործին մոտ չէր բողնում տեղական հասարակական կազմակերպություններին՝ մահմեդական, վրացական և հայկական: (Հայներ ձայնից՝ «ճիշտ է»): Սակայն նոր կարգախոսների

առկայության պայմաններում անհրաժեշտ են նոր մարդիկ, որոնք Կովկասի փոխարքայի սկզբունքը կկիսեն ոչ թե վախից, այլ խղճից ելնելով: Անհրաժեշտ է Կովկասի հարցում վերադառնալ այն հին կառավարման սկզբունքներին, երբ ռուսների հետ միասին Կովկասի կառավարման գործին կցվում էին թե հայերը, թե վրացիները, թե թաթարները և թե այլ ազգությունները: Չնայած տեղական իշխանության կողմից կատարված ահավոր գործողություններին և ամեն տեսակի հակագործողություններին, հայերը նախկինի պես շարունակում են իրենց ճանապարհը և կքայլեն այն ճանապարհով, որը պետք է Ռուսաստանին և նրա դաշնակիցներին հասցնի հաղթանակի: (Ծափահարություններ ձախից):

"Армянский вестник", № 7, 13 марта, 1916г. стр. 11-12.

№ 78

ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՈՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՇԱԳԻՐԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Պետրոգրադ,
9 մարտի 1916թ.

Ֆրանսիական և անգլիական կառավարություններն իրենց հասած տեղեկությունների հիման վրա համոզվելով, որ արաբական ժողովուրդներն ինչպես Արաբական թերակղզում, նույնպես և Օսմանյան կայսրության նահանգներում վճռականորեն են տրամադրված թուրքական տիրապետության դեմ, և որ ներկայումս հնարավոր կլիներ կազմել միաժամանակ թուրքական կառավարության նկատմամբ թշնամաբար և համաձայնության տերությունների նկատմամբ բարենպաստ տրամադրված արաբական պետություն կամ դաշնություն, - բանակցությունների մեջ մտան և համատեղ քննարկեցին այդ հարցը: Մտքերի այդ փոխանակման հետևանքով նրանք համաձայնության եկան հետևյալ սկզբունքների վերաբերյալ, որոնց մասին բանակցությունները շարունակելուց առաջ երկու կառավարությունները ցանկանում են հայտնել ռուսական կառավարությանը:

Հոդված 1. Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան պատրաստ են սույնին կցվող քարտեզի վրա նշված A և B գոտիներում ճանաչել և ի-

ընց հովանավորության տակ վերցնել անկախ արաբական պետությունը և արաբական պետությունների դաշնությունը՝ արաբ առաջնորդի գերիշխանության ներքո: Ֆրանսիան A գոտում և Մեծ Բրիտանիան B գոտում առաջնության իրավունք կունենան ձեռնարկումներում և տեղական փոխառություններում: Ֆրանսիան A գոտում և Մեծ Բրիտանիան B գոտում կունենան արաբական պետության կամ արաբական պետությունների դաշնության խնդրանքով օտարերկրյա խորհրդականներ և պետական պաշտոնյաներ նշանակելու բացառիկ իրավունք:

Հոդված 2. Ֆրանսիան կապույտ գոտում և Մեծ Բրիտանիան կարմիր գոտում իրավունք կունենան արաբական պետության կամ պետությունների դաշնության հետ փոխադարձ համաձայնության գալուց հետո սահմանել այնպիսի ուղղակի կամ անուղղակի կառավարում, կամ այնպիսի վերահսկողություն, որպիսիք նրանք կցանկանան և հարմար կդիտեն:

Հոդված 3. Դարչնագույն գոտում կսահմանվի միջազգային կառավարում, որի ձևը կորոշվի Ռուսաստանի հետ խորհրդակցելուց, ինչպես նաև մյուս դաշնակիցների հետ փոխադարձ համաձայնության գալուց հետո:

Հոդված 4. Մեծ Բրիտանիային կտրվի՝ 1) Հայֆա և Աքրա նավահանգիստները 2) A գոտում Տիգրիսից և Եփրատից B գոտու համար որոշակի քանակությամբ ջուր վերցնելու երաշխիք: Նորին մեծության կառավարությունն իր կողմից պարտավորվում է, առանց ֆրանսիական կառավարության նախնական համաձայնության, Կիպրոսը մի երրորդ պետության զիջելու նպատակով ոչ մի դեպքում չմտնել բանակցությունների մեջ:

Հոդված 5. Ալեքսանդրետը կլինի ազատ նավահանգիստ, քանի որ վերաբերում է Բրիտանական կայսրության առևտրին, և այստեղ չեն սահմանվի ոչ խտրություններ նավահանգստային տուրքերի նմատմամբ, ոչ այնպիսի հատուկ արտոնություններ, որոնցից կարող են զերծ մնալ անգլիական նավատորմը և ապրանքները Ալեքսանդրետի վրայով և կապույտ գոտին տրամախաչող երկաթուղիով փոխադրվող անգլիական ապրանքների համար ևս կսահմանվի տարանցիկության ազատություն՝ անկախ այն բանից, թե այդ ապրանքները փոխադրվում են կարմիր գոտի, B գոտի, A գոտի, թե փոխադրվում են այնտեղից. ի վնաս անգլիական ապրանքների նմանապես ոչ մի խտրություն (ուղղակի կամ անուղղակի) չի սահմանվի որևէ երկաթուղու ռեժիմում, ինչպես նաև ոչ մի խտրություն չի սահմանվի ի վնաս անգլիական ապրանքների և նավերի, այն բոլոր նա-

վահանգստներում, որոնք սպասարկում են հիշյալ գոտիները:

Հայֆան կլինի ազատ նավահանգիստ, քանի որ դա վերաբերում է Ֆրանսիայի, նրա գաղութների և խնամակալությունների առևտրին և խտրություններ չեն լինի ոչ նավահանգստից օգտվելու պայմաններում, ոչ էլ այնպիսի արտոնություններ նավահանգստային տուրքերի նկատմամբ, որոնցից կարող են զերծ մնալ ֆրանսիական նավատորմը և ապրանքները: Տարանցիկության ազատություն կսահմանվի Հայֆայի վրայով և դարչնագույն գոտին տրամախաչող անգլիական երկաթուղիով փոխադրվող ֆրանսիական ապրանքների համար՝ անկախ այն բանից թե այդ ապրանքները փոխադրվում են կապույտ գոտուց, A գոտուց կամ B գոտուց, թե փոխադրվում են այնտեղ, ի վնաս ֆրանսիական ապրանքների և նավերի, նմանապես ոչ մի խտրություն (ուղղակի կամ անուղղակի) չի սահմանվի հիշյալ գոտիները սպասարկող որևէ նավահանգստի ռեժիմում:

Հոդված 6. A գոտում Բաղդադի երկաթուղին չի շարունակվի դեպի հարավ Մոսուլից այն կողմ և B գոտում՝ դեպի հյուսիս Սամարրայից այն կողմ այնքան ժամանակ, քանի դեռ չի ավարտվել Եփրատի հովտում կառուցվող՝ Բաղդադը Հալեպին միացնող երկաթուղին, որը կիրականացվի միայն երկու կառավարությունների աջակցության դեպքում:

Վեցերորդ հոդվածի ծանոթագրությունը: Այս հոդվածը պայմանավորված է Բաղդադի գերմանական երկաթուղու շինարարության ավարտումն ու շահագործումն արգելակելու ցանկությամբ:

Հոդված 7. Մեծ Բրիտանիան կունենա Հայֆան B գոտուն միացնող երկաթուղու շինարարության, կառավարման և անբաժան սեփականատիրության իրավունք: Բացի դրանից Մեծ Բրիտանիան կունենա իր զորքերի տեղափոխման մշտական իրավունք:

Հոդված 8. Քսան տարվա ընթացքում կապույտ և կարմիր գոտիների ամբողջ տարածությունում, ինչպես նաև A և B գոտիներում մաքսային չափերը կմնան ուժի մեջ և առանց երկու տերությունների համաձայնության չեն կարող կատարել մաքսերի չափի և ոչ մի բարձրացում կամ "advalorem" (տոկոսային հարաբերությամբ արժեքի նկատմամբ նշանակվող) մաքսերի փոխարինումը հատուկ սահմանված մաքսերով:

Վերոհիշյալ գոտիների միջև չեն լինի ներքին մաքսատներ: Երկիր ներմուծվող ապրանքներից հավաքվող մաքսատուրքերը կգանձվեն ապրանքների ստացման նավահանգիստներում և կհանձնվեն այն գոտու վարչությանը, որի համար դրանք նախատեսված են:

Հոդված 9. Անգլիական և ֆրանսիական կառավարությունները, որպես արաբական պետության հովանավորներ, համաձայնության կգան այն մասին, որ իրենք ձեռք չեն բերի և մի երրորդ տերության թույլ չեն տա տարածքային սեփականություններ ձեռք բերելու Արաբական թերակղզում կամ ծովային բազա կառուցելու Կարմիր ծովի արևելյան մասի կղզիներում: Դա, սակայն, չի կարող արգելք հանդիսանալ Ադենի սահմանագիծը շտկելու համար, եթե դա անհրաժեշտ համարվի՝ ելնելով թուրքերի վերջին հարձակման փորձից:

Հոդված 10. Արաբական պետության կամ պետությունների դաշնության սահմանների վերաբերյալ բանակցություններն արաբների հետ կշարունակվեն նույն ճանապարհով, ինչ-որ մինչ այժմ՝ երկու տերությունների անունից:

Հոդված 11. Որոշված է, որ արաբական տարածք ներմուծվող զենքի վերահսկողության միջոցառումները կմշակեն երկու կառավարությունները:

PAT, стр. 154-157.

№ 79

ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

(Նամակի պատճենից)
11 մարտի 1916թ.

Վերադարձնում եմ այն քարտեզը, որը սըր Մարկ Սայքսը վերափոխել է համաձայն Ձեր այսօրվա ցուցումների:

Ֆրանսիական կապույտ գոտին այժմ հեռացված է Նեստորական մարզից, որն այժմ մտցված է ենթադրվող ռուսական գոտու մեջ: Կատարելով հիշյալ փոփոխությունները, սըր Մարկ Սայքսը նկատի է ունեցել այն, ինչը նա ընդունել է որպես Ձեր ցանկությունները:

Ա. Նեստորական մարզը և Բիթլիսի անցուղիները թողնել ռուսների ձեռքում.

Բ. Ռուսական տարածքին լրացուցիչ միացնել Հայաստանի նվազագույն մասը, մի բան, որը պահանջվում է Էրզրումը Ռուսաստանի կազմի մեջ թողնելու հանգամանքով և աշխարհագրական այլ պայմաններով:

Պարոն Պիկոյի հետ ունեցած իր նախկին զրույցների հիման վրա սըր Մարկ Սայքսը հույս ունի, որ այդօրինակ փոփոխությունները, հավանաբար, ընդունելի կլինեն Ֆրանսիայի համար:

Ձեր այսօրվա խոսքերից մենք այն հետևությունն ենք անում, որ ռուսական կառավարությունը, հավանաբար, պատրաստ կլինի ընդունել տվյալ համաձայնության պայմանները, քանի որ այն վերաբերում է քարտեզի վրա կարմիր մատիտով նշված գծից դեպի հարավ ընկած տարածքը:

Երկուշաբթի օրը ցերեկով Ձեզ այցելելու հնարավորության դեպքում սըր Մարկ Սայքսն իր հետ կբերի ավելի մեծ չափերի քարտեզ, որը ձեզ թույլ կտա ավելի լավ պատկերացում կազմել նրա կողմից առաջարկվող սահմանազծման մասին:

Ջորջ Բյուքենեն

PAT, стр. 157.

№ 80

Պ. Ն. ՄԻԼՅՈՒԿՈՎԻ ԵԼՈՒՅԹԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

11 մարտի 1916թ

Թուրքական քաղաքականության նպատակն այդ բազմաչարչար ժողովրդի նկատմամբ հայտնի էր Աբդուլ Համիդի ժամանակներից: Այդ նկատակն է՝ նրա (հայ ժողովրդի) ամբողջական ֆիզիկական ոչնչացումը: Միջազգային դիվանագիտության զգուշացման և կանխարգելման բազմաթիվ փորձերից հետո, թուրքերին թվում էր, որ իրենց համար վերջապես եկավ բարենպաստ պահը: 1915թ. ապրիլին Էնվեր փաշան հայտնում է դեսպան Վանգենհայմին, որ Թուրքիայում գոյություն ունի խորին համոզմունք, որ թուրքերի անհաջողությունը Կովկասյան ռազմաճակատում առավել ևս պետք է վերագրվի հայերին, և որ եթե վերջիններս այդքան համառորեն չպաշտպանեին ռուսական շահը Կովկասում, ապա թուրքերի ճանապարհը դեպի Թիֆլիս էապես կբեբևանար: Թուրքերը չեն կարող դա ներել և այդ իսկ պատճառով նման կատաղությամբ նրանք հարձակվում են հայերի վրա: Այս հայտարարության արդյունքում Վանգենհայմը, այդ տրամադրությունների վրա հիմնված, որոշակի ծրագիր

է ներկայացնում Բեռլին 1915թ. ապրիլին: Էնվեր փաշան իրեն հայտնում է, որ թուրքերի պետական շահերը պահանջում են հայերի ամբողջական տեղահանում Հայաստանից և խնդրում, որ Գերմանիան չընդդիմանա դրան, իսկ Վանգենհայմն իր կողմից պաշտպանում է այդ միջնորդությունը Բեռլինի առջև: Գերմանական տեսակետից, սակայն, ձեռնտու չէր ընդհանրապես ոչնչացնել այդ աշխատասեր և օգտակար ժողովրդին, քանի որ Միջագետքի անապատները, որոնք ձգտում էին բնակեցնել գերմանացիները, հենց կարիք ունեին նման տարրի: Բնակեցնելով Միջագետքը և այնտեղ զբաղվելով երկրագործությամբ, հայ ժողովուրդը նույնիսկ կշահի, կարծում էին գերմանացիները, քանզի հողերն այնտեղ քերրի են, և նրանք շուտով կարող էին հասնել տնտեսական ծաղկման: Դրանից կշահի և՛ պետությունը, և՛ Բաղդադի երկաթգիծը:

Ինչպես տեսնում ենք, միացյալ մարտավարությունը, թուրքականը՝ հայերի տեղահանություն, իսկ գերմանականը՝ նրանց տեղափոխությունն իրենց ապագա գաղութի նոր տարածքների վրա, իրագործվեց նման տխուր հաջողությամբ Թուրքիայում դեռ նախորդ տարի: Այժմ, Էրզրումի և Հայաստանի այլ քաղաքների գրավումով, այդ քաղաքականությանը վերջ է տրված: Ռուսական զորքերն այժմ կանգնած են այդ տարածքի այն մասում, որտեղ բնակչությունն առանց այդ էլ խիտ էր բնակեցված: Էրզրումի գրավումը մեծ տպավորություն թողեց մահմեդական ողջ աշխարհի վրա և չի կարելի թույլ տալ, որպեսզի Էրզրումը կիսի Պերիմիշլի ճակատագիրը: (Ծափահարություններ բոլոր նստարաններից): Ինչպիսի՞ն պետք է լինի հաջորդ քայլը: Թվում է այստեղ կասկած չի կարող լինել: Ռուսաստանին հավատարիմ լինելու համար տուժած քրիստոնյա բնակչությունը պետք է վերականգնվի իր նախկին տեղերում, և Ռուսաստանը, որ դեռևս թուրքական ռեժիմի օրոք խոստացել էր այդ ժողովրդին ինքնավարություն, պետք է իրագործի իր խոստումն այժմ, երբ վիլայեթները զգալի մասով գտնվում են իր ձեռքում: Հայաստանի և հայերի ճակատագիրը մեզ համար բանկ են և մոտ ոչ պակաս, քան պայքարում տուժած այլ ազգությունների ճակատագրերը, որոնք բարեկամ են մեզ և մարտնչել են մեր կողքին: (Ձայներ ձախից՝ «Բրավո»):

Դժբախտաբար, նշաններ կան, որ այստեղ ևս կարող է կրկնվել գալիցյան դյուցազներգության տխուր հիշողությունը հիշեցնող մի բան: Արդեն սկսել են երևալ նաև նախանշանները: Չափազանց թերև է վերաբերմունքը այն գույքի նկատմամբ, որը թողնվել է բնակիչների կողմից, չգիտես ինչու հայտարարված իբրև պետական ունեցվածք: Ինչո՞ւ ենք մենք հակված սատարելու անուղղելի քուրդ-

քոչվորներին և նույնիսկ փորձում նրան դարձնել հողագործ, ի հեճուկս նրա հին զոհի, նստակյաց հողագործի՝ հայի: Տակավին վերջերս քուրդը հայից խլում էր հողը, քշում-տանում նրա կնոջը և աղջկան, սպանում և ոչնչացնում էր նրա ընտանիքը, իսկ այժմ երեկվա այդ թշնամուն մեզ մոտ սկսում են խնամել ինչպես բարեկամի, և նրան ցուցաբերում են բացահայտ նախապատվություն ի համեմատ հնագույն հավատարիմ հայ-բարեկամի: Եկեք չվավերացնենք կազմակերպված թալանի և հողի զավթումը, որը հնարավոր էր միայն հին Թուրքիայում:

...Հիշենք, պարոնայք, հայերի հասցեին Դումբերգի ասած խոսքերը՝ մահացածների զոհերը թող հաշվվեն ողջերին: Եկեք չվավերացնենք հողերի զավթման և կազմակերպված թալանի պտուղները, ինչը հնարավոր էր միայն հին Թուրքիայի հողի վրա: Սակայն, այդուհանդերձ, մենք չպետք է մտածենք բնիկ հայերի հողերը ինչ-որ նորեփրատյան կազակության տարածքի վերածելու մասին: Չշարունակենք թուրքերի գործը, փոխարինելով միայն մահմեդական մուհաջիրներին ռուս վերաբնակիչներով: Գոնե օրենքի և արդարության խախտման վերականգնման այս հանդիսավոր պահին խուսափենք ազգային էգոիզմի այդ նեղ ծրագրերից:

Чалхушьян Г. Красная книга, Ростов-на-Дону, 1919, стр. 105-108.
ГАОТОМС, т. 1, с. 277-278.
"Армянский вестник", № 8, 1916г.
РИГАОИ, стр. 123-124.

№ 81

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Մ. Ի. ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ԵԱՌԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

11 մարտի 1916թ.

Մեզ բարեկամ երկրների խորհրդարանները մի քանի անգամ անդրադարձել են Թուրքիայում և Թուրքահայաստանում հայերի դրության քննարկմանը: Պետական Դուման, ելնելով նրանից, որ երկար ժամանակ չէր հավաքվում, մինչև հիմա ուշադրություն չէր դարձնում Թուրքահայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վրա: Մինչդեռ այդ իրադարձություններն ավելի շատ պետք է

մտահոգեն Ռուսաստանին, քանի որ հայերի կեսն ունի ռուսական հպատակություն և բնական է, որ չի կարող սառնասրտորեն վերաբերվել այն ամենին, ինչ կատարվում է արտասահմանում: Կովկասի հայ բնակչությունը կարիք ունի ձեր բարոյական աջակցությանը՝ շարունակելու համար այն անհավասար պայքարը, որը նա տանում է: Այն, ինչ տեղի ունեցավ Հայաստանում, ենթակա չէ ոչ մի նկարագրության և նույնիսկ անհասանելի է երևակայության համար: Չնայած Բելգիայում, Սերբիայում, Լեհաստանում աղետի առկայությանը, մարդկության ժողովրդական ողբերգության հոմանիշը դարձավ Թուրքահայաստանը: Աշխարհում և ոչ մի ազգ այս պատերազմում այնքան զոհեր չունեցավ, որքան հայերը, և երբեք հայ ժողովուրդը, որը ենթարկվեց անվերջ աղետների, այնքան չկորցրեց, որքան այս տարում: Թուրք արկածախնդիրների հրեշավոր գինարբուքների զոհ դարձավ հարյուր հազարավոր խաղաղ բնակչությունը, գլխավորապես կանայք և երեխաները: Դեռևս Գերմանիայի հետ պատերազմի սկզբին, երբ Թուրքիան դեռ ներքաշված չէր պատերազմի մեջ, թուրքահայերին արվել էին որոշակի առաջարկություններ, ինչպես «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամների, այնպես էլ պաշտոնատար անձանց կողմից: Թուրքահայերին խոստանում էին ոչ միայն կյանքի անձեռնմխելիություն, այլև ինքնավար կառավարում Թուրքահայաստանի և նույնիսկ Կովկասի սահմաններում, որը Թուրքիային խոստացել էր Գերմանիան, եթե նրանք (թուրքահայերը) անցնեն Թուրքիայի կողմը և դավաճանեն Ռուսաստանին: Այդ առաջարկությունները, բնականաբար, մերժվեցին հայերի կողմից և այստեղից էլ սկսվում են բոլոր աղետները: Երիտթուրքական այժմյան քաղաքական գործիչները, ըստ էության, հանդիսանում են կարմիր սուլթան Աբդուլ Համիդի քաղաքականության շարունակողները, որը կայանում էր նրանում, որ Թուրքիայում Հայկական հարցը լուծվի ժողովրդի բնաջնջման ճանապարհով: Դեռևս Թուրքիայի Ռուսաստանի հետ պատերազմից առաջ հայերին սկսեցին մեղադրել Ռուսաստանի օգտին լրտեսության մեջ: Հակահայկական քարոզչության հետ մեկտեղ հայերին սկսեցին բանակ զորակոչել ոչ թե 20-ից մինչև 35 տարեկան հասակում, ինչպես կարգն էր, այլ 18-ից մինչև 48 տարեկանը: Հայկական հասարակության լավագույն տարրերը ու նրանց ղեկավարները, սկսած հայրապետներից և թուրքական խորհրդարանի անդամներից, բանտերն էին նետվել, ոմանք նույնիսկ սպանվել: Այնուհետև սկսեցին զինաթափել և սպանել բոլոր հայ զինվորներին: Պաշտոնապես վավերացվել է, որ մոտ 1800 հայ զինվորներ սպանվել են Դիարբեքիրի մոտ իրենց թուրք ընկերների

կողմից: Որոշ գյուղերում սպանում էին ողջ արական բնակչությանը, մյուսներում չէին խնայում նույնիսկ կրծքի երեխաներին և ծերերին: 1915 թվականի մայիսի 20-ին երիտթուրքական կառավարությունը որոշեց ձեռնարկել վերջնական միջոցառումներ և հրապարակեց հայ բնակչության Միջագետք արտաքսելու մասին դեկրետը, հաշվի առնելով, որ նրա մի մասը կգոհվի ճանապարհին, իսկ մյուսը՝ դժվար թե դիմանա Միջագետքի ավազային տոթ տափաստաններում: Սակայն դրանով չսահմանափակվեցին: Կազմվեցին հատուկ ավազակախմբեր, որոնք ճանապարհին վրա էին հասնում նրանց (արտաքսվողներին), թալանում ու սպանում էին: Այդ սոսկալի պատկերի մասին մենք ունենք օտարերկրյա ճանապարհորդների և դիվանագիտական ներկայացուցիչների վկայությունը: Նորվեգուհի Ֆլորա Վեդելը, որը Թուրքահայաստանում եղել էր 1914թ. հոկտեմբերից մինչև 1915թ. ապրիլը և աշխատել էր այսպես կոչված "Deutshe Militer Mission"- ում, հավաստում է, օրինակ, որ իրեն ուղեկցող ժանդարմը պարծենում էր նրանով, որ իր առաջ ոչնչացվել են հայրուրավոր հայեր, որոնց իրեն հանձնարարել էին ուղեկցել: Խարբերդում ամերիկյան հյուպատոսը վկայում է, որ հսկայական թվով դժբախտ նորաբնակներ՝ թվով 3000 մարդ, գլխովին ոչնչացվել էր այդ քաղաքից մի քանի վերստ հեռավորության վրա: Ի հավելումն այս ամենի, թուրքերը բժիշկներ էին ուղարկում գեղեցիկ կանանց ընտրելու համար, որոնք ենթակա էին հարեմ ուղարկվելու:

Այժմ մեր կողմից զրավված շրջաններում գյուղերից ռուսական զորքերին են մոտենում կանայք և երեխաներ, որոնք գերված էին թուրքական և քրդական բնակչության կողմից: Եվ մեր իշխանությունները պետք է ձեռնարկեն բացառիկ միջոցառումներ այդ բնակչության ապաճորտացման համար: Դժբախտաբար, մինչև հիմա այս տեսակետից ոչինչ չի արվել և թուրքերի ու քրդերի հարեմներում ու տներում նախկինի պես բանտարկված են մեծ թվով կանայք և երեխաներ: Թուրքական իշխանությունները սովորության համաձայն հենվում են այն բանի վրա, որ հայերը իրենք են սաղրել այդ սարսափելի աղետները, քանի որ դիմում էին ապստամբության, որը ծրագրվել էր ռուսական և անգլիական դիվանագիտության կողմից: Սակայն այդ մեղադրանքները բացարձակապես ոչնչով հիմնավորված չեն: Սովորաբար, նախքան բնակչության ֆիզիկական բնաջնջումը դիմելը, թուրքական իշխանությունները նրան զինաթափում են, հատկապես գյուղերում: Եվ գյուղերում զգացին, որ զինաթափումը աղետի սկիզբն է, և մի շարք տեղերում հրաժարվեցին զենքը հանձնելուց և դիմեցին ինքնապաշտպանության: Այդ ինքնապաշտպանու-

թյունն է, որ գերմանացիները անվանում են ապստամբություն, որն ըստ նրանց ծրագրված է մեր դիվանագիտության կողմից: Հայ ժողովրդի հետ պատահած դժբախտության իսկական մեղավորները՝ թուրք կառավարողները և նրանց գերմանացի բարեկամներն են, որոնք Թուրքիային թույլ տվեցին դիմել այդ միջոցներին: «Միություն և առաջադիմություն» կուսակցության գործիչները հանդիսացան այդ համակարգի գործնական իրականացման ջատագովները: Էրզրումում, օրինակ, «Միություն և Առաջադիմություն» կուսակցության անդամներից մեկը դպրոցներից վերցրեց աղջիկներին և իր բարեկամների հաճույքի համար ընտրեց 10 հայ աղջիկների: Թուրք սպաների դերը «Միություն և առաջադիմություն» կուսակցության դերից ավելի լավ չէր: Տեղի ունեցածի մեղավորությունը ընկնում է նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության գերմանացի բարեկամների վրա: Վաղուց ի վեր հայտնի է, որ Կոստանդնուպոլսում նախարարներն ավելի քիչ ազդեցություն ունեն, քան գերմանական դեսպանները: Եվ, այնուամենայնիվ, բարոն Վանգենհայմը ոչինչ չարեց, որպեսզի դադարեցնի այդ սարսափելի չարագործությունը: Գերմանական մամուլը սատարում էր Կոստանդնուպոլսում իր դիվանագետի տեսակետը, որը հայտարարել էր, որ դա ներքին գործեր են, և ինքը դրանց մեջ միջամտել չի կարող, իսկ գերմանացի սպաներն իրենց պահում էին թուրքերից ոչ լավ: Այսպես, օրինակ, սպաներ Շենգին ու Կարլ Վերրը Էրզրումում ուժով վերցրել և պահում էին հայ ուսումնական հաստատությունների բարձր դասարանների աղջիկներին մինչև իրենց մեկնումը՝ սեպտեմբերին, մեկ այլ սպա մասնակցել էր Քեմախում հայերի կոտորածին, որտեղ սպանվել էր մի քանի հարյուր մարդ: (Կենտրոնից և ձախից բացականչություններ. «Ինչպիսի խայտառակություն»): Գերմանիայի վերաբերմունքը Թուրքահայաստանում կատարված չարագործությունների նկատմամբ հավերժ բիծ կմնա իր մշակույթով այդքան ամբարտավան Գերմանիայի վրա: (Բացականչություններ. «Ճիշտ է»):

Դժբախտաբար, վերջին ժամանակներս կովկասաթուրքական ռազմաճակատում տեղի ունեցան մեր երկու նահանջները, որոնք հանգեցրին տեղի հայ բնակչության ոչնչացմանը: Հակառակ արևմտյան ռազմաճակատում սահմանված կանոններին, հակառակ առողջ մտածելակերպի պահանջների և քաղաքական հաշվարկների, բնակչությունը վաղօրոք չէր տեղեկացվել, որ մեր զորքերը պետք է նահանջեն: Շնորհիվ դրա, այդ նահանջը հայկական բնակչության վրա նստեց 40000 զոհ: Մեր նահանջի ճանապարհին իշխանությունները ոչ մի միջոց չձեռնարկեցին, որպեսզի գաղթականների անցումը

կատարվեր նվազագույն կորուստներով: Անփութության պատճառով, զաղթականներին նշում էին այնպիսի ուղիներ, որոնք կտանեին բնակչության ոչնչացման և միայն անհնազանդությունն էր, որ 40 հազար զոհերը չավելացան ևս մի քանի տասնյակ հազարներով: Հայերին, ինչպես նշվում է տեղերից, ոչ միայն չի ցուցաբերվել օգնություն և պաշտպանություն բռնություններից, այլև իշխանությունների կողմից անտեսվում էր քրիստոնյա բնակչության պաշտպանության հարցը, ինչը Թուրքահայաստանում առիթ տվեց քրդական ցեղերի պարագլուխներին և չերքեզներին շարունակել անպատիժ անկարգություններ կատարել անպաշտպան հայերի նկատմամբ: Կամավորական ջոկատի հերոսներից մեկը, որն անձամբ բազմաթիվ զոհեր կրեց, գրում է. «Ես ափ իջա իմ 30 ընկերների և բարեկամների հետ, որոնց հետ ես 9 ամիս հուսահատ պատերազմ էի վարում թուրքական կանոնավոր զորքերի դեմ: Եվ ի՞նչ: Իշխանությունները մեզնից խլեցին զենքը, որը մեզ համար մեր սեփական երեխաներից թանկ էր: (Բացականչություններ ձախից... «Խայտառակություն, դա Յանուշկևիչն է»): Հայերին կոտորող քրդական հրոսակախմբերի պարագլուխները ոչ միայն չեն պատժվել, այլև քրդերի զինաթափումը կատարվում էր այնպես, որ հայերի դեմ կռված և հայ բնակչության նկատմամբ ամեն տեսակի զազանություն գործած մարդիկ շարունակում են ազատորեն բնակվել նախկին վայրերում: Դժբախտաբար, մինչև հիմա արտաքին գործերի նախարարությունը, որի ցուցումներով պետք է ղեկավարվեին թիկունքի իշխանությունները, չցուցաբերեց, միգուցե և ոչ իր մեղքով, առողջաբար միջամտություն: Եվ երբ արտգործնախարարությանը պատկաներ մեր կողմից գրավված մարզերի սահմաններում գործողությունների ղեկավարումը, ապա տեղի չէր ունենա այն, ինչը օրերս տեղի ունեցավ Էրզրումում: Այդ ժամանակ գեներալ Յանուշկևիչը կհասկանար, որ չի կարելի արտաքսված, միգուցե մասամբ կոտորված հայերի զույրը համարել թուրքական կառավարությանն անցած անժառանգ զույր: Եթե արտգործնախարարությունը գեներալ Յանուշկևիչին բացատրեր նրա տեսակետի ողջ սխալականությունը, ապա նա չէր անի նաև իր սխալ եզրակացությունը՝ իշխանություններին թույլ չէր տա այդ զույրը տնօրինել այնպես, ինչպես կամենան, ինչպես վարվում էին թուրքական զանձարանի զույրի հետ: Անշուշտ, հայերի համար դա չնչին կորուստ է, ի համեմատություն նրան, թե ինչ կորուստներ նրանք կրեցին: Սակայն չէ՞ որ Ռուսաստանը ևս կարիք չունի արյունով ներկված այդ ժառանգության:

Ամեն անգամ, երբ Թուրքիայում նկատվում էր ճգնաժամ,

բոլորից շատ տուժում էին հայերը և որքան թույլ էր լինում Թուրքիան, այնքան զորեղ էին հարվածները: Սակայն, չնայած կրած զոհերին ու տառապանքներին, հայերը չվհատվեցին և լի են ուժով ու եռանդով շարունակելու համառ պայքարը: 1878թ. հայերը, ձեռք ձեռքի տված ռուսական զորքերի հետ, մարտնչում էին, չնայած դաժան պատժին, որը հետևեց դրան, նրանք երբեք Ռուսաստանի օգնությամբ վերածնման հույսը չէին կորցնում: Հայերը հավատում են, որ այլևս հեռու չէ այն ժամանակը, երբ կիրականանան իրենց երազանքները, երբ կդաղարի զոյության համար սարսափով լի կյանքը, երբ հայրենի հողի վրա ոգի կառնեն հնագույն մշակույթի տեր հայ ժողովրդի նիրհող ուժերը: Ռուսաստանի և նրա դաշնակիցների հաղթանակը Թուրքահայաստանին կբերի ազգային կյանքի զարգացում, Գերմանիայի գերիշխանությունը կխեղդի փոքր ժողովրդին: Գերմանիան ձգտում է ճնշել թույլերին, իսկ Ռուսաստանի և նրա դաշնակիցների հաղթանակը, ընդհակառակը՝ նրանց կբերի հարգանք բոլոր ազգությունների իրավունքների նկատմամբ, հնարավորություն կընձեռի նրանց ինքնուրույն տնօրինել իրենց ներքին կյանքը: (Ծափահարություններ բոլոր նստարաններում):

"Армянский вестник", № 8, 1916г.
РИГАОИ, стр. 124-128.

№ 82

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԼԻԱԶՈՐ ՄԱՐԿ ՍԱՅՔՍԸ ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ ԴԵՍՊԱՆ ԲՅՈՒՔԵՆՆԵՆԻՆ

(նամակի պատճենից)

12 մարտի 1916թ.

Կշռադատելով Հեքքիարիի փոխարեն Սվազը կապույտ գոտու մեջ մտցնելու նոր առաջարկությունը, ես եկել եմ այն եզրակացության, որ ներկայացվող կետերը կարող են հետաքրքրություն ներկայացնել պարոն Սազոնովի համար:

Ի. Ինձ թվում է, որ մենք պետք է ընդունենք, որ հայկական վերջին ծայրահեղ դաժան և անգութ կոտորածների հետևանքով չի կարելի հանդուրժել բուն Հայաստանը օսմանյան իշխանության տակ թողնելու հնարավորությունը: Նման նախագիծը, եթե անգամ

այն ուղեկցվեր բարենորոգումներով, կհարուցի զայրույթի պոռթկում Անգլիայում և Միացյալ նահանգներում և զենք կդառնա խաղաղությունից բոլոր դժգոհների համար:

II. Ուստի Հայկական հարցը կարող է լուծվել ա) եթե հիմնվի հայկական պետություն թուրքական ավատատիրության տակ, ինչը ենթադրում է կամ Կովկասում խարդավանքներ սարքող երկրորդ Բուլղարիայի ստեղծում, կամ ոչ կենսունակ ծրագիր, քանի որ հայերն ի վիճակի չեն մրցակցելու քրդերի հետ: բ) Եթե միջազգային վերահսկողության տակ ստեղծվի չեզոք (՞)* կառավարիչներ ունեցող հայկական կառավարություն, որը մշտական բանսարկությունների և «հարցերի» համար լայն հնարավորություններ կստեղծի, որոնցից վաղ թե ուշ Գերմանիան կքաղի իր օգուտը: գ) Եթե Հայաստանը՝ առանց նախապատրաստության լիովին հանձնվի Ռուսաստանին, ապա ռուսական քաղաքական համակարգի մեջ կներառվի մի երկիր, որը լեփ-լեցուն է Կովկասում և Պարսկաստանում գոյություն ունեցող հեղափոխական կազմակերպությունների հետ մշտական կապերի մեջ գտնվող ընկերություններով: Մի հայ հեղափոխական (դաշնակցական) մի անգամ ինձ ասաց, որ դա հիանալի կլիներ, քանի որ այն որպեսզի, երբ ամբողջ հայ բնակչությունն անցնի ռուսական հոգատարության տակ, հեղափոխական ընկերությունները Կովկասում, Աղրբեջանում** և Թուրքիայում անմիջապես կամրապնդվեն, և բավական կլինի լոկ ընդհանուր դժգոհություն, որպեսզի պահպանվի նրանց կենսունակությունը:*** դ) Եթե հարցը լուծվի նախկին Հռոմեական կամ Փոքր Հայքի հանձնումով Ֆրանսիային և կցվող քարտեզի դեղին գոտին անեքսիայի ենթարկվի Ռուսաստանի կողմից: Ես այս եղանակը համարում եմ առավել բավարար և վաղուց այն նկատի ունեի, սակայն երբեք այն առաջ չէի քաշում, քանի որ միշտ կարծում էի, թե ռուսական կառավարությունը ձգտում է գրավել Սվալգի նահանգը:

Վերջին կետի առավելությունները հետևյալն են՝

1. Ռուսաստանը ստանում է Էրզրումը, Բիթլիսը և Վանը՝ աննշան քանակով հայկական բնակչությամբ, որովհետև «A» գոտին բացառապես նեստորական և քրդական է, «B» գոտին զուտ քրդական է, «C» գոտին բացառապես բնակեցված է լազերով:

---

* Բնագրում հարցական նշան է դրված:

** Խոսքը Պարսկական Աղրբեջանի մասին է:

*** Մարկ Սայքսը չափազանցեցնում և գերագնահատում է հայկական հեղափոխականների դերը, որպեսզի այդպիսով արդարացնի և հիմնավորի որոշ հայկական տարածքների զիջումը Ֆրանսիային:

2. Ֆրանսիան ստանում է Հայաստանը որպես այդպիսին և ֆրանսիական գոտին կդառնա հայկական ազգային զգացմունքի կենտրոն: Դա չափազանց ձեռնտու է Ռուսաստանին, որովհետև Փոքր Հայքի հայերն ունեն կղերական և պահպանողական տրամադրություններ ի տարբերություն կովկասահայերի և արևելահայերի, որոնք անարխո-սոցիալիստներ են: Եթե հայկական ազգային զգացմունքի կիզակետը լինի Էրզրումը, ապա անարխո-սոցիալիստներն իրենց ձեռքը կվերցնեն այն, իսկ այս դրության պայմաններում չափավոր տարրերը ֆրանսիական խնամակալության ներքո իրենց կենթարկեն հայկական ազգային ձգտումները, որը կարող է տարածվել Փոքր Հայքից:

Հայկական չափավոր շրջանների նպատակը կլինի սեփական սահմաններում զարգացումը և Կովկասի ու Ադրբեջանի անարխո-սոցիալիստներից սահմանազատվելը, որոնց հետ նրանք երբեք չեն ցանկացել ընթանալ միասին:

Այնուհետև, ֆրանսիական գոտին իր մեջ ներառում է Զեյթուն, Հաճն, Դիարբեքիր, Մեհաֆարքին, Սվազ, պատմական հայկական քաղաքները և այն մարզը, որտեղ իշխել է վերջին հայ թագավորը,* որին վիճակված էր մահանալ Փարիզում, ինչպես նաև ընդգրկում է Խաչակրաց արշավանքների դարաշրջանի Եդեսական կոմսությունը,** որտեղ թագավորել է Գյուի Լուսինյանը: Դա որպես մեկնակետ նշանակություն ունի հայկական պատմական ազգայնականության համար, որը մոռացել է Վանի և Էրզրումի ժողովրդական երգերն ու ավանդույթները, որոնք հայկական անարխո-սոցիալիստական քարոզչության գաղափարական հիմքն են:

Այնուհետև, Փոքր Հայքի հայերը կապված չեն Կովկասի հայ ազգայնաբերողների հետ և, հատկապես, ընդհանուր քիչ բան ունեն նրանց հետ:

Անձամբ ես կասեի, որ լավ կլիներ, եթե դա միայն հնարավոր է, Մուշի դաշտավայրը մտցնել ֆրանսիական գոտու մեջ, որովհետև դա Ռուսաստանին կազատեր հեղափոխական գործունեության օր-

---

* Լուսինյանների կիպրոսյան հարստության հայկական թագավորներից վերջինը՝ Լևոն 6-ը 1375թ. գերի ընկավ եգիպտական մամելյուկների ձեռքը: Եվրոպական տերությունների միջնորդությամբ նա ստացավ ազատություն: Գահը վերադարձնելու ապարդյուն փորձերից հետո, 1393թ. մահացավ Փարիզում:

** Եդեսիան (ներկայիս Ուրֆան) 1098թ. Առաջին խաչակրաց արշավանքի ժամանակ Գոտֆրիդ Բուլոնացու եղբոր՝ կոմս Բալդուինի կողմից և դարձավ նրա ստեղծած Եդեսական կոմսության մայրաքաղաքը: Այդ կոմսությունը գոյություն ունեցավ կես դար (մինչև 1144թ.):

րանից և կովկասյան հեղափոխականների քարոզչության համար ամենապիտանի մարզերից մեկը կկտրեր նրանց գործունեության ոլորտից:

Այս վերջինն, անշուշտ, աննշան մանրամասնություն է և նրա արժանիքներն ու թերությունները ենթակա են քաղաքական և ռազմավարական գործի գիտակների ուսումնասիրությանը, քաղաքականապես, ռուսական շահերից ելնելով, լավ կլիներ, որ այդ մարզը ռուսական չլիներ, սակայն զտնվեր ռուսական հսկողության տակ: Ես կարծում եմ, որ սրանք են այն գլխավոր հարցերը, որոնք բարձրացվել են մեր երեկվա զրույցի ժամանակ:

Մարկ Սայքս

PAT, стр. 158-159.

№ 83

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻ ՀՈՒՇԱԳԻՐԸ ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՈՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՆԵՐ Մ. ՊԱԼԵԼՈԳԻՆ ԵՎ ՍԸՐ Ջ. ԲՅՈՒՔԵՆԵՆԻՆ

Պետրոգրադ
17 մարտի 1916թ.

Նկատի առնելով այն, որ Փոքր Ասիայում և Արաբիայում տարբեր գոտիների սահմանման վերաբերյալ անգլո-ֆրանսիական նախագիծը ենթակա է հատուկ հանձնաժողովի քննարկմանը, այդ առթիվ մտքերի փոխանակությունը պետք է ներկայումս հանգի ընդհանուր սկզբունքների շարադրմանը, այսինքն՝

1) Ռուսական կառավարությունը պատրաստ է հայտարարել, որ ինքը ոչ մի շահագրգռվածություն չունի այն մարզում, որն ընկած է Ամաղիա - Իրն - Օմար - Դիարբեքիր - Սամոսատ - Մարաշ - Աղանայի վրայով անցնող գծից դեպի հարավ, և առանց որևէ դժվարությունների կընդունի յուրաքանչյուր համաձայնագիր, որը կարող է դրա մասին կայանալ Ֆրանսիայի և Անգլիայի միջև:

2) Նա պնդում է, որ անհրաժեշտ է ռուսական գոտու մեջ մտցնել Բիթլիսի անցուղիներն ու Ուրմիա լճի մարզը և փախարենը առաջարկում է Ֆրանսիային զիջել Փոքր Հայքի այն տարածքը, որն ընկած է Սվազի-Խարբերդի-Կեսարիայի միջև:

//
//

3) Ինչ վերաբերում է Պաղեստինին, ապա ռուսական կառավարությունը կհամաձայնվի այն բոլոր նախագծերին, որոնք Սուրբ հողում գտնվող բոլոր ուղղափառ հիմնարկներին ապահովում են իրենց պաշտամունքի ծիսակատարությունների ազատությունը, ինչպես նաև նախկին իրավունքների և առանձնաշնորհումների պահպանումը և առաջ չեն քաշում ոչ մի սկզբունքային առարկություն այդ երկրում հրեա գաղութաբնակներին տեղավորելու դեմ:

Ինքնին հասկանալի է, որ նախորդ կետերի նկատմամբ Ռուսաստանի համաձայնությունը պայմանավորված է նրանով, որ պետք է իրագործվի Կ.Պոլսի և նեղուցների վերաբերյալ ֆրանս-անգլո-ռուսական փոխադարձ համաձայնությունը:

РАТ, стр. 163-164.
РИГАОИ, стр. 131-132.

№ 84

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ.ՍԱԶՈՆՈՎԸ ՓԱՐԻԶՈՒՄ ԵՎ ԼՈՆԴՈՆՈՒՄ ԴԵՍՊԱՆՆԵՐ Ա. Պ. ԻԶՎՈԼՍԿՈՒ ԵՎ ԿՈՄՍ Ա. Կ. ԲԵԿԵՆԴՈՐՖԻՆ

ՀԵՌԱԳԻՐ

N 1098
17 մարտի, 1916թ.

Պիկոյի և Սայքսի կողմից մշակված Թուրքիայի ասիական տիրույթների բաժանման մասին նախագիծը հանձնվել է հատուկ խորհրդակցության քննարկմանը:

Անգլո-ֆրանսիական առաջարկությունն ընդունելու սկզբունքային համաձայնությունը ես պայմանավորել եմ Ֆրանսիայի և Անգլիայի հետ Կոստանդնուպոլսի և նեղուցների մասին մեր համաձայնագրի իրագործմամբ, անգլո-ֆրանսիական նախագծում նախատեսված փորրասիական սահմանների փոփոխությամբ՝ Բիթլիսի անցուղիները և Ուրմիայի մարզը մեզ զիջելու փոխարեն Սվազ-Խարբերդ-Կեսարիա տարածքն անցնում է Ֆրանսիային և Պաղեստինում այնպիսի կառավարման հաստատմամբ, որը կապահովի ուղղափառ հաստատությունների իրավունքները և արտոնությունները Սուրբ հողում, ընդ որում, այդ դեպքում արգելքներ չեն հարուցվի այնտեղ հրեական գաղութաբնակեցման նկատմամբ:

Ինչ վերաբերում է արաբական խալիֆայության և Սիրիայի կազմավորմանը, ապա այս իմաստով կայսերական կառավարությունը պատրաստ է ընդառաջ գնալ Ֆրանսիայի և Անգլիայի բոլոր ցանկություններին:

Սազոնով

РАТ, стр. 164.

№ 85

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

17 մարտի 1916թ.

1916թ. մարտի 17-ի երեկոյան ժամը 9-ի նիստի արձանագրություն:

Նախագահ՝ նախարարների խորհրդի նախագահ Շտյուրմեր:

Անդամներ՝ ծովային նախարար Գրիգորովիչ, արտաքին գործերի նախարար Սազոնով, ռազմական նախարարի փոխարեն՝ ռազմական նախարարի օգնական, հետևազորի գեներալ Բելյաև, Նորին մեծություն Կովկասի փոխարքայի ներկայացուցիչ պետական քարտուղար Նիկոլսկին:

Նիստին մասնակցում էին՝ արտաքին գործերի նախարարի տեղակալ հոֆմեյստեր Ներատովը, գլխավոր շտաբի գեներալ-զորաքնակարանապետ գեներալ-մայոր Լեոնտյևը, արտաքին գործերի նախարարության երկրորդ քաղաքական բաժնի խորհրդական Պետրյաևը, նախարարների խորհրդի գործերի կառավարիչ Լոդիժենսկին, Թեհրանի առաքելության առաջին քարտուղար Սինորսկին:

Խորհրդակցության քննարկման առարկան անգլո-ֆրանսիական առաջարկության քննարկումն էր, որը վերաբերում էր Ասիական Թուրքիայում Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ապագա տիրույթների և ազդեցության գոտիների սահմանազատման հարցին, նրա բաժանման դեպքում:

Նիստի սկզբում արտաքին գործերի նախարարը շարադրեց անգլո-ֆրանսիական նախագծի հիմնական դրույթները (տես՝ փետրվարի 25-ի հուշագիրը), քարտեզի վրա նշելով ենթադրվող սահմանները: Նրա կողմից բացատրվեց, որ ֆրանսիական նախնական առաջարկները մեր փոքրասիական սահմանների երկայնքով ֆրանսիական տիրույթների մինչև Ուրմիայի լիճ ընդարձակման վերաբեր-

յալ հանդիպեցին արտաքին գործերի նախարարության առարկությանը, որի հետ ֆրանսիական կառավարությունը համաձայնվեց: Այսպիսով նախնական նախագիծը փոփոխվեց Ուրմիայի լճի շրջակայքի շրջանները ֆրանսիացիների կողմից մեզ զիջելու և դրա փոխարեն ֆրանսիական տիրույթների դեպի Փոքր Հայք մեծանալու իմաստով (տես գործին կցված քարտեզը):*

Ծովային և ռազմական նախարարությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Նորին կայսերական մեծության Կովկասի փոխարքայի ներկայացուցիչը չառարկեցին նշված համաձայնագրի էության վերաբերյալ, կիսելով արտաքին գործերի նախարարի տեսակետը, որ Արաբական խալիֆաթի ապագա ճակատագիրը և Փոքր Ասիայում ռուսական սահմանից հարավ ընկած շրջանների կազմավորումը, բացառությամբ Պաղեստինում Սուրբ վայրերի, քիչ է առնչվում Ռուսաստանի շահերի հետ: Որոշվեց միայն Ուրմիայի կողմից ռուսական և ֆրանսիական տիրույթների միջև սահմանել այնպիսի սահման, որը կապահովեր կարևորագույն լեռնանցքների, անցումների և ռազմավարական դիրքերի տիրապետումը Ռուսաստանի կողմից:

Ինչ վերաբերում է Փոքր Ասիայում ռուսական արևմտյան սահմանի որոշմանը, ապա արտաքին գործերի նախարարի այն հարցին, թե Սև ծովի որ կետերից ցանկալի և շահավետ կլիներ մեզ համար այն անցկացնել, ծովային նախարարը կարծիք արտահայտեց, որ Ռուսաստանին անհրաժեշտ է հասնել որքան հնարավոր է երկար ափային շերտի տիրապետմանը, և որպես վերջնական կետ նշեց Սինոպը: Գեներալ Բելյաևը կարծիք արտահայտեց, որ նեղ ափամերձ շերտին տիրապետելն, անշուշտ, ցանկալի է, սակայն դա սկզբունքորեն միայն այն դեպքում գործնական արժեք կունենա, երբ այդ շերտը ապահովված կլինի նրա երկայնքին համապատասխան թիկունքային շրջանով, հակառակ դեպքում առանց հենակետերի սահմանի նման երկարացումը երկրի ներսում անցանկալի է, քանի որ առաջ կքաշի չափից դուրս և անարդյունք ծախսեր այն ամրապնդելու համար: Արտաքին գործերի նախարարությունն իր հերթին նշեց, որ դեռևս պատերազմից առաջ ֆրանսիացիներն Անդրկովկասի մեր տարածքին** մոտ շրջաններում երկաթգծեր կառուցելուց

---

* Գործում քարտեզը բացակայում է:

** Մինչև 1913թ., Ռուսաստանը, հիմնվելով 1900թ. ռուս-թուրքական երկաթգծային համաձայնագրի վրա, ձգտում էր Ֆրանսիայից հասնել Հյուսիսային Անատոլիայում երկաթգծեր կառուցելուց հրաժարմանը: 1913-1914թթ.

հրաժարվելու փոխարեն ստացել են մեր համաձայնությունը Սամսուն-Սվազ գծով* երկաթգիծ կառուցելու արտոնությունը: Սինոպի միացումը մեր տիրույթներին մեզ համար անհրաժեշտություն կառաջացնի ֆրանսիացիներից հասնել վերը նշված արտոնությունից հրաժարմանը, քանի որ նրա ցանկացած ձևով իրականացումը կկատարվի ռուսական պետական տարածքում, ինչն, անշուշտ, անթույլատրելի է: Ֆրանսիացիների այդ արտոնությունից կամավոր հրաժարմանը, որը նրանք չափազանց քանկ են գնահատում, ծայրահեղ դժվար կլինի հասնել:

Խորհրդակցության մասնակիցները լիովին համաձայնվեցին արտաքին գործերի նախարարի արտահայտած դատողությունների հետ, սակայն ցանկություն հայտնեցին, որ ծայրահեղ դեպքում ռուս-թուրքական արևմտյան սահմանի վերջին կետը լինի Սամսունի և Տրապիզոնի միջև ընկած որևէ նավահանգիստ: Առավել հարմար դրա համար ճանաչվեց Օրդու կոչված վայրը: Այդ դեպքում ռուսական սահմանն այդ կետից կուղղվեր մոտավորապես դեպի Գարահիսար (Շաբխանե): Այս հարցում վերջնական որոշման ընդունումից առաջ ծովային նախարարը ցանկություն հայտնեց ներկայացնել հատուկ զրություն: Նորին կայսրության մեծության Կովկասի փոխարքայի ներկայացուցիչը խորհրդակցության ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ Հայաստանի բաժանումը երկու մասերի, որոնցից մեկը կանցնի Ռուսաստանին, իսկ մյուսը՝ Ֆրանսիային, կառաջացնի հայերի դժգոհությունը և բողոքները, ինչպես նաև քարոզչություն Կովկասում: Արտաքին գործերի նախարարը բացատրեց, որ նման բաժանումը համապատասխանում է տեղանքի տե-

---

ֆրանս-թուրքական և ֆրանս-գերմանական համաձայնագրերի կապակցությամբ, որոնցով նախատեսվում էր երկաթուղային շինարարություն Փոքր Ասիայում, ռուսական կառավարությունը բանակցություններ մեջ մտավ թուրքական կառավարության, ինչպես նաև մի խումբ ֆրանսիական ձեռնարկատերերի հետ «Տրապիզոն-Պեքերիջ-Սվազ-Խարբերդ գծի ցանկացած կետից ռուսական սահմանի ուղղությամբ» երկաթգծերի շինարարության արտոնության իրեն փոխանցելու նպատակով: Դրանով Ռուսաստանը հույս ուներ խանգարել Էրզրումից արևելք, այսինքն ռուսական Անդրկովկասին կից տարածքներում թուրքական ռազմավարական երկաթգծերի կառուցմանը (Տես՝ "Материалы по истории франко-русских отношений", Москва, 1922г.):

* Սամսուն-Սվազ երկաթուղային գծի կառուցման իրավունքը ստացվել էր "Régie génerale des chemins de fer et des travaux publics" ֆրանսիական ընկերության կողմից 1914թ. ապրիլին:

ղագրական առանձնահատկություններին և հայերի դավանանքին:

Բացի այդ, եթե հնարավոր չէ ստեղծել միասնական Հայաստան, ապա հենց հայերի համար ավելի լավ է, որ իրենց Ռուսաստանից դուրս մնացած մասը պատկանի մշակութային Ֆրանսիային, քան թե Թուրքիային, որը նրանց այդքան դժբախտություններ է պատճառել: Խորհրդակցությունը դրա հետ լիովին համաձայնվեց:

Հաջորդ խորհրդակցությունը նշանակվեց մեկ շաբաթ հետո:

РАТ, стр. 172-174.

№ 86

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

Մոսկվա,
20 մարտի 1916թ.

Արտաքին գործերի նախարարության նախահաշվի քննարկման ժամանակ Պետական Դուման լուրջ ուշադրություն դարձրեց հայկական հարցին: Թե՛ հայ դեպուտատ Մ. Ի. Պապաջանովի ճառում, և թե՛, որ հատկանշական է, Պ. Ն. Միլյուկովի ճառում, հայկական հարցը ստացավ այնպիսի ձևակերպում, որը լրիվ համապատասխանում է հայ ժողովրդի ցանկություններին:

Կադետների (սահմանադրական դեմոկրատներ) կուսակցության ղեկավարը որոշակիորեն հայտարարեց, որ Ռուսաստանը, որը հայերին Թուրքիայում ինքնավարություն էր խոստացել դեռևս թուրքական ռեժիմի օրոք, «պարտավոր է իրականացնել այդ խոստումն» այժմ, երբ հայկական վիլայեթները որոշակի չափով իր ձեռքերում են:

Մենք չունենք դեռևս նման բացարձակ հայտարարություն արտաքին գործերի նախարարի կողմից: Սակայն բավական է և այն, որ Դումայի ամենահեղինակավոր բլոկի քաղաքական գործիչը, որը շատ զգույշ է իր հայտարարություններում, ուղղակի արտահայտվեց հայկական հարցի նման լուծման օգտին, ինչը և սպասում են հայերը Ռուսաստանից և նրա դաշնակիցներից:

Հայ ժողովրդի համար չափազանց արժեքավոր է, որ Դումայի ամբիոնի բարձրությունից ճանաչվել է ինքնավարության ինքնին սկզբունքը: Պ. Ն. Միլյուկովի և Մ. Ի. Պապաջանովի մի քանի օրերով իրարից բաժանված ճառերը, բացահայտեցին երկու բան՝ առաջին. ինչ իրավունք կարող է իրեն վերապահել, սպասելով Ռուսաստանին,

հայ ժողովուրդը, և երկրորդ՝ ինչ հարցերում է Ռուսաստանն, ի դեմս ամենախոշոր ներկայացուցիչների և ազդեցիկ քաղաքական խմբերի, ընդառաջ գնում հայ ժողովրդին:

Պ. Ն. Միլյուկովը ղեկավարվում էր բարձր քաղաքականության նկատառումներով, և այս անգամ դրանք համընկան արյունաքամ լինող, բայց առույգությունը և հույսն ապագայի նկատմամբ պահպանած ժողովրդի ցանկությունների հետ: Այս համընկումը նշանակալից է:

Պ. Ն. Միլյուկովը նաև ակնարկում էր այն բանի վրա, թե ինչ է պետք անել, որ Հայաստանը խուսափի Գալիցիայի ճակատագրից: Դա մոտ ապագայում ամենազլխավոր գործնական խնդիրն է:

Մ. Ի. Պապաջանովը Դումայի առաջև ներկայացրեց Հայաստանի տառապանքներն այնպիսի եռանդագին և զգացմունքային ոգևորությամբ, որը հնչում է նրա ճառերում ամեն անգամ, երբ նա խոսում է իր ժողովրդի մասին: Մեր պատգամավորը, որն այսքան տարի ցավում էր նրա համար հոգով, այնքան լավ գիտի նրա տառապանքները, որ իր համար դժվար չէր համոզիչ լինել իր ճառում:

"Армянский вестник", № 8, 1916г., стр. 1-2.

№ 87

ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՆՈՏԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ.ՍԱԶՈՆՈՎԻՆ

31 մարտի, 1916թ.

Ձգտելով ընդառաջ գնալ կայսերական կառավարության տեսակետին, հանրապետության կառավարությունն ինձ հանձնարարում է Ձերդ գերազանցության գիտությանը հասցնել, որ նա իր կողմից ընդունում է Ձեր առաջարկած որոշումը:

Այսպիսով, ուժի մեջ է մնում, որ Բիթլիսից ու Վանից հարավ ընկած, Մուշից Տիգրիսի հոսանքով, Աշիտ-Դաղից, Ջեզիրե-իբն-Օմարից դեպի արևելք ընկած Քրդստանի շրջանի և Մերգևերի բարձունքով մինչև պարսկական սահմանը Ռուսաստանին զիջելը՝ Ալա-Դաղի, Կեսարիայի, Աք-Դաղի, Իլդիզ-Դաղի, Զարայի, Էգինի և Խարպուտի միջև ընկած տարածքները Ֆրանսիային զիջելու պայ-

մանով, կայսերական կառավարությունը հայտնում է իր պատրաստակամությունը համաձայնվելու Անգլիայի և Ֆրանսիայի միջև Փոքր Ասիայի և Արաբիայի մասին ստորագրվելիք համաձայնագրի հետ: Բոլոր դեպքերում արդեն որոշված է, որ ընդհանուր սահմանագիծը Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև համաձայնագրով ստույգորեն և բավականին մանրամասն կհաստատվի միայն ռուսական տեխնիկական հանձնաժողովի ստեղծումից հետո, որը պետք է ուսումնասիրի այդ հարցը:

Բացի դա՝ Ռուսաստանին և Ֆրանսիային զիջված օսմանյան տարածքների բոլոր մասերում կապահովվեն երկաթգծային և այլ արտոնությունները, և որ հիմնարկությունները, վարչությունները, կրոնական, դպրոցական, հիվանդանոցային հաստատությունները և այլն, որոնք կապված են այս երկու ազգերի հետ, այսուհետ ևս կօգտվեն այն արտոնություններից, որոնցով մինչ այժմ նրանք ապահովված էին օսմանյան կառավարության հետ կնքված պայմանագրերով, համաձայնագրերով և կոնտրակտներով: Ունեցվածքի այն մասը, որը նրանցից բռնագրավվել կամ արգելակալանքի տակ է դրվել սույնի ուժով կվերականգնվի, երբ դա հնարավոր լինի:

Այն դեպքում, եթե Ձերդ գերազանցությունը համաձայն է այս դրության հետ, ես երախտապարտ կլինեի, եթե Դուք այդ մասին տեղեկացնեք ֆրանսիական դեսպանին, հայտնելով սույն նոտայի ստացման մասին:

Ժորժ Պիկո

РАТ, стр. 170-171.

№ 88

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Ն. ՇՅԵՊԿԻՆԻ ՀՈԴՎԱԾԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

1916թ. մարտ

Գալիցիայի ժամանակավոր կառավարման օրինակը ռուսական բանակի կողմից նրա գրավման ժամանակ և նույնիսկ պատերազմի ժամանակաշրջանում Լեհաստանի կառավարման մշտական ձևը, կասկած չեն թողնում նրանում, որ ինքն իրեն թողնված կառավարությունն ի վիճակի չէ որևէ այլ բան կատարել, քան իրեն եզակի ծանոթ ոստիկանական կառավարումը՝ Ռուսաստանից հեռացված

ծառայողների կադրերի միջոցով:

Ռուսական հասարակության աշխատանքն այդ հարցի վերաբերյալ պետք է կայանա խնդրի լուծման գործում գործնական ուղիների որոնման այնպիսի ուղղությամբ, որպեսզի 1) Հայաստանը միանգամից ստանա մշակութային կառավարում, որը կտրուկ հակադիր լինի թուրքական կարգ ու կանոնին, և որպեսզի 2) ռուսական բանակի կողմից Լեհաստանի ու Գալիցիայի գրավման ժամանակ ստեղծվեր մի նախադեպ, որն արգելեր Լեհաստանում վերադառնալն այն կարգերի, իսկ Գալիցիայում այն կարգերի ներմուծումը, որոնք կիրառվում էին այնտեղ ռուսական կառավարության կողմից:

Ներկայիս տողերը նպատակ ունեն հարցը դնել հասարակական բոլոր կազմակերպությունների առաջ և ամենաընդհանուր գծերով նշմարել այն ուղղությունը, որով պետք է ընթանա այդ հարցի գործնական լուծումը: Ավելին դժվար թե կարելի է պահանջել, առաց տեղական պայմաններին ու ուժերին մոտիկից ծանոթանալու:

Հայաստանում պետք է մտցվի այնպիսի կարգ, որը կհենվի տեղական տարրերի վրա: Դա չի լինի իսկական տեղական ինքնակառավարում կամ ինքնավարություն: Դա պետք է լինի անցումային մի ձև, որը ճկուն կերպով կհարմարվի ռազմական ժամանակի պայմաններին: Կառավարման հիմքում պետք է դրվի աշխարհով մեկ սփռված բոլոր հայ մտավորական ուժերի մասնակցությունը դրան: Անհրաժեշտ է այդ ուժերը հավաքել ու կազմակերպել՝ տեղական կառավարման բոլոր բնագավառներում գործնական ծրագրի կատարման համար: Այդ ուժերը, գործից տեղյակ անձանց հավաստիացմամբ լիովին բավարար կլինեն այդ խնդրի իրագործման համար:

Այդ հույժ անհետաձգելի խնդրի գործնական կատարումն իրենց վրա պետք է վերցնեն զեմստվոները և քաղաքային միությունները: Այդ միությունները նման գործի համար իդեալական գործիքներ չեն հանդիսանում, սակայն սա միակ գործիքն է, որը Ռուսաստանն ունի տվյալ րոպեին: Հանձինս այդ միությունների Ռուսաստանն ունի կազմակերպված հսկայական քաղաքական ուժ, որը գրավել ու շարունակում է գրավել կառավարման ամբողջ բնագավառներ: Այդ միությունները խնդիրների իրականացման համար ունեն անհրաժեշտ հեղինակություն ու վստահություն: Համենայն դեպս, երկիրը ուրիշ գործիքներ չունի, բանի որ խոսքը ոչ թե օրենսդրական ուղու մասին է, այլ հայտնի ծրագրի գործնական իրականացման՝ կենսական պայմանների ստեղծման մասին է, այլ ոչ թե օրենսդրական նորմերի:

Առաջինը, որ պետք է անեն միությունները, դա կարճ ժամկե-

տում, հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համաձայնեցված, կառավարման սխեմայի մշակումն է, չխորանալով դրան սկզբունքային կատարելության հասցնելու մեջ, քանի որ ամեն ինչ հանգում է ոստիկանական համակարգի փոխարինմանը այլ՝ հասարակական բնույթով, որը թույլ է տալիս նաև լայն տեղական նախաձեռնություն և փաստացի հասարակական վերահսկողություն:

Հայաստանում միությունները իրենց վրա պետք է վերցնեն այն նույն խնդիրները, ինչ-որ մյուս ճակատներում՝ պայքար վարակիչ հիվանդությունների դեմ և դրա համար տեղերում կազմակերպեն ամենազանազան հիմնարկություններ (բուժարաններ, հիվանդանոցներ, պարենային կրպակներ, սննդի կետեր) և իրենց ձեռքը վերցնեն տրանսպորտի, բնակչության տնտեսական վիճակի բարձրացման, գրանցման հարցերը և մի ամբողջ շարք գործողություններ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կապված են սանիտարական խնդիրների հետ: Այդ բոլորի կատարման համար միությունները քաղաքներում, ավաններում, գավառներում և ավելի փոքր գավառային միավորումներում պետք է ստեղծեն վարչական բջիջներ, որոնց կազմի մեջ պետք է մտնի հայկական ողջ մտավորականությունը, որն այժմ սփռված է ամենուրեք: Այդ բջիջները գործի հաջողության համար պետք է օգտվեն տեղական բոլոր առողջ ուժերից:

Այդպիսի բջիջների ստեղծումը միությունների համար իրենից ոչ մի նոր բան չի ներկայացնում: Դժվարը և նորը այդ գործում հանդիսանում է բարեկարգման բնագավառից բարեպատշաճ բնագավառին անցնելու համար գործնական միջոցների հայթայթումը: Այդ միջոցներն այժմ դժվար է նշել, քանի որ այդ գործը զուտ տեղական է և կախված է գործնական սրամտությունից: Սակայն, իմանալով միությունների գործունեության ողջ պատմությունը, դժվար թե կարելի է կասկածել, որ միությունները և նրանց տեղական կազմակերպությունները, հենվելով զինվորական իշխանությունների ու գլխավոր հրամանատարության վստահության վրա, ինչպես նաև Պետական Դումայի օժանդակության վրա, այսպես թե այնպես կկարողանան դա անել:

Անհրաժեշտ է հենց հիմա, առանց որևէ հապաղման անցնել գործի: Գործի կատարման ժամանակ կազմակերպությունները մի շարք արգելքների կհանդիպեն, որոնք անհաղթահարելի են սովորական ժամանակ, սակայն աշխարհի կողմից վերապրող ճգնաժամի ժամանակաշրջանում անհաղթահարելի խոչընդոտներ չկան: Գործնական խնդիրը, եթե այն ճանաչվել է անհետաձգելի, պետք է կա-

տարվի և կկատարվի:

Ն. Շչեպկին

"Армянский вестник", № 8, 1916г.
РИГАОИ, стр. 128-130.

№ 89

ԳԵՆԵՐԱԼ ՅԱՆՈՒՇԿԵՎԻՉԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Մ. Ի. ՊԱՊԱՋԱՆՈՎԻՆ

10 ապրիլի 1916թ.

"Новое время"-ի մարտի 30-ի համարում հրատարակվեց Կովկասի փոխարքայի ռազմական գծով օգնական, գեներալ Յանուշկևիչի նամակն ի պատասխան Պետական Դումայում հայ պատգամավոր Պապաջանովի ունեցած ճառի: «Պարոն Պապաջանովը Պետական Դումայում մարտի 14-ին ունեցած ճառում երկու անգամ հիշատակեց իմ ազգանունը, կապելով այն իր տեսակետից ռազմական իշխանությունների ոչ ճիշտ գործողությունների հետ հայ բնակչության նկատմամբ ընդհանրապես և Էրզրումի հայ բնակիչների ունեցվածքի հետ մասնավորապես: Ընդ որում, նա ափսոսանք հայտնեց, որ արտաքին գործերի նախարարությունն ինձ չի տվել ժամանակին անհրաժեշտ ցուցումներ:

Այնուհետև նա կարծիք արտահայտեց, որ եթե ես ստանայի այդ ցուցումները, ես, իհարկե, կհասկանայի իմ հրամանագրերի ողջ սխալականությունը: Ես սովոր եմ միշտ բացատրություններ տալ կամ պատասխանել սեփական իրական հրամանների և իրական ասված խոսքերի համար, և հնարավոր չեմ համարում պարոն Պապաջանովի հիշված ճառում ասված անհիմն բառերն այժմ բողնել առանց հերքման, ինչը կարող է հասարակությանը և Պետական Դումայի անդամներին հարցի ոչ ճիշտ լուսաբանման տեղիք տալ:

Ի պաշտոնե ես հանդիսանում եմ Կովկասի փոխարքային ռազմական գծով օգնական և ոչ թե գլխավոր հրամանատար: Փոխարքայի իշխանությունը տարածվում է Կովկասի վարչական տարածքի վրա, իսկ գլխավոր հրամանատարի իշխանությունը տարածվում է պատերազմի ողջ թատերաբեմով մեկ: Որպես օգնական, ոչ մի ինքնուրույն սկզբունքային կարգադրություն անելու իրավունք չու-

նեմ, չստանալով դրա համար հատուկ հրաման: Պարոն Պապաջանովի նշած դեպքերը, եթե անգամ տեղի են ունեցել, կատարվել են պատերազմի թատերաբեմում, այլ ոչ թե Կովկասի սահմաններում: Ընդ որում, դատելով հայտարարության տեքստից, եթե հերոսի նամակում նշված դեպքն անգամ տեղի է ունեցել, ապա, հավանաբար, իմ Կովկաս գալուց առաջ է եղել: Ինչ վերաբերում է հայերի ունեցվածքի հարցին, որն իբր թե ոչ ճիշտ կերպով ռազմական իշխանությունների կողմից բռնագրված է Էրզրումում, այդ առիթով ես ունեցել եմ անձնական զրույց ինձ այցելած եպիսկոպոս Մեսրոպի հետ: Կասկածելով ինչ-որ ականատեսի կողմից նրա ստացած ասեկոսների ստույգ լինելու վրա, բանակի համար կարևորություն չներկայացնող, անձնական ունեցվածքի բռնագրավման և օգտագործման մասին, ես հենց եպիսկոպոսի ներկայությամբ կազմեցի և ուղարկեցի հեռագրային հարցում՝ ուղղված համապատասխան պետին, խնդրելով հայտնել, ճիշտ են արդյոք այդ ասեկոսները և ընդգծել նաև առանձին անձանց կողմից մասնավոր ունեցվածքի օգտագործման անքույլատրելիությունը: Կատարված նախաքննությունը կտրականապես մերժեց այդ ասեկոսները: Այդ իսկ պատճառով չեմ կարող ափսոսանք չհայտնել, որ պարոն Պապաջանովը այդքան հեշտ որոշեց Դումայի ամբիոնից ինձ վերագրել մի բան, որի հետ ես տվյալ դեպքում բացարձակապես առնչություն չունեմ»:

Յանուշկևիչ

"Армянский вестник", № 11, 1916г. стр. 17-18.

№ 90

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ԵՎ ԳԵՆԵՐԱԼ ՅԱՆՈՒՇԿԵՎԻՉԻ ՄԱՍԻՆ

1916թ. ապրիլ

Գեներալի նամակը, անկախ դրա բովանդակությունից, հատկանշական է մի տեսակետից, դա այն է, որ նամակի հեղինակը, գեներալ Յանուշկևիչը, չնայած իր բազմաբնույթ զբաղմունքներին և պաշտոնական պարտականություններին, իրեն պարտավոր համարեց պարբերական մամուլում պատասխանի պատվի արժանացնել պատգամավոր Պապաջանովի ճառը:

Կասկած չկա, որ այդ ուշադրությունը ցուցաբերվեց ոչ այնքան հասարակական կարծիքի, որքան Պետական Դումայի նկատմամբ: Կասկածից վեր է, որ եթե պատգամավորի ճառը արտասանվեր ոչ Պետական Դումայում, այլ մեկ այլ, թեկուզև չափից դուրս մարդաշատ, հասարակական ժողովում, դա այն չէր լինի ինչ այս դեպքը նամակի հեղինակ գեներալ Յանուշկևիչի համար:

Պետական Դուման ավելի ու ավելի է վերածվում մի մարմնի, որի ձայնի հետ իրենց պարտավորված են համարում հաշվի նստել նաև մարդիկ, որոնք օժտված են բարձր իշխանությամբ: Հոետորը, որի ճառի դեմ գեներալը հարկ է համարել հանդես գալ առարկությամբ, պարոն Պապաջանովը չէ, այլ Պետական Դումայի անդամ պատգամավորը:

"Армянский вестник", № 12-13, 1916г., стр. 31.

№ 91

ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՏԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

26 ապրիլի 1916թ.

Պատիվ ունեմ հայտնելու, որ ստացել եմ Ձերդ գերազանցության կողմից այսօր ինձ ուղարկված հուշագիրն այն մասին, որ կայսերական կառավարությունը ներքոհիշյալ պայմաններով ճանաչում է Ֆրանսիայի և Անգլիայի միջև կնքվելիք համաձայնագիրը արաբական պետություն կամ պետությունների դաշնություն կազմավորելու և Ֆրանսիայի հատուկ ներկայացուցչի կողմից կայսերական կառավարությանը մատնանշված Սիրիայի, Կիլիկիայի և Միջագետքի տարածքները Ֆրանսիային հանձնելու մասին:

Հանրապետության կառավարությունն ինձ հանձնարարել է իր կողմից տեղեկացնել Ձեզ, որ ինքը որոշել է հաստատել այն համաձայնագիրը, որին վերաբերում է խոսքը:

1. Ռուսաստանը անեքսիայի է ենթարկում Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի մարզերը մինչև Սև ծովի ափի՝ առաջիկայում որոշվելիք այն կետը, որն ընկած է լինելու Տրապիզոնից դեպի արևմուտք:

2. Վանից և Բիթլիսից դեպի հարավ՝ Մուշի, Սղերդի, Տիգրիսի հոսանքի, Ջեզիրե-Իբն-Օմարի, Ամադիայի վրա իշխող լեռնագագաթների գծի և Մերգևերի միջև ընկած Քրդստանի մարզը կզիջվի Ռուսաստանին, որը դրա փոխարեն Ֆրանսիային կտրամադրի այն տարածքները, որոնք ամփոփված են Ալա-Դաղի, Կեսարիայի, Աք-Դաղի, Իլդիզ-Դաղի, Զարայի, Ակնի և Խարբերդի միջև: Բացի դրանից, սկսած Մերգևերի մարզից, արաբական պետության սահմանագիծը կձգվի ներկայումս օսմանյան տարածքը պարսկականից անջատող լեռնագագաթների վրայով: Այս սահմանները, որ նշված են ընդհանուր գծերով, կարող են մանրամասնություններում ենթարկվել այնպիսի փոփոխությունների, որոնք հավանաբար կառաջարկվեն սահմանազատման հանձնաժողովի կողմից, որը հետագայում աշխատելու է այդ վայրերում:

Հանրապետության կառավարությունը գոհունակությամբ ընդունում է ի գիտություն, որ կայսերական կառավարությունը դրանից դուրս համաձայնվում է այս ձևով Ռուսաստանին զիջված օսմանյան տարածքի բոլոր մասերում թույլատրել, որ պահպանվեն օսմանյան կառավարության կողմից ֆրանսիական քաղաքացիներին տրված երկաթուղային և մյուս արտոնությունները: Եթե կայսերական կառավարությունը ցանկություն հայտնի, որ ավելի ուշ դրանք կայսերական օրենքների հետ համաձայնեցնելու նպատակով ենթարկվեն փոփոխության, ապա այդ փոփոխությունը կկատարվի հանրապետության կառավարության հետ այդ հարցը համաձայնեցնելուց հետո:

Ինչ վերաբերում է այդ երկու ազգերից կախում ունեցող հիմնարկություններին, վարչություններին, կրոնական, դպրոցական և բուժական հաստատություններին և այլն, ապա դրանք հետագայում ևս կօգտվեն այն առանձնաշնորհումներից, որոնցով նրանք մինչև հիմա ապահովված էին օսմանյան կառավարության հետ կնքած պայմանագրերով, համաձայնագրերով և կոնտրակտներով: Համենայն դեպս, ուժի մեջ է մտնում այն, որ ընդունելով հիշյալ վերապահումը, երկու կառավարությունները նկատի չունեն հետագայում պահանջել դատազորություն, կրոնական պաշտպանություն և կապիտուլյացիաների իրավունքներ այն մարզերում, որոնք այսպիսով բռնակցվում են Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից, բայց միայն նպատակ ունեն նախ՝ ապահովել ներկայումս գոյություն ունեցող հիմնարկությունների և հաստատությունների հետագա գոյությունը և հետո՝ հաշտության պայմանագրի կնքումից հետո ուղի հարթել երկու տերությունների բանակցությունների համար, որոնց բարեհաջող վախճանի մասին թույլ չի տալիս կասկածել երկու երկրների բարե-

կամությունը:

Վերջապես, երկու կառավարությունները սկզբունքորեն հնարավոր են համարում, որ թուրքական տարածքներն անեքսիայի ենթարկող պետություններից յուրաքանչյուրը պետք է մասնակցի օսմանյան պարտքի վարչության աշխատանքներին:

Ընդունեք հարգանքներիս հավաստիքը:

Պալեոլոգ

РАТ, стр. 187-188.
РИГАОИ, стр. 152-153.

№ 92

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ. ՍԱԶՈՆՈՎԻ ՀՈՒՇԱԳԻՐԸ ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ Մ.ՊԱԼԵՈԼՈԳԻՆ

*N 280 ե**
Պետրոգրադ,
26 ապրիլի 1916թ.

Վկայակոչելով կայսերական արտաքին գործերի նախարարության սույն թվականի մարտի 4/17-ի և 8/21-ի հուշագրերը, պատիվ ունեմ Ձեզ զեկուցությանը հաղորդելու, որ արաբական պետության կամ պետությունների դաշնություն կազմավորելու և Սիրիայի, Կիլիկիայի և Միջագետքի տարածքների պատկանելիության մասին Ֆրանսիայի և Անգլիայի միջև կնքվելիք համաձայնագրի ճանաչման վերաբերյալ ֆրանսիական կառավարության հատուկ պատվիրակ պարոն Ժորժ Պիկոյի հետ իմ զրույցների հետևանքով կայսերական կառավարությունն իրեն հաղորդված հիմունքներով պատրաստ է հաստատել մշակված համաձայնագիրը հետևյալ պայմանների պահպանման դեպքում.

1. Ռուսաստանը բռնակցում է Էրզրումի, Տրապիզոնի, Վանի

** N 280*-ի տակ զոր̀ծում առկա է նոտայի տեքստը, վերնագրված՝ «Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի նամակի պատճենը Պետրոգրադում ֆրանսիական դեսպանին թվագրված 26 մարտի/ 8 ապրիլի 1916թ., որի վրա մատիտով նշում է կատարված "non venu" (չի ուղարկվել):

և Բիթլիսի մարզերը մինչև Սև ծովի ափի առաջիկայում ճշտգրտման ենթակա Տրապիզոնից արևմուտք ընկած կետը:

2. Վանից և Բիթլիսից դեպի հարավ՝ Մուշի, Սղերդի, Տիգրիսի հոսանքի, Ջեզիրե-իբն-Օմարի, Ամադիայի վրա տիրապետող լեռնագագաթների գծի և Մերգևերի միջև ընկած Քրդստանի մարզը զիջվում է Ռուսաստանին, որը փոխարենը Ֆրանսիայի սեփականություն կճանաչի Ալա-Դաղի, Կեսարիայի, Աք-Դաղի, Իլդիզ-Դաղի, Զարայի, Ակնի և Խարբերդի միջև ամփոփված տարածքները: Բացի դրանից, սկսած Մերգևերի մարզից, արաբական պետության սահմանը կձգվի ներկայումս օսմանյան տարածքը պարսկականից անջատող լեռնագագաթների վրայով: Այն սահմանները, որ նշված են ընդհանուր գծերով, կարող են մանր հարցերում ենթարկվել այնպիսի փոփոխությունների, որոնք հավանաբար կառաջարկվեն սահմանագատման հանձնաժողովի կողմից, որը հետագայում աշխատելու է այդ տեղերում:

Կայսերական կառավարությունը դրանից բացի համաձայնվում է այսպիսով Ռուսաստանին զիջված օսմանյան տարածքի բոլոր մասերում թույլատրել օսմանյան կառավարության կողմից ֆրանսիական քաղաքացիներին տրված երկաթգծային և մյուս արտոնությունների պահպանումը: Եթե կայսերական կառավարությունը ցանկություն հայտնի, որ ավելի ուշ կայսրության օրենքների հետ համաձայնեցնելու համար դրանք (արտոնությունները) ենթարկվեն փոփոխության, ապա դա կկատարվի հանրապետության կառավարության հետ համաձայնեցնելուց հետո:

Ինչ վերաբերում է այս երկու ազգերից կախում ունեցող հիմնարկություններին, վարչություններին, կրոնական, դպրոցական և հիվանդանոցային հաստատություններին և այլն, ապա դրանք հետագայում ևս կօգտվեն այն արտոնություններից, որոնցով մինչև հիմա դրանք օժտված էին օսմանյան կառավարության հետ կնքած պայմանագրերով, համաձայնագրերով, կոնտրակտներով: Համենայն դեպս, ուժի մեջ է մնում այն, որ, ընդունելով հիշյալ վերապահումը, երկու կառավարությունները նպատակ չունեն հետագայում պահանջել դատազորություն, կրոնական հովանավորություն և կապիտուլյացիաների իրավունքներ այն մարզերում, որոնք այսպիսով ընդակցվում են Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից, այլ միայն նպատակ ունեն նախ՝ ապահովել ներկայումս գոյություն ունեցող հիմնարկությունների և հաստատությունների հետագա գոյությունը և հետագայում՝ հաշտության պայմանագիր կնքելուց հետո ուղի հարթել երկու պետությունների բանակցությունների համար:

Վերջապես երկու կառավարությունները սկզբունքորեն հնարավոր են համարում, որ թուրքական տարածքները բռնակցող պետություններից յուրաքանչյուրը մասնակցի օսմանյան պարտքի վարչության աշխատանքներին:

Սազոնով

РАТ, стр. 185-186.

№ 93

ՓԱՐԻԶՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր թիվ 293
1 մայիսի 1916թ.

Կամբոնն ինձ ասաց, որ Պետրոգրադում տեղի է ունեցել Ասիական Թուրքիայում ազդեցության ոլորտների բաժանման մասին համաձայնագրի ստորագրում, ընդ որում, ֆրանսիական ոլորտում բացի Կիլիկիայից մտցվել է նաև հայկական վիլայեթների մի մասը Սվազով և Խարբերդով: Այդուհանդերձ Փարիզում գտնվող Պողոս Նուբար փաշան շարունակում է իր քարոզչությունը Մերսինում Միջերկրական ծովում ելք ունեցող ինքնավար Հայաստանի համար՝ երեք տերությունների ընդհանուր հովանավորության ներքո: Չնայած որ իմ կողմից ձեռնարկվում են բոլոր միջոցները, որպեսզի այստեղ կասկած չառաջանա, որ քարոզչությունը հիմնվում է մեր օժանդակության վրա, ցանկացած թյուրիմացություններից խուսափելու նպատակով, այնուամենայնիվ, իմ պարտքն եմ համարում Ձեր ուշադրությունը հրավիրել դրա վրա: Արդյոք հարմար չե՞ք գտնի հայտնել ինձ անձնական գիտության համար վերը նշված համաձայնագրի տեքստը:

Իզվոլսկի

РАТ, стр. 188.
РИГАОИ, стр. 156.

№ 94

ԲԵՌՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՐԴԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Թիվ 265 հեռագրից
2 մայիսի 1916թ.

Մանդելշտամը խնդրում է փոխանցել՝ «Զանազան աղբյուրներից, այդ թվում մի անձից, որը մի քանի շաբաթ առաջ անցել է Փոքր Ասիայով, ստացա տեղեկություններ, որոնք հետևյալ դրությունն են նկարագրում Թուրքիայում. Փոքր Ասիայում հայ համարյա չկա, նրանք կամ կոտորվել են կամ տեղահանվել և միայն նրանց բեկորներն են թաքնվում զգլխաշների մոտ... Հեռանալով մեր հարձակվող զորքերի առջևից, բուրքական իշխանությունների հրամանով մահմեդականներն իրենց հետ տանում են հայերի ունեցվածքը և քշում-տանում են հայերի անասուններին...

АВПР, Политархив, д. 3504, л. 93.
РИГАОИ, стр. 156.

№ 95

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ.ՍԱԶՈՆՈՎԻՆ

Հեռագիր
10 մայիսի 1916

Պետրոգրադում հրավիրված գաղթականներին օգնություն ցուցաբերող հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների համագումարը Ձերդ գերազանցությանն է հղում իր խոր երախտագիտությունն այն անկեղծ կարեկցանքի զգացումի համար, որով Դուք նպատակահարմար գտաք վերաբերվել հայ ժողովրդի բախտին, որը ճակատագրի բերումով նետվել է պատմական հորձանուտի մեջ: Համագումարը հավատում է, որ այսուհետև հայ ժողովրդի արդարացի շահերը Թուրքիայում Ձեր կողմից կհանդիպեն այն բարե-

հաճ վերաբերմունքին, որին նա արժանի է քրիստոնյա մշակույթին մատուցած իրենց ծառայություններով և իր կրած մեծագույն տառապանքներով: Համագումարն իրեն թույլ է տալիս խոնարհաբար խնդրել Ձերդ գերազանցությանը ամենաջերմ ողջույնները փոխանցել Ֆրանսիայի, Անգլիայի, Հյուսիս-ամերիկյան նահանգներին այն մեծահոգի արձագանքի համար, որով այդ երկրներում ընդունեցին հայ ժողովրդին վիճակված փորձությունները: Մեծ Ռուսաստանի և քաղաքակիրթ Արևմուտքի կարեկցանքը հայերին ուժ է տալիս կրելու այդ փորձությունները և պայծառ հույսով նայելու դեպի ապագա:

"Армянский вестник", N 17, 1916.
РИГАОИ, стр. 165.

№ 96

ԼՈՆԴՈՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԲԵՆԿԵՆԴՈՐՖԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Թիվ 1
Հեռագիր թիվ 288
Լոնդոն,
30 մայիսի 1916թ.

Գրեյը ինձ է դիմել նոտայով, որտեղ հայտնում է, որ անգլիական կառավարությունը ֆրանսիական դեսպանի միջոցով ստացել է նոտաների պատճենները, որոնցով Պետրոգրադում փոխանակվել են արաբական պետության կազմավորման մասին անգլո-ֆրանսիական համաձայնագրի հարցի կապակցությամբ: Գրեյը բավարարվածության զգացումով ընդունում է ի գիտություն, որ կայսերական կառավարությունը հաստատել է այդ համաձայնագիրը և տեղեկացրեց ինձ, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունն այդ համաձայնագիրն ամբողջական դարձնելու նպատակով պատրաստ է ճանաչել Ռուսաստանի կողմից ձևակերպված և ֆրանսիական կառավարության կողմից ընդունված պայմանները, որոնք ձեռք են բերվել անցած ամսի 26-ին նոտաների փոխանակման արդյունքում: Քանի որ այդ համաձայնությունները շոշափում են անգլո-ռուսական հարաբերությունները, Գրեյն առաջարկում է կայսերական կառավարությանը միանալ 5 կետով համաձայնագրին, որոնք ես փոխանցում եմ թիվ 2 հեռագրով: Չե՞ք հանձնարարի արդյոք ինձ պատասխանել Գրեյին

նոտայով, որում ես կտայի խնդրվող համաձայնությունը ռուսական կառավարության անունից: Խնդրում եմ ցուցումներ:

Բենկենդորֆ

РАТ, стр. 199.

№ 97

ԼՈՆԴՈՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԿՈՄՍ Ա.Կ.ԲԵՆԿԵՆԴՈՐՖԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

ՀԵՌԱԳԻՐ

Թիվ 2
Հեռագիր թիվ 289
Լոնդոն,
30 մայիսի 1916թ.

«Քանի որ այս համաձայնագրերն անմիջականորեն շոշափում են Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի հարաբերությունները, ես պատիվ ունեմ Ձերդ գերազանցության կառավարությանն առաջարկել համաձայնագրին միանալ հետևյալ պայմաններով.

1. Ռուսաստանը անեքսիայի է ենթարկում Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի մարզերն ընդհուպ մինչև Սև ծովի ափի՝ հետագայում որոշվելիք այն կետը, որն ընկած է լինելու Տրապիզոնից դեպի արևմուտք:

2. Վանից և Բիթլիսից դեպի հարավ՝ Մուշի, Սղերդի, Տիգրիսի հոսանքի, Ջեզիրե-Իբն-Օմարի, Ամադիայի վրա իշխող լեռնագագաթների գծի և Մերգների միջև ընկած Քրդստանի մարզը կգիջվի Ռուսաստանին, սկսած Մերգների մարզից, արաբական պետության սահմանագիծը կձգվի ներկայումս օսմանյան տարածքը Պարսկաստանից անջատող լեռնագագաթների վրայով: Այս սահմանները, որ նշված են ընդհանուր գծով, կարող են մանրամասնություններում ենթարկվել այնպիսի փոփոխությունների, որոնք հավանաբար կառաջարկվեն սահմանազատման հանձնաժողովի կողմից, որը հետագայում աշխատելու է այդ վայրերում:

3. Ռուսական կառավարությունն ընդունում է, որ այս ձևով Ռուսաստանին զիջված օսմանյան տարածքի բոլոր մասերում պահպանվելու են այն արտոնությունները, որոնք օսմանյան կառավարությունը տվել է բրիտանահպատակներին: Եթե ռուսական կառավարությունը ցանկություն հայտնի, որ ավելի ուշ դրանք կայսրության օրենքների հետ համաձայնեցնելու նպատակով ենթարկվեն փոփոխության, այդ փոփոխությունները կկատարվեն միայն Մեծ Բրիտանիայի կառավարության հետ համաձայնեցնելուց հետո:

4. Այս ձևով Ռուսաստանին զիջված օսմանյան տարածքների բոլոր մասերում պետք է պահպանվեն նավագնացության գոյություն ունեցող բրիտանական իրավունքները և արտոնություններ ստանալու նախապարարության իրավունքը, պահպանվելու են նաև բրիտանական կրոնական, դպրոցական և բուժական հաստատությունների իրավունքներն ու առանձնաշնորհումները: Նորին գերազանցության կառավարությունն իր հերթին ընդունում է, որ հումանման ռուսական իրավունքներն ու առանձնաշնորհումները պահպանվեն այն մարզերում, որոնք սույն պայմանագրի ուժով կլինեն լիովին բրիտանական, կամ որոնցում բրիտանական շահերը կճանաչվեն գերակշիռ:

5. Երկու կառավարությունները սկզբունքորեն հնարավոր են համարում, որ թուրքական տարածքներում անեքսիայի ենթարկող պետություններից յուրաքանչյուրը պետք է մասնակցի օսմանյան պարտքի վարչության աշխատանքներին:

Բենկենդորֆ*

PAT, стр. 200.

---

* Բնագրի վրա կա Նիկոլայ II ձեռքով արված նշումը և մակագրություն՝ «Համաձայն եմ, բացի 1-ին հողվածից: Եթե մեր բանակին հաջողվի հասնել մինչև Սինոպ, ապա այնտեղով էլ պետք է անցնի մեր սահմանագիծը»: 1916թ. մայիսի 22

1916թ. սեպտեմբերի 16-ին արտաքին գործերի նախարար Շտյուրմերի անունով ստացված հեռագրով Բենկենդորֆը հայտնում էր այն մասին, որ իր կողմից Գրեյին է հանձնվել նոտա թվագրված սեպտեմբերի 1-ով Ռուսաստանի կառավարության կողմից անգլիական նոտայի բոլոր կետերի ընդունման մասին:

№ 98

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ.ՍԱԶՈՆՈՎԸ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱ ՄԵԾ ԻՇԽԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՆԻԿՈԼԱԵՎԻՉԻՆ

ՆԱՄԱԿԻ ՆԱԽԱԳԻԾ

N 540
27 հունիսի 1916թ.

Մեր զորքերի կողմից գրեթե ողջ Մեծ Հայքի գրավումը, և այն Ռուսական կայսրության սահմանների մեջ նախատեսվող ներառումը հերթի են դնում այդ մարզի ապագա կառուցվածքի հարցը: Թեև այժմ, մինչև պատերազմի ավարտը թերևս վաղ է փորձել սահմանել նվաճված երկրում մեր ապագա ներքին քաղաքականության միանգամայն որոշակի և ստույգ հիմունքները, այնուամենայնիվ, ինձ թվում է, որ բավականին կարևոր է այսօր իսկ այս իմաստով նախանշել ընդհանուր ուղեցույց սկզբունքները, մանավանդ որ այժմ մշակված է և շուտով կիրառվելու է «Պատերազմի իրավունքով գրավված Թուրքիայի մարզերի կառավարման» ժամանակավոր կանոնադրության նախագիծը:*

Մեր առաջիկա խնդրի ամենամեծ դժվարությունն ու բարդությունը Հայկական հարցի բարձրացումն ու լուծումն է: Ամբողջությամբ վերցրած այն փոքր-ինչ դուրս է գալիս ռուսական ներքին կյանքի սահմաններից ինչպես այն առաջնակարգ միջազգային դերի պատճառով, որը Ռուսաստանին բաժին է ընկել Թուրքիայում հայկական բարեռորոգումներն անցկացնելիս, այնպես էլ այն պատճառով, որ Փոքր Հայքում հայերի մի մասը կմնա այլ պետության իշխանության ներքո: Մեր օգտին անջատվող հայկական գավառների առաջիկա կարգավորման ժամանակ մենք չենք կարող հաշվի չառնել այս երկու հանգամանքները: Այս կապակցությամբ ես ինձ թույլ եմ տալիս Ձերդ կայսերական մեծության բարեհայեցողությանը ներկայացնել հետևյալ նկատառումները:

Ինչպես հայտնի է, ծայրահեղ ուղենիշները, որոնց միջև մե-

---

* Նամակին կից զորձի մեջ կա գերագույն գլխավոր հրամանատարի շտաբի պետ գեներալ Մ.Վ.Ալեքսեևի 1916թ. հունիսի 5-ի N 739 հրամանի օրինակը և «Պատերազմի իրավունքով գրավված Թուրքիայի մարզերի կառավարման ժամանակավոր կանոնադրության» հաստատված նախագիծը:

զանում տվորաբար դրվում է Հայկական հարցի լուծումը, հանդիսանում են երկու հոսանքներ, դրանցից մեկը հայ ազգայնականների ձգտումն է 1913 թվականին մեր առաջարկած բարենորոգումների* ոգուն համապատասխան Ռուսաստանի հովանու տակ հասնել կատարյալ ինքնավարության, իսկ մյուսը, որ հակադիր է սրան, հայերի քաղաքական նշանակությունը ձգտում է հավասարեցնել զերոյի՝ փորձելով նրանց տեղը դնել մահմեդականներին:

Ինձ թվում է, որ այս հարցի այս կամ այն կերպ լուծումը, ո՛չ ներքին, ո՛չ էլ արտաքին քաղաքականության տեսակետից բացար-

---

* 1913թ. հայկական բարենորոգումների հարցով Ռուսաստանի նախաձեռնությամբ հավաքվեց մեծ տերությունների՝ Ավստրիայի, Անգլիայի, Գերմանիայի, Իտալիայի և Ռուսաստանի ներկայացուցիչներից կազմված հատուկ միջազգային հանձնաժողով: Ռուսաստանի ծրագրած ցանկալի բարենորոգումներից էին՝ վեց վիլայեթներից (Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սվազի) հայկական մարզի ստեղծումը՝ քրիստոնյա, գերադասելի է եվրոպացի, նահանգապետի ենթակայության տակ, որին տերությունների համաձայնությամբ հինգ տարի ժամկետով նշանակելու է սուլթանը. գեներալ-նահանգապետին՝ գործադիր իշխանության ղեկավարին կից լինելու էր վարչական խորհուրդ, խորհրդակցական ձայնով: Բացի այդ, հինգ տարի ժամկետով ստեղծվելու էր մարզային վարչություն՝ մահմեդականների և քրիստոնյաների հավասար մասնակցությամբ (Ա.Ն.Մանդելշտամի նախագիծը): Ռուսական ծրագիրը նախատեսում էր դատական լայն բարեփոխում և ոստիկանության ու ժանդարմերիայի մարզային կորպուսի կազմակերպումը՝ եվրոպական սպաների հրամանատարությամբ: Թուրքիան իր հերթին, կենտրոնական տերությունների հավանությամբ առաջ էր քաշել հակառակ նախագիծ, որը ենթադրում էր ամբողջ Ասիական Թուրքիայի բաժանումը վեց հատվածների, որոնցից չորսը գլխավորելու էին թուրք գլխավոր-տեսուչները, իսկ երկու արևելյան հատվածները (Էրզրումի, Տրապիզոնի, Սվազի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքիրի վիլայեթները) ստորադրված էին լինելու եվրոպացի գլխավոր տեսուչին: Երկարատև բանակցությունների հետևանքով 1914թ. հունվարի 26-ին/փետրվարի 8-ին Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեց արձանագրություն, համաձայն որի Թուրքիան համաձայնվում էր արևելյան հատվածների համար ստեղծել երկու գլխավոր-տեսուչների պաշտոններ, ընդ որում, նա չէր ընդունվանում, որ նրանք լինեն եվրոպացիներ: Թուրքական կառավարությունից ստացվել էին նաև ազգարարային, վարչական և դատական բարենորոգումներ անցկացնելու որոշակի խոստումներ: Ռուսաստանն, իր հերթին, հրաժարվել էր միասնական հայկական նահանգ ստեղծելու պահանջից և որոշ զիջումներ էր արել տեղական ժանդարմերիայի հարցում: («Сборник дипломатических документов. Реформы в Армении, Министерство иностранных дел, Петроград, 1915).

ձակ չի համապատասխանում Ռուսաստանի պետական շահերին: Ինչ վերաբերում է հայերին լայն ինքնավարություն տալուն, ապա չպետք է մոռանալ, որ Մեծ Հայքում, որն այժմ նվաճված է Ռուսաստանի կողմից, հայերը երբեք չեն կազմել մեծամասնություն, իսկ նրանց նկատմամբ պատերազմի ժամանակ թուրքերի գործադրած պատժիչ միջոցառումներից հետո, որոնք հայերի իսկ վկայությամբ եղել են ահավոր չափերի, այդ հարաբերակցությունն է՛լ ավելի է փոխել ի վնաս հայերի, որոնք այժմ հազիվ թե կազմեն բնակչության մեկ քառորդ մասը: Այս պայմաններում հայկական ինքնավարությունն իրականում կբերի փոքրամասնության կողմից մեծամասնության անարդար ստրկացմանը:

Դրա հետ մեկտեղ չի կարելի համաձայնվել այն կարծիքի հետ, ըստ որի հայկական տարրը պետք է զոհաբերվի հօգուտ մահմեդականի և որ նրանց միջև եղած պայքարում կայսերական իշխանությունը պետք է կանգնի վերջինիս կողքին: Դա կնշանակեր հայերին դնել ավելի վատ դրության մեջ, քան այն, որի մեջ նրանք եղել են թուրքական տիրապետության օրոք, և ստիպել նրանց նախանձով լի հայացքներն ուղղել դեպի իրենց արտասահմանյան հայրենակիցները, որոնց համար այս կամ այն կերպ ապահովված կլինի ազատ զարգացումը: Բացի դրանից, հարցի նման լուծումը կարող է Ռուսաստանին դնել անհարմար վիճակի մեջ, որովհետև բոլոր տերություններից առավել եռանդուն նա է պաշտպանել Արևմտյան Հայաստանում լայն բարենորոգումների անցկացումը:

Այս նկատառումներից ելնելով, ինձ թվում է, որ մեզ համար լավագույն ելքը կլիներ Թուրքիայից նոր նվաճած մարզերը կարգավորելիս առավել խստորեն առաջնորդվել օրինականության, արդարության սկզբունքներով և այդ վայրերում միանգամայն անաչառ վերաբերվել բոլոր տարաբնույթ տարրերին, առանց նրանց միմյանց հակադրելու և բացառիկ հովանավորություն ցույց չտալով որևէ ազգության՝ ի վնաս մյուսի: Այս կերպ հնարավոր կլիներ հայերին որոշակի սահմաններում վերապահել դպրոցական և եկեղեցական անկախություն, մայրենի լեզվից օգտվելու իրավունք, ինչպես նաև քաղաքային և գյուղական ինքնավարություն՝ ընտրությունների ժամանակ բնակչության հարաբերակցական տոկոսի պահպանմամբ: Ոչ քրիստոնյա տարրերի նկատմամբ հարկավոր է կիրառել նույն սկզբունքները, որքանով դա թույլ կտան տեղական պայմանները և նրանց մշակութային զարգացման աստիճանը: Վերը նշված ժամանակավոր կանոնադրության նախագիծը մասամբ արդեն հաշվի է առնում այդ տեսակետը՝ ինքնավարության մի մասնիկ տալով «Գյու-

ղական համայնքներին» և «Գյուղական մարզերին»:

Օրինականության և անաչառության նույն սկզբունքը պետք է պահպանվի տեղական հողատիրության և գաղութաբնակեցման հարցերը լուծելիս: Այս տեսակետից հույժ կարևոր է խստագույն հետաքննության ենթարկել վերջին ժամանակներում տեղի ունեցած այն բազմաթիվ դեպքերը, երբ մահմեդականներն ինքնակամորեն զավթել են արտաքսված կամ սպանված հայերի ունեցվածքը: Հարկավոր է վերականգնել իսկական սեփականատերերի և նրանց ժառանգների իրավունքները:

Իմ խորին համոզմամբ, վերը նշված սկզբունքների կենսագործումով տեղի բնակիչները կհամակվեն հարգանքով տեղական իշխանությունների հանդեպ, ցանկացած ներքին և արտաքին անառողջ քարոզչությունը կկորցնի իր հիմքերը և տեղի բնակիչների համար կստեղծվեն կյանքի այնպիսի պայմաններ, որ նրանք առանց ափսոսանքի հիշեն թուրքական տիրապետության անցած ժամանակները:

РАТ, стр. 207-209.

№ 99

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ. ՍԱԶՈՆՈՎԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

հունիսի վերջ - հուլիսի սկիզբ 1916

Պետրոս Մեծի ժամանակներից ի վեր Ռուսաստանի հիմնական խնդրին է հանդիսացել ձգտումը դեպի հարավային չսառչող ծովի ազատ տիրապետումը: Երկու հարյուրամյակների ընթացքում Ռուսաստանը հետևողականորեն քայլ առ քայլ մոտենում է այդ խնդրին, սկզբում հաստատվելով Ազովի, իսկ հետո Սև ծովի ափին և, վերջապես, ներկայիս պատերազմում ընդհուպ մոտենալով բաղձալի նպատակին՝ նեղուցներին տիրանալուն: Բոլոր պատերազմները, որոնք Ռուսաստանը վարել է Թուրքիայի դեմ, վերջին հաշվով վարվում էին հանուն այդ հիմնական նպատակի: Բնականաբար Ռուսաստանը միշտ շահագրգռված է եղել Թուրքիայի թուլացմամբ, և, այդուհանդերձ, նա պետք է ամեն կերպ նպաստեր Թուրքիայում կենտրոնախույս և նրան ապակազմակերպող տարրերին: Այդպիսի

տարրեր Թուրքիայում եղել և մնում են այն բնակեցնող քրիստոնյաները: Ռուսաստանը, նպատակ հետապնդելով թուլացնել թուրքական հզորությունը և այդ իսկ պատճառով օժանդակելով քրիստոնյաներին նրանց պայքարում անկախության համար, Արևելքի քրիստոնյաների աչքերում ձեռք բերեց ազատարարի համբավ: Պատմությունը մեր պատերազմը Թուրքիայի հետ 1878 թվականին անվանեց ազատագրական պատերազմ: Այս բարոյական կողմը շատ արագ հետին պլան մղեց այն պատմական հիմքերը, որոնց զուգահեռ հետևանքն էր Առաջավոր Ասիայում քրիստոնյաների պաշտպանությունը, հիմքեր, որոնք, ինչպես վերը նշվել է, կայանում են մեր ձգտման մեջ ելք ունենալու դեպի չսառչող ծով: Թուրքիային թուլացնելու այդ նույն շահերից ելնելով, Ռուսաստանը, ինչպես հայտնի է, ամեն կերպ նպաստում էր Բալկանյան միության ստեղծմանը, որը, ցավոք, փայլուն սկզբից հետո ավարտվեց բալկանյան ժողովուրդների գժտությամբ: Միանգամայն ակնհայտ է, որ ներկա մեծ պատերազմում Բալկանյան միությունը, եթե այն չքանդվեր, կարագացներ եվրոպական պատերազմի ավարտը:

Ռուսաստանը Թուրքիայի թուլացման այդ նույն նպատակով իր պետական խնդիրն էր համարում Թուրքիայում հայերին օժանդակելը, և դրա հետևանքով 1912 թվականից սկսած բարձրագույն բարեհաճությամբ ռուսական դիվանագիտությունը ձեռնարկում է ամենաեռանդուն քայլերը՝ ուղղված Թուրքահայաստանում բարենորոգումներ մտցնելուն: Ընդ որում, Ռուսաստանը հանդիպում էր ամենաբարեկամական ընդունելության Թուրքիայի հայերի շրջանում և հսկայական օժանդակություն ռուսահպատակ հայերի կողմից, որոնք, ինչպես հայտնի է, մեծ ազդեցություն ունեն Թուրքիայում իրենց հայրենակիցների վրա: Նախարարների խորհրդին հայտնի է դիվանագիտական այն պայքարի բոլոր մանրամասնությունների մասին, որը վարում էր Ռուսաստանը և որն ավարտվեց բարեփոխումներով՝ 1914թ. հունվարի 24-ին հաստատված սուլթանի կողմից: Արտաքին գործերի նախարարության հրատարակած «նարնջագույն գրքում» հրապարակված են բոլոր փաստաթղթերը, որոնք վերաբերում են այդ պայքարին: Արտաքին գործերի նախարարությունը դեռ այն ժամանակ գերազանց գիտակցում էր, թե ինչ դեր կարող էին խաղալ հայերը Թուրքիայի հետ մեր բախման դեպքում և իր հաճելի պարտքն է համարում հայտնել, որ նախարարությունը չի սխալվել իր հաշվարկներում:

90-ական թվականների կեսերին թուրքական ժառանգության համար պայքարում մրցակիցների շարքի մեջ մտավ նաև Գերմանի-

ան: Թվում էր, որ Թուրքիայի հետ ընդհանուր սահմանի բացակայությունը խանգարում է նրան ներթափանցել այնտեղ, թվում էր, որ առանց անմիջական ազդեցության հնարավորության անհնար է նաև թուրքական գործերի վրա ազդեցությունը, իսկ հատկապես քիչ հույս կա հաջողության մյուս մեծ տերությունների հետ մրցակցության մեջ: Սակայն Գերմանիան բավականին վարպետորեն օգտագործեց իր դրության թվացյալ թուլությունը: Նրա համար բավականին հեշտ էր ապացուցել իր անտարբերությունը Թուրքիայում տարածքային ձեռքբերումների նկատմամբ: Ի հեճուկս Ռուսաստանի, և նրա հետ պայքարելու շահերից ելնելով, նա շահագրգռված էր Թուրքիայի հզորությամբ և ռազմական պատրաստվածությամբ: Բնական է, ուստի, որ Գերմանիան իր ողջ ուշադրությունը կենտրոնացրեց Թուրքիայում ռազմական կարգի վերակազմակերպման վրա, պետության կառավարման ամենախորքերը ներթափանցելու և փոքրասիական թուրքական շուկաների տնտեսական նվաճման վրա: Թուրքիան գիտեր, որ քրիստոնյա տարրերը Ռուսաստանի ձեռքերում հանդիսանում են միջոց Թուրքիայի պետական հզորությունը բուլացնելու համար: Այդ պատճառով 80-ական թվականներից սկսած թուրքական նախկին սուլթան Աբդուլ Համիդը զբաղվեց Հայաստանում հայերի հետևողական ոչնչացմամբ: Հայերը վերջին քրիստոնյա ժողովուրդն էին, որոնք մնում էին թուրքերի իշխանության տակ, որոնց հովանավորելը Ռուսաստանի խնդիրն էր: Ճիշտ է, Թուրքիայում գոյություն ունի հույների մեծ քանակություն, բայց նրանք մեծ մասամբ ապրում են Ռուսաստանի ազդեցության ոլորտից դուրս գտնվող շրջաններում: Հայաստանում հայերի ոչնչացումը կատարվում էր նրանց ֆիզիկական բնաջնջման և մահմեդական տարրերով Հայաստանում հայկական տարրի քայքայման ճանապարհով, այդ նպատակով ներկայիս վիլայեթները վարպետորեն կարկատելով:

Գերմանիան ոչ միայն չէր հակադրվում նախկին սուլթանի նշված քաղաքականությանը, քաղաքականություն, որն անշեղորեն վարվել և շարունակում էր վարվել երիտթուրքերի կողմից, այլև, ընդհակառակը, անչափ կարևոր էր համարում Թուրքիայի և Ռուսաստանի ապագա ռազմական թատերաբեմի ժողովրդագրական նախապատրաստումը: Թուրք-գերմանական տեսակետն առավել ցայտուն հասկանալու համար անհրաժեշտ է ավելի մանրամասն կանգ առնել այս հարցի վրա:

Ամբողջ Փոքր Ասիան, Մարմարյան և Էգեյան ծովերից մինչև Կասպից ծովի կովկասյան ափը՝ 24-դից մինչև 46-րդ միջօրեականները, այսինքն մոտավորապես երկու հազար վերստ տարածության

վրա, բնակվում է թուրք-թաթարական ցեղը, որը դավանում է մահմեդականություն (արևմուտքում՝ սունիներ, արևելքում՝ շիաներ), որոնք խոսում են մեկ լեզվով և հստակ գիտակցում են իրենց ազգակցությունը: Ահա հենց այդ հսկայական տարածքի մեջտեղում 34-րդ և 42-րդ միջօրեականների միջև, այսինքն մոտավորապես 600 վերստ տարածության վրա, գոյություն ունի ճեղքվածք, որը կոչվում է Հայաստան, որտեղ թուրքական ցեղը գրեթե վերանում է և փոխարինվում է նրան խորթ արիական ծագման քրիստոնյա ցեղով՝ հայերով:

Հայաստանի արևելյան մասում հայերին խիտ խառնվում են քրդերը: Վերջիններս սկսեցին լցվել Հայաստան, նեղել տեղաբնիկ բնակչությանն ընդամենը վերջին 35-40 տարիների ընթացքում, շնորհիվ Արդուլ Համիդի առաջ քաշած հայերի բնաջնջման քաղաքականության:

Բուն Քրդստանը գտնվում է Հայաստանից դեպի հարավ և հարավ-արևելք (3^0-37^0 հյուսիսային լայնության և 38^0-47^0 արևելյան երկայնության միջև), իր արևելյան հատվածով խորապես մխրճվելով Պարսկաստանի մեջ:

Հայերը և քրդերը, այսպիսով, թուրքերին բաժանում են երկու հատվածի՝ արևմտյան (հայտնի թուրք-օսմանների անվան տակ) և արևելյան՝ հայտնի Ռուսաստանում թաթարների անվան տակ, որոնք բնակեցնում են ամբողջ արևելյան Անդրկովկասը և ընդարձակ Պարսկական Աղրբեջանը:

Հայերը ապրում են իրենց տարածքում ավելի քան երեք հազար տարի: Նրանց մոտ 80 %-ը այնտեղ զբաղվում է երկրագործությամբ, իսկ մնացածը ապրում են քաղաքներում, զբաղվելով առևտրով և արհեստներով: Ինչ վերաբերում է Փոքր Ասիայի արևմտյան մասում թուրք-օսմանների մեջ ապրող հայերին, ապա նրանք գլխավորապես բնակեցնում են քաղաքները և իրենց ձեռքում կենտրոնացրին Ասիական Թուրքիայի ողջ առևտուրն ու արհեստները: Այս ցեղը տարբերվում է բարձր զարգացած գիտակցությամբ, եռանդով և աշխատասիրությամբ, առավել զգայուն է եվրոպական մշակույթի ընկալման հանդեպ և խորապես կապված է իր կրոնի և ազգության հետ: Հայերի վերջին հատկությունները օգնեցին նրանց դիմակայել մահմեդական լծի բոլոր սարսափներին, մինչ այժմ անսասան պահպանել իրենց ողջ ազգային կերտվածքը և հենց այդ տարածքը և, ի հեճուկս դրա, գրավել բացառիկ դիրք Ասիական Թուրքիայի ժողովուրդների մեջ, չբացառելով հենց թուրք-օսմաններին:

Նրանց հարևանները, քրդերը, միայն վերջին 30-40 տարիների ընթացքում սկսեցին նստակյաց դառնալ: Նրանք դեռևս պահպա-

նել են քոչվորական կենցաղը և կլանային դրվածքը, ինչպես նաև կիսավայրենի, դաժան, հովվի բնավորության բոլոր առանձնահատկությունները՝ խրախուսվելով իշխանության կողմից հայ երկրագործների հանդեպ դաժանություններ կատարելու գործում:

Միանշանակ պարզ է, թե ինչու էր Գերմանիան հակադրվում Հայաստանում ռուսական բարենորոգումների նախագծին և դրան հակադրում էր երկու սեկտորների բաժանելու իր առաջարկությունը: Հնարավորություն չունենալով բացարձակապես ժխտել այդ բարեփոխումների անհրաժեշտությունը, գերմանական դիվանագիտությունն ամեն կերպ արգելակում էր դրանց իրագործումը և հասավ, ինչպես հայտնի է, Հայաստանի նշված բաժանմանը երկու մասերի: Եթե Գերմանիան, այնուամենայնիվ, վերջին դրպեին համաձայնվեց Հայաստանում բարենորոգումների, թեկուզև այդ տեսքով, ապա ոչ առանց հետին մտքի՝ հայերին իր կողմը գրավելու համար: Հակադրվելով Հայաստանում բարենորոգումներին, Գերմանիան Թուրքիայի առջև ցուցադրում էր իր նվիրվածությունը նրան, համաձայնվելով բարենորոգումների կրճատված ծրագրին, նա ձգտում էր ցույց տալ հայերին, որ առանց իր աջակցության բարենորոգումների անցկացումը անհնար կլիներ:

Գերմանիայի կողմից մեզ պատերազմ հայտարարելուն պես «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ Նաջի-Բեյը և Վանի գեներալ-նահանգապետ Թփսիմ բեյը համոզում էին հայերին միանալ թուրքերին և կազմել կամավորական ջոկատներ, թեկուզ մի քանի հարյուր մարդու քանակով, նրանց զինելով Թուրքիայի հաշվին: Ընդ որում, նրանք չէին թաքցնում, թե ինչպիսի քաղաքական և բարոյական նշանակություն կունենա հայերի հանդես գալը թուրքերի հետ ձեռք ձեռքի տված: Երիտթուրքերը, վստահ լինելով իրենց հաղթանակի մեջ, մտադիր էին Ռուսաստանի սահմանները հեռացնել մինչև Կովկասի լեռները և Անդրկովկասում ստեղծել երեք ինքնավար շրջաններ՝ հայկական, վրացական և թաթարական: Հայերին նրանք խոստանում էին ընդարձակել Հայաստանի տարածքը, նրան միացնելով ռուսական Հայաստանը: Երիտթուրքերն անկեղծ և ջերմորեն հավատում էին, որ ինքնավար բուֆերների ստեղծումը Ռուսաստանի և Թուրքիայի միջև դժվարին կդարձնի ապագայում Ռուսաստանի անմիջական ազդեցությունը Թուրքիայի վրա: Հենց Գերմանիայում ռուսահպատակ հայերը, անակնկալի եկած պատերազմով, հանդիպում էին բավականին նախազգուշական վերաբերմունքի, ճիշտ այնպես, ինչպես ճապոնացիները: Այս վերջիններս նման վերաբերմունք զգում էին, և նախքան դաշնակիցների կողմից Ճապո-

նիայի պատերազմի մեջ մտնելը նրանք հեռացան Գերմանիայից: Հայերին հատկացվում էին հատուկ վագոններ, նրանց, ի տարբերություն մյուս ռուսահպատակների, թույլատրում էին երբեկեկել հատուկ գնացքներով և ոչ մի խոչընդոտ չէին ցուցաբերում նույնիսկ զինապարտներին, սակայն և՛ թուրքերը, և՛ գերմանացիները սխալվեցին իրենց հաշվարկներում հայերի նկատմամբ: Ռուսական դիվանագիտության աշխատանքը պսակվեց հաջողությամբ: Դրան որոշակի օգնություն ցուցաբերեց վճռական պահին այն համակրանքը, որն ունի Թուրքիայի հայկական շրջաններում ռուսական անունը: Հայերը Թուրքիայում ոչ միայն կանգնած չէին թուրքերի կողքին, ինչն, ըստ էության, նրանց քաղաքացիական պարտքն էր, այլև կազմեցին բազմահազարանոց ջոկատներ, որոնք մեծ մասամբ կազմված էին թուրքահպատակ հայերից: Գնահատելով կատարվող իրադարձության նշանակությունը, թուրքական գործիչներից մեկը՝ Զևդեթ-բեյն ասում էր. «Ռուս զինվորի գնդակը հարվածում է մեր ոտքին, հայի գնդակը՝ ուղիղ մեր սրտին»: Այս պատերազմում հայերի ողջ նշանակությունը մեզ համար գնահատելու համար բավական է նշել վերջին մարտերում սպանված թուրք սպայի օրագրից մի հատված: Դրա մեջ գտնում ենք հետևյալ տողերը. «Եթե մեր հայերը միանային մեզ, մենք վաղուց ջարդած կլինեինք ռուսներին»: Այսպիսով նախքան պատերազմը, երեք տասնամյակների ընթացքում Թուրքիան ձգտում էր ոչնչացնել հայերին Հայաստանում: Գերմանիան հասկանում և հնարավորության սահմաններում աջակցում էր թուրքերի այդ ծրագրերին, սակայն պատերազմը վրա հասավ Թուրքիային դեռ այն ժամանակ, երբ Հայաստանն առանց հայերի այդ ծրագիրը չէր մոտեցել իր ավարտին: Եվ թուրքերն ամբողջությամբ կարող էին համոզվել հայերի նկատմամբ իրենց մտադրությունների ճշմարտության մեջ: Գերմանիան համամիտ էր այդ մտադրությունների հետ, սակայն, անշուշտ, բացահայտ չէր կարող պաշտպանել Թուրքիային այդ գործում: Սակայն պատերազմը ազատություն տվեց Գերմանիայի ձեռքերին: Ռուսաստանը, իր բոլոր ուժերով զբաղված լինելով արևմտյան բատերարներում ավստրո-գերմանացիների դեմ պայքարում, ի վիճակի չէր մեծ ուժեր հատկացնել թուրքերի դեմ և այդ իսկ պատճառով ստիպված էր վարել պաշտպանողական պատերազմ, բավարարելով ռազմավարական անհրաժեշտությամբ թելադրված թուրքական տարածքների զբավումով: Թուրքերն օգտագործեցին ստեղծված իրավիճակը, ամբողջ ծավալով կատարելով պատմության տարեգրություններում չլսված դաժանություններ հայերի դեմ: Այս անգամ Գերմանիան բացահայտ պաշտպանում է Թուրքիային

հայ ժողովրդի անմարդկային ոչնչացման գործում:

Հայաստանի բոլոր ծայրերից գալիս են ուղղակի սարսափեցնող լուրեր: Տասնյակ հազարավոր հայեր կոտորված են: Կանանց և երեխաների համար բացառություն չի արվել: Հայ բնակչությունը բռնությամբ տեղահանվում է Հայաստանից Սիրիա և Միջագետք: Գերմանիան այս առնչությամբ, արտաքին գործերի նախարարության ունեցած հավաստի տեղեկությունների համաձայն, ունի բացարձակ որոշակի ծրագիր՝ վերացնել հայկական սեպը, որը կազմում է յուրատեսակ կղզի մահմեդական անծայրածիր ծովի մեջ, տեղահանել հայերին Թուրքիայի անապատային շրջաններ, Բաղդադի երկաթուղու ուղղությամբ՝ թուրքական ժողովուրդների միջից այս կուլտուրական ժողովրդին ապագայում օգտագործելու շահերից ելնելով, հանուն գերմանական առևտրական նպատակների: Բացարձակ անհասկանալի է, ուստի, վերը նշվածի կապակցությամբ այն հովանավորությունը, որն արտաքին գործերի նախարարությունում եղած տեղեկությունների համաձայն, ցուցաբերվում է մեր կողմից գրավված թուրքական տարածքների մոտակա թիկունքում ռազմական իշխանությունների կողմից թուրքերին ու քրդերին: Խուսափելով թուրքերի գազանություններից, հայերը, թվով մոտ երկու հարյուր հազար, անցել են մեր սահմանները: Նրանց օգնելը ոչ միայն Ռուսաստանի բարոյական պարտքն է, այլև թելադրվում է մեր ամենակենսական շահերով: Իսկապես, միայն վերը նշված գերմանա-թուրքական ծրագիրը հայերի նկատմամբ հրամայաբար հուշում է մեզ մեր ծրագիրը՝ նրանց ծրագրին ուղիղ հակառակ: Եթե գերմանացիներին և թուրքերին հարկավոր է Հայաստանն առանց հայերի, եթե նրանց հարկավոր է հայկական սեպի ոչնչացումը, եթե նրանց հարկավոր է ոչնչացնել մեր մահմեդականների և քրդերի ու թուրքերի միջև առկա արգելքը, ապա Ռուսաստանի խնդիրն է ինչ գնով էլ որ լինի վերականգնել այդ հայկական սեպը, այդ արգելքը թուրքերի ու քրդերի և մեր բարքարների միջև: Հայ բնակչության պահպանումը անհետաձգելի խնդիր է: Այդ իսկ պատճառով ամեն կերպ հարկավոր է ձգտել այն բանին, որպեսզի պաշտպանել այդ դժբախտ գաղթականների գոյությունը մեր սահմաններում՝ պատերազմից հետո նրանց իրենց հայրենիքը տեղափոխելու նպատակով:

Վերևում նշվել է, թե ինչ հսկայական նշանակություն և ազդեցություն ունեն ռուսահպատակ հայերը Թուրքիայում իրենց հայրենակիցների վրա: Ներկայիս դրությամբ դժվար է կանխատեսել թե Թուրքիան ինչ վիճակում դուրս կգա այս պատերազմից, սակայն, բոլոր դեպքերում կարելի է կարծել, որ կշարունակի իր գոյությունն այս

կամ այն տեսքով և բացարձակապես ակնհայտ է, որ մեր հաշիվները նրա հետ հեռու են ավարտված լինելուց: Ուստի հայկական տարրի նշանակությունը ստանում է չափազանց կարևոր բնույթ: Ելնելով ներկայումս տեղի ունեցած փոփոխություններից Կովկասի բարձրագույն ադմինիստրացիայի կազմում, ինչպես նաև մեր գործող Կովկասյան բանակի բարձր հրամանատարական կազմում, արտաքին գործերի նախարարությունն անհրաժեշտ է համարում առաջարկել նախարարների խորհրդին հայտնել Նորին կայսերական գերազանցությանը, մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին ի գիտություն ներքոհիշյալը՝

1. Ելնելով հայերի հետ անմիջական բանակցություններից և խոստումներից, որոնք Ամենայն հայոց կաթողիկոսին տրվել են Նորին կայսերական գերազանցություն կայսեր համաձայնությամբ և գիտությամբ, մասնավորապես Նորին կայսերական գերազանցության Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովի կողմից, այս ծանր, հայերի համար ողբերգական պահին Ռուսաստանի վրա է նրանց ամեն կերպ պաշտպանելու բարոյական պարտականությունը, այն հայ ժողովրդի, որը հավատարիմ մնալով ռուսական գահին և Ռուսաստանին, պայքարի մղվեց իր դարավոր կեղեքիչների դեմ՝ զոհասեղանին դնելով իր ողջ գոյությունը:

2. Ինչպես Թուրքիան, այնպես էլ հատկապես Գերմանիան ձեռնարկում են բոլոր միջոցները Հայաստանից հայերին տեղահանելու և ոչնչացնելու համար: Բնական է ուստի, որ մեր ռազմական իշխանության խնդիրը պետք է լինի Հայաստանում հայկական տարրի բազմակողմանի պաշտպանությունը մեր կողմից նրա (Հայաստանի) այս կամ այն մասերի գրավելուն պես, ինչպես նաև հայերի էվակուացիային համակողմանի աջակցությունը մեր նահանջի դեպքում:

3. Գաղթականներին համակողմանի օգնության ցուցաբերումը, միաժամանակ միջոցներ ձեռք առնելն ուղղված այն բանին, որ նրանք չենթարկվեն սփռվելուն Կովկասով և Ռուսաստանով մեկ, որպեսզի հետագայում հնարավոր լինի նրանց հետ վերադարձնել Հայաստան:

4. Հատկապես հարկավոր է հայերի նկատմամբ բարյացակամ վերաբերմունք ցուցաբերել Կովկասում, ելնելով նրանց կողմից դրսևորված անմնացորդ հավատարմությունից ռուսական շահերին, ինչպես նաև ելնելով այն դերից, որը հայերը ապագայում կարող են խաղալ Թուրքահայաստանի կառավարման գործում՝ ինչ ձևի էլ որ լինի այդ կառավարումը: Ցանկացած բախումներն ադմինիստրացի-

այի և հայերի միջև, ինչպիսի մանրուքային բնույթ էլ որ դրանք կրեն, բացի վնասից այն մեծ խնդիրներին, որոնք մեր առջև կանգնած են Առաջավոր Արևելքում, ուրիշ ոչինչ չեն կարող բերել: Չի կարելի չնշել, որ կրելով այդքան զոհեր, Հայաստանը հավատում է մեզ և մեզ հետ է, բնականաբար, հայերը կարող են ցավագին ընդունել վերը նշված բախումները:

Б. А. Борьян, Армения, международная дипломатия и СССР, М., 1928-29, т. I, II, էջ 356.

№ 100

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱ ՄԵԾ ԻՇԽԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս.Դ.ՍԱԶՈՆՈՎԻՆ

ՆԱՄԱԿ

N 21083
Թիֆլիս,
16 հուլիսի 1916թ.

Սերգեյ Դմիտրիի,

Ի պատասխան ինձ ուղղված Ձեր ս.թ. հունիսի 14-ի N 540 նամակի, հայտնում եմ, որ ես լիովին համաձայն եմ Ձեզ հետ, որ չափազանց ցանկալի կլիներ հենց այժմ, մինչև պատերազմի ավարտը, ուրվագծել Ռուսական կայսրության սահմանների մեջ մեր կողմից պատերազմի իրավունքով գրավված թուրքական մարզերը ներառելու վերաբերյալ ղեկավարման դրույթներ, և հիանալի գիտակցում եմ Հայկական հարցի բարդությունը և լուծման դժվարությունը:

Ռուսաստանի կայսրության ներկա սահմանների ներսում, իմ խորին համոզմամբ, Հայկական հարց բացարձակ գոյություն չունի և պետք չէ անգամ թույլ տալ հիշատակում այդ մասին, որովհետև փոխարքայության սահմաններում ռուսահպատակ հայերը մահմեդականների, վրացիների և ռուսների հետ միասին հանդիսանում են իրավահավասար ռուսահպատակներ: Ես գտնում եմ, որ ինձ հանձնված Կովկասյան երկրամասում իշխանությունը պետք է ձգտի առանց բացառության բոլոր ազգությունների լիակատար իրավահա-

վասարության, և չեմ կարող թաքցնել, որ երկրամասում գոյություն ունեցող ազգային բախումներում մինչ այժմ, գուցե և ոչ միտումնավոր, լուրջ ազդեցություն է ունեցել երկրամասի իշխանության (քաղաքական) ուղղվածությունը: Դարավոր գժտություններով առաջացած այդ բախումները, ես հաստատապես հավատում եմ, որ կվերանան իշխանության այն բանի անսասան գիտակցության դեպքում, որ Կովկասյան երկրամասում ապրող ազգությունները պետք է օգտվեն այն նույն իրավունքներից, ինչ-որ ռուսահպատակները, և որ նրանք հավասարապես մոտ են ցարի սրտին:

Շարադրվածի հիման վրա ես գտնում եմ, որ պետական տեսանկյունից Հայկական հարց, ըստ էության, գոյություն ունի լոկ ներկա պատերազմից առաջ եղած կայսերական սահմաններից դուրս, այսինքն՝ մեր կողմից գրավված թուրքական վիլայեթների շրջանում:

Անցնելով Ձեր կողմից շարադրված կարծիքի էությանը, ես չափազանց ուրախ եմ նշել, որ իմ տեսակետը և Ձեր արտահայտած նկատառումները լիովին համընկնում են:

Ռուսաստանը, որն, անշուշտ առավել մեծ եռանդով էր պաշտպանում լայն բարեփոխումների անցկացումը Արևմտյան Հայաստանում, չի կարող հաշվի չառնել այս պատերազմի ընթացքում մահմեդական ճնշման հետևանքով հայ ժողովրդի կրած տառապանքները: Կասկածից վեր է, որ Թուրքիայից նոր նվաճված մարզերի կարգավորման ժամանակ հարկավոր է ամենախիստ ձևով սկիզբ դնել օրինականությանն ու արդարությանը նվաճված մարզերում բնակվող բոլոր ազգությունների հանդեպ: Իհարկե, չշոշափելով Ռուսաստանի հովանու ներքո Հայաստանին ինքնավարություն տալու հարցը, հարց, որն ամենայն հավանականությամբ դեռևս կյանքի չի կոչվելու և որն, իմ կարծիքով, կարող է միայն վտանգավոր կերպով բարդացնել այս պատերազմի ժամանակ առաջացած հարցերի լուծումը, ես լիովին Ձեզ հետ համաձայն եմ, որ պետք է և միանգամայն հնարավոր է, հայերին տրամադրել դպրոցական ու եկեղեցական անկախություն, եկեղեցական ունեցվածքների և գույքերի կառավարման իրավունք, մայրենի լեզվից օգտվելու իրավունք բոլոր պաշտոնական դեպքերում ռուսաց լեզվի առաջնության պայմանով, ինչպես նաև քաղաքային և գյուղական ինքնավարություն՝ ընտրությունների ժամանակ բնակչության հարաբերակցության տոկոսի պահպանմամբ հանդերձ: Ոչ քրիստոնյա տարրերի նկատմամբ հարկավոր է կիրառել նույն սկզբունքները՝ տեղական պայմանների և նրանց մշակութային զարգացման աստիճանի համեմատ:

Ինչ վերաբերում է տեղական հողատիրության և գաղութա-

բնակեցման հարցերի լուծման ժամանակ նույն օրինականության ու անաչառության պահպանմանը, ապա ես, անշուշտ, լիովին միանում եմ Ձեր շարադրած կարծիքին: Իմ և ձեր կարծիքների համերաշխությունն ապացուցելու և Ձեզ հայտնի դարձնելու համար սույնին կցում եմ իմ ս.թ. մարտի 19-ի N 121 հրամանի պատճենը,* որը մեր նվաճած թուրքական մարզերում արգելում է ամեն տեսակ ինքնագլուխ բռնագրավումներ:

Վերջում չեմ կարող լռության մատնել հետևյալը. նկատի ունենալով իմ մեջ առաջացած լուրջ մտավախությունը պարենային ճգնաժամի անխուսափելիության մասին, որը հղի է լուրջ հետևանքներով ինչպես բանակի, այնպես էլ Կովկասյան երկրամասի համար, ես չեմ կարող ամենամտահոգ ուշադրություն չդարձնել սպասվելիք ծանր վտանգը վերացնելու վրա, ուստի այժմ արդեն հրամայել եմ սկսել հայ գաղթականներին Թուրքիայից գրավված մարզերի սահմաններում իրենց հարազատ վայրերը վերադարձնելու հարցի քննարկումը, այն նպատակով, որ նրանց հնարավորություն տրվի կրկին հաստատվել հայրենի հողում, զգալիորեն թեթևացվի գաղթականների պարենավորման գործը և դրա հետ մեկտեղ կյանքի կոչվեն Արևմտյան Հայաստանի արգավանդ հողերը, ինչն, անշուշտ, լրջորեն կթեթևացնի բանակի պարենավորման գործը:

Ձեզ խորապես հարգող Նիկոլայ:

ՊԱՏ, էջ. 211-212.

№ 101

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Մ.Ի. ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԲՈՐԻՍ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՇՏՅՈՒՐՄԵՐԻՆ

Թիվ 118 հեռագրից
28 սեպտեմբերի 1916թ.

... Հայերը համաշխարհային պատերազմի սկզբից ի վեր չդավաճանեցին իրենց դարավոր ավանդույթներին և վճռականորեն կողմնորոշվեցին Ռուսաստանի կողմը, չնայած վերջերս կասկած

* Գործում առկա է հրամանի պատճենը:

հարուցող սպառնալիքներին:

Այս պատերազմում ում կողմը լինելու հարցի լուծման ժամանակ հայերը չտատանվեցին, չխորամանկեցին, չեն խաղացել երկակի դեր: Իրենց ֆիզիկական գոյության հրեշավոր վտանգի առաջ հայերը ասպետորեն անվախ և ազնվորեն հակված էին միայն զուտ ռուսասիրական մարտավարությանը:

Ռուսաստանի նկատմամբ իրենց համակրանքի համար թուրքահայերը վճարեցին լեռնային ժողովրդի համընդհանուր տեղահանությամբ Միջագետքի կիզիչ անապատները, խաղաղ բնակչության, կանանց, երեխաների զանգվածային ոչնչացումով և բառացիորեն արյան հեղեղներով: Ոչ մի ազգ ներկա պատերազմում չի կրել ավելի շատ զրկանքներ, քան հայերը:

Պետ. Դումայի պատգամավոր՝ Պապաջանով

АВПР, Политархив д. 3517, лл. 3-4.
РИГАОИ, стр. 193.

№ 102

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Մոսկվա,
13 նոյեմբերի 1916թ

Պետական Դուման կրկին հավաքվեց բացառիկ հանգամանքներում:

Եվ Դումայում հնչած առաջին իսկ խոսքերը երախտագիտության խոսքեր են, ուղղված մեր քաջակորով բանակին, անարգանքի խոսքերը՝ մյուս կողմին ուղղված, որոնք անմիջապես արձագանք ունեցան մեր ողջ երկրում: Պատգամավորների ճառերը՝ մեկը մյուսից վառ, մեկը մյուսից ավելի զայրույթով լի, դրությունը պարզեցրին՝ կասկածանքի ոչ մի տեղ չթողնող որոշակիությամբ:

Երկիրը, մի գուցե, Դումայի գոյության առաջին օրվանից՝ հունիսի 3-ից զգաց, որ ինքը կարող է հպարտանալ իր ներկայացուցիչներով: Քանի որ նրանք ասացին այն ամենը, ինչ որ կարծում էր, ինչ որ զգում էր ժողովուրդը:

Եվ, կրկնում ենք, ոչ միայն ռուս ժողովուրդն էր զգում այդ հանկարծակի ծնված սերտ կապը Դումայի հետ, այլև Ռուսաստանի

բոլոր ժողովուրդները:

Նրանք, այդ փոքր ժողովուրդները, չէին մոռացվել պատգամավորների ճառերում, որոնք բնակեցնում են մեր անծայրածիր հայրենիքը, ռուսների հետ հավասարապես իրենց ուսերի վրա տանելով պատերազմի մեծ բեռը, որոնք հաղթանակից սպասում են իրենց ճակատագրի որոշակի բարելավում:

Դուման հիշում է Ռուսաստանի «ժողովուրդների» մասին, և դրա համար «ժողովուրդները» չեն կարող երախտապարտ չլինել Դումային, չեն կարող չզգալ, որ Դուման պայքարում է, իմիջիայլոց, նաև իրենց համար:

Հայ ժողովուրդը, մասնավորապես, առանց տարբերության, թե որ պետությանն են պատկանում իր բազմաչարչար բեկորները, հոգով ռուսական Պետական Դումայի հետ է: Նա չի կարող չզգալ, որ Դումայի հաղթանակից այժմ զգալի չափով կախված է Հայաստանի ամենաղժբախտ որդիների՝ թուրքահայերի ճակատագիրը: Քանզի ինչո՞ւմ է կայանում այն պայքարի գլխավոր իմաստը, որը տանում է Դուման: Այն կայանում է նրանում, որ մեր անզուգական բանակի ճանապարհից հեռացնել ոչ մարտական բնույթի խոչընդոտները, որպեսզի բանակին հնարավորություն տան հանդարտորեն, առանց տագնապի, հետ չնայելով, հասներ հաղթանակի թշնամու հանդեպ:

Գերմանիայի նկատմամբ հաղթանակը Հայաստանին ու հայերին այնպես է հարկավոր, ինչպես այն հարկավոր է ողջ քաղաքակիրթ աշխարհին: Գերմանիայի նկատմամբ հաղթանակը կլինի իրավունքի հաղթանակը նրա բացառման նկատմամբ, մշակույթի հաղթանակը նրա ոչնչացողների նկատմամբ, մարդասիրության հաղթանակը նրա դահիճների նկատմամբ: Միայն Գերմանիայի հանդեպ հաղթանակով կարող է ծնվել նորացված, ազատ Հայաստանը: Եվ, հակառակը, Գերմանիայի հաղթանակը կլինի հայ ժողովրդի լավագույն ապագայի բոլոր հույսերի վերջնական գերեզմանը:

Ահա թե ինչու Դումային, որ այժմ պայքարում է, եթե կարելի է այսպես արտահայտվել, հաղթանակին չընդդիմանալու համար, պայքարում Ռուսաստանի դաշնակիցների հետ ձեռք ձեռքի տված մեր ժամանակների մեծագույն հետադիմական ուժին՝ գերմանական միլիտարիզմը ջախջախելու իրավունքի համար, հայ ժողովուրդը, գերմանական միլիտարիզմի զոհը, ողջունում է այդ Դումային: Գերմանացիների կողմից խաչված Հայաստանը ողջունում է ռուսական ժողովրդական ներկայացուցչությունը, որը ոգևորում է ռուսական բանակին, պահպանում նրան, նրա մեջ ամրապնդում է գերմանացի-

ների նկատմամբ հաղթանակի հավատը: Քանզի ռուսական բանակի ձեռքում է, ինչպես նաև դաշնակից բանակների ձեռքում են հայ ժողովրդի բոլոր հույսերը:

Իսկ այժմ հայ ժողովուրդը բացի հույսից ոչինչ չունի:

"Армянский вестник", № 42, 1916г.
РИГАОИ, стр. 202-203.

№ 103

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ, ՌԱԶՄԱ-ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Ի. ԳՈՒՉԿՈՎԻ ԶՐՈՒՅՑԻՑ "Кавказское слово" ԹԵՐԹԻ ԹՂԹԱԿՑԻ ՀԵՏ

27 նոյեմբերի 1916թ.

Ես վաղուց չեմ եղել ձեզ մոտ Կովկասում... Այժմ ես, վերջապես, վերստին ձեզ մոտ եմ, կրկին կկարողանամ տեսնել Թուրքահայաստանը, որտեղ ես 1895թ. շրջեցի զրեթե ամենուրեք և տեսա սարսափելի անդորր՝ գերեզմանոցի անդորր... Մոսկալի էին ամենուրեք ավերածության տեսարանները: Հայերի հազվագյուտ գյուղ, որոնք այն ժամանակ այնտեղ բազմաթիվ էին, այրված չէր, բնակչությունը՝ կոտորված... Վանն իրենից ներկայացնում էր մոխրակույտ և միայն կառավարական շենքերն ու թուրքերի տներն էին վկայում նրա ծաղկման մասին վերջերս: Ինչպես Վանում, այնպես էլ գյուղերում մեզ հազվադեպ էին հանդիպում տառապյալ հայեր: Նրանց խաղաղ, համարյա բիբլիական տեսքը, հնազանդությունը ճակատագրին, վախվորածությունը՝ քրքրում էին մեր ոգիները, և մենք տարակուսում էինք, թե ի՞նչ կարող էին անել այդ մարդիկ թուրքերին, որպեսզի նրանք իրենց այդպես ատեին և այդպես զազանաբար վարվեին ու ոչնչացնեին, չխնայելով ոչ կանանց, ոչ ծերերին, ոչ երեխաներին... Վանից մենք անցանք Բիթլիս և այնտեղից արդեն Էրզրում: Ամենուրեք միևնույն, հոգի ճմլեցնող գերեզմանատան տեսարանը...

Եվ այն ժամանակ, չնայած բոլոր սարսափներին, ինձ համար պարզ դարձավ, որ այս երկրին՝ հարուստ, բնությամբ պտղատու, շատ բան պետք չէ: Նրան միայն պետք է, որ իրեն չմորթեն, որ թույլ տան խաղաղ ապրել ու զարգանալ: Սակայն այն ժամանակ թվում էր, որ Հայաստանում ամեն ինչ արդեն զոհվել է, որ նրա հոգեկան ու ֆիզիկական ուժերի վերածնունդն անհնարին է: Հայ ժողո-

վրդի հայրենասիրությունը պահպանեց նրա կենսունակությունը, և նա նորից սկսեց թվով աճել և տնտեսապես զարգանալ իր իսկ մոխրակույտի վրա: Այդ մասին են վկայում իսկական «արյունալի բաղնիքում» նրա նոր հարյուր հազարավոր զոհերը, նրա հարուստ դաշտերը և այգիները, որոնք կրկին ավերվեցին: Այժմ, հավանաբար, ես վերստին կհանդիպեմ քայքայման վաղեմի տեսարանները, եթե ոչ մեծ, ապա համենայնդեպս, ոչ նվազ, քան 1895թ. մասշտաբները:

... Հավատում եմ, որ Հայաստանի կենսական ուժերը դեռ չեն սպառվել, նրան դեռևս սպասում է փայլուն տնտեսական ապագա, եթե միայն նրա մշակութային ուժերին թույլ տան ազատ աճել...

"Кавказское слово", № 263, 27 ноября 1916г.
РИГАОИ, стр. 205-206.

1917թ.

№ 104

ԲԵՌՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Հեռագիր թիվ 482
գաղտնի՝ Մանդելշտամից
30 հունվարի 1917թ.

Համաձայն գաղտնի տեղեկությունների, Շվեյցարիայում՝ Բեռնում գտնվող Ալբանիայի դեսպանորդ Սուրրեյա բեյը պնդում է, որ Թալեաթ փաշան Բեռլինում եղած ժամանակ գերմանացիների հետ կնքել է գաղտնի համաձայնագիր, որով Թուրքիան պարտավորվել է Հայաստանին շնորհել ինքնավարություն, փախարենը Գերմանիան երաշխավորել է Օսմանյան կայսրության անձեռնմխելիությունը: Սուրրեյայի խոսքերով, Գերմանիայի նպատակն է՝ իրենց վրայից հանել հայկական կոտորածների պատասխանատվությունը և ազգությունների ինքնորոշման սկզբունքի հետ կապված ռուս պաշտոնյաների մեջ առաջացնել համակրանք Թուրքիայի նկատմամբ: Նկատի առնելով, որ Թուրքիային է վերապահվել նախաձեռնությունը, Սուրեյայի պնդումները չեն հակասում Ժնևում Թուրքիայի հյու-

պատոսի այն հաղորդմանը (տես իմ հեռագիրը), որ Բեռլինում Հայկական հարցը ճանաչել են որպես Թուրքիայի ներքին գործ: Նա սակայն ավելի առաջ է գնում Յյուրիխում Թուրքիայի հյուպատոսի հայտարարությունից (տես իմ հեռագիրը), ըստ որի ինքնավարությունը հնարավոր է համարվել սոսկ 1914թ. ռուս-թուրքական ակտի սահմաններում: Համենայնդեպս այդ բոլոր երեք տեղեկություններից կարելի է հետևեցնել, որ Գերմանիան Հայկական հարցում սկսել է մի նոր խաղ և ձգտում է Թուրքիայի հաշվին մի ավելորդ անգամ հանդես գալ փոքր ժողովուրդների «ազատարարի» դերում: Հատկանշական է, որ Ժենևի հայերի շրջանում մինչև իսկ լուրեր են պտտվում, թե առաջիկայում Գերմանիան հռչակելու է «անկախ» Հայաստան:

Օնու

ՀՀ ՊԿՊԱ, «Քաղվածքների ֆոնդ», գ. 43, թ. 48:

№ 105

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԵՎ Հ. ՉԱՎԱՐԻԵՎԻ ՊԱՏՇԵՆԱՀԱՆԱԾ ՆԱՄԱԿԻՑ ՔԱՂՎԱԾՔ

13 ապրիլի 1917

Մեր հարևանները՝ թաթարները, կազմակերպում են ինչ-որ անսովոր լուրջ մի բան:

1. Նրանք ջանասիրաբար և բացահայտորեն զինվում են: Դա բացատրում են նրանով, որ իրենց հարկավոր է նախապատրաստվել ռեակցիոն մութ ուժերի դեմ պայքարին:

Զենվելու գործընթացը գնում է արագացված տեմպերով բոլոր ծայրամասերում՝ ինչպես շիիտական, այնպես էլ սունիտական:

Այս հանգամանքը մտահոգեց ոչ միայն հայերին, այլև ռուսներին: Զինվորականները չեն գտնում, որ թիկունքն անվտանգ է, հատկապես ելնելով նրանից, որ երկաթգծի գրեթե ամբողջ երկայնքն անցնում է թաթարներով բնակեցված շրջաններով:

2. Թաթարները որոշեցին հասնել մահմեդական ինքնավար շրջանի կազմակերպմանը, որի մեջ մտնելու են Անդրկովկասը, ինչպես նաև Դաղստանը, Պարսկական Ադրբեջանը և Անդրկասպյան շրջանը:

3. Ջաֆարովը վերջերս ասում էր, որ Կովկասի մահմեդական-

ները չեն կարող ակտիվ մասնակցություն չունենալ Թուրքիայի հայկական վիլայեթների կազմակերպման գործում: Թաթարները կպահանջեն այժմվանից մահմեդականների վերադարձը հայկական լքված շրջաններ: Մահմեդականները կհամաձայնվեն հայկական վեց վիլայեթների ինքնավարության հետ, սակայն Թուրքիայի հովանավորության ներքո: Հայկական փոքրամասնության շահերը կերաշխավորվեն հատուկ օրենքներով:

Այս տարվա ապրիլի սկզբին թաթարների և ընդհանրապես մահմեդականների գլխավոր ղեկավար Ալի Մարքան բեկ Թոփչիբաշիևը Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Ի. Խատիսովին առաջարկեց խորհրդակցություն հրավիրել թաթարների և հայերի միջև այն հարցի շուրջ, թե ինչպես է պետք գործել Կովկասում ռուսական տիրապետության անկման դեպքում:

Իսկականի հետ ճիշտ է՝ Հ. Զավրիև
Պետրոգրադ, 24 ապրիլի 1917

ГАРФ (Государственный архив Российской Федерации) ф. 1779, оп. 1, д. 1470, л. 5-6.
ГАОТОМС, т. 1, с. 294.

№ 106

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՎՎԱԾ ՄԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ Հ. ԶԱՎՐԻԵՎԻ ԿԱԶՄԱԾ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

25 ապրիլի 1917

Ժամանակավոր կառավարությունը, առաջնորդվելով Հաագայի 5/8 հոկտեմբերի 1907թ. ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին կոնվենցիայի 42 և 43 հոդվածներով, այսուհետև, մինչև Թուրքահայաստանի վիճակի վերջնական որոշակիացումը խաղաղության պայմանագրով, որոշում է՝

Հոդված 1. Թուրքահայաստանի տարածքը, որը գրավված է ռուսական զորքերի կողմից, քաղաքացիական ղեկավարման առումով դուրս է բերվում Կովկասյան իշխանությունների, ինչպես նաև Կովկասյան ճակատի զինվորական իշխանությունների իրավասությունից և անմիջապես ենթարկվում է Ժամանակավոր կառավարու-

թյանը:

Հոդված 2. Հոդված 1-ում նշված իրավասությունների, ինչպես նաև իրավունքների մոտակա իրագործումը Թուրքիայից գրավված շրջանների կառավարման 1916թ. հունիսի 5-ի ժամանակավոր կանոնադրության հիման վրա, որը ներկայացված էր այդ շրջանների ռազմական գեներալ-նահանգապետին, հանձնված է ժամանակավոր կառավարության կողմից նշանակված Թուրքահայաստանի գեներալ-կոմիսարին:

Հոդված 3. Թուրքահայաստանի գեներալ-կոմիսարին կից գործում է քաղաքացիական հարցերով օգնական:

Քաղաքացիական հարցերով գեներալ-կոմիսարի օգնականը և նրա գրասենյակի ղեկավարը նշանակվում են ժամանակավոր կառավարության կողմից՝ ազգությամբ հայերի թվից:

Հոդված 4. Գեներալ-կոմիսարը, քաղաքացիական հարցերով իր օգնականի զեկույցի հիման վրա, անմիջականորեն ժամանակավոր կառավարությանն է ներկայացնում իր առաջարկությունները 1916թ. հունիսի 5-ի Թուրքիայի շրջանների կառավարման ժամանակավոր կանոնադրության մեջ ցանկալի լրացումների և փոփոխությունների մասին:

ГАРФ, ф. 1779, оп. 1, д. 1470, л. 8.
ГАОТОМС, т. 1, с. 295.

№ 107

Հ. ԶԱՎՐԻԵՎԻ ՈՒՂԵԿՑՈՂ ՆԱՄԱԿԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԻՇԽԱՆ Գ. ԼՎՈՎԻՆ

25 ապրիլի 1917թ.

Մեծարգո Գեորգի Եվգենիի:

Սույնով Ձեզ եմ ուղարկում հակիրճ զեկուցագիր Թուրքահայաստանի գրավված մասի Կովկասյան զինվորական իշխանությունների իրավասությունից դուրս բերման և ժամանակավոր կառավարության ենթակայության տակ դնելու հարցի մասին:

Ձեր սիրալիր խոստման վրա հիմնվելով, ես արդեն անվիճելի եմ համարում, որ այսօր այդ հարցն անպայման կքննարկվի և գրավոր կձևակերպվի ժամանակավոր կառավարության որոշման տեսքով, որով կղեկավարվեն բոլոր նրանք, ում միջոցով որ դա պետք է

կյանքի կոչվի:

Ռուսաստանը բավականին ընդհարձակ է և, բնականաբար, հնարավոր չէ այն իմանալ մանրամասնություններով: Այդ իսկ պատճառով ես կխնդրեի Ձեզ չմերժել Պետական Դումայի անդամ Մ. Ս. Աջեմովին հրավիրել խորհրդի (նախարարների) նիստին՝ տվյալ հարցի քննարկման ժամանակ անհրաժեշտ բացատրությունների համար:

Ես համարձակվում եմ պնդել այս գործի անհետաձգելիության և հայերի համար այս հարցի հետագա ձգձգմանը համբերելու անհնարինության վրա, քանզի դա հուզում և զրգռում է նրանց ծայրահեղ մտքերն ու զգացմունքները:

Հայերը չեն կարող թույլ տալ գեներալ-կոմիսարի որևէ ենթարկում Կովկասյան զինվորական իշխանություններին և այդ հարցում չեն կարող գնալ որևէ զիջումների կամ փոխզիջման: Դա հանդիսանում է բուրք-քրդական գերիշխանությունից և զինվորական չինովնիկության, որոնք մինչ այժմ չեն փոխարինվել Կովկասում, բռնություններից հայերի ազատագրման հիմնական պայմանը:

Գեներալ Յուդենիչի և գեներալ Բոլխովիտինովի շուտափույթ ազատումը և հեռացումը Կովկասից կլինեն քայլեր, որոնք էապես կթուլացնեն Կովկասի ժողովուրդների ընդդիմությունը և կասկածամտությունը:

Համառորեն այս երկուսի պահպանումն իրենց տեղերում միայն նսեմացնում է Ժամանակավոր կառավարության հեղինկությունը, որն այնքան անհրաժեշտ է այժմ ամբողջ պետության համար:

Ընդունեք Ձեր նկատմամբ անկեղծ հավատարմության և լիարժեք հարգանքի հավաստիացումները:

Հայ հեղափոխական-սոցիալիստական Դաշնակցության կուսակցության պատվիրակ:

Հ. Ջավրիև

ГАРФ, ф. 1779, оп. 1, д. 1470, л. 1-2.
ГАОТОМС, т. 1, с. 296.

№ 108

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՄԱՏՅԱՆԻՑ

N 63 *26 ապրիլի 1917*

Նիստին մասնակցում էին՝ վարչապետ իշխան Գ. Ե. Լվովը, արդարադատության նախարար Ա. Ֆ. Կերենսկին, ֆինանսների նախարար Մ. Ի. Տերեշչենկոն, երկրագործության նախարար Ա. Ի. Շինգարևը, հաղորդակցության ուղիների նախարար Ն. Վ. Նեկրասովը, արտաքին գործերի նախարար Պ. Ն. Միլյուկովը, Սրբազան Սինոդի օբեր-դատախազ Վ. Ն. Լվովը, ներքին գործերի նախարարի տեղակալ Պ. Մ. Շչեպկինը:

Նիստին մասնակցում էր պետական վերահսկիչ Ի. Վ. Գոդնևը:

Նիստը բացվեց ժամը 22-ին:

Լսեցին՝ 10. Ժամանակավոր կառավարության գործերի կառավարչի ներկայացրած զեկուցումը պատերազմի իրավունքով գրավված Թուրքահայաստանի շրջանների կառավարման հարցի մասին:

Որոշեցին՝ Հրապարակել ներքոհիշյալ որոշումը պատերազմի իրավունքով գրավված Թուրքահայաստանի շրջանների կառավարման մասին՝ «Ժամանակավոր կառավարությունը, հիմնվելով Հաագայի 5/8 հոկտեմբերի 1907թ. ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին կոնվենցիայի 42 և 43 հոդվածների վրա, այսուհետև, մինչև Թուրքահայաստանի վիճակի վերջնական որոշակիացումը խաղաղության պայմանագրով, որոշում է՝

Հոդված 1. Թուրքահայաստանի տարածքը, որը գրաղեցված է ռուսական իշխանությունների կողմից, քաղաքացիական ղեկավարման առումով դուրս է բերվում կովկասյան իշխանությունների, ինչպես նաև Կովկասյան ճակատի զինվորական մասերի իրավասությունից և ուղղակիորեն ենթարկվում է Ժամանակավոր կառավարությանը:

Հոդված 2. Հոդված 1-ում նշված իրավասությունների, ինչպես նաև իրավունքների մոտակա իրագործումը Թուրքիայից գրավված շրջանների կառավարման 1916թ. հունիսի 5-ի ժամանակավոր կանոնադրության հիման վրա, որը ներկայացված էր այդ շրջանների ռազմական գեներալ-նահանգապետին, հանձնվում է Ժամանակավոր կառավարության կողմից նշանակված Թուրքահայաստանի զե-

ներալ-կոմիսարին:

Հոդված 3. Թուրքահայաստանի գեներալ-կոմիսարին կից գործում է քաղաքացիական հարցերով օգնական:

Հոդված 4. Գեներալ-կոմիսարը քաղաքացիական հարցերով իր օգնականի զեկույցի հիման վրա անմիջականորեն Ժամանակավոր կառավարությանն է ներկայացնում իր առաջարկությունները 1916թ. հունիսի 5-ին Թուրքիայի շրջանների կառավարման Ժամանակավոր կանոնադրության մեջ ցանկալի լրացումների և փոփոխությունների մասին:

Մատյանների բնօրինակները ստորագրված են վարչապետի, նախարարների, Սրբազան Սինոդի օբեր-դատախազի և պետական վերահսկիչի կողմից, հաստատված են Ժամանակավոր կառավարության գործերի կառավարչի օգնականի կողմից:

Իսկականի հետ ճիշտ է:
Ժամանակավոր կառավարության գրասենյակի
բաժանմունքի պետ:

ГАРФ, ф. 1779, оп. 2, д. 3, л. 281.
ГАОТОМС, т. 1, с. 296-297.

№ 109

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՄԱՏՅԱՆ

N 7 *15 մայիսի 1917*

Նիստին մասնակցում էին՝ վարչապետ Գ. Ե. Լվովը, արտաքին գործերի նախարար Մ. Ի. Տերեշչենկոն, ժողովրդական լուսավորչության նախարար Ա. Ա. Մանույլովը, երկրագործության նախարար Վ. Մ. Չերնովը, արդարադատության նախարար Պ. Ն. Պերեվերզևը, պետական խնամակալության նախարար իշխան Դ. Ի. Շախովսկին, պարենավորման նախարար Ա. Վ. Պեշեխոնովը, աշխատանքի նախարար Մ. Ի. Սկոբելևը, Սրբազան Սինոդի օբեր-նախարար Վ. Ֆ. Լվովը, ներքին գործերի նախարարի տեղակալ Պ. Մ. Շչեպկինը, հաղորդակցության ուղիների նախարարի տեղակալ Ռ. Վ. Լիվերովսկինը, առևտրի և արդյունաբերության նախարարի տեղակալ Վ. Ա. Ստեպանովը և ռազմական նախարարի օգնական Գ.

Ա. Յակուբովիչը:

Նիստը բացվեց ժամը 21-45-ին:

Նիստին մասնակցում էր պետական վերահսկիչ Ի. Վ. Գորդեևը:

I Լսեցին - Արտաքին գործերի նախարարի կողմից ներկայացված պատերազմի իրավունքով գրավված Թուրքիայի շրջանների գեներալ-կոմիսարի ղեկավարման դրույթների նախագիծը:

Որոշեցին – Պատերազմի իրավունքով գրավված Թուրքիայի շրջանների գեներալ-կոմիսարին փոխանցել հետևյալ ղեկավարման դրույթները՝

1. Չկանխորոշելով Հայաստանի աշխարհագրական և քաղաքական ապագա սահմանների հարցը, Ժամանակավոր կառավարությունը ներկայումս պատերազմի իրավունքով գրավված Ասիական Թուրքիայի շրջաններից բուն հայկական է համարում Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները:

2. Երկրի տնտեսության զարգացման շահերից ելնելով, ինչպես նաև հանուն արդարության և հայերի իրավունքների վերականգնման, որոնք կոտորածով և տեղահանությամբ ճնշվում են Թուրքիայի կողմից, հարկավոր է անհապաղ միջոցներ ձեռնարկել այդ շրջանները հայերով վերաբնակեցնելու ուղղությամբ, որոնք ընթացիկ պատերազմի և դրան նախորդող տարիներին տեղափոխվել են Ռուսաստանի սահմանները:

Նույն ձևով չպետք է որևէ արգելքներ դրվեն նախկին թուրքահպատակ այն հայերի առջև, որոնք ընդհանրապես ցանկանում են վերադառնալ և բնակվել այդ շրջաններում:

Ելնելով պատերազմի անավարտ լինելու հանգամանքից, ռազմաճակատի գծի հնարավոր տատանումներից և պատերազմի ու տրանսպորտային դժվարություններից, գեներալ-կոմիսարին առաջարկվում է բնակեցումն իրականացնել աստիճանաբար և ծրագրով, որը նախապես կհամաձայնեցվի հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

3. Ինչ վերաբերում է թուրքերին, քրդերին և լազերին, ապա նպատակ չունենալով որևէ դժվարություններ առաջացնել նշված շրջաններում մնացած կամ Ռուսաստանի սահմաններն անցած այդ ազգերի ներկայացուցիչների համար, ցուցաբերելով նրանց օրինական ուշադրություն և հովանավորություն, այնուամենայնիվ, բանակի ռազմական ապահովման և հնարավոր ազգային բարդությունները կանխարգելելու նպատակով հարկավոր է այսուհետ, մինչև հատուկ կարգադրությունը, թույլ չտալ նրանցից որևէ մեկի վերադարձը, ով-

քեր հեռացել էին թուրքական զորքերի հետ:

4. Վարկերի հարցով, որոնք հարկավոր են երկրի և գաղթականների հարցերի կարգավորման, այդ շրջաններում գտնվող բանակին պարենով ապահովելու նպատակով, հարկավոր է զեկուցագրով դիմել Ժամանակավոր կառավարությանը:

Ներկայիս հանձնարարականի իրականացման հետ կապված ձեռնարկվող միջոցառումների մասին հարկավոր է ժամանակ առ ժամանակ զեկուցել Ժամանակավոր կառավարության նախագահին, ինչպես նաև արտաքին գործերի և ռազմական նախարարներին:

II Լսեցին – Որոշ պաշտոնատար անձանց նշանակումների մասին:

Որոշեցին – Նշանակել՝ 1) Կովկասյան ռազմաճակատի մատակարարման գլխավոր վարչության պետ գեներալ-լեյտենանտ Պյոտր Իվանի Ավերյանովին Թուրքահայաստանի գեներալ-կոմիսարի պաշտոնին, ելնելով Ժամանակավոր կառավարության 1917թ. ապրիլի 26-ի որոշումից Թուրքիայից պատերազմի իրավունքով գրավված տարածքների մասին, բողնելով նրան զբաղեցրած պաշտոնին և 2) Բժիշկ Հակոբ Քրիստափորի Զավրիևին նշակել պատերազմի իրավունքով գրավված Թուրքահայաստանի շրջանների գեներալ-կոմիսարի օգնական:

Նիստը փակված է ժամը 1.45:

Վարչապետ՝ իշխան Լվով:
Նախարարներ՝
ռազմական նախարարի փոխարեն գնդապետ Յակուբովիչ
արդարադատության – Պ. Պերեվերզև
արտաքին գործերի – Մ. Տերեշչենկո
հաղորդակցության ուղիների – Ն. Նեկրասով
առևտրի և արդյունաբերության
նախարարի փոխարեն - Վ. Ստեպանով
ժողովրդական լուսավորության - Ա. Մանույլով
ֆինանսների –
երկրագործության – Վ. Չերնով
փոստի և հեռագրատան –
աշխատանքի -
պարենավորման - Ա. Պեշեխոնով
պետական խնամակալության - իշխան Դ. Շախովսկի
Սրբազան Սինոդի օբեր-դատախազ -

Պետական վերահսկող –
Ժամանակավոր կառավարության գործերի
կառավարիչ – (ստորագրությունն անընթեռնելի է)

Նշում:
Ուղղարկված է պատճենահանման:
Հրապարակման՝ 25.V:
Կատարված է՝ հունիսի 3:

ГАРФ, ф. 1779, оп. 2, д. 4, л. 13-14.
ГАОТОМС, т. 1, с. 298-300.

№ 110

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՏԵՐԵՇՉԵՆԿՈՅԻՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԻՑ

Փարիզ,
31 մայիսի 1917թ.

...Նվաստացուցիչ կլիներ ձեռք մեկնել ինչ-որ Թալեաթի՝ չլսված պաշտոնական ջարդերի կազմակերպչին, կամ թուրքերին, որոնք յոթ դար շարունակ քրիստոնյաների ջարդեր են կազմակերպել: Բոլոր հայերը հույս ունեն, որ Ռուսաստանը կլինի արևմտահայերի ազատարարը և գոհացում կտա նրանց ազգային բաղձանքներին:

Գեներալ-լեյտենանտ Կամսարական

АВПР, Политархив, д. 3484.
ГАОИ, стр. 488.

№ 111

ՌՈՒՍՆԵՐԻ ԿՈՉՄԻՑ «ՊԱՏԵՐԱԶՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՐԱՎՎԱԾ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՅԼ ՄԱՐԶԵՐԻ ԳԵՆԵՐԱԼ - ԿՈՄԻՍԱՐ» Պ. ԱՎԵՐՅԱՆՈՎԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ԱՅԴ ՄԱՐԶԵՐԻ ՌԱԶՄԱ - ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Թիֆլիս,
31 օգոստոսի 1917ք.

1916ք. հունիսի 5-ին Գերագույն իշխանության կողմից հաստատված և Գերագույն գլխավոր հրամանատարի շտաբի պետի նույն թվի N 739 հրամանով (կցվում է սույնին) հրատարակված «Ժամանակավոր կանոնադրությունը Թուրքիայից պատերազմի իրավունքով գրավված մարզերի կառավարման մասին»:

Համաձայն այդ «Ժամանակավոր կանոնադրության», Թուրքիայի մարզերից՝ մեր զորքերի կողմից դրանք գրավելուն զուգընթաց, պետք է կազմավորվեին նախ տեղամասեր, այնուհետև, մի քանի տեղամասերի միավորմամբ՝ օկրուգներ, որոնք, իրենց հերթին պետք է միացվեին տարածքային ավելի մեծ միավորումներում՝ ռազմական նահանգապետություններում:

Հասարակական կարգի և անվտանգության պահպանման համար տեղամասերի և օկրուգների պետերի վարչություններին կից սահմանված էր պահել ռազմա-ոստիկանական պահակախումբ հետևյալ քանակով՝ տեղամասում՝ 29 հեծյալ և 60 հետիոտն պահնորդներ (այդ թվում և պետերն՝ ի դեմս վախմիստրի և ուրյադնիկի): Պահակախմբի անմիջական պետը յուրաքանչյուր օկրուգում՝ օկրուգի պետի՝ ոստիկանական գծով օգնականը:

Ռազմա-ոստիկանական պահակախմբի համալրման համար, Թուրքիայից գրավված մարզերի նախկին ռազմական գեներալ-նահանգապետի կողմից, ներքին գործերի նախարարի համաձայնությամբ, Լեհական բազավորության և Հյուսիս-Արևմտյան երկրամասի՝ մեր զորքերից դատարկված վայրերից բերվեցին ոստիկանական պահնորդներ: Սակայն «Ժամանակավոր կանոնադրությունը» կից հաստիքներով նախատեսված ոչ մեծ ռոճիկների պատճառով (վախմիստրին՝ տարեկան 840 ռուբլի, ուրյադնիկներին՝ ավագին – 720 ռուբլի, կրտսերին – 540 ռուբլի, պահնորդներին՝ ավագին – 480

ռուբլի, կրտսերին – 420 ռուբլի), գեներալ-նահանգապետության ռազմա-ոստիկանական պահակախմբում ընդունվել ցանկացողներ եղան մոտ 1000 մարդ: Մինչդեռ 1917թ. սկզբին կազմավորված օկրուգների և տեղամասերի թվին համապատասխան, ըստ հաստիքների, անհրաժեշտ էր ունենալ մոտ 9000 մարդուց բաղկացած պահակախումբ:

Ելնելով շատ դժվար կացությունից, Թուրքիայից գրավված մարզերի նախկին գեներալ-նահանգապետը դիմեց Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարին՝ զինվորական մասերից իրեն տրամադրելու այնքան զինվոր, որքանով հնարավոր կլիներ համալրել ռազմա-ոստիկանական պահակախմբի լրիվ հաստիքը: Այդ խնդրանքը հիմնավորվում էր նրանով, որ գործող Կովկասյան բանակի մերձավոր թիկունքը հանդիսացող Թուրքիայից գրավված մարզերում կարգի և անդորրության պահպանումը համընկնում է հենց նույն բանակի անմիջական շահերին:

Այնուհանդերձ, զորքերի համալրման համար մարդկանց ընդհանուր պակասի պատճառով, Գլխավոր հրամանատարը հնարավոր համարեց գեներալ-նահանգապետի տրամադրության տակ դնել միայն ծառայության 2000 ռազմիկների:

Այդպիսով, 1917թ. մարտ ամսին Թուրքիայից գրավված մարզերի ռազմա-ոստիկանական պահակախմբում հաշվվում էր հազիվ 3000 մարդ (2000 զինվորներ և մոտ 1000 պահնորդ), այսինքն՝ հաստիքային թվի 1/3-ը միայն:

Հեղափոխության* սկզբից բոլոր նախկին ոստիկանական պահնորդները տեղական հեղափոխական կազմակերպությունների կողմից հեռացվեցին Թուրքիայից գրավված մարզերից: Այնուհետև, մարզերից: Այնուհետև, մարզերում մնացած ռազմիկների որոշ մասը ընդմիշտ արձակվեց ծառայությունից 43-ամյա սահմանային տարիքի պատճառով, իսկ նշանակալի մասը ուղարկվեց արձակուրդ՝ դաշտային աշխատանքների: Մարզերում այժմ մնացել է 1000-ից պակաս մարդ:

Պահպանության նման թուլացման հետևանքով հաճախակի դարձան քաղաքների և գյուղերի խաղաղ բնակչության վրա ավազակախմբերի հարձակումները, անասունների հափշտակումները, բնակիչների ցանքսի և գույքի ոչնչացումը, տրանսպորտի և գումակների վրա հարձակումները, վերջապես՝ ռուսական և տեղական ադմինիստրացիայի աստիճանավորների ու բնակիչների սպանությունները:

---

* Խոսքը վերաբերում է Փետրվարյան հեղափոխությանը:

Ավազակությունների հատկապես տուժում է նախկին Բայազետի սանջակի հայ բնակչությունը, որը Արարատի կողմից ենթարկվում է քրդական հրոսակախմբերի չդադարող հարձակումներին:

Ռուսական կառավարությունը, որը խնդիր ունի նվաճված մարզերում կարգ ու հանգստություն մտցնելու, չի կարող հաշտվել նման իրավիճակի հետ:

Միանգամայն անհրաժեշտ է հնարավորինս երկրում կազմակերպել բնակիչների կյանքի և գույքի կայուն պահպանություն, անվտանգ երթևեկություն՝ ճանապարհների վրա և հակահարված տալ ավազակախմբերի ասպատակություններին:

Այժմ գոյություն ունեցող ռազմիկներից բաղկացած պահպանությունը չի բավարարում այդ խնդրի կատարմանը ոչ իր քանակով, ոչ որակով: Եթե նույնիսկ դաշտային աշխատանքներից զինվորները վերադառնան իրենց օկրուգները (ինչը քիչ հավանական է), այդ դեպքում ևս պահակախումբը հազիվ հասնի 1500 մարդու, որը, իհարկե, միանգամայն անբավարար է: Բացի դրանից, այդ ամբողջ պահակախումբը հետիոտն է, մինչդեռ մարզերում, ըստ ծառայության բնույթի, պետք է ունենալ 50 տոկոսից ոչ պակաս լավ վարժեցված հեծյալներ: Հույս դնել զորքերից զինվորներ գործուղելու միջոցով կազմը համալրելու վրա, ըստ Կովկասյան բանակի հրամանատարության հայտարարության, անհնար է, քանի որ համալրված չեն նույնիսկ բանակի մարտական միավորումները: Դեռ ավելին, գրավված մարզերը գործուղված ռազմիկներին անհրաժեշտ է նայել որպես ժամանակավոր օգտագործման վերցվածների, որոնք առաջին հնարավորության դեպքում ենթակա են բանակ վերադառնալուն՝ նրա ուղղակի մարտական նշանակության միավորումների համալրման դժվարությունների պատճառով: Վերջապես, անհրաժեշտ է գիտակցել, որ ընդհանուր ավերածությունը և զինվորական զանգվածի որակական կազմի անկումը անդրադարձել են նաև օկրուգներում միլիցիայի պարտականություններ կատարող ռազմիկների վրա: Գրավված մարզերի զգալի տարածության վրա ոչ մեծ խմբերով ցրված, խուլ վայրերում ապրող հին ռազմիկները ծուլացել են, շփացել և մեծ մասամբ կորցրել իրենց զինվորական տեսքն ու ոգին: Ստեղծել այդ տարրերից ուժեղ, շարժուն, մարտունակ միլիցիա, այն էլ կարճ ժամանակում՝ միանգամայն անհնար է:

Բոլոր այս հանգամանքներն անհրաժեշտ են դարձնում գրավված մարզերում պահպանությունը կազմակերպել բոլորովին նոր հիմունքներով, այն է՝ առավելապես Ռուսաստանին և բանակին հավատարիմ տեղական բնակիչներից: Անմիջապես շահագրգռված

լինելով ավազակախմբերի հարձակումներից և ավերածություններից իրենց հայրենի օջախների պահպանությամբ, այդ միլիցիոներները կցուցաբերեն առավելագույն եռանդ: Բացի դրանից, տեղական պայմանների և լեզվի իմացությունը կարևոր դեր կխաղա նրանց գործունեության մեջ:

Տեղացիներից միլիցիան համալրելու սկզբունքի կիրառումը բնավ չի խանգարի նրա համալրմանը ռուս միլիցիոներներով նույնպես և վերջիններիս՝ որպես հրահանգիչների, առկայությունը նույնիսկ շատ ձեռնտու կլինի:

Այնուհետև պետք է նկատի ունենալ, որ այն ռոճիկով, որը նախատեսված է այժմյան գործող հաստիքներով (տես երկրորդ էջը)* ներկայիս քանկության պայմաններում ապրել հնարավոր չէ: Այդպիսի դրույքներով միլիցիոներներին ծառայության վերցնելու փորձերը միանգամայն անհաջող դուրս եկան: Ուստի ավելի իրական է թվում ունենալ փոքրաքանակ, բայց լավ վարձատրվող միլիցիա, որն, իր հերթին, հնարավորություն կտա միլիցիոներներին ծառայության կանչել որոշակի ընտրությամբ:

Այնուհետև, անդրադառնալով Թուրքիայից գրավված մարզերում միլիցիայի կազմակերպման ընդհանուր նախագծին, անհրաժեշտ է նշել, որ այդ երկրամասի ռազմավարական, քաղաքական և աշխարհագրական պայմանների բերումով, նրա միլիցիայի կառուցվածքը կտարբերվի եվրոպական Ռուսաստանի նույնատիպ միլիցիայից, գլխավորապես իր կիսառազմական բնույթով:

Միլիցիայի վրա դրվող խնդիրների բազմազան լինելը ստիպում է ունենալ նրա մի քանի տեսակները: Այսպես, քաղաքային և գյուղական բնակավայրերում, հասարակական կարգի և անդորրի պահպանման համար, անհրաժեշտ է գլխավորապես հետիոտն միլիցիա՝ իր խնդիրներով և տիպով մոտ Ռուսաստանի քաղաքային և գավառային միլիցիային: Իսկ ճանապարհային երթևեկության հսկողության, ինչպես նաև փոխադրումներին, փոստին և մարդկանց ուղեկցելու համար պետք ունենալ միանգամայն շարժուն միլիցիա, այինքն՝ բացառապես հեծյալ: Այնուհետև, թշնամի ցեղերի և ավազակախմբերի դեմ զինված պայքար մղելու, նրանց հարձակումները խափանելու, հավասարապես նաև այդ հրոսակախմբերի և ցեղերի կուտակման վայրերը կամ թաքստոցները էքսպեդիցիաներ ուղարկելու համար անհրաժեշտ են արդեն ոչ մեծ ջոկատներ՝ մասամբ հեծյալ, մասամբ հետիոտն՝ ընդունակ գործելու զինվորական մասերի

* Ծանոթագրությունը բնագրինն է:

կանոններով: Վերջապես, անհրաժեշտ է ծառայության ընդունված միլիցիոներների պատրաստման համար ունենալ մշտական անձնակազմ, որը, միաժամանակ, անհրաժեշտության դեպքում, ըստ հանգամանքների, հանդիսանար ընդհանուր ռեզերվ՝ ուժեղացնելու միլիցիայի վերը թվարկած բոլոր տեսակներն այս կամ այն վայրում:

Այդ նկատառումներով նախատեսված է Թուրքիայից գրավված մարզերում հաստատել միլիցիայի չորս տեսակ՝ տեղական անվտանգության, հաղորդակցության ուղիների, ուղեկալային և ռեզերվային:

Մինչև ըստ տարածքների միլիցիայի բաշխմանն ու նրա կազմակերպման հետագա մանրամասներին անցնելը, անհրաժեշտ է նշել, որ Թուրքիայից գրավված մարզերի ամբողջ տարածքը, իր ազգագրական, քաղաքական և աշխարհագրական դրությամբ, կարող է բաժանվել չորս մարզերի.

1. Վանի մարզն ընդգրկում է Վանի վիլայեթը նրա հին թուրքական սահմաններով՝ միացնելով ներկայիս Բայազետի և Դիադինի օկրուգները՝ մինչև Թիշլի-չայ գետն արևմուտքում: Այդ սահմաններում Վանի մարզը ներառում է 52 000 երկսեռ բնակիչ: Հարևանությունը թուրքական և պարսկական Քրդստանի հետ այդ մարզն, ավազակային ասպատակությունների տեսակետից, դնում է առանձնահատուկ վտանգավոր դրության մեջ:

2. Խնուսի մարզն ընդգրկում է նախկին Բայազետի օկրուգի արևմտյան մասը, Թիշլի-չայից արևելք, Խնուսի կազայությունը նրա հին սահմաններով և նախկին Բիթլիսի վիլայեթի՝ մեր կողմից գրավված ամբողջ մասը: Այդ սահմաններում Խնուսի մարզը ներառում է մոտ 39 000 երկսեռ բնակիչ:

3. Էրզրումի մարզն ընդգրկում է նախկին Էրզրումի վիլայեթը՝ առանց Բայազետի սանջակի արևմտյան մասի և ամբողջ Խնուսի կազայության, նաև առանց ներկայիս Թորթումի, Մելոյի, Իսպիրի և Բայբուրթի օկրուգների: Մարզն ունի ընդամենը 106 000 երկսեռ բնակիչ: Այնպիսի խոշոր վարչական կենտրոնի առկայությունը մարզում, ինչպիսին Էրզրումն է (25 հազար բնակիչ), ինչպես նաև բանակը բազայի հետ կապող բարեկարգ ուղիները, Էրզրումի մարզին տալիս են առանձնապես կարևոր նշանակություն:

4. Պոնտական մարզն ընդգրկում է Տրապիզոնի վիլայեթի՝ ռուսական զորքերի կողմից գրավված արևելյան մասը (Խոմուրգյանի, Ռիզայի և Աբթինեի օկրուգները) և Էրզրումի վիլայեթի մի մասը (Բայբուրթի, Իսպիրի, Մելոյի և Թորթումի օկրուգները): Այդ սահմաններում երկսեռ բնակչությունը կազմում է 170 000 մարդ:

Թվարկված մարզերից յուրաքանչյուրում նախատեսված է կազմակերպել մարզային ինքնուրույն միլիցիա՝ նրա կառավարումը հանձնելով մարզի կոմիսարին ենթարկվող մարզային միլիցիայի պետին: Մարզային միլիցիան ստորաբաժանվում է վերը նշված չորս տեսակների՝ տեղական անվտանգության միլիցիայի, հաղորդակցության ուղիների միլիցիայի, մշտական ուղեկալների միլիցիայի և միլիցիայի ռեզերվի: Միլիցիայի այդ առանձին տեսակների կառավարումը հանձնվում է մարզային միլիցիայի պետի օգնականներին, որոնք պետք է լինեն չորսը: Միլիցիոներները խմբավորվում են տասնյակներում, կիսահարյուրյակներում և հարյուրյակներում՝ տասնապետների, հիսնապետների և հարյուրապետների հրամանատարությամբ:

Հաղորդակցության ուղիների միլիցիան, ինչպես ասվեց, պետք է ամբողջությամբ լինի հեծյալ. մշտական ուղեկալների և ռեզերվի միլիցիաներում նախատեսված է ունենալ հեծյալ միլիցիոներներ կիսով չափ, իսկ տեղական անվտանգության միլիցիայում՝ կազմի երրորդի չափով:

Մարզային միլիցիայի պետին կից նախատեսված է հաստատել ոչ մեծ գրասենյակ:

Վերը նշված մարզերից յուրաքանչյուրում նախատեսված է պահել, միջին թվով, միլիցիայի ներքոհիշյալ ծառայողներ՝

Միլիցիայի պետ.....1
Նրա օգնականներ.....4
Հարյուրապետներ.....9
Հիսնապետներ.....15
Տասնապետներ.....106
Միլիցիոներներ.....1174

Ընդամենը՝ 1309, չհաշված գրասենյակային ծառայողներին:

Այդ թվից նախատեսված է յուրաքանչյուր մարզում ունենալ, միջինը, հեծյալներ՝ 715 մարդ, հետիոտն՝ 594 մարդ:

Այսպիսով, բոլոր չորս մարզերում միլիցիայի ծառայողների ամենամեծ թիվը արտահայտվում է հետևյալ կերպ. միլիցիայի պետեր՝ 4, նրանց օգնականներ՝ 16, հարյուրապետներ՝ 36, հիսնապետներ՝ 60, տասնապետներ՝ 424 և միլիցիոներներ՝ 4696, ընդամենը՝ 5236 մարդ: Այդ թիվը գրեթե կիսով չափ փոքր է 1916թ. հունիսի 5-ի «Ժամանակավոր կանոնադրությամբ» նախատեսված ռազմա-ոստիկանական պահակախմբի ծառայողների թվից:

Անհրաժեշտ է նաև նշել, որ Գերագույն գլխավոր հրամանատարի շտաբի պետի 1916թ. սեպտեմբերի 6-ի N 1250 հրամանով հայտարարված 1916թ. սեպտեմբերի 6-ի հատուկ կանոնադրությունը

թույլատրում էր Թուրքիայից զրավված մարզերի քաղաքներում և այլ խոշոր բնակավայրերում ունենալ 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի հատուկ քաղաքային ոստիկանական վարչություններ՝ համաձայն այդ կանոնադրության NN 5, 6 և 7 հաստիքների: 1-ին և 2-րդ կարգի վարչությունների գլուխ կանգնած էին ոստիկանապետերը, իսկ 3-րդ կարգի վարչության գլուխ՝ պրիստավը: Իսկ միլիցիայի ցածրաստիճան ծառայողների թիվը քաղաքներում որոշվում էր այդ հաստիքներով բնակչության համամասնությամբ, հետևյալ կարգով. 1 պրիստավը օգնականի հետ՝ 25 հազար բնակչին, մեկ ոստիկանական թաղային հսկիչ՝ 6 հազար և 2 քաղաքապահ՝ մեկ հազար բնակչին:

Այդ հաստիքները գործնականում կիրառելիս առաջացան մեծ դժվարություններ: Թուրքիայից զրավված մարզերում կա միայն մեկ խոշոր բնակավայր՝ 25 հազար բնակիչ ունեցող Էրզրում քաղաքը, որի համար և կիրառվեց N 5 հաստիքը: Այնուամենայնիվ, մյուս քաղաքները և ավելի կարևոր վարչական կենտրոններն ունեն միջին հաշվով 3-5 հազար բնակիչ (Ռիզա, Վան, Բայբուրթ, Հասան-կալա և այլն): Ուստի NN 5 և 6 հաստիքները ձևականորեն չէին կարող կիրառվել նրանց նկատմամբ, իսկ N 7 հաստիքով ամբողջ միլիցիան այդպիսի քաղաքում պետք է կազմվեր մեկ պրիստավից և 6-10 քաղաքապահներից:

Իհարկե այդպիսի պահպանությունը կլիներ միանգամայն անբավարար, որքանով որ նշված քաղաքները, չնայած այնքան էլ մեծ չեն բնակիչների թվով, բայց ցրված են բավականին մեծ տարածության վրա և, բացի դրանից, նրանց բնակչության մեջ կան շատ անհանգիստ տարրեր, որի հետևանքով ներքին անվտանգության պահպանումն այդ բնակավայրերում այնքան էլ հեշտ խնդիր չի թվում: Այդ նկատառումներով Վան և Ռիզա քաղաքներում, հակառակ սահմանված չափի, կիրառվեց N 5 հաստիքը, որը, սակայն, այդ քաղաքների համար չափից ավելի մեծ եղավ:

Ինքնուրույն պահպանության սկզբունքը երկրամասի մի քանի քաղաքներում նպատակահարմար չի համարվում պահպանել հետագայում ևս՝ հանձնարարելով այդ պահպանությունը տեղական անվտանգության միլիցիայի կանոններով գործող հատուկ քաղաքային միլիցիային: Յուրաքանչյուր քաղաքում միլիցիայի կառավարումը հանձնվում է քաղաքային միլիցիայի պետին:

Միլիցիայի ստորին կազմում նախատեսվում է ունենալ՝ 5 միլիցիոներ յուրաքանչյուր հազար բնակչին, իսկ տասնապետներ և հիսնապետներ՝ ըստ միլիցիոներների թվի: Այդպիսով, 5 հազար բնակիչ ունեցող քաղաքում կլինի ծառայողների հետևյալ թիվը. միլիցիա-

յի պետը, նրա օգնականը, 3 տասնապետ և 25 միլիցիոներ, ընդամենը՝ 30 ծառայող, նախկին 7-11 մարդու փոխարեն:

Այդ հաշվով, յուրաքանչյուր քաղաք ապահովված կլինի միլիցիայի ծառայողների իսկապես անհրաժեշտ քվով և պահպանությունը կլինի բավականաչափ հուսալի:

Նախատեսված է ունենալ միայն հետիոտն քաղաքային միլիցիա: Այդպիսի միլիցիայի յուրաքանչյուր վարչությանը կից պետք է լինի ոչ մեծ գրասենյակ:

Կից ներկայացվող «Պատերազմի իրավունքով գրավված Թուրքահայաստանի և Թուրքիայի այլ մարզերի միլիցիայի ժամանակավոր կանոնադրության» նախագծում մանրամասն շարադրված են միլիցիայի կազմն ու նրա բաշխումը, միլիցիայի ծառայողների նշանակման և արձակման կարգը, միլիցիայի տարբեր մարմինների իշխանության աստճանն ու իրավասության շրջանակները, ծառայողների ենթակայության, հարաբերության և նրանց պատասխանատվության կարգը:

Այդ նախագիծը մշակելիս հիմք է ընդունվել Ռուսաստանի միլիցիայի մասին ընդունված «Կանոնադրությունը»: Սակայն հարկ եղավ հրաժարվել Թուրքիայից գրավված մարզերի նկատմամբ այդ «Կանոնադրության» որոշ կետերը կիրառելուց, նկատի ունենալով ռազմական գործողություններից կիսով չափ ավերված պատերազմի առաջավոր քատերաբեմ հանդիսացող երկրամասի առանձնահատկությունները: Երկրամասի տարրացեղ բնակչությունը քիչ է զարգացած. եվրոպական իմաստով տեղական ինքնավարություն գոյություն չունի. տարածությունը մեծ է, բնակավայրերը՝ հազվադեպ և կիսով չափ ավերված, իսկ նրանց միջև հաղորդակցությունը՝ դժվարացած տեղանքի լեռնային բնույթով և բարեկարգ ճանապարհների բացակայությամբ: Բոլոր այդ պատճառները դրդեցին միլիցիային տալ այն կիսառազմական բնույթը, որի մասին արդեն զեկուցվել է վերևում:

Միլիցիայի ծառայողների թվի մասին մանրամասն ցուցումները և պետության կողմից նրանց տարբեր տեսակի կարիքների ապահովման աստիճանը տրված են «Ժամանակավոր կանոնադրության» նախագծին առդիր NN 13, 14 և 15 հաստիքներում: Այդ հաստիքները ներկայացնում են միլիցիայի վրա պետական ծախսերի ամենամեծ չափը սահմանող միջին նորման: Իսկ իրականում միլիցիայի ծառայողների թիվը մարզերում և քաղաքներում կարող է փոքր-ինչ տարբերվել հաստիքներից, որքանով որ միլիցիայի «Ժամանակավոր կանոնադրության» նախագծին համաձայն Գեներալ-

կոմիսարին իրավունք է վերապահված ուժեղացնել պահպանությունն այս կամ այն քաղաքում կամ մարզում՝ ի հաշիվ մյուսների:

Անցնելով, վերջապես, ներկա բարեփոխման ֆինանսական կողմին, անհրաժեշտ է նշել, որ պահանջվող պետական ծախսերը ստորաբաժանվում են՝

Մշտական ծախսեր – (կլորացված՝ մինչև լրիվ հազար ռուբլու) կարող են մոտավորապես հաշվվել.

ա) մարզային միլիցիայի տարեկան ռոճիկ.....7 071 000

բ) քաղաքային միլիցիայի տարեկան ռոճիկ.....402 000

Ընդամենը՝.....7 473 000ռ.

Միանվագ ծախսեր – (նույնպես կլորացված՝ մինչև լրիվ հազար ռուբլու) արտահայտվում են մոտավորապես հետևյալ թվերով՝

ա) մարզային միլիցիային.....1 471 000ռ.

բ) քաղաքային միլիցիային.....6 000ռ.

Ընդամենը՝.....1 477 000ռ.

Այդ ծախսերի մանրամասն հաշվարկը սույնին կից է:*

Դատելու համար, թե որքանով է սույն բարեփոխումը ծանրանում պետության ֆինանսների վրա, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ ներկայումս գոյություն ունեցող հաստիքներով ոստիկանական պահակախմբի ռոճիկը պահանջում էր տարեկան ծախսեր (կլորացված մինչև հազար ռուբլի).

ա) 29 օկրուգում.....6 276 000ռ.

բ) քաղաքներում.....619 000ռ.

Ընդամենը՝.....6 895 000ռ.

Այդպիսով, պետության նոր մշտական ծախսը տվյալ միջոցառման վրա կարտահայտվի ընդամենը 578 000 ռուբլի գումարով, իսկ միանվագը, ինչպես վերևում ցույց տրվեց՝ 1 477 000 ռուբլի:

Անհրաժեշտ է, սակայն, նկատի ունենալ, որ նախատեսվող բարեփոխումը հանդիսանում է պատերազմի իրավունքով գրավված Թուրքիայի մարզերի վարչության մասին 1916թ. հունիսի 5-ի «Ժամանակավոր կանոնադրության» ընդհանուր վերանայման միայն մի մասը: Ներկայումս նախատեսվում է հիշյալ մարզերի վարչության արմատական վերակառուցումը կենտրոնական վարչության, մարզերի, օկրուգների և տեղամասերի հաստիքների համապատասխան փոփոխություններով՝ ծախսերի էական կրճատման իմաստով: Այդ կրճատման ծախսերի մեծությունն այժմ դեռևս չի կարող ստույգ որոշվել, բայց, համենայն դեպս, այդ բաժնի ծախսերի գծով պետու-

* Հաշվարկը չի ներկայացվում:

թյան խնայողությունները նշանակալիորեն կծածկեն միլիցիայի նոր ծախսերը:

Բանակի մերձավոր թիկունքային շրջանի միլիցիայի ծախսերը, որի վրա տարածվում է պատերազմական ժամանակի զորքի դաշտային կառավարման կանոնադրությունը, ենթակա են հատկացման՝ Կովկասյան ռազմաճակատի բանակների գլխավոր հրամանատարի տնօրինած ռազմական ֆոնդից բաց թողնվող վարկերի հաշվին:

Եզրակացություն. – Վերը շարադրվածի հիման վրա անհրաժեշտ է, որ

1. Պատերազմի իրավունքով Թուրքիայից գրավված մարզերի կառավարման մասին «Ժամանակավոր կանոնադրության» (1916թ. հրաման., ժողով. էջ...)* առջեր N 1 և N 2 հաստիքներով նախատեսվող ռազմա-ոստիկանական պահակախումբը լուծարվի:

2. Դրա փոխարեն պատերազմի իրավունքով գրավված Թուրքահայաստանի մարզերում և Թուրքիայի այլ մարզերում հիմնվի միլիցիա՝ ըստ սույնին կցվող «Ժամանակավոր կանոնադրության» և հաստիքների:

3. 2-րդ կետում նշված միջոցառման պետական ծախսերը պետք է կատարվեն այն հատկացումների հաշվին, որոնք պետական գանձարանից ռազմական ֆոնդի գծով տրամադրվում են Կովկասյան ռազմաճակատի զորքերի Գլխավոր հրամանատարին:

Շարադրվածը ներկայացնում եմ Ժամանակավոր կառավարության ուշադրությանը:

Գեներալ-կոմիսար՝ Պ. Ավերյանով

Շտաբի պետի պաշտոնակատար
գնդապետ՝ (ստորագրություն)

Առարկություն չունեմ
Ավագ վերահսկիչ՝ (ստորագրություն)

ԼԳՎՍԱ, ֆ. 2003, оп. 4, д. 19, лл. 172-178, (Коллекция микрофильмов).

---

* Բնագրում այդպես է:

№ 112

Ա. Կ. ՋԻՎԻԼԵԳՈՎԻ ՃԱՌԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

20 նոյեմբերի 1917թ.

Պարոնայք, ժամանակավոր խորհրդի հայկական խմբի կողմից ես լիազորված եմ արտաքին գործերի նախարարի ճառում նշել մի որոշակի բացթողում, որը վերաբերում է Թուրքահայաստանի դրությանը: Հայ ժողովուրդը առանց կուսակցությունների ու քաղաքական ուղղությունների տարբերության ակնկալում էր արտաքին գործերի նախարարից լսել, որ ռուսական արտաքին քաղաքականությունն այսուհետ վճռականորեն հրաժարվում է հայ ժողովրդի նկատմամբ հին վերաբերմունքից: Հայ ժողովուրդը դա չլսեց արտաքին գործերի նախարարի ճառում, և հայ ժողովուրդը դա չի կարող ընկալել այլ կերպ, քան արտաքին գործերի նախարարության ցանկությունը հայ ժողովրդի նկատմամբ շարունակելու այն նույն քաղաքականությունը, որը ծաղկում էր նախքան հեղափոխությունը:

Հին ռուսական կառավարության քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ կայանում է նրանում, որ Թուրքիան Ռուսաստանի հետ բոլոր բախումներում և նույնիսկ այն պահերին, երբ ոչ մի բախում Ռուսաստանի հետ գոյություն չունի, պետք է բուլացած լինի: Թուրքիայի բուլացման քաղաքականությունն ընդունում էր տարբեր ձևեր, կախված նրանից, թե Ռուսաստանը որքանով էր իրեն ուժեղ զգում: Այս քաղաքականությունը ճիշտ հակառակ էր այն քաղաքականությանը, որը վարվում էր Անգլիայի կողմից մինչև Էդուարդ VII-ը, մինչև Գերմանիայի ռազմավարական շրջափակման գաղափարի առաջացումը, որն սկսվեց Թուրքական կայսրությունում առաջին մեծ արտոնություններ ստանալու պահին: Հին Անգլիայի և նոր Գերմանիայի քաղաքականությունը կայանում էր նրանում, որպեսզի Թուրքիան պահել որպես միացյալ տնտեսական համակարգ, այնպիսի տնտեսական համակարգ, որի նկատմամբ կարող էին օգտագործվել անգլիական և գերմանական կապիտալի ուժերը: Ռուսաստանը, տնտեսական առումով թույլ լինելով, Ռուսաստանը, որը երբեք վստահ չէր այն բանում, որ իր արտաղրական ուժերը կգտնեն բավարար կիրառում Թուրքիայում, չէր կարող վարել նմանատիպ քաղաքականություն: Նրա սեփական քաղաքականությունը կայանում էր նրանում, որ թուլացնի Թուրքիային, որպես քաղաքական մի-

ասնություն և, հնարավորության սահմաններում, հասնել Թուրքիայի առանձին կտորների անջատմանը նրա տարածքից: Թե որքանով էր այս քաղաքականությունը հետևողականորեն վարվում հին իշխանության կողմից, երևում է նրանից, որ նույնիսկ այն պահերին, երբ ռուսական կառավարությունն ամեն կերպ պայքար էր տանում հեղափոխության դեմ, նույնիսկ այդ ժամանակ Ռուսաստանը պատրաստ էր աջակցել հեղափոխական և ազատագրական հոսանքները Թուրքական կայսրությունում, որպեսզի հասնի իր հիմնական նպատակի՝ Թուրքիայի թուլացման իրագործմանը:

Ալեքսանդր I-ը, Սրբազան միության ստեղծողն ու այդ գաղափարի գլխավոր ներշնչողը, Նիկոլայ I-ը՝ լեգիտիմիզմի սկզբունքների մարգարեներից մեկը, այնուամենայնիվ, պաշտպանում էին հունական հեղափոխությունը և ամեն կերպ աշխատում էին, որ Թուրքիայից ազատվելու իր ձգտման գործում Հունաստանը ստանա Ռուսաստանի աջակցությունն այս կամ այն ձևով: Ալեքսանդր I-ը հովանավորում էր զույգ Իպսիլանտիներին և հետերիստներին, Նիկոլայ I-ը ուղարկեց իր նավատորմը Նավարին: Այս քաղաքականությունը վերջին ժամանակներում ավելի ու ավելի էր հանդիպում ընդդիմության այն լայն միջազգային համակարգի մեջ, որն ստեղծվել էր XIX դարի կեսերից սկսած: Եվ այն պահերին, երբ Ռուսաստանը չէր կարող հույս դնել այն բանի վրա, որ ուղղակի ուժով Թուրքիայից խլի նրա տարածքի այս կամ այն կտորը, Ռուսաստանը պաշտպանում էր ինքնորոշման ազատագրական ձգտումները Թուրքիայում: Այդպես էր վարվում ռուսական քաղաքականությունը Մակեդոնիայի նկատմամբ, այդպես էր վարվում նա նաև Հայաստանի նկատմամբ: Հայաստանի վերաբերյալ ռուսական այն տեսակետը, որ Հայաստանը պետք է լիներ ինքնավար, իր սկիզբը գտնում է 1877 թվականի պատերազմից: Սան-Ստեֆանոյի նախնական համաձայնագրում կար կետ, որտեղ խոսվում էր այն մասին, որ Հայաստանը պետք է ստանա վարչական ինքնավարություն: 1895թ. Ռուսաստանը այլ արևմտյան տերությունների հետ հարց բարձրացրեց այնպիսի լայն բարենորոգումների մասին, ինչը մոտ էր հայկական շրջաններին ինքնավարություն շնորհելուն: Վերջապես այս պահերից վերջինը 1914թ. հունվարի 26-ի արձանագրությունը, նույնպես բարենորոգումների հարցը դնում էր այնպես, որ խոսքը բացահայտ գնում էր ինքնավարության մասին:

Իսկ ինչպիսի՞ դեր էին խաղում հենց թուրքահայերը ռուսական կառավարության այս ամբողջ քաղաքական խաղում: Հայերը միշտ եղել են ռուս-թուրքական քաղաքականության զոհը: Զոհ լինե-

լով հենց Թուրքիայի ներսում, հայերն ակամայից պետք է զոհ դառնային նաև ռուսական քաղաքականության համար: Անընդհատ զոհաբերվելով թուրքական պետական անհրաժեշտության զոհասեղանին, դրվելով պանթուրքիզմի գաղափարի զոհասեղանի վրա, Հայաստանը, որը սեպի նման խրված էր թուրքական տարածքում, չարիք էր թուրքական կառավարության աչքի առաջ, և նա վերջին ժամանակներս ձգտում էր բնաջնջել հայ ժողովրդին, որպեսզի դրանով իսկ լուծվեն բոլոր տնտեսական և քաղաքական խնդիրները, որոնք կանգնած էին իր առջև: Թուրքիայի այս քաղաքականությունը բացարձակապես նույնն էր ինչպես հին թուրքական իշխանության, այնպես էլ նոր ղեկավարների՝ երիտթուրքերի մոտ, որոնք կարճատև տատանումից հետո վերադարձան այն ուղու վրա, որի վրա կանգնած էր Աբդուլ Համիդը:

Ռուսաստանի համար հայերը նույնպես եղել են զոհեր, Ռուսաստանը խաղում էր հայկական շահերով այնպես, ինչպես և թուրքական կառավարությունը: Դուք, երևի թե հիշում եք Կոստանդնուպոլսում ռուսական դեսպաններից մեկի՝ իշխան Լոբանով-Ռոստովսկու* չար արտահայտությունը, որն ասում էր, որ ինքը ամենևին դեմ չէ «Հայաստանին առանց հայերի»:

Դուք հիշում եք, որ դեռևս պատերազմից առաջ, երբ արտաքին գործերի նախարարն էր Սազոնովը, հայերի և Հայկական հարցի նկատմամբ ռուսական կառավարությունում կար տարօրինակ տատանում, որը թույլ չէր տալիս ռուսական կառավարությանը գտնել անհրաժեշտ քաղաքական գիծը: Եվ այժմ, այն ժամանակ, երբ իշխանությունը պատկանում է արդեն հեղափոխական կառավարությանը, մենք տեսնում ենք արտաքին գործերի նախարարության քաղաքականության մեջ հին արտաքին քաղաքականության մեթոդների արձագանքը, Ռուսաստանի հայ ժողովրդի հանդեպ ունեցած հին վերաբերմունքի արձագանքը: Դեռևս օրերս արտաքին գործերի նախարարությունում քննարկվում էր հայ ռազմագերիների ազատ արձակելու հարցը, որոնք գերի էին վերցվել թուրքական զորքերի կազմում: Այս հարցը առայժմ բացասաբար է լուծվել: Եվ դա այն ամենից հետո, երբ հայերը տվել են տասնյակ հազարավոր կամավորներ, այն ամենից հետո, երբ հայկական զինվորական մասերը ներկայիս դրությամբ կրում են ծանր ռազմավարական խնդրի՝ թուրք-պարսկաս-

---

* Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկին Թուրքիայում Ռուսաստանի դեսպան է եղել 1878-1879թթ., իսկ 1895-1896թթ. եղել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար:

կան քատերաբեմի և այնտեղ գտնվող անցումների պահպանության պատասխանատվությունը: Այժմ, երբ Ռուսաստանում փոխվել են կարգերը, հայերը չեն կարողանում ընկալել, թե ինչպես կարող է պահպանվել Հայաստանի նկատմամբ հին կառավարության քաղաքականության թեկուզև արձագանքը: Դեմոկրատական Ռուսաստանից հայերն սպասում են այլ վերաբերմունք, դեմոկրատական Ռուսաստանից հայերն սպասում են այլ քաղաքականություն Թուրքահայաստանի նկատմամբ: Հայերը հուսով են, որ դեմոկրատական Ռուսաստանը կկարողանա գնահատել և կկարողանա հասկանալ ինքնավարությանն ուղղված այն ձգտումները, որոնք բնորոշ են հայ ժողովրդին, և որոնք հայ ժողովուրդը հռչակում է այն ժամանակից ի վեր, երբ քաղաքանապես սկսեց գիտակցել ինքն իրեն: Դեմոկրատական Ռուսաստանն ապացուցեց, որ ինքն ի վիճակի է լուծել այն խնդիրները, որոնք հին կառավարության ուժերից վեր էին: Դեմոկրատական Ռուսաստանը լուծեց լեհական խնդիրը, որի լուծման վրա անօգուտ չարչարվում էր հին իշխանությունը: Եվ հայերը հույս ունեն, որ հայկական քաղաքականության մեջ, Հայկական հարցի վերաբերյալ ռուսական դեմոկրատիան կկարողանա ցույց տալ արտաքին գործերի նախարարությանը նոր ուղիներ:

Ռուս ժողովրդի պարտքը, ռուսական դեմոկրատիայի արժանապատվությունը հրամայականորեն պահանջում են, որ Հայաստանը չլինի թողնված բախտի քմահաճույքին, որպեսզի Հայաստանի վերաբերյալ տեսակետը, որպես փոքր ժողովուրդների ընտանիքի լիիրավ անդամ, մտցվի արտաքին գործերի նախարարության կողմից նրա քաղաքականության համակարգի մեջ:

Իսկ ինչպե՞ս են ներկայումս հայերը պատկերացնում իրենց ապագա քաղաքական կարգավիճակը: Հայերը կարծում են, որ Թուրքահայաստանի լրիվ ինքնորոշումն է Հայկական հարցի լուծման միակ հնարավոր ձևը: Հայերը գտնում են, որ ազատ Հայաստանն իր մեջ պետք է ներառի վեց հայկական վիլայեթները՝ Էրզրում, Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր, Սվազ և Հայաստանի այդ վեց վիլայեթներին պետք է միացվի Կիլիկիայի տարածքը: Դրա հետ մեկտեղ այդ վեց վիլայեթներից և Կիլիկիայից պետք է կտրվեն այն սահմանային մասերը, որոնք արհեստականորեն հայկական շրջաններին 1877թ. պատերազմից հետո, միացվել են այն նպատակով, որպեսզի փոխեն հայկական և ոչ հայկական բնակչության թվային հարաբերակցությունն ի վնաս հայերի:

Ի՞նչ ճանապարհով կարող է վերականգնվել ազատ Թուրքահայաստանի նոր տարածքը: Հայ ժողովուրդը գտնում է, որ ազա-

Հայաստանը պետք է կազմավորվի միջազգային համաժողովի որոշմամբ: Հայերը հույս ունեն, որ միջազգային վեհաժողովը, որը, վերջապես, վերջ կդնի այս պատերազմին, հայերին կտա անգնահատելի պարգև, որը մի ժամանակ Շվեյցարիան ստացել էր Վիեննայի վեհաժողովից՝ ընդմիշտ չեզոքություն, և որ այդ ընդմիշտ չեզոքությունը Հայաստանին երաշխավորված կլինի բոլոր տերությունների ընդհանուր որոշմամբ: Միջազգային երաշխիքն այս առումով հանդիսանում է միակ ապավենն այն բանի, որ այդ չեզոքությունը երբեք և ոչ մի պայմաններում չի կարող խախտվել: Սակայն հայերը քաջ գիտակցում են, որ հենց հիմա, պատերազմի ավարտից հետո այդ նոր քաղաքական կարգը ներմուծելը շատ դժվար գործ է, ուստի հայերը կարծում են, որ պատերազմի ավարտից հետո, պետք է մտցվի ինչ-որ մի միջանկյալ քաղաքական դրություն, որը նույնպես պետք է երաշխավորված լինի բոլոր տերությունների կողմից: Ի՞նչ ձևով պետք է ապահովվի այն բանի երաշխիքը, որ միջանկյալ այդ դրության ժամանակաշրջանում հայ ժողովուրդը կարողանա անցնել իր ազգային գործի կարգավորմանը և իր քաղաքական կյանքի կարգավորման գործին: Այդ հարցի միակ լուծումը կլիներ մանդատը, որը կտրվեր միջազգային վեհաժողովի կողմից որևէ տերության կամ տերությունների որևէ խմբի, և հայ ժողովուրդը կողջուներ, եթե տերությունը, որին կհանձնվեր այդ մանդատը, լիներ Ռուսաստանի հանրապետությունը:

Կարծում եմ, պարոնայք, որ չեմ հանդիպի ձեր կողմից առարկության, եթե ասեմ, որ հայ ժողովրդի հին դարավոր մշակույթը, Հայաստանի դերն առաջավոր Ասիայում, որպես եվրոպական մշակույթի պաշտպանի, որպես ղեմոկրատական հասարակարգի երկրի, որպիսին Հայաստանը եղել է նաև իր ազատ գոյության ժամանակ, երբ նա իրենից ներկայացնում էր անկախ պետություն, և այն ժամանակ, երբ ընկավ թուրքական լծի տակ, իրավունք է տալիս նրան, որ այժմ փոքր ազատ ժողովուրդների ընտանիքում Հայաստանը կարողանա գրավել իր արժանի տեղը: Մեկ այլ պատճառն այն բանի, որ Հայաստանը պետք է ստանա իր նոր ազատ կառավարումը, կայանում է նրանում, որ հանուն մշակույթի և հանուն ազատության, հանուն այն գաղափարների, որոնցով պաշտպանվում էին փոքր ազգությունների իրավունքները, որոնց համար էլ սկսվեց պատերազմը, Հայաստանը տվեց այդքան զոհ: Անհրաժեշտ չեմ համարում վերարտադրել ձեր առջև այն, ինչ կատարվեց 1915թ. Թուրքիայում, անհրաժեշտություն չկա վերականգնել ձեր աչքերի առաջ այն ցնցող դաժանությունները, այն աննկարագրելի բարբարոսությունները, որոնք կատարվել են

հայերի նկատմամբ: Անհրաժեշտություն չկա նշել նաև այն, որ Ռուսաստանի Հանրապետության սահմաններին անկախ Հայաստանի գոյությունը ոչ մի դեպքում սպառնալիք չի հանդիսանում Ռուսաստանի համար, որ ոչ մի անջատողական ձգտումների մասին ռուսական Հայաստանի կողմից խոսք անգամ լինել չի կարող: Խոսք անգամ լինել չի կարող երկու պատճառով՝ և՛ օբյեկտիվորեն և՛ սուբյեկտիվորեն. օբյեկտիվորեն՝ որովհետև երբեք անջատողականությունը չի առաջացել ուժեղ պետության մեջ, որի փոքր մասը ձգտեր դեպի բույլ պետությունը: Անջատողականությունը միշտ ծնվել է ուժեղ պետության մեջ՝ միշտ սնվելով փոքր պետությունը մաս-մաս անելու երազանքներով: Ահա թե ինչու Ռուսաստանի և Հայաստանի միջև գոյություն չունեն օբյեկտիվ պատճառներ, որոնք կարողանային ձեր մոտ առաջացնել անջատողականության մտավախություն: Չկան նաև սուբյեկտիվ պատճառներ: Հայ ժողովուրդը այնքան երկար և ծանր է իր վրա կրել հին ռեժիմի տիրապետությունը, այնքան երկար է տառապել ցարիզմից և նրա ճնշումներից, որ ռուսահայերից և ոչ մեկի մոտ, որոնք բնակվում են Անդրկովկասի տարածքում, չի կարող միտք առաջանալ նոր Ռուսաստանի դեմ զենք բարձրացնելու մասին կամ քարոզչություն սկսել Ռուսաստանից անջատվելու նպատակով:

"Армянский вестник", № 43-44, 1917г., стр. 3-4.

№ 113

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԴԵԿՐԵՏԸ «ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ» ՄԱՍԻՆ*

29 դեկտեմբերի 1917թ.

Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հայ ժողովրդին հայտարարում է, որ Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն:

---

* Դեկրետը հաստատվել է 3-րդ համառուսաստանյան համագումարի կողմից 1918թ. հունվարի 15-ին (28-ին):

Ժողովրդական կոմիսարների խորհուրդը գտնում է, որ այդ իրավունքի կենսագործումը հնարավոր է միայն մի շարք նախնական երաշխիքների ապահովման պայմանով, որոնք անվերապահորեն անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ հանրաքվեի համար:

Ժողովրդական կոմիսարների խորհուրդն այդպիսի երաշխիքներ է համարում՝

1) Զորքերի դուրս բերումը «Թուրքահայաստանի» սահմաններից և հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմակերպումը՝ «Թուրքահայաստանի» բնակիչների անձի և ունեցվածքի անվտանգությունն ապահովելու նպատակով.

2) Տարբեր երկրներում սփռված գաղթական հայերի, ինչպես նաև վտարանդի հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» տարածք.

3) Պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնի ձևով Թուրքիայի խորքերն արտաքսված հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» տարածք, ինչը Ժողովրդական կոմիսարների խորհուրդը կպնդի թուրքական իշխանությունների հետ հաշտության բանակցություններ վարելիս.

4) «Թուրքահայաստանի» ժամանակավոր ժողովրդական վարչության կազմակերպումն իրականացնել դեմոկրատական հիմունքներով ընտրված հայ ժողովրդի պատգամավորների խորհրդի ձևով:

Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսար Ստեփան Շահումյանին հանձնարարվում է «Թուրքահայաստանի» բնակչությանն ըստ ամենայնի օժանդակել 2-րդ և 3-րդ կետերի իրագործման հարցում, ինչպես նաև ձեռնամուխ լինել խառը հանձնաժողովի ստեղծմանը՝ «Թուրքահայաստանի» տարածքից զորքերի դուրս բերման ժամկետն ու եղանակները սահմանելու համար (կետ 1-ին):

Ծանոթագրություն. «Թուրքահայաստանի» աշխարհագրական սահմանները որոշվում են հայ ժողովրդի դեմոկրատական եղանակով ընտրված ներկայացուցիչների կողմից, հարակից և վիճելի (մահմեդական և այլ) տարածքների դեմոկրատական եղանակով ընտրված ներկայացուցիչների համաձայնությամբ՝ Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսարի հետ համատեղ:

Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ
Վ. Ուլյանով (Լենին)

Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար
Ի. Ջուղաշվիլի (Ստալին)
Ժողովրդական կոմիսարների խորհրդի գործերի կառավարիչ
Վ. Բոնչ-Բռուևիչ
Ժողովրդական կոմիսարների խորհրդի քարտուղար
Ն. Գորբունով

"Декреты Октябрьской революции", т. 1, Партиздат, М., 1933, с. 393-394.
ГАОИ, стр. 491-492.

РЕЗЮМЕ

Россия была первой державой, которая произошедшее с армянским народом в Османской империи назвала преступлением и добилась того, чтобы союзники - Англия и Франция также осудили это преступление, квалифицируя ее как преступление против человечества и цивилизации. Россия была первой державой которая защитила и дала приют основному потоку армянского беженичества, большая часть которой направилась в Россию. Наконец именно Россия была той державой, которая своей военной силой пришла на помощь оставшимся в Западной Армении армянам и спасла их от неминуемой смерти.

Еще 14 апреля 1995 года, перед самым 80-летием геноцида армян, Государственная Дума Российской Федерации единогласно признала и осудила геноцид, совершенный над армянским народом в начале XX века. В резолюции, осуждающей геноцид армянского народа, в частности, говорится, что совершенный над братским армянским народом геноцид имел цель не только уничтожить этот народ на его исторической родине, но это преступление было совершено в целях создания условий для разрушения России. Уничтожение армянского народа открывало путь к созданию Великого Турана (по замыслу идеологов пантюркизма в него должны были быть включены значительные территории Российской империи). Таким образом эта формулировка резолюции имеет как геополитическое значение, так и глубокий исторический смысл.

С этой точки зрения большой интерес представляет политика России в Армянском вопросе в годы геноцида армян, которая в данном сборнике материалов представляется в виде документов.

Цель данной работы заключается в том, чтобы представить в целом имеющуюся в научном обороте, а также неизвестные и малоизвестные документы, касающиеся политики России в Армянском вопросе в годы геноцида армян на армянском языке и сгруппировать их в одном сборнике документов.

С хронологической точки зрения документы относятся к периоду с 1915-1917гг., когда в России поочередно сменили друг друга три режима: царский, Временное правительство и советский. Документы разделены по годам на три части: группы документов 1915г., 1916г. и 1917г. В сборнике использованы материалы некоторых русских сборников документов, а также архивные материалы, которые переведены на армянский язык.

С тематической точки зрения опубликованные документы можно разделить на следующие группы:

1. Документы, касающиеся дипломатической переписки Министерства иностранных дел России по Армянскому вопросу и относительно геноцида армянского населения в Турции;
2. Материалы IV Государственной Думы России, в частности, выступления армянских и русских депутатов в российском парламенте о тяжелом положении западных армян и о возможностях предоставления им всяческой помощи;
3. Принятые решения трех правительств России (царского, Временного и советского) по Армянскому вопросу в годы геноцида армян;
4. Официальные документы кавказских и русских военных властей о тяжелом положении западных армян;
5. Перепечатанные официальные документы, а также интервью и статьи депутатов и высокопоставленных официальных лиц в русской и русскоязычной армянско прессе, посредством которых общественность ставилась в известность о предпринятых мерах со стороны властей с целью помощи пострадавшим от резни западным армянам.

Кроме русских документов, в данном сборнике мы сочли целесообразным поместить также французские и американские документы относительно политики России в Армянском вопросе в годы геноцида армян, которые дают целостную картину политики России относительно западных армян в трагический для армянского народа период истории. Французские документы, в частности, касаются дипломатической переписки русского посла в Париже Извольского с министром иностранных дел Франции относительно принятия совместного заявления держав Антанты, направленного турецкому правительству в связи с резней армянского населения в Османской империи. Американские документы касаются деятельности русского посла в Вашингтоне Бахметьева, в связи с просьбой русского правительства Гос. департаменту США, чтобы гос. секретарь через американского посла в Константинополе Г. Моргентау представил протест турецкому правительству против политики резни в отношении армянского населения. Эти документы чрезвычайно важны также потому, что они объективно представляют упомянутые эпизоды политики России в Армянском вопросе в годы геноцида армян.

Обобщая вышесказанное, следует отметить, что представлен-

ные документы свидетельствуют о том, что Россия в годы Первой мировой войны, в столь трагический период для армянского народа, несмотря на некоторые негативные проявления, в отношении западных армян в целом проводила проармянскую политику, с целью защиты и сохранения той незначительной части армянского населения, которое чудом уцелело от турецких варварств.

Кандидат исторических наук
Армен Марукян

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ ----------5

1915թ.---------- 30
№ 1 Պետական Դումայի պատգամավոր Ա. Ֆ. Կերենսկու ազատտնտեսական ընկերությանում ներկայացված զեկուցումից *(13 հունվարի 1915)* ---------- 30
№ 2 Պետական Դումայում արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովի ճառից *(27 հունվարի 1915)* ---------- 31
№ 3 Ռուսաստանի Պետական Դումայի պատգամավոր Պապաջանովի ելույթն արտաքին գործերի նախարարի հայտարարության կապակցությամբ *(27 հունվարի 1915)* ---------- 31
№ 4 Ռուսաստանի Պետական Դումայի պատգամավոր Կովալևսկու ելույթն արտաքին գործերի նախարարի հայտարարության կապակցությամբ *(27 հունվարի 1915)* ---------- 34
№ 5 Ռուսաստանի Պետական Դումայի պատգամավոր Միլյուկովի ելույթից արտաքին գործերի նախարարի հայտարարության կապակցությամբ *(27 հունվարի 1915)* ---------- 35
№ 6 Ռուսաստանի Պետական Դումայի որոշումը «Արտաքին գործերի նախարարությանը կից գերմանացիների, ավստրիացիների և թուրքերի կողմից միջազգային իրավունքի, պատերազմի կանոնների և սովորույթների խախտման և պետությանը, հասարակական հաստատություններին և մասնավոր միություններին և անձանց հասցված վնասի ու կորուստների պարզման բնիչ հանձնաժողով ստեղծելու մասին» *(29 հունվարի 1915)* ---------- 36
№ 7 Նամակ Կովկասյան ճակատի I բանակի հրամանատարի տեղակալին *(24 փետրվարի 1915)* ---------- 37
№8 Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանատան թարգմանն արտաքին գործերի նախարարությանը *(15 մարտի 1915)* ---------- 38
№ 9 Դիվանագիտական հարաբերությունների պաշտոնյան արտաքին գործերի նախարարությանը *(3 ապրիլի 1915)* ---------- 39
№ 10 Կաթողիկոս Գևորգ 5-րդն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(7 ապրիլի 1915)* ---------- 40
№ 11 Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը Կովկասի փոխարքայի օգնական Վ.Վ. Միշլաևսկուն *(9 ապրիլի 1915)* ---------- 41

№ 12 Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանության թարգմանն արտաքին գործերի նախարարությանը *(10 ապրիլի 1915)* ---------- 42
№ 13 Կովկասի փոխարքային կից դիվանագիտական հարաբերությունների պաշտոնյան արտաքին գործերի նախարարությանը *(10 ապրիլի 1915)* ---------- 42
№ 14 Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը Փարիզում և Լոնդոնում դեսպաններ Ա. Պ. Իզվոլսկուն և կոմս Ա. Կ. Բենկենդորֆին *(12 ապրիլի 1915)* ---------- 43
№ 15 Կովկասի փոխարքային կից դիվանագիտական հարաբերությունների պաշտոնյան արտաքին գործերի նախարարությանը *(23 ապրիլի 1915)* ---------- 43
№ 16 Ռուսական դեսպանի նոտան ֆրանսիական նախարարությանը *(26 ապրիլի 1915)* ---------- 44
№ 17 Վաշինգտոնում ռուսական դեսպանի հաղորդագրության հետ կապված ԱՄՆ պետքարտուղարի հեռագիրը Թուրքիայում ամերիկյան դեսպանին *(27 ապրիլի 1915)* ---------- 45
№ 18 Նորին գերազանցություն Ռուսաստանի դեսպան Գ. Բալսմետևին *(28 ապրիլի 1915)* ---------- 46
№ 19 Կովկասի փոխարքային կից դիվանագիտական հարաբերությունների պաշտոնյան արտաքին գործերի նախարարությանը *(29 ապրիլի 1915)* ---------- 47
№ 20 Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի հեռագիրը Լոնդոնում ռուսական դեսպանին *(1 մայիսի 1915)* ---------- 47
№ 21 Ռուսական դեսպանի նոտան ֆրանսիական նախարարությանը *(5 մայիսի 1915)* ---------- 48
№ 22 Ռուսական դեսպանի նոտան ֆրանսիական նախարարությանը *(8 մայիսի 1915)* ---------- 49
№ 23 Ռուսական դեսպանի նոտան ֆրանսիական նախարարությանը *(8 մայիսի 1915)* ---------- 50
№ 24 Ռուսական դեսպանի հաղորդագրությունը ֆրանսիական նախարարությանը *(8 մայիսի 1915)* ---------- 51
№ 25 Լոնդոնում ռուսական դեսպանն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(12 մայիսի 1915)* ---------- 52
№ 26 Պետրոգրադի հեռագրային գործակալության հաղորդագրությունը *(13 մայիսի 1915)* ---------- 53
№ 27 Կաթողիկոս Գևորգ 5-րդն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(14 մայիսի 1915)* ---------- 53

№ 28 Ռուսական դեսպանի նոտան ֆրանսիական նախարարությանը *(14 մայիսի 1915)* ---------- 54
№ 29 Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը Լոնդոնում դեսպան կոմս Ա. Կ. Բենկենդորֆին *(15 մայիսի 1915)* ---------- 55
№ 30 Փարիզում ռուսական դեսպանն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(17 մայիսի 1915)* ---------- 56
№ 31 Արտաքին գործերի նախարարը Փարիզում դեսպան Ա. Պ. Իզվոլսկուն *(18 մայիսի 1915)* ---------- 57
№ 32 Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը Փարիզում դեսպան Ա. Պ. Իզվոլսկուն *(20 մայիսի 1915)* ---------- 57
№ 33 Լոնդոնում ռուսական դեսպանն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(20 մայիսի 1915)* ---------- 58
№ 34 Ֆրանսիական նախարարության հաղորդագրությունը ռուսական դեսպանին *(20 մայիսի 1915)* ---------- 59
№ 35 Արտաքին գործերի նախարարությունում ստացված նամակից *(20 մայիսի 1915)* ---------- 60
№ 36 Ռուսական դեսպանի հաղորդագրությունը ֆրանսիական նախարարությանը *(21 մայիսի 1915)* ---------- 61
№ 37 Ռուսական դեսպանի հաղորդագրությունը ֆրանսիական նախարարությանը *(24 մայիսի 1915)* ---------- 62
№ 38 Փարիզում ռուսական դեսպանն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(29 մայիսի 1915)* ---------- 63
№ 39 Հ. Զավրիևի գրությունը Լոնդոնում և Փարիզում ռուս դեսպաններին *(մայիս 1915)* ---------- 63
№ 40 Փարիզում ռուսական դեսպանն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(14 հունիսի 1915)* ---------- 67
№ 41 Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը Փարիզում դեսպան Ա. Պ. Իզվոլսկուն *(16 հունիսի 1915)* ---------- 68
№ 42 Կաիրոում ռուսական դեսպանորդն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(25 հունիսի 1915)* ---------- 68
№ 43 Գևորգ 5-րդ կաթողիկոսն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(5 հուլիսի 1915)* ---------- 69
№ 44 Ռուսաստանի հետ կապված գերմանական ծրագրերում Թուրքիայի դերի մասին գերմանացի անհայտ պետական գործչի զեկուցագիրը *(6-10 հուլիսի 1915)* ---------- 70
№ 45 Լոնդոնում ռուսական դեսպանն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(15 հուլիսի 1915)* ---------- 76

№ 46 Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովի դիմումը Պետական Դումային *(19 հուլիսի 1915)* ---------- 77
№ 47 Պետական Դումայի պատգամավոր Պապաջանովի ելույթն արտաքին գործերի նախարարի հայտարարության կապակցությամբ *(20 հուլիսի 1915)* ---------- 77
№ 48 Արտաքին գործերի նախարարության պաշտոնյա, Կովկասյան բանակի շտաբի քարտուղարը Կովկասյան բանակի առաջին կորպուսի հրամանատարին *(2 օգոստոսի 1915)* ---------- 81
№ 49 Ռուսական Կովկասյան բանակի շտաբի քարտուղարը Ի Կովկասյան բանակային կորպուսի պետին *(2 օգոստոսի 1915)* --------- 82
№ 50 Սոֆիայում ռուսական դեսպանորդն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(5 օգոստոսի 1915)* ---------- 83
№ 51 Պետական Դումայի պատգամավոր Մ. Ի.Պապաջանովի գրությունն արտաքին գործերի նախարար Ս.Դ. Սազոնովին *(8 օգոստոսի 1915)* ---------- 84
№ 52 Աթենքում դեսպանորդը Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությանը *(11 օգոստոսի 1915)* ---------- 86
№ 53 Ռուսական Կովկասյան բանակի շտաբի քարտուղարը՝ Ի Կովկասյան բանակային կորպուսի պետին ---------- 86
(11 օգոստոսի 1915)
№ 54 Կահիրեում ռուսական դեսպանորդն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(2 սեպտեմբերի 1915)* ---------- 87
№ 55 Արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին ուղղված դոկտոր Զավրիևի նամակից *(3 սեպտեմբերի 1915)* ---------- 88
№ 56 Վաշինգտոնում ռուսական դեսպանն արտաքին գործերի նախարարությանը *(28 սեպտեմբերի 1915)* ---------- 90
№ 57 Արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(26 հոկտեմբերի 1915)* ---------- 90
№ 58 Ռուսաստանի Պետական Դումայի հայ պատգամավորների և քաղաքական գործիչների դիմումն արտաքին գործերի նախարարությանը՝ տեղահանված հայերին օգնություն ցուցաբերելու մասին *(7 նոյեմբերի 1915)* ---------- 92
№ 59 Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը Վաշինգտոնում դեսպան Բախմետևին *(21 նոյեմբերի 1915)* ---------- 93
№ 60 Արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովը ֆինանսների նախարար Բարկին *(29 նոյեմբերի 1915)* ---------- 94
№ 61 Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունում ստացված զեկուցագրից *(16 դեկտեմբերի 1915)* ----------95

№ 62 Ռուսաստանի ֆինանսների նախարարն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(18 դեկտեմբերի 1915)* ---------- 99
№ 63 Արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովը ֆինանսների նախարար Բարկին *(20 դեկտեմբերի 1915)* ---------- 100

1916թ. ---------- 100
№ 64 Լոնդոնում ռուս դեսպանն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(10 հունվարի, 1916)* ---------- 100
№ 65 Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը Փարիզում ռուսական դեսպանին *(12 հունվարի 1916)* ---------- 101
№ 66 Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը Փարիզում և Լոնդոնում դեսպաններ Ա. Պ. Իզվոլսկուն և Ա. Կ. Բենկենդորֆին *(17 հունվարի 1916)* ---------- 102
№ 67 Փարիզում դեսպանն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(26 հունվարի 1916)* ---------- 102
№ 68 Պետական Դումայի պատգամավոր Մ. Ի. Պապաջանովի ճառից *(հունվար 1916)* ---------- 103
№ 69 Պետական Դումայի պատգամավոր Մ. Ի. Պապաջանովի զրույցը «Հայերը և պատերազմը» ամսագրի թղթակցի հետ *(հունվար 1916)* ---------- 105
№ 70 Արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովի ելույթը Պետական Դումայի բացման օրը *(9 փետրվարի 1916)* ---------- 107
№ 71 Պետական Դումայի պատգամավոր Չխեիձեի ելույթից *(10 փետրվարի 1916)* ---------- 108
№ 72 Պետական Դումայի պատգամավոր Չխենկելիի ելույթից *(11 փետրվարի 1916)* ---------- 109
№ 73 Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի պետին ներկայացված զեկուցագրից *(14 փետրվարի 1916)* ---------- 109
№ 74 Լոնդոնում դեսպան արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(22 փետրվարի 1916)* ---------- 113
№ 75 Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովի մեծահպատակ զրույցը *(9 փետրվարի 1916)* ---------- 113
№ 76 Զեկուցագիր շտաբս-կապիտան Կրիմ Շամխալչին *(6 մարտի 1916)* ---------- 116
№ 77 Պատգամավոր Մ. Ի. Պապաջանովի ճառը Պետական Դումայում *(8 մարտի 1916)* ---------- 116

№ 78 Պետրոգրադում անգլիական ու ֆրանսիական դեսպանությունների հուշագրերն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(9 մարտի 1916)* ---------- 118
№ 79 Պետրոգրադում անգլիական դեսպանն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(11 մարտի 1916)* ---------- 121
№ 80 Պ. Ն. Միլյուկովի ելույթը Ռուսաստանի Պետական Դումայում *(11 մարտի 1916)* ---------- 122
№ 81 Պատգամավոր Մ. Ի. Պապաջանովի ճառը Պետական Դումայում *(11 մարտի 1916)* ---------- 124
№ 82 Մեծ Բրիտանիայի կառավարության արտակարգ լիազոր Մարկ Սայքսը Պետրոգրադում դեսպան Բյուքենենին *(12 մարտի 1916)* ---------- 129
№ 83 Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովի հուշագիրը Պետրոգրադում ֆրանսիական ու անգլիական դեսպաններ Մ. Պալեոլոգին և սըր Ջ. Բյուքենենին *(17 մարտի 1916)* ----- 132
№ 84 Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովը Փարիզում և Լոնդոնում դեսպաններ Ա. Պ. Իզվոլսկուն և կոմս Ա. Է. Բենկենդորֆին *(17 մարտի 1916)* ---------- 133
№ 85 Ռուսաստանի կառավարության հատուկ խորհրդակցություն *(17 մարտի 1916)* ---------- 134
№ 86 Հայկական հարցը Պետական Դումայում *(20 մարտի 1916)* -- 137
№ 87 Պետրոգրադում ֆրանսիական դեսպանատան նոտան Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս.Դ.Սազոնովին *(31 մարտի 1916)* ---------- 138
№ 88 Պետական Դումայի պատգամավոր Ն. Շչեպկինի հոդվածը Թուրքիայի հայկական գավառներում ժամանակավոր կառավարման կազմակերպման մասին *(1916 մարտ)* ---------- 139
№ 89 Գեներալ Յանուշկևիչի պատասխանը Պետական Դումայի պատգամավոր Մ. Ի. Պապաջանովին *(10 ապրիլի 1916)* --------- 142
№ 90 Պետական Դումայի պատգամավոր Պապաջանովի և գեներալ Յանուշկևիչի մասին *(ապրիլ 1916)* ---------- 143
№ 91 Պետրոգրադում ֆրանսիական դեսպանության նոտան Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(26 ապրիլի 1916)* ---------- 144
№ 92 Արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովի հուշագիրը Պետրոգրադում ֆրանսիական դեսպան Մ.Պալեոլոգին *(26 ապրիլի 1916)* ---------- 146

№ 93 Փարիզում ռուսական դեսպանն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(1 մայիսի 1916)* ---------- 148
№ 94 Բեռնում ռուսական դեսպանորդն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(2 մայիսի 1916)* ---------- 149
№ 95 Գաղթականներին օգնություն ցուցաբերող կազմակերպությունների ներկայացուցիչների համագումարի պատվիրակներն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(10 մայիսի 1916)* -149
№ 96 Լոնդոնում ռուսական դեսպան Բենկենդորֆն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին թիվ 1 *(30 մայիսի 1916)* ------- 150
№ 97 Լոնդոնում ռուսական դեսպան կոմս Ա. Կ. Բենկենդորֆն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին թիվ 2 *(30 մայիսի 1916)* ---------- 151
№ 98 Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովը Կովկասի փոխարքա մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին *(27 հունիսի 1916)* ---------- 153
№ 99 Արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովի զեկուցագիրը Հայկական հարցի վերաբերյալ Ռուսաստանի նախարարների խորհրդին *(հունիսի վերջ - հուլիսի սկիզբ 1916)* ---------- 156
№ 100 Կովկասի փոխարքա մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին *(16 հուլիսի 1916)* -- 164
№ 101 Պետական Դումայի պատգամավոր Մ. Ի. Պապաջանովի հեռագիրը Նախարարների խորհրդի նախագահ Բորիս Վլադիմիրի Շտյուրմերին *(28 սեպտեմբերի 1916)* ---------- 166
№ 102 Պետական Դուման և հայերը *(13 նոյեմբերի 1916)* --------- 167
№ 103 Պետական խորհրդի անդամ, ռազմա-արդյունաբերական համալիրի նախագահ Ա. Ի. Գուչկովի զրույցից "Кавказское слово" թերթի թղթակցի հետ *(27 նոյեմբերի 1916)* ---------- 169

1917թ. ---------- 170
№ 104 Բեռնում ռուսական գործերի հավատարմատարի հեռագիրը *(30 հունվարի 1917)* ---------- 170
№ 105 Սուրհանդակի միջոցով ուղարկված և Հ. Զավրիևի պատճենահանված նամակից քաղվածք *(13 ապրիլի 1917)* ---------- 171
№ 106 Ռուսաստանի կողմից Թուրքահայաստանի զբաղված մասի կառավարման կազմակերպման Հ. Զավրիևի կազմած որոշման նախագիծը *(25 ապրիլի 1917)* ---------- 172
№ 107 Հ. Զավրիևի ուղեկցող նամակը Ժամանակավոր կառավարության վարչապետ իշխան Գ. Լվովին *(25 ապրիլի 1917)* ---------- 173

[1700 դր.]

№ 108 Ժամանակավոր կառավարության նիստերի մատյանից *(26 ապրիլի 1917)* ---------- 175
№ 109 Ժամանակավոր կառավարության նիստերի հատուկ մատյան *(15 մայիսի 1917)* ---------- 176
№ 110 Արտաքին գործերի նախարար Տերեշչենկոյին ուղարկված հեռագրից *(31 մայիսի 1917)* ---------- 179
№ 111 Ռուսների կողմից «Պատերազմի իրավունքով գրավված Թուրքահայաստանի և Թուրքիայի այլ մարզերի գեներալ-կոմիսար» Պ. Ավերյանովի զեկուցագիրը Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությանը՝ այդ մարզերի ռազմա-ռազմական պահպանությունը վերակազմակերպելու մասին *(31 օգոստոսի 1917)* ---------- 180
№ 112 Ա. Կ. Ջիվիլեգովի ճառը Ռուսաստանի խորհրդային հանրապետության խորհրդարանում *(20 նոյեմբերի 1917)* ---------- 190
№ 113 Ժողովրդական կոմիսարների խորհրդի դեկրետը «Թուրքահայաստանի» մասին *(29 դեկտեմբերի 1917)* ---------- 195

РЕЗЮМЕ ---------- 198

A II 89170

ՀԱԱ Հիմնադրամ Գիտ. Գրադ.
220089170